



ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՏԱՌԻ ԹՈՒՐԻՔԵՐԵՆ
ՆՈՐԱՀԱՅՏ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ**





Նաիրա Մկրտչյան-Սյուզում.

Ծնվել է 1971 թվականին՝ Երևանում: Ավարտել է ճարտարագիտական համալսարանը, ստանալով ինֆորմացիայի և կառավարման ավտոմատ համակարգերի մշակման մասնագիտություն:

1995 թ. արտագաղթել է Ստամբուլ: 1996 թվականից աշխատել «Մարմարա» օրաթերթում (հիմնված 1940 թվականին), որպես լուրերի արևելահայերենից արևմտահայերենի վերածող, ապա՝ էջադրող և թարգմանիչ: Վերջին 7 տարիներին, երկար տարիների աշխատանքային փորձով (22 տարի), ստանձնել է թերթի փոխխմբագրի պաշտոնը:

2000-2012 թվականներին մաս է կազմել Ս. Փրկիչ Ազգային Հիվանդանոցի պաշտոնաթերթ՝ Սուրբ Փրկիչ ամսագրի խմբագրությանը, նաև աշխատակցել 1993-2005 թթ. ընթացքում հրատարակված Հուշամատյանի և Կ. Պոլսում տպագրված շուրջ երեք տասնյակ գրքերի ու ամսագրերի, կատարել թուրքերենից հայերեն թարգմանություններ: Ունի նաև թուրքերենից-հայերեն թարգմանական աշխատություններ ու գրքեր: Արևմտահայերենի է թարգմանել պատմաբան Սիրվարդ Մալխասյանի «Ավետիք Պատրիարքի խորհրդավոր կյանքը» գիրքը (2024):

Նաիրա Մկրտչյանը հեղինակ է «Մարմարա» թերթի «Օրվա խոսքը» սյունակի՝ որտեղ ներկայացնում է համայնքի և հայրենիքի օրակարգային հարցերի վերաբերյալ իր մտքերն ու դիտարկումները: Նրա ստորագրությամբ հրատարակվում է նաև «Շաբաթօրյա ընկեր» մանկապատանեկան էջը, որն ամեն շաբաթ պոլսահայ դպրոցականներին առաջարկում է հետաքրքրական ու ուշագրավ տեղեկություններ և պատմություններ:



ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆ
1843-1891

*Նվիրվում է պոլսահայ ներկա
և անցյալի փառանդաշատ
մտավորականությունը*

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ
ՆՈՐԱՀԱՅՏ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ**

*Թարգմանիչներ՝ Գառնիկ Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ և
Հասմիկ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

ԵՐԵՎԱՆ 2025

Գիրքը հրատարակվել է
ՀՀ ԱԱ արևելագիտության ինստիտուտի
Գիտական խորհրդի որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հակոբ Պարոնյան

Պ 346 «Հայատառ թուրքերեն նորահայտ մանրապատումներ»

Թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Գառնիկ Ստեփանյանի և Հասմիկ Ստեփանյանի: Հրատարակության պատրաստեց Հասմիկ Ստեփանյանը: Տեքստի զլխավոր խմբագիր Նաիրա Սյուզյանը Սկրտչյան:

Արևմտահայ իրականությունում, 19-րդ դարում հայատառ թուրքերենը կարևոր մաս է կազմել թուրքախոս հայկական շրջանակների կյանքում:

Հակոբ Պարոնյանը չէր կարող բացառություն կազմել և անտեսել հայ ժողովրդի այդ հատվածի պահանջները: Նա հայատառ թուրքերեն երկեր է գրել շատ որոշակի նպատակով: Թուրքերեն է գրել այն հոդվածները, երգիծական քրոնիկները, որոնցով բանավեճեր է մղել հայատառ թուրքերեն թերթերի դեմ, առաջին հերթին լիբերալ «Մեծմուսյի Հավատիսի», «Մանգումէի Էֆքեարի», որոնց ընթերցողների ճնշող մեծամասնությունը հայերեն կարդալ չեն իմացել, եղել են թուրքախոս: Թուրքերեն է գրել մանավանդ թուրքախոս մոլեռանդ կաթոլիկների (հասունյանների) օտարամոլությունը, ազգադավ գործունեությունը ծաղրող հոդվածները:

«Թատրոն» հայերեն և հայատառ թուրքերեն պարբերականից (Կ.Պոլիս, 1874-1877թթ.) վերցված այս հայատառ թուրքերենով տպագրված մանրապատումները շատ ավելի շքեղ են ներկայացնում Հակոբ Պարոնյանի առանց այն էլ հանճարեղ ժառանգությունը: Բայց սա ամենը չի: Գրքի վերջում հավելել ենք հրատարակված «Լեռը մարգարեին քովը չերթա նե՝ մարգարեն լեռան քովը կերթա» նովելը՝ լրացնելու հայատառ թուրքերեն երկերի շարքը:

Հայատառ թուրքերեն գրականությունը քիչ է ուսումնասիրվել: Այն մեր մշակույթի անքակտելի մի մասն է և սպասում է իր ուսումնասիրողներին՝ խոստանալով հարուստ հունձք: Այս հատորը, որն ուղղված է նաև Պարոնյանի երկրպագուներին՝ հրաշալի հնարավորություն է ավելի լիարժեք զգալու մեծ երգիծաբանի տաղանդը:

Հուսով ենք, որ այս մանրապատումները կհետաքրքրեն նաև թատերական շրջանակներին:

Ծաղրանկարները վերցված են ԿԱՎՈՆՇ-ի տարբեր տարիների տարեգրքերից:

ՀՏԴ 821.19 Պարոնյան
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-9939-9313-7-1

© Հակոբ Պարոնյան 2024

Կազմի վրայի նկարը Սկրտչի Զիվանյանի

ԱՌԱՋԱԲԱՆ. ՀԱԿՈՒԹ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՀԱՅԱՏԱՌ-
ԹՈՒՐԹԵՐԵՆ ԵՐԿԵՐԸ..... 7

1. ՊԱՐԱՀԱՆԴԵՍ 18

2. ԵՐԿՈՒ ՕՐԻՈՐԴ..... 21

3. ԱԼԱՖՐԱՆԿԱ 25

4. ԱԼԱՖՐԱՆԿԱՅԻ ՍՈՒԱՐԵՆԵՐԸ 37

5. ՊԱՐԻ ԴԱՍ..... 40

6. ՊԱԼՈ..... 43

7. ԹԱՏՐՈՆ..... 46

8. ՀԱՍՈՒՆՅԱՆ ԽՆԴԻՐ..... 51

9. ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ 54

10. ՆԻՆԻԹԱՄԻՉ ԼԵՁՈՒ ՄԸ 57

11. ՁԵՌՆՈՑԱՎԱՃԱՌԻՆ ԽԱՆՈՒԹԻՆ ՄԵՁ 60

12. ԲՈԼԻ ՓՈՐՁԱՆՔԸ..... 63

13. ՄԱՆՁՈՒՄԵԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ..... 67

14. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ..... 69

15. ԱՐՏԱՔՆՈՑԱՅԻՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ 74

16. ԹԱՐԱՊԻԱՅԻ ԽՆՁՈՒՅՔՆԻՍ..... 78

17. ԲՈՒԺՈՒՄ..... 81

18. ՍԻՐՈ ԳՈՂ..... 85

19. «ԹԱՏՐՈՆԻՆ» ՎԻՃԱԿԸ 88

20. ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ 92

21. «ԱՍԻԱՅԻՆ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ..... 95

22. ԼՈՒՍԱՆԿԱՐ ՊԱՏԿԵՐ ՀԱՆԵԼՈՒ ՏԵՂ ԹԵՎԸ ՀԱՆԵԼ..... 97

23. ԾՈՎՈՒ ԲԱՂՆԻՔԻ ՕԳՈՒՏԸ..... 99

24. ՉՐԻ ԲՈՒՏՐԱ 101

25. ԳԱՆՁԱՆԱԿԻ ՀԱՇԻՎ..... 103

26. ԱՂՋԻԿՆԵՐՈՒՆ ԽԱԲՎԻԼԸ..... 106

27. ՎԱԹՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ 108

28. ՈՒՆԱ ՎՈԼԹԱ ՈՒՆԱ ՖԱ ԹՈՒ ՖԱ 110

29. ԲԱՆԱԴՐԱՆՔԻ ՄՐՅՈՒՄ..... 114

30. ԱՆՏՈՆՅԱՆՆԵՐԸ..... 118

31. ԽԵՂՃ ՄԱՐԴ..... 120

32. ՏԵՍՆՈՂԻՆ ԵՐԱՆԻ 121

33. ՓՅՈՒՄՔՅՈՒԼԱՎՈՐ ՓՈՐՉԱՆՔ 122

34. ԹՐԱՄՎԱՅԻ ՎԻՃԱԿԱԽԱՂԸ 124

35. ԲԱԽՏ ԿԸ ՆԱՅԻՆՔ..... 127

36. ԹԱՏՐՈՆԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ..... 137

37. ԼԵՌԸ ՄԱՐԳԱՐԵԻՆ ԲՈՎԸ ՉԵՐԹԱ ՆԵ՛ ՄԱՐԳԱՐԵՆ ԼԵՌԱՆ
ԲՈՎԸ ԿԵՐԹԱ..... 139

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 220

ԲԱՌԱՐԱՆ 238



2. Պարոնյանի «Թիյարեռ» երգիծարների առաջին համարի առաջին կէք

ԱՌԱՋԱԲԱՆ՝ ՀԱԿՈՒՔ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԸ

Պատմական ճակատագրի բերումով հայ ժողովրդի արևմտահայ հատվածի գրականությունն ու հրապարակախոսությունը հայերենին զուգընթաց զարգացել է նաև հայատառ թուրքերենով՝ ազգային, կրոնական, ծիսական հայերեն բառերի օգտագործմամբ:

Հայատառ թուրքերենը նպատակ չի եղել, այլ միջոց՝ որը կասեցնելու էր մեր ժողովրդի թուրքախոս հատվածի թուրքացումը, մայր ժողովրդից նրանց հեռացումը:

Այդ գրականության տպագիր շրջանը տարածվել է 18-րդ դարի վերջերից, բնույթ զարգացում ապրել 1840-1870-ական թվականներին, բայց հետագայում, հայկական դպրոցների շատացման, մայրենի լեզվի ուսուցման զուգընթաց թուլացել է, դադարել մեր օրերում:

Մոտ 200 տարվա ընթացքում, ստեղծվել է վիթխարի գրականություն, որը չէր կարող չզբաղեցնել մեր բանասերներին, գրականագետներին, պատմաբաններին, քանի որ այն, ինչպես դեռևս մեկ դար առաջ նշել են հայ և օտար շատ մտածողներ՝ «լեզվով է միայն օտար, իսկ հասարակական բովանդակությամբ հայկական է, կազմում է մեր մշակույթի ուշագրավ մի հատվածը և շատ անակնկալներ կարող է երևան հանել՝ մանրակրկիտ հետազոտման, պարբերական մամուլի բազմաազար էջերի տևական պեղման ընթացքում»:

Մեր կազմած մատենագիտական ցուցակի² համաձայն, որը ամենևին էլ չի հավակնում ամբողջական լինել, հայատառ թուրքերեն տպագիր գրքերի թիվը հասնում է ավելի քան 2000 անունի, իսկ թերթերի, հանդեսների թիվը հասնում է շուրջ 200-ի: Չենք խոսում Երևանի Մատենադարանի, Վենետիկի, Վիեննայի, Երուսաղեմի և այլ քաղաքների ձեռագրատներում պահվող հայատառ թուրքերեն բազմաթիվ ձեռագրերի մասին: Նրանք ևս սպասում են իրենց հետազոտողներին:

Ճիշտ է, այս գրականության կեսից ավելին իր կրոնա-դավանաբանական բովանդակությամբ այժմ ունի միայն պատմական նշանակություն, սակայն մնացած մասը, մանավանդ մի քանի տասնյակից ավել պարբերականները (Մանգումեի Էֆբեար, Մեճմուայի Հավատիս, Մյունաստիի Էրճիաս, Ճերիտեի Շարգիյե և այլն) հայ հասարակական մշակութային կյանքում նվազ դեր չեն կատարել, քան այն տարիներին լույս տեսած հայերեն պարբերականները: Ավելին: Բացի հայատառ թուրքերեն պարբերականներից, որոնցից մի քանիսն իրենց գոյությունը շարունակել են 20-25 տարի, հայերեն թերթերն էլ լայն տեղ են հատկացրել թուրքերեն հոդվածներին, քաղաքական լուրերին: Այդպես են վարվել «Մամուլը», «Օրագիրը»,

1 Առաջաբանը կազմվել է Գառնիկ Ստեփանյանի հայատառ թուրքերենի մասին գրված մի քանի հոդվածների ծաղկաբաղից և մեր կողմից:
2 Յ.Ստեփանյան, Հայատառ թուրքերեն գրքերի եւ հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն. Մտամբուլ, 2005.

«Մեղուն», «Թատրոնը», իսկ լայն տարածում գտած «Մասիս» պարբերականը որոշ տարիներ հարկադրված է եղել զուգահեռ հրատարակել «Ռուզնամեի Մասիս» (Մասիսի լրատու) հայատառ թուրքերեն թերթիկը թուրքախոս ընթերցողներին բավարարելու համար:

Անհնար է գրել արևմտահայ հասարակական, քաղաքական, մշակութային ու որևէ հարցի մասին, առանց հաշվի առնելու հրապարակախոսական վիթխարի այդ ժառանգությունը, մանավանդ եթե հետազոտվող հարցը վերաբերվում է 19-րդ դարի երկրորդ կեսին, այսինքն հայ ժողովրդի պատմության ամենակնճռոտ շրջաններից մեկին:

Բայց սա դեռ պարբերական մամուլն է:

Լույս են տեսել հայատառ թուրքերեն հարյուրավոր վեպեր, որոնցից միայն մեկն է առայժմ թարգմանվել և իր տեղը գրավել հայ գրականության պատմության մեջ: Նկատի ունենք Հովսեփ Վարդանյանի «Ազապի»¹ և «Շատախոսի պատմությունը»:

Ստեղծվել է հայատառ թուրքերեն աշուղական վիթխարի գրականություն, որտեղ զգալի տեղ են գրավում Ջեյթունի, Մարաշի, Անկյուրայի և այլ վայրերի հայերի ազատագրական պայքարին, ջարդերին նվիրված երգերն ու դեստանները:

Տպագրվել են պատմագրական, աշխարհագրական և այլ բնագավառների վերաբերող շատ գրքեր, որոնց մեջ բացառիկ արժեք է ներկայացնում Հ.Վարդանյանի «Նապոլեոնի պատմությունը», «Արևելյան պատերազմների պատմությունը» և այլն, որոնք բազմաթիվ հատորներ են կազմում:

Ֆրանսերենից կատարված վիպագրական թարգմանությունների թիվն անցնում է հարյուրից: Բավական է նշել, որ Սերվանտեսի, Հյուգոյի, Ժյուլ Վեռնի, Լըսաժի շատ վեպեր հայատառ թուրքերենով ավելի շուտ են թարգմանվել և տպագրվել, քան հայերենով: Այդ թարգմանություններն արդեն զբաղեցնում են և պիտի զբաղեցնեն նաև թուրք բանասիրությանը, քանի որ վերոհիշյալ վեպերը, ինչպես նաև հայատառ թուրքերեն շատ գրքեր, թերթեր հաճույքով են ընթերցվել մեսրոպյան այբուբենին ծանոթ թուրք մտավորականության կողմից և նշանակալից դեր են կատարել թուրքական գրական լեզվի մշակման գործում:

Ընդհանուր այս թվարկումն էլ ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ ընդգրկում է ունեցել հայատառ թուրքերեն գրականությունը, որի հետազոտումը դեռ շատ բացահայտումներ է խոստանում:

Արտաքուստ կարող է տարօրինակ թվալ հայատառ թուրքերեն գրականության կենսունակությունը մտավոր զարթոնքի շրջանում: Հրապարակախոսների, խմբագիրների, գրողների, թարգմանիչների հիմնական նպատակներից մեկն էլ համազգային մտավոր վերելքին մասնակից դարձնելն էր հայ ժողովրդին: Մարդիկ պիտի մերժեին օտարալեզու մի գրականության ծաղկումը: Բանն այն է, որ հենց այդ աշխուժացումն արդյունք էր ազգային ոգու վերազարթման: Այդ տասնամյակներում

1 Այն մի քանի հրատարակություն է ունեցել թուրքերեն, նաև ֆրանսերեն լեզուներով:

քաղաքական ռոմանտիզմի, հայ մշակույթի տարբեր բնագավառներում աշխատող մարդկանց, մասնավորապես մտավորականության հիմնական նպատակներից մեկն էլ համազգային մտավոր վերելքին մասնակից դարձնել էր նաև հայ ժողովրդի այն հատվածին, որը դարերի ընթացքում տիրապետող տարրի տևական հալածանքի հետևանքով կորցրել էր մայրենի լեզուն, բայց կրոնով, կենցաղով, ազգային սովորություններով ու ավանդույթներով մնացել էր հայ և որպես հայ էլ ենթակա էր թուրքական դաժան ճնշման: Այդ ճակատագրին էին արժանացել պատմական Հայաստանից հեռու, թուրքաշատ կենտրոններում ապրող հարյուր հազարավոր հայեր, ինչպես Հ.Աճառյանն է նշում, «Գրեթե ամբողջ արևմտյան Փոքր Ասիան, սկսած Քաստամունիի մոտերքից մինչև Ջիլե, այստեղից հարավ մինչև Կեսարիա և Կեսարիայից հարավ արևելք, Սսի և Այնթապի վրայով մինչև Եփրատ»:

Թուրքախոս այս հայերը ևս խանդավառված էին ազգային ազատագրական գաղափարներով: Դարավոր ստրկությունից դուրս գալու ձգտումը նրանց մոտ շատ ուժեղ էր: Անհրաժեշտ էր միայն դպրոցական լայն ցանցի միջոցով մարդկանց բերել դեպի մայրենի լեզուն, իսկ մինչ այդ՝ լուսավորել նրանց՝ իրենց համար հասկանալի հայատառ թուրքերեն հրատարակություններով: Այս մտայնությամբ էին տոգորված մշակութային բոլոր գործիչները: Հակոբ Պարոնյանը չէր կարող բացառություն կազմել և անտեսել հայ ժողովրդի այդ հատվածի պահանջները: Նա հայատառ թուրքերեն երկեր է գրել շատ որոշակի նպատակով: Թուրքերեն է գրել այն հողվածները, երգիծական քրոնիկները, որոնցով բանավեճեր է մղել հայատառ թուրքերեն թերթերի դեմ, առաջին հերթին լիբերալ «Մեճմուայի Հավատիսի», «Մանգումեի Էֆթեարի», որոնց ընթերցողների ճնշող մեծամասնությունը հայերեն կարողալ չեն իմացել, եղել են թուրքախոս:

Թուրքերեն է գրել մանավանդ թուրքախոս մոլեռանդ կաթոլիկների (հասունյանների) օտարամոլությունը, ազգադավ գործունեությունը ծաղրող հողվածները: Հայտնի է, որ այդ խավը Վատիկանի թելադրանքով մոլի ատելություն էր հրահրում հայկական եկեղեցու՝ նաև հայ լեզվի, ազգային սովորությունների դեմ, իրեն էլ արդեն համարելով ոչ թե հայ, այլ *ֆրանկ*: Կրոնի թույնով մոլորված այդ խավը նկատելի վնաս էր հասցնում լուսավորական շարժմանը, ազգային ազատագրական պայքարին, համոզելով միամիտ մարդկանց, թե դրախտ գնալու միակ ճամփան Վատիկանի գերիշխանությունն ընդունելն է, ավանդական կրոնի հետ մեկտեղ՝ ազգությունից հեռանալը, նրա հետ կապերը խզելը: Ինչպես ժամանակի բոլոր առողջ մտածողները (Հ.Սվաճյան, Մ.Նալբանդյան, Մ.Պեշիկթաշլյան, Ծերենց և ուրիշներ), Պարոնյանն էլ մեծ եռանդով մասնակցել է հասունյանների հակազգային հոսանքի դեմ մղվող պայքարին թե՛ հայերեն երկերում, և թե՛ մասնավորապես հայատառ թուրքերեն գործերում:

Նա թուրքերեն սկսել է գրել դեռևս 1873 թվականից, «Մեղու» խմբագրելու տարիներից: «Մեղվում» «Մանգումեի Էֆթեար», «Մեճմուայի Հավատիս» և այլ հայատառ թուրքերեն թերթերի դեմ գրած հողվածները, ինչպես և «Ալաֆրանկա» շարքը

(Ալաֆրանկա, պարի դաս, քատրոն, Բոլի փորձանքը և այլն, որոնք մինչև վերջին տարիները համարյա անձանոթ են մնացել Պարոնյանով զբաղվող բանասերներին: Մի քանի նմուշ միայն լույս են տեսել մամուլում Գ.Ստեփանյանի թարգմանությամբ:

Առաջին հայացքից կարող է թվալ թե երգիծական այդ գործերում շոշափվում են կենցաղային հարցեր, ծաղրի ենթարկվում կաթոլիկ հայերի ֆրանսիանոլությունը որպես հայ իրականության համար խորթ սովորություններ և պաշտպանում է նահապետական նիստուկացը, բարբերը: Բայց այդպես չէ: Իրականում նա սուր քննադատության ենթարկելով իր հերոսների հետամնացությունը, նիզակի ծայրն ուղղում է օտարացման, ֆրանսիական կենցաղի կապկային ընդօրինակմամբ ազգային ավանդույթներից հեռանալու դեմ, հետապնդելով քաղաքական որոշակի նպատակ: Այն է՝ ցույց տալ Վատիկանի գործակալների ազգադավ գործունեության տխուր հետևանքները: Ուրեմն հասարակական մի ամբողջ խավի կործանումն է, որ տրվում է այդ երկերում զավեշտական շղարշով:

Պարոնյանը հրատարակել և խմբագրել է «Եփրատ» պարբերականը (1870թ.), «Մեղու» երգիծաթերթը (1872-74թթ.), «Թատրոնը» (1874-1877թթ.), «Թատրոն Բարեկամ Մանկանց» երկշաբաթաթերթը (1876-1877թթ.), «Լոյսը» (1879-1880թթ.), «Ծիծաղը» (1883թ.), «Խիկարը» (1884-1888թթ.) և այլն: «Թատրոն»-ի հրատարակման տարիներին լույս է տեսել նաև «Թիյաթրո» թուրքերեն (օսմաներեն) երգիծաթերթը (առաջին համարը՝ 1874թ. մարտի 20-ին, և համարը՝ 40 փարա):

Պարոնյանը հայատառ թուրքերեն նյութերին շատ ավելի լայն տեղ է տվել «Թատրոն» երգիծաթերթում: Դա արդյունք է եղել մասամբ նաև աշխատանքային պայմանների: Հայտնի է, որ նա այդ երգիծաթերթը հիմնադրելու առաջին օրերից որոշ նկատառումներով լույս է ընծայել օսմաներեն (արաբատառ թուրքերեն) «Թիյաթրո» պարբերականը: Նա զուտ թուրքական կյանքի հետ կապված նյութեր տպագրել է միայն «Թիյաթրո»-ի մեջ, հայ ազգային կյանքի նյութերը՝ «Թատրոն»-ում, իսկ այն երկերը, երգիծական մանրապատումները, քաղաքական լուրերը, որոնք երկու ժողովուրդների համար էլ հավասար հետաքրքրություն կարող էին ներկայացնել, զետեղել է թե՛ հայերեն «Թատրոն»-ում և թե՛ թուրքերեն «Թիյաթրո»-ի մեջ:

«Թատրոն»-ում տպագրած հայատառ թուրքերեն երկերի թիվը, հետևաբար շատ ավելի մեծ պիտի լիներ, քան «Մեղվում» տպագրվածները: Բացի հարյուրավոր հեռագրալուրերից, կենցաղային և քաղաքական մանրապատումներից, նա այդ երգիծաթերթում տպագրել է բանավեճային բազմաթիվ նյութեր՝ «Բախտ կը նայինք», «Թատրոնի նամակները», դրամատիկական երկի կադապրով գրված մի քանի գործ («Թատրոնի վիճակը», «Միրո գող» «Ամառանոցային հիվանդություն» և այլն):

Հայատառ թուրքերեն այս երկերի մեջ իր ծավալով և հասարակական գրական արժեքով բացառիկ տեղ է գրավում «Տաղ յուրյումեսե ապտալ յուրուր» (Լեռը մարգարեին քովը չերթա նե մարգարեն լեռան քովը կերթա») երգիծավեպը, որը ավելի քան մեկ տարի որպես թերթոն տպագրվել է «Թատրոն»-ի համարներում:

Երգիծավեպը շոշափում է հենց այն հարցերը, որոնց հանդիպում ենք «Մեղվում» տպագրված «Ալաֆրանկա» շարքում: Ըստ երևույթին Պարոնյանի նպատակն է եղել դրանք ներառել մի ընդհանուր երկում՝ նոր շարադրմամբ:

Ծանոթանանք նրա բովանդակությանը.

Նիկողիմոս աղան, հին կենցաղով ու սովորություններով ապրող մի առևտրական, դիզել է մեծ հարստություն, ծավալել առևտրական լայն գործունեություն: Բայց ահա նրա անդորրը խախտվում է ալաֆրանկայի ներխուժմամբ իր ընտանիքի պատերից ներս: Նրա աղջիկները գայթակղված ֆրանսիական կենցաղավարության արտաքին պերճանքից, փայլից, իրենք էլ ուզում են հետևել եվրոպական նիստ ու կացին, հաճախել պարահանդեսներ, հագնվել վերջին նորաձևությամբ, խոսել ֆրանսերեն, դուրս գալ հասարակության մեջ, ստեղծելով յուրահատուկ մի խառնուրդ արևելյան, այսինքն ալաֆուրքա և արևմտյան՝ այսինքն ալաֆրանկա բարբերի, որն ինքնին ունի զավեշտական շատ բան: Ընտանիքում ծայր առած այս հակումը աստիճանաբար իր ոլորտի մեջ է առնում նաև Նիկողիմոսի կնոջը: Նա էլ, որ ամուսնուց շատ երիտասարդ է և ունի իրենով հետաքրքրվողներ, ուզում է շփվել բարձր խավի հետ, լինել երեկույթներում, պարել սովորել, զվարճանալ: Առևտրականի ընտանիքի այս եվրոպականացման մեջ մեծապես նպաստում է Ժորժը, որն ունի որոշակի ծրագրեր՝ ամուսնանալ Նիկողիմոսի աղջկա՝ Մարիի հետ և տիրանալ նրա հարստությանը:

Քանի դեռ ֆրանսիանոլությունը Նիկողիմոս աղայի ընտանեկան նեղ շրջանակում է, պատճառում է նյութական մեծ վնասներ, բայց չի սպառնում ընտանիքի ամբողջական կործանմանը, սակայն սկսվում է վաճառականի տնտեսական գահավեժ անկումը, երբ Ժորժը հասնում է իր նպատակին, հորը համոզելով ամուսնանում է Մարիի հետ: Ինչպես ժողովուրդն ասում, գդալով հավաքվածը շերեփով բաժանվում է: Այդ բանն արագանում է, երբ ամբողջ ընտանիքով համոզում են Նիկոնիդոսին, որ նա էլ դեռ շատ ծեր չէ, ընդամենը յոթամասուն տարեկան է, հետևաբար կարող է դառնալ ալաֆրանկա, կանանց հետ պարել, զվարճանալ: Նիկողիմոս աղան դառնում է Մոնսիեյոր Նիկողիմոս, սովորում է ֆրանսերեն քաղաքավարական նախադասություններ, հյուրերին ընդունում է եվրոպական ծիսակատարությամբ, հագնում է եվրոպական հագուստ, մասնակցում երեկույթների, իր տանն էլ կազմակերպում պարահանդեսներ, իրեն արդեն համարում է զարգացած, թեև նկատում է, որ կանայք իրեն այնքան էլ բանի տեղ չեն դնում, իր հետ չեն ուզում պարել, ընդհակառակը խորհուրդ են տալիս քաշվել իր սենյակը և հանգստանալ, որպեսզի իր կնոջ հետ ավելի ազատ սիրաբանեն:

Այս նոր կադապրի մեջ նա մոռացության է տալիս առևտրական գործերը, ամբողջ գործարքը հանձնում է իր փեսային՝ մյուսյու Ժորժին, որը իբր հաշվապահական նոր, եվրոպական մեթոդով «վերակառուցում է առևտուրը», բայց իրականում աջ ու ձախ կատարած շոյալ ծախսերով՝ երեկույթ, պարահանդեսներով, խաղամոլությամբ կարճ ժամանակից սնանկացնում է Նիկողիմոսին, գցում վիթ-

խարի պարտքերի տակ, որին հաջորդում է բանտարկությունը: Կործանվում է հարուստ ընտանիքը: Նիկողիմոսի կինը կռվում է ամուսնու հետ, ապտակում նրան և իր աղջիկների հետ գնում է հոր տուն: Նիկողիմոսը հասկանում է ալաֆրանկայի չարիքները, սակայն արդեն ոչինչ չի կարողանում անել...

Որոշ գործեր լույս են տեսել անստորագիր: Մինչդեռ նրանց հեղինակային պատկանելության հարցը դժվար չի որոշել քանզի՝

Երգիծավեպի անստորագիր լինելը ոչ միայն չի դժվարացնում հեղինակի որոշման հարցը, այլ ընդհակառակը, հեշտացնում է: Արդեն ապացուցված է, որ Պարոնյանը քսանամյա գրական-ստեղծագործական կյանքում, շատ հազվադեպ, ընդամենը մի քանի տասնյակ երկրորդական, գերազանցապես բանավիճային հոդվածներ է ստորագրել: Հարյուրավոր առաջնորդողներ, քաղաքական, կենցաղային հոդվածներ, ակնարկներ տպագրել է անստորագիր, որոնք ժամանակի մամուլի կողմից դիտվել են որպես տվյալ թերթի խմբագրի խոսքը: Նրա աշխատակիցները, ընդհակառակը, ստորագրել են իրենց ամենափոքր հոդվածներն անգամ: Այսպես, նույն ամիսներին Պարոնյանի աշխատակիցներից Ելիարը ստորագրել է իր անգամ 8-10 տողանոց քաղաքական քրոնիկները, իսկ Պարոնյանը անստորագիր է տպագրել անգամ իր ամենանշանավոր երկերը՝ «Ազգային ջոջերը», «Կամիթները», հետագայում՝ «Պաղտասար աղբարը», «Քաղաքավարության վնասները»: Երբ դրանք առանձին գրքերով լույս են տեսել, նոր միայն հեղինակը շապկի վրա դրել է իր անունը: Չենք տարակուսում, որ եթե «Մեծապատիվ մուրացկանները» ու «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ» երկերն էլ մախ մամուլում տպագրվեին, դարձյալ պիտի երևային անստորագիր: Ուրեմն անստորագիր տպագրվելը ամենևին էլ զարմանալի չէ:

Անշուշտ շատ կարևոր, բայց այս փաստը երբեք էլ հիմնական բանալի չենք համարում վերոհիշյալ ստեղծագործությունների հեղինակային պատկանելության հարցը որոշելիս: Հիմնականը, որ անցյալ դարի վերջերից մինչև մեր օրերը եղել է ելակետ՝ երգիծաբանի երկերի բոլոր հրատարակիչների համար, նրա գրելակերպն է, ինքնատիպ, ոչ ոքի չկրկնող, ոչ ոքի չհիշեցնող ոճը: Պարոնյանի ստեղծագործությունների համար բնորոշ են՝ մտքի զարմանալի պարզությունը, խոր գեղարվեստայնությունն ու գաղափարայնությունը, անսեփեթ ու անպաճույճ ոճը, շարահյուսական կանոնավորությունը, խրթնաբանություններից զերծ լինելը, երգիծական հնարքների բազմազանությունը, կյանքի երևույթները, անգամ բարդ հոգեվիճակները ոչ այնքան նկարագրական շարադրանքով, որքան կենդանի գրույցներով ներկայացնելու մեծ վարպետությունը, բառախաղերով, թևավոր խոսքերով ընթերցողին միշտ զվարթ պահելու կարողությունը: Հատկանիշներ, որոնցով Պարոնյանը շատ հեշտությամբ տարբերվում է ժամանակի մյուս գրողներից և հրապարակախոսներից:

Նույնքան կարևոր են Պարոնյանի երգիծանքի այլ առանձնահատկությունները, որոնցով նույնպես նա սահմանազատվում է գրչակից բոլոր ընկերներից:

Այսպես, հայ գրականության մեջ միայն Պարոնյանի մոտ ենք տեսնում հերոսների խոսակցության ընթացքում արագախոսության այն ձևը, երբ խոսակիցներն ընդհատում են ոչ միայն միմյանց միտքը, այլև նախադասությունը, բառը, հաճախ՝ վանկը: Հիշենք «Մեծապատիվ մուրացկաններ»-ում Աբխողոմ աղայի և խմբագրի գրույցի այն մասը, որտեղ խմբագիրը գովում է Աբխողոմ աղայի չեղած բարեմասնությունները, իսկ վերջինս մտահոգված է իր սնտուկների ճակատագրով:

«-Սնտուկներս...

- Ազնիվ սիրտ մը, վեհանձն հոգի մը...

- բեռնա...

Հայրենասեր անձ մը...

- կիրները...» և այլն:

Հայատառ թուրքերեն «Բոլի փորձանքը» երկում Մարկոս աղայի և Թորոս աղայի միջև հետևյալ գրույցն է տեղի ունենում.

- «Աղջիկ մը առանց հորը կամքը հարցնելու ելլա երիտասարդ մը սիրե...

- սիրեր է տե ատիկա հասկց...

- ըլլալու՞ բան է ասիկա,

- կրցընել ու...

Ո՞վ կը համ...

- բեր է տե... և այլն»

Հայտնի է, որ Պարոնյանը դրության և խոսքի կոմիզմի չքնաղ պատկերներ է ստեղծում գերազանցապես թյուրիմացությունների, թյուրհասկացությունների, բառերի սխալ հասկանալու վրա: Նա սիրում է ստեղծել սրամիտ և հյուրեղ բառախաղեր, ժլատ խոսքերով ներկայացնել բարդ հոգևիճակներ, սիրում է զուգահեռ խայթումների ձևը:

Այսպես, Պարոնյանը, օրինակ, մի հատված կառուցել է *քոնսուլյուսցիոն* (կոնսուլտացիա) բառի սխալ հասկացողության վրա, երբ հերոսը կարծում է, թե քոնսուլտասիոնը մարդ է:

Խոսքի կոմիզմը երգիծաբանը ստեղծել է գերազանցապես ֆրանսերեն բառերի սխալ հասկանալու վրա: Ժորժը ասում է՝ օ՛ լամուր (օ սեր), Նիկողիմոսը կարծում է, թե խոսքը վերաբերվում է թուրքերեն օխլամուրին, որը մի տեսակ բույս է կամ՝ նա անթրե (մտեք) բառը կարծում է Անտրե անունն է և այլն:

4. Որոշ նմանություններ տեսնում ենք «Քաղաքավարության վնասները» շարքից որոշ նովելների միջև՝ առաջադիմության, մարդասիրության, ազգասիրության մասին, առօրյա կենցաղային հարցերի, սննդի տեսակների անիմաստ խնդիրների շուրջ:

5. Պարոնյանի սիրած ձևերից մեկն էլ ձևի և բովանդակության հակադրության վրա կառուցված զավեշտականն է: «Մեծապատիվ մուրացկաններ»-ում բանաստեղծը խոսում է բարձր ու վեհ գաղափարների թվարկումով:

Պարոնյանի անստորագիր գործերի հեղինակային խնդիրը հաստատելու հարցում համոզիչ են դարձնում գլխավոր հերոսների նմանությունը նրա այլ երկերի հերոսների հետ: Նիկողիմոսը նախատիպն է Աբիստղոմ աղայի, Պաղտասար աղբարի, Մարկոս աղայի, իսկ Ժորժը՝ Կիպարի («Պաղտասար աղբար») և Միհրանի («Քաղաքավարության վնասներ»)ը:

Նրանց համար ընդհանուրը, երբ հին բարքերի, համոզմունքների, կենցաղի տեր այդ մարդիկ եվրոպական օտարամուտ սովորությունների հետ կանգնելով դեմ հանդիման, ակամա տեղի են տալիս որոշ նկատառումներով: Հոխորտում են իրենց ուժի, փորձառության մասին, բայց զիջում են շատ հեշտ: Անհավասար պայքարում նրանք աստիճանաբար կործանվում են, քայքայում իրենց ընտանիքն ու առևտրական կյանքը՝ հիմնականում նորի նկատմամբ իրենց ունեցած անփորձության, միամտության, տգիտության հետևանքով: Պարոնյանով զբաղվողներին շատ է հետաքրքրել այն հարցը, թե ի վերջո Պաղտասար աղբարը կամ Աբիստղոմ աղան այնքան միամիտ են, ինչպես ներկայացրել է նրանց Պարոնյանը տարբեր իրադրությունների մեջ: Եթե այո՝ ապա նրանք այդ աստիճան միամտությամբ ինչպե՞ս էին կարողացել մեծ հարստություն դիզել: Ի դեպ՝ հայ երգիծական գրականության մեջ միամիտի այդ կերպարը եզակի երևույթ չէ միայն Պարոնյանի մոտ, համաշխարհային գրականության մեջ՝ առավելապես:

Նման համեմատություններ կամ զուգահեռներ կարելի է նշել, բայց բավական է համոզվելու համար հիշել Մոլիերի կատակերգությունները: Իրականում Նիկողիմոսը, Աբիստղոմը, Պաղտասարը ամենևին էլ այնպիսի միամիտ չեն, ինչպես երևում են զավեշտական որոշ դրվագներում: Նրանք փորձառու, խորամանկ, անզամ խաբելու ձևերը յուրացրած մարդիկ են իրենց արևելյան կաղապարի, առևտրական փոխհարաբերությունների մեջ, միամիտ են դառնում կամ ձևացնում են, երբ բախվում են իրենց համար խորթ ու անծանոթ աշխարհի, բարքերի հետ, բայց և ունեն հուճոր, ծաղրվում են, ճիշտ է, բայց իրենք էլ ծաղրում են: Այս կերպարներին հատուկ է հոխորտանքը իրենց կարծեցյալ խելքի ու կարողության մասին, որը ի չիք է դառնում խաբվելու, անճարակ վիճակում գտնվելու պահերին, առաջացնելով առողջ ծիծաղ:

Հայատառ թուրքերեն երկերը գրված են հիմնականում խոսակցական թուրքերենով, հայերեն մի շարք բառերի, արտահայտությունների օգտագործմամբ: Հասկանալի է, որ Պարոնյանի հերոսները ևս խոսում են նույն այդ ժողովրդական հյուսթեղ լեզվով, որ հատուկ էր Պոլսում ապրող բոլոր ազգությունների համար (թուրքեր, հայեր, հույներ, բուլղարներ և այլն): Նրանցից յուրաքանչյուրն, անշուշտ, իր ազգային դրոշմը դնում էր թուրքերենի վրա, մասնավորապես ազգակից մարդկանց հետ խոսելիս: Այսպես, հայերն օգտագործում էին կրոնական, ազգային բազմաթիվ հայերեն բառեր, մասնավորապես կապված ծիսակատարությունների, սովորությունների հետ, ինչպես՝ եկեղեցի, քահանա, օրացույց, քարոզ, բարեկենդան վարժապետ, ծնունդ, զատիկ և այլն և այլն: Պարոնյանի հերոսները հաճախ են օգտագործում այդպիսի բառեր:

Նկատելի է մի այլ երևույթ ևս: Մի քանի երկերում Պարոնյանը նյութը սկսում է հայերեն, շարունակում թուրքերեն, մասնավորապես երբ նրա հերոսներն են խոսում: Այսպես, «Պարահանդես»-ի սկզբում հայերեն բացատրում է, թե բարեկենդանը մոտեցած լինելով, ընտանիքներում, ամուսինների միջև վեճեր են լիում: Կանայք ուզում են պարահանդես գնալ, ամուսինները ընդդիմանում են: Այսքանը հայերեն ասելուց հետո երգիծաբանը ընթերցողին տեղափոխում է նման մի ընտանիք, որտեղ հերոսն ու հերոսուհին սկզբից մինչև վերջ խոսում են թուրքերեն: Այսպես է նաև «Երկու օրիորդ» պատմվածքը:

Պարոնյանական այս մանրապատումներն իրենց անմեղ թվացող խոսակցություններում վեր են հանում տիրող սոցիալական տարբեր խավերի նկարագրերը՝ միմյանց հակասող, սակայն որպես ժամանակի սոցիալ քաղաքական մթնոլորտի իրական և անխուսափելի ներկայություն:

Միմյանց շատ նման են, օրինակ, «Պաղտասար աղբար» կատակերգության և ներկայացված մանրավեպերում հանդես եկող փաստաբանները: Նրանք կարծես գործում են օրենսդրական անգիր արված բանաձևերով, իրենց միամիտ հաճախորդներին խաբելով խրթին բառերով ու հասկացություններով: «Պաղտասար աղբար»-ում Օգսենի այդ կարգի խաղերից է «նրբացուցիչ դեպք հանցանաց» հասկացությանը բացատրությունը ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, հունարեն, գերմաներեն թարգմանությունների հիմնավորումով, որից խեղճ Պաղտասարը բնականաբար ոչինչ չի հասկանում: Հայատառ թուրքերեն երգիծավեպերում փաստաբանը նույնն է անում, հոգեբանական գրոհը կառուցելով «իրավունքը իրավ բառի հոգնակին է» արտահայտության արաբերեն ձևի վրա: Փաստաբանը համոզել է Նիկողիմոսին, որ նախքան դատը սկսելը պարտավոր է իրեն 20 ոսկի տալ: Ստանում է գումարը, սակայն երբ Նիկողիմոսը ետ է ուզում դրամը.

-Երբեք լսե՞ր եք, որ փաստաբանի մը տված դրամը ետ առնվի: Այդ դրամը ես առած եմ ըստ օրինի, ըստ իրավունքի, ըստ պարտականության, ըստ կարգ ու կանոնի:

-Իշտե ես ալ՝ ըստ ձեր ըսածներուն, ըստ այդ դրամը ըստ ետ կուզեմ...

-Այդ ձևով դրամ ուզելը իրավունքի դեմ է, իրավունքի դեմ գործած չըլլալու համար ատ դրամին իմ քովս ըլլալը անհրաժեշտ է:

-Ասիկա իմ իրավունքս է, կուզեմ, վերջացավ:

-, դուն քերականություն գիտե՞ս:

-Ոչ:

-Քերականություն չգիտցող մեկուն դատը պաշտպանելեն ավելի դժվար գործ չկա: Միտքս չհասկանալուդ պատճառը քերականություն չի գիտնալդ: Ինչ որ է, թողունք ասոնք: Իրավունքը իրավ բառի հոգնակին է: Ասկե կը հետևի, որ 20 ոսկին իմ իրավունքս է, որովհետև քու պահանջդ եղող իրավունքը սնանկացեր է, իմ պահանջս իրավի հոգնակին է և քանի որ քիչը շատի ենթական է, ատոր գործությամբ սնանկացողին՝ հոգնակին ենթարկվիլը ակնհայտ է: Դուն սնանկացած ըլլալով,

ես ալ հոգնակի ըլլալով՝ ինձի ենթակա ըլլալեն ազատվելիք չունիս: Ըսել է 20-
կին ինս է և քանի որ քսանը թվական անուն ըլլալով պարզ բառ է և անոր անցյալ
ընդունելությունը, ուղիղ խնդիրի մեջտեղը և վերջը մեկ հատ *նու* գիր դրվելուն պես
հատկացուցիչ կըլլա, այլևս դուն ի՞նչ իրավունք ունիս ինձմե 20 ոսկին ուզելու»:

Պարոնյանի սիրված ձևերից է ձևի և բովանդակության հակադրության վրա
կառուցված գավեշտականը:

Նիկողիմնոսի փեսացուն՝ մյուսյու Ժորժը *լոժիքի*, այսինքն լոգիկայի օգտակա-
րությունը բացատրելով, ասում է.

-*Լոժիքը* մարդոց հատուկ գիտություն մըն է, լոժիքը ճերմակը սևեն, շաքարը
քարեն, քարը բրինձեն գատող բան մըն է:

Չորեղ կովաններից է հայերեն և հայատառ թուրքերեն երգիծավեպերի հերոս-
ների անանությունը: Նիկողիմնոսը նախատիպն է Աբիսողոմ աղայի («Պաղտասար
աղբար»), Մարկոս աղայի, իսկ Ժորժը՝ Կիպարի («Պաղտասար աղբար») և Մի-
րանի («Քաղաքավարության վնասները»):

Ո՞րն է ընդհանուրը առաջինների, այսինքն Նիկողիմնոսի կամ Պաղտասարի
համար: Հին բարքերի, համոզմունքների, կանցաղի տեք այդ մարդիկ եվրոպական
օտարամուտ սովորությունների հետ կանգնելով դեմ հանդիման, ակամա տեղի են
տալիս որոշ նկատարումներով: Նրանց դիմադրությունը, հոխորտանքն իրենց ու-
ժի, փորձառության մասին ակամա զիջում է անհավասար պայքարում, աստիճա-
նաբար դառնում կործանարար: Քայքայում են իրենց ընտանիքն ու առևտրական
կյանքը՝ հիմնականում նորի նկատմամբ ունեցած իրենց անփորձության, միամ-
տության, տգիտության հետևանքով:

Միամտի նույն կերպարը հանդիպում ենք Մոլիերի կատակերգություններում:
Իրականում նրանք այնպիսի միամիտներ չեն, ինչպես երևում են գավեշտական
որոշ դրվագներում: Նրանք փորձառու, խորամանկ, անգամ խաբելու ձևերը յու-
րացրած մարդիկ են, իրենց արևելյան կաղապարի, առևտրական փոխհարաբե-
րությունների մեջ: Միամիտ են դառնում կամ ձևացնում են , երբ բախվում են իրենց
համար խորթ և անձանոթ աշխարհի, բարքերի հետ, բայց և ունեն հումոր, ծաղր-
վում են, ճիշտ է, բայց իրենք էլ ծաղրում են: Հայ ազգային, կրոնական մթնոլոր-
տում ապրող մարդկանց կյանքը արտացոլելով, հեղինակը նրանց հակադրում է
օտարամուտ ալաֆրանկան, ֆրանսիական կենցաղով ու սովորություններով ապ-
րող խավին, որն արդեն կորցրել էր ազգային հատկանիշների մի մասը և ապրում
էր հայ իրականությանը խորթ բարքերով, լեզվով: Նիկողիմնոսի պատկանած խավը
հենց այն խավն է, որը կաթոլիկական պրոպագանդայի ազդեցության տակ արդեն
հեռացել էր իրեն ծնող ժողովրդից: Նույնիսկ հակադրվում է նրան ավելի մոլեգին,
քան պիտի հակադրվեր այլազգի և այլակրոն որևէ մեկը:

Ալաֆրանկայի պարոնյանական ձախկունը ամենահիմնական հարցը չէ:
Օտարամոլությունը քննության է առնվում հարևանցիորեն և դա միանգամայն
հասկանալի է: Ռուս-թուրքական պատերազմից հետո առաջացած քաղաքական


պայմաններում արևմտահայության առաջ կանգնած էին այլ հարցեր, քան յոթա-
նասունական թվականներին, երբ օտարամոլությունը, հասունյանների ազգադավ
քաղաքականությունը սպառնում էին հայ ժողովրդի միասնականության պահ-
պանմանը: Հակառակ այս ժխտողական, արհամարական վերաբերմունքին, որով
երգիծաբանը մերժում է հայ համարել օտարացած այս խավին, երևույթը չէր կա-
րող չմտահոգել նրան, քանի որ հարուստ դասի ընտանիքներին հատուկ բարքերը,
օտարամոլությունը սկսել էր թափանցել նաև արիեստավորական խավերը, ինչ-
պես նկարագրվում է «Քաղաքավարության վնասներում»: Այս միջավայրում են
գործում Պարոնյանի հերոսները: Դժվար է, անշուշտ, ստեղծել լիարժեք կերպար-
ներ առանց նկարագրական շարադրանքի, սակայն երկխոսության մեծագույն
վարպետ երգիծաբանը այդ բանն արել է զարմանալի վարպետությամբ: Աշխույժ,
սրամիտ, կենդանի զրույցներով նա մարդկանց ներկայացնում է ոչ միայն իրենց
հոգեվիճակներով, գաղափարներով, այլև կենցաղով, առօրյա փոխհարաբերու-
թյունների, բարդ իրադրությունների ու գործողությունների մեջ:

Հեղինակային ողբերգությունը զալիս է այն գիտակցությունից, որ պետականա-
գուրկ, օտար ազդեցությունների ենթակա մի ժողովուրդ որքան արագ կորցնում է
իր ազգային կյանքի առանձնահատկությունները և սահում դեպի անդունդ, հեռա-
նում իրեն ծնող ժողովրդից:

Եվ այս ամենը արդյունք է եվրոպական կենցաղավարության ներթափանցու-
ման ու նրան կապկելուն, միսիոներական հզոր ալիքի տարածմանը ողջ կայս-
րությունով մեկ, բացառությամբ տիրող, ոչ քրիստոնյա խավի: Մինչ առաջադեմ
մտավորական ուժերը պայքարում էին ազգային ինքնագիտակցության բարձրաց-
ման համար, արևմտահայության որոշ մասը կանգնել էր կամավոր ուժացման դեմ
հանդիման: Պարոնյանն իր ողջ ժառանգությամբ հանուն արևմտահայության այս
ազնիվ պայքարի առաջամարտիկներից էր:

Պարոնյանի նույնիսկ հայերեն, անգամ հանրահայտ «Մեծապատիվ մուրաց-
կանները» այժմ դժվար է լրիվ հասկանալ, առանց նրանում օգտագործված օտար
բառերի բացատրության: Ուստի մենք էլ հարկադրված ենք գեթ առավել անհաս-
կանալի մի քանի տասնյակ բառերի բացատրությունները տալ վերջում:

Համոզված ենք, որ այս հատորում տեղ գտած հայատառ թուրքերեն մանրա-
պատումները պատկանում են Պարոնյան-ականավոր գրողի գրչին, և դրանց լույս
աշխարհ գալը նոր էջ է ավելացնելու մեծ երգիծաբանի գրական հարուստ ժառան-
գությանը:



ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Ալիամպրան իր ծանուցումներուն սկսավ: Արական և գեղեցիկ սեռին երիտասարդությունը պատրաստվիլ սկսավ. ալ ասկից ետքը մարդու դեմքով քիչ մարդ պիտի տեսնենք Բերայի և Ղալաթիո մեջ: Ասկից վերջ մեր տեսնելիքն է բոժոժավոր մնջկատակներ, եղջյուրավոր երիտասարդներ, մորուքավոր աղջիկներ, պոչիկավոր սատանաներ և այս ամենը զիրար պիտի գրկեն, պիտի պարեն, պիտի խմեն և պիտի զվարճանան և այս ամենը ընելու համար երեսնին պիտի գոցեն: Մեկ կողմեն տուներու մեջ կռիվները պիտի սկսին, ձայները պիտի բարձրանան և տեսակ մը ծեծկվուքի պար ալ տուներու մեջ պիտի խաղացվի և արդեն սկսել է խաղացվիլ:

– Կիրակոս աղա, գնա տոմինո մը առ տե, վաղը իրիկուն Ալիամպրա երթանք, պարենք:

– Ալիամպրան ի՞նչ է, կնիկ:

– Ալիամպրան տեղ մէ ուր ամեն մարդ իր ուզած տամային հետ կրնա պարել, խաղալ, վաղը տոմինո մըն ալ դուն առ, երթանք քիչ մը պարենք, խաղանք:

– Տաման ու տոմինոն եթե հոս խաղանք չըլլա՞ր:

– Չ՛ըլլար: Տամա ըսածս կնիկ է, տոմինոն ալ իշտե սև բան մը կը հագնին նե անոր կըսեն: Քավալիեները տամայի հետ կը պարեն: Տոմինո ըսված անգամ մը որ հագնիս ուզած տամայիդ հետ կրնաս պարել:

– Ըսել է ինձմե զատ ուրիշ մըն ալ հագնի նե ադ տոմինո ըսածդ, ան ալ քեզի հետ կրնա պարել:

– Հարկավ պիտի պարե, պարահանդեսի օրենքը ատ է, ալաֆրանկայի մեջ ալ ատանկ է եղեր:

– Իմ խելքս ատանկ ալաֆրանկայի, մալաֆրանկայի չի հասնիր կնիկ:



– Պագի քեզի խավարյալ կըսեմ նե կը բարկանաս:

– Հոս խավարյալի, լուսավորյալի բան չկա: Լուսավորյալ ըսածդ անպատճառ իր կնիկը պարահանդէ՞ս տանելու է:

– Երթամ նե ի՞նչ կըլլա եղեր:

– Ինչ պիտի ըլլա: Քեզի պես աղվոր կնիկ մը տեսնալնուն պես բոլորն ալ տոմինո կըսեիր, ինչ կըսեիր, անկե կը հագնին կուզեն հետդ պարել:

– Պարե նե ի՞նչ կըլլա եղեր:

– Ես քեզի ատանկ էտեպսիզ մարդոց քովը կը թողում:

– Թողուս նե ի՞նչ կըլլա եղեր:

– Ի՞նչ պիտի ըլլա, ձեռքդ կը տղմեն:

– Սղմեն նե ի՞նչ կըլլա եղեր:

– Չայնդ կտրելո՞ւ ես:

– Չկտրեմ նե ի՞նչ պիտի ըլլա եղեր: Հիմա բոլորն ալ ազատ են, բոլոր մարդոց համար ալ ազատություն է: Դուն զիս գերի՞ առիր:

– Ինձի համար ալ չկա՞ այդ ազատությունը: Դուն ինձի կը պատկանիս և իմ ըսածս պիտի ըլլա:

– Ըսել է պարահանդես գացողները պիտի չկարգվին:

– Ատ ըսել չեմ ուզեր:

– Քիչ մ՛ալ կնիկներուն խոսքը թող ըլլա:

– Չէ, ինձին ըսածս պիտի ըլլա:

– Քու ըսածդ պիտի չըլլա: Հասկացար: Ես կյանքս տխախտ գտած չեմ:

Կնիկ ըսածդ էլլենմիշ ըլլալ կուզե, հագվիլ սգվիլ կուզե, ասոր անոր հետ պարել կուզե: Քանի կարգվեր եմ, օր մը պարե՞ր եմ: Քատրիլն ալ մոռցա բոլքան ալ:

– Վարժապետ մը կը բերեմ, հոս կը սորվիս, էլլենմիշ կըլլաս:

– Ատ բերելիք վարժապետիդ ոտքը կոտրվի, ես պարահանդես երթալ կուզեմ:

– Ես ալ չեմ ուզեր:

– Ուրիշի հետ պիտի չերթամ ա, քու հետդ կուզեմ երթալ: Այստեղ չտանելու ի՞նչ բան կա:

– Պիտի չտանիմ:

– Աս ու ան ձեռքս պիտի տղմեն եղեր: Անոնք ի՞նչ հանցանք ունին: Քատրիլին օրենքը ատ է: Քավալիեն տամային ձեռքը քիչ մը տղմելու է: Ամեն խաղ իր օրենքն ունի: Տեր ողորմյա:

– Այդ օրենքը իմ գործս չի գար, կնիկ, հասկացա՞ր:

- Հետո, բուրբիս երեսը գոց է, սղմողին ով ըլլալը հայտնի ալ չ'ըլլար որ...
- Հարկավ, երեսը գոց ըլլա նե ձեռքդ սղմած չե՞ն ըլլար: Չէ, կնիկ, ատիկա իմ խելքիս չի պառկիր:
- Իմ խելքիս կը պառկի և ասանկ լուսավորյալ դարու մը մեջ քեզի պես խավարյալ մը լսելու ամենևին ժամանակ չունիմ:
- Ինձի պես խավարյալ մը լսելու ժամանակ չունիս նե, գնա տուտուիդ տունը նստե:
- Ասկե ետքը ոչ ինձի հետ խոսիլդ կուզեմ, ոչ ալ փարադ կուզեմ: Գնա կերակուրդ ալ եփե, լաթերդ ալ լվա, ինչ կընես ըրե, ես քուկին գործիդ չեմ խառնվիր: Պարահանդես մանգամ չերթալես ետքը... է լավ, լաթերը, կերակուրը ի՞նչ հանցանք ունին հոս:
- Հապա ե՞ս ինչ հանցանք ունիմ: Դուն զիս գերի՞ առիր: Ինչո՞ւ պարահանդես պիտի չերթամ եղեր:
- Կարգվելու օրենքը էրիկներուն կը պատվիրե, որ անպատճառ իրենց կնիկները պարահանդե՞ս տանին: Պսակի գիշերը տերտերը ատանկ բան մը չըսավ ինձի:
- Պիտի տանիս չըսավ նե, մի տանիր ալ չըսավ: Հետո՝ տերտերը ի՞նչ գործ ունի ասանկ բաներու հետ:
- Պարապ խոսքերով ժամանակ չանցունենք, կնիկ ել խահվե մը եփե:
- Ես խահվեճի չեմ:
- Ել սա կրակը վառե տե, մեյ մեկ...
- Ես կրակ վառող չեմ...
- Հոս ծեծի պարը կը սկսի և էրիկ կնիկ քանի մը վայրկյան ծեծկվելեն ետքը մեյ մեկ սենյակ կը քաշվին: Վերջին առած լուրերնուս նայելով մինչև այսօր իրարու երես չեն տեսեր տակավին: Շատ հավանական է, որ կնիկը պատուհանեն փախած ու պարահանդես գացած ըլլա և խեղճ էրիկն ալ կարծե որ կինը սենյակը քաշվեր կը նստի:



ԵՐԿՈՒ ՕՐԻՈՐԳ

Անցյալ օր Բերա ազգականներես մեկուն շնորհավորության գացի: Նույն տանը կից տունե մը օրիորդ մը պատուհանը ելլալով Ֆիլո՝ կը կանչեր:



Իմ ալ հետաքրքրությունս շարժեցավ՝ իմանալու այս երկու օրիորդաց խոսակցությունը: Բարեբախտաբար պատուհանս կիսով չափ բաց ըլլալով զիս չտեսնելու համար վարագույրն ալ գոցեցի, աղեկ ունկնդիր եղա.

Բառ մը անգամ չկորսնցնելով՝ միտքս պահեցի. ուր սա հետևյալ խոսակցությունը տեղի ունեցավ:

- Պոն ժուր, մատմազել Ֆիլո:
- Օ, պոնժուր, Լուցիկ:
- Օրիորդ Ֆիլո քիչ մը տկար կը տեսնամ կոր զձեզ:
- Անխիղճ, ժամը երեքին պառկող, տասին ելողը տկար չզգա՞ր ինքզինքը:
- Հա՛, լսեցի, երեկ գիշեր մյուսյու Կրեկուար Թոփճյանի **սուարեին** գացած եք եղեր:
- Ուրկե՞ լսեցիր:
- Իմի՛նեն: Գոնե լավ զվարճացա՞ք:
- **Մա շեռ**, կյանքիս մեջ շատ **սուարեներ** գացած եմ, բայց ոչ մեկ տեղ երեկվա պես զվարճացած եմ: Դուք ինչո՞ւ չեկաք:
- Հա՛, պատճառը չիմացողի պես կը խոսիս: Կամ ալ լավ գիտես, որ ասանկ բաներու **շինյունս** կը նետեմ:
- Երևի նորեն **ռանտելյու** ունեիր մյուսյու Ժազ Գալընյանի հետ:
- Կասկածդ ավելորդ է:
- Ամա՛ն դուն ալ ատ լողըրճուկ Ժագին պոչեն **էմպեսիլի** պես կախվեր մնացեր ես:
- Ինչ ընեմ քուրս, մեկը կը ճանչնաս-. մյուսը չես ճանչնար: Հետո զայն շատ կը սիրեմ:

– Քա ինձնե կը պահես ամա, ես լավ գիտեմ: Ատիկա անանկ բան մըն է, որ քիչ ատենեն մեջտեղ կելլա: Գոնե հիմակվընե քուկիններուդ հասկցուր թե ժազը կը սիրես:

– Ամա՛ն, ատանկ մ'ըսեր: Իմ գիտցածս 5-10 մատմազելի գլուխն եկած է: Դուռ դրացիներուն իմացուցին տե ինչ կրցան ընել: Աշխարհ իմացավ. **քորթենիկը** փարայի մը եղավ: Գոնե գաղտնի մնա նե՛ եթե զայն չառնեն ուրիշ երիտասարդ մը կը գտնամ 20-30 ոսկի օժիտ տալով՝ ինքզինքս կը ծախեն... Աման. փակե ատ խոսքերը. սիրտս մի հատցներ: Սա **սուարեի** իրիկունը ինտո՞ր էլլենիչ ըլլալդ պատմե: Մյուսյուներեն ո՞վ կար հոն:

– Ա՛խ, սուս եղիր, քուրս, երեկ զիշերվա մյուսյուները միտքս մի ձգեր: **Սուարե** գացած պահես մինչև հիմա՛ կարծես գինով եմ:

– Նորեն սիրտդ հափշտակե՞լ տվիր:

– Հափշտակել տալն ալ իս՞ոսք է: Իմ տեղս ո՞վ ըլլա կարող էր դիմանալ այդպիսի **էքստրա օրտիներ** առիթի մը:

– Հասկացա. անպատճառ շիք Անտոնը հոն էր:

– Քա ամա՛ն, թող կորսվի քու ատ Անտոնը: Շիտակը ժամանակ չունիմ ատանկ վայրենի Անտոններու համար ինքզինքս հոգնեցնելու:

– Ըսել է շատ հարուստ մեկու մը օձիքեն բռներ ես:

– Անտարակույս:

– Անանկ է նե երանի՛ քեզ... բայց...

– Ի՞նչ բայց...

– Այսինքն պիտի առնե՞, չէ մյուսներուն պես միայն խոսք է...

– Չէ, ալ յաղամա չկա:

– Ինչե՞ն գիտես:

– Լսե, որ պատմեմ, յոթերորդ **լանսիեի** ատեն անհանգստություն մը կեղծելով՝ չի պարեցի: Մյուսները պարով տարված էին. ես **անկաժեիս** ակնարկով հասկացուցի և մոտի սենյակը տարի: Իմ բախտես մարդ չի կար: Տեսնելով, որ բերնեն խոսք մը պիտի չի կրնամ առնել, քանի մը գավաթ գինի հրամցուցի: Նորեն գինի տվի: Ըսավ «ինչպես որ հոտավետ տեղերե եկող զեփյուռը իր հետ հաճելի բուրմունք կը բերե, անանկ ալ ձեր ձեռքեն խմած գինիս իր համեն ավելի հաճելի համ մը ունի և որքան ատեն որ ապրեմ, պիտի ուզեմ ձեր ձեռքեն գինի խմել»:

– Վո՛ւյ, մի ըսեր քուրս, հիմա խելքս կը թոցնեմ:

– Հիմա քեզի կը հարցունեն, այս ընտիր խոսքերը եթե թարգմանես ի՞նչ կը գտնաս:

– Այսինքն՝ մոտ ատենեն նշանտուք ու հարսանիք պիտի ընես:

– Ես ալ ճիշտ քեզի պես թարգմանեցի:

– Է դուն ի՞նչ պատասխան տվիր այդ խոսքերուն:

– Քա մեղ՛ա, լեզուս կապվեցավ, բերանս չի կրցա բանալ, ժպտալով գլուխս կախեցի... Ան չէ ամա, սա քուկին մյուսյուիդ անունը ի՞նչ էր:

– Արթին աղա կըսեն:

– Քա վախնամ սա Ֆալցո Բասկալը չըլլա՞:

– Ճանըմ, այս Բասկալը Պոլ Միքելը չէ, ասիկա հայ է:

– Հ՞այ ըսիր, թող կորսվի, ինտո՞ր ալ այդ հայ երիտասարդին սիրտդ կուտաս, մեղք քո **կուստոյիդ**: Անոնք դեռ սխեռի քյուֆթե կը հոտին: Հետո մեր **պոզիսիոնին** գլխովին հակառակ են:

– Վու մատմազել. չարաչար կը սխալիս:

– Ինչ որ ալ ըլլան, շիտակը շատ կոշտ մարդիկ են, ոչ կրնան մյուսյուներուն պես մատմազելներուն **կոմպլիման** ընել. ոչ ալ քաղաքավարություն ունին: Բան մնալ չեն գիտեր: Մեյ մալ՝ ամչկոտ են, **քորթե** ընելու ձևը չիտեն, սրամիտ բան մը ըսելուդ պես՝ կասկարմիր կը կտրին:

– Ամա՛ն մատմազել Լուցիկ, քու այդ քաղաքավարություն ըսածդ ալ չեմ գիտեր ինտոր պիտի հասկանանք, քանի մը հատ **մատմազել, մատամ, մյուսյու, պոնժուր, պոնսուար, բարտոն, մերսի** բառերով քաղաքավարություն չ'ըլլար:

– Մեղա, այսքան ալ հայերուն խառնվի՞լ:

– Քուրս, երևցող գյուղի համար ճամբա ցույց տվող պետք չէ: Մենք այս ազգային աղմուկը մեկ կողմե հասկացած ենք: Ես ալ առաջ քեզի պես կը մտածեի, բայց ետքեն երբ մեջերնին մտա, փոխվեցա:

– Ես անոնց բարև տալ անգամ չեմ ուզեր:

– Քա ինչո՞ւ հեռուները կերթաս: Երեկ իրիկուն Արթին աղան ազգային հարց մը բարձրացուց քի, բոլորնուս ալ լսել տվավ, չըսես՝ մենք բոլորս ազգով հայ ենք եղեր՝ տե՛ դավանանքով կաթոլիկ ենք եղեր: Ատոր համար է եղեր, որ մեր ժամերուն մեջ ալ հայերեն պատարագ կըլլա, մինչդեռ առաջ ես շատ կը բարկանայի թե ինչու մեր պատարագը կաթոլիկերեն չեն ըներ:

– Ըսել է հիմա տուն հայ ես՞:

– Չէ, ես կաթոլիկ եմ. համ ալ Հասունյան եմ, բայց մենք քիչ մըն ալ հայ ենք եղեր: Ինչ գիտեմ՝ Արթին աղան կարգ մը բաներ ըսավ. առաջին անգամ կը լսեի ատանկ խոսքեր, մարդու միտքը կը մնա՞, անգամ մը մեր խոստովանահորը պիտի հարցունեմ...

- Լավ, աս բոլորը թողունք. հիմա դուն ի՞նչ պսակ պիտի ըլլաս:
- Ինձի մնա նե հիները բոլորովին մեկդի նետելու չէ, ես **նենեխա**, պապուս պես պսակ կըլլամ, ես աս խառն ապուրեն համ մը չառի:

- Բայց զգուշ հա՛, էրկան մը համար դժոխքի բաժին չըլլաս: Ավելի լավ է Հասունյան մնաս ու դրախտ երթաս, քան թե հայ պսակով դժոխքի արժանանաս...

Ամա՛ն դուն ալ. ինչի պիտի ըլլա եղեր: Հրեայի պսակ չե՞ ա: Անոնց պատարագն ալ մերինին պես է եղեր: Մատմագել Թերեզան կերթա եղեր, ան պատմեց, միայն պապը չեն հիշեր: Մեկ կողմն ալ իրավունք ունին: Հեշ մարդ արարածի մոտ չի սխալվիլ կըլլա⁵⁵: Հիմա ատանկ բանի համար ուրը լեզու իմացող, շատ ճամփորդած, շատ **սոսիեթներու** մեջ **քոմիթեճիություն** ըրած, վերջապես **բրիմյեր քալիթելիք** երիտասարդ մը ձեռքես փախցնե՞մ:

- Ամա՛ն շատ կը թեթևցնես, խոստովանահորս պատվերները եթե քեզի ըսեն, ոչ միայն հայերուն, աֆորոզներուն կոխած տեղը անգամ պիտի չի կոխես:

- Լուցիկ, ժրվուքի սիրտս մի նեղացներ: Հիմա կը հասկանամ: Ատոնք բոլորը վարդապետներուն էնթերեսներուն համար է եղեր ասիկա Աբբացի է. մեկալը՝ Գոլեճական, մյուսը՝ անթի վիեննական, վենետիկցի, դրիեստցի, սելանիկցի, մեկ խոսքով՝ մենք ալ ոչ մեկուն հետ չենք կրնար ամուսնանալ:

- Այսինքն աս խոսքերդ ես կտուրը չեմ նետեր: Ինձի ալ անցյալները վիեննացի մը ուզեց, բայց վարդապետ եղբայրս չի տվավ, չեզոք է, ըսավ:

- Չեզոքը ի՞նչ է:

- Ոչ հակահասունյան, ոչ հասունյան, թե հասունյան, թե հակահասունյան:

- Սո՛ւրբ Չիչիլիա. այդ ալ նոր կը լսեմ:

- Տես, խոսքի բռնվեցանք՝ մսեցա պատուհանին մոտը: Դեռ թուալեթս պիտի ընեն տե Անթուանի սուարեին պիտի երթամ:

- Անանկ է նե վաղը լավ լուրեր պիտի բերես:

- Հարկա՛վ, ես քեզ մե գաղտնի բան կը պահե՞մ:

- Է, ատիո:

- Աթանթե, էն բո, քիչ մըն ալ տեսնվիք:

- Ինչ կըսես, ետքը չեմ հասնիր: Ամենաքիչը երկու ժամ կը տևի թուալեթս:

- Անանկ է նե վաղվան կը սպասեմ, ատիո:

- Ատիո, մատմագել:

ԱԼԱՖՐԱՆԿԱ

- Թորոս աղա, խելքդ ի՞նչ կը կտրե աս ալաֆրանկա ըսվածեն:

- Շիտակը՝ մինչև հիմա բան մը հասկցած չունիմ: Ալաֆուրքային հակառակ բոլոր բաներուն ալաֆրանկա կըսեն:

- Ես ալ ատանկ կը կարծեմ: Անցյալները տուն երթալու՝ տեսնամ դատարկագրպան, անբան երիտասարդ մը գլուխ գլխի խոսքի է բռնվեր մեր աղջկա հետ: Ասոնց ասանկ բերան-բերանի տեսնվիլը, շիտակը, ջիղերուս դիպավ:

- Ավելին կոթովը երկուքին ալ գլուխը ջարդեիր: Հարմա՞ր է, որ երիտասարդ մը և աղջիկ մը գլուխ-գլուխի գրուցեն: Կատարյալ լրբություն և աներեսություն է ատիկա:

- Ես ալ լրբություն պիտի ըսեմ, բայց ալաֆրանկան մեջքս կը կոտրե, վասնզի ալաֆրանկայի մեջ երիտասարդի մը աղջկա մը հետ կամաց խոսիլը քաղաքավարություն է եղեր, հառաջադիմություն է եղեր, վերջապես ինչ գիտնամ հայրենասիրություն է եղեր, մինչդեռ ալաֆուրքայով պարզապես լրբություն է: Ես ալ առջի բերան ասոնց ասանկ խոսիլը տեսա նե կասկածեցա թե չըլլա քի աս տղան կուզե աղջիկս գլխե հանել, սակայն հետո երբ ըսվեցավ թե ատիկա ալաֆրանկայի մեջ վնաս չունի, սիրտս հանգստացավ, թեն կասկածս չի փարատեցավ:

- Շիտակը կուզես՝ խայտառակություն է, եղբայր: Մեր պզտիկությանը եթե մեկն իր ձեռքը կնկան մը ձեռքին դպցներ շանաստակ կընեին: Հիմա տեղ մը հյուր գացիր մի՛ ատ տունը որքան էրիկմարդ կա նե կնկանդ կամ աղջկանդ ձեռք կը սղմեն, իբր թե կը բարևեն եղեր: Չեռքով բարևելս ո՞րն է. բարի իրիկուն, աստծու բարին՝ վերջացավ: Ես աս ձեռք սղմելու սովորության պատճառով հարաբերությունս կտրեցի ծանոթներես ու բարեկամներես: Կնկանս ալ տեղ մը տարած չունիմ: Տանելու ալ ըլլամ՝ ձեռքերը կտրել՝ անանկ տանելու է:



– Ան ատեն ալ խավարյալ է կըսեն, կը բամբասեն:

– Որո՞ւն հոգը, էֆենտիմ, ինչ կուզեն թող ըսեն, խելքս ասանկ ալաֆրանկա բաներու չի հասնիր: Հետո՞ էրիկմարդը իրավունք չունի եղեր ուզած ատենը կնիկը ծեծելու, ասիկա բարբարոսություն է եղեր, վայրենություն է եղեր: Կնկանդ վրա ձեռք բարձրացուցիր մի՛ դուռ դրացի գլուխդ կը թափին ու կնիկդ կը պաշտպանեն: 19–րդ դարու մեջ կնիկ ծեծելը քաղաքավարության դեմ է եղեր, մինչդեռ կնիկներուն հանցանքները 19–րդ դարու քաղաքակրթության համաձայն է եղեր: Էֆենտիմ էրիկմարդը եթե ուզած ատենը կնիկը պիտի չի կրնա ծեծել, ոտքին տակը առնել, ատանկ ամուսնութենն ինչ համ պիտի առնե:

– Շիտակը ատ բանը ինձի ալ դպած է: Աս վերջին ժամանակներս կնիկները շատ են երես առեր: Կնիկ մը սենյակեն ներս մտավ մի՛ բոլոր էրիկմարդիկ ոտքի պիտի ելլան եղեր, կնիկը ամենեն բարձր տեղը պիտի նստեցնեն, շատ հարգանք պիտի տրվի եղեր, ալաֆրանկայի մեջ ատանկ է եղեր:

– Մեր աս բոլոր քաշածները ալաֆրանկայի երեսեն է, գետինին տակը անցնի ատ ալաֆրանկա հնարողը, որ մեր սեփական կնիկն անգամ պիտի չկրնանք ուզածնուս պես ծեծել:

– Հապա կարգ մը անմիտ սովորություններուն ինչ ըսենք: Օրինակ՝ աս իրիկուն մեկուն տունը հյուր պիտի երթաս: Երթալեդ առաջ լուր պիտի դրկես թե կուզամ: Հյուր ընդունող մարդն ալ շատ անգամ անամոթաբար կը պատասխանե թե չնայած պարտավոր է այդ իրիկուն հյուրերը ընդունիլ, բայց շատ կը ցավի որ պիտի չկրնա ընդունիլ: Առոք փառոք կը վռնտե մարդդ, բայց առանց ամչնալու պոչին ցավիլ մը կը փաթթե: Մեյ մը սըվոր նայե՛ ... կը ցավի եղեր... եթե չի ցավի ի՞նչ կըլլա:

– Չի ցավի նե գուցե սիրտդ կոտրի...

– Մենք ասոր անամոթություն կըսենք, մինչդեռ ալաֆրանկայի մեջ ասիկա քաղաքակրթություն, քաղաքավարություն է եղեր:

– Եղբայր, աս ալաֆրանկան առուտուրի մեջ ալ ինձի վնաս տվավ: Տոպայի ձևով տոմար բռնել մը հաներ են, ուզածնուն կը խաբեն: Մեկուն հետ հաշիվ մը ունիմ. իմ հաշիվիս նայիս՝ երկու հազար դուրուշ առնելիք ունիմ, անոր Տոպի հաշիվին նայիս՝ երեք հազար դուրուշ պարտք կունենամ: Չեմ հասկանար՝ Տոպի եղանակով պահվող տոմարի մեջ առնելիքը պա՞րտք կը դառնա:

– Ասոնց ոչ մեկուն խելք չեմ կրնար հասցունել, ան գիտեմ որ հին օրենքնե-

րը մեր տուներեն ելլալեն ետքը՝ համը փախավ: Կնիկդ, ազատ ըլլամ ըսելով՝ ամբողջ օրը գլուխդ կը ցավցնե, չոճուխներդ ըսես՝ հայրերնիս պարտավոր է մեզի պահել ու դաստիարակել կըսեն, կուտեն, կը խմեն, գործ չեն բռներ: Գալով աղջիկներուն՝ անոնք ալ, հայրերնիս պարտավոր է մեզի տուն տեղ ընել կըսեն և օրն ի բուն կերգեն ու կը պարեն: Դու ալ բան չունիս առտվընե մինչև իրիկուն աշխատե, անդին վազե, ասդին վազե, ամեն ինչ ալ տես և ուզած ատենդ ալ կնիկդ մի ծեծեր: Է, ասիկա ըլլալու բա՞ն է:

– Հարկավ, այդչափ աշխատելեդ ետքը փայտը կնկանդ գլուխեն անպակաս ընելու իրավունք պիտի ունենաս եղբայր:

– Կրնա՞ս քիչ մը դիպչիլ, ամբողջ թաղը վրադ կը թափի:

– Ներեցեք գլուխնիդ ցավցուցի: Իրիկունը հրամմեցեք մեր տունը երկար բարակ խոսիմք ատոնց մասին:

– Շատ լավ, եղբայր, ազատ կը թողում քեզի:

– Ազատ կը թողո՞ւմը ի՞նչ ըսել է:

– Ազատ կը թողումը մնաք բարով ըսել է, նոր եղանակով:

– Գետնին տակը անցնի այդ նոր եղանակը:

2.

– Բարի իրիկուն, Թորոս աղա, ալաֆրանկային վերաբերյալ նոր ըսելիք մը չունի՞ս:

– Ըսելիքս ան է, թե քեզմե զատ մեկը չի գտա ինձի հասկցող: Ըստ իս՝ ալաֆրանկայի հետևողները բոլորն ալ անկիրթ անամոթ մարդիկ են:

Աշխարհքիս մեջ մեր երկուքեն զատ մեկը չի կրցա գտնալ որ իր ըրածն ու ըսածը հասկնալու կարողություն ունենա:

– Իրավունք ունիս, բայց ի՞նչ է ուրիշներուն կարծիքը:

– Ի՞նչ պիտի ըլլա. ալաթուրքա մտածելնուս համար ալաֆրանկան գեշ կը գտնանք եղեր:

– Մտածելո՞ւն ալ ալաֆրանկան կամ ալաթուրքան կա:

– Կա եղեր: Օրինակ՝ երիտասարդ մը աղջիկա մը ձեռքը սղմելու ըլլանեն՝ ատ ժամանակ ալաֆրանկա մտածած կըլլա եղեր: Դու ալ եթե ալաֆրանկա մտածես՝ ատ երիտասարդը աղջիկադ ձեռքը սղմած չլլալու պես կըլլա եղեր:

– Ի՞նչ պարապ խոսքեր են ատոնք:

– Որո՞ւն հասկցունես: Մենք հաստգլուխ ենք, ժամանակի հետ առաջ երթալ չենք գիտեր եղեր: Կեցած տեղերնիս կը մնանք եղեր:

- Ժամանակի հետ երթալու համար ինչ պիտի ընենք:
- Պար սորվելու է, դաշնակ զարնել գիտնալու է եղեր, ֆրանսերեն սորվելու է: Ասոնք չիմացողը այս դարուս մեջ ապրելու իրավունք չունի, գերեզմանը փորելով՝ մեջը մտնալու, պառկելու է եղեր:
- Ես ատանկ խոսքերու կարևորություն չեմ տար. կապրիմ հորս ապրած եղանակով և գերեզման ալ չեմ մտնար:
- Աղջիկները դաշնակ զարնել գիտնալեն զատ՝ օպերա երգել ալ գիտնալու են, աղվոր ձայն ունենալու են եղեր, ձայն չունեցող աղջիկը ալաֆրանկային անհարմար է եղեր: Ասկից զատ՝ ամեն աղջիկ ուզածին հետ կարգվելու ազատություն պիտի ունենա, հայրը աս գործին խառնվելու իրավունք չունի, կողովի պես նստած տեղը մնալու է եղեր:
- Է, ալ հիմա պիտի ճաթիմ...
- Նշանածը ամեն օր տուն գալով՝ տեսնվելու է աղջկա հետ, այդ ատեն հայրը սենյակեն դուրս պիտի գա եղեր, որպեսզի նշանվածները ազատ զգան ինքզինքնին:
- Ատիկա իմ ընելու բանս չէ:
- Անգամ մը որ զիրար սիրեն՝ երիտասարդը քանի դուրուշ օժիտ ուզե՝ հայրը պարտավոր է տալ, եթե չտա, բարբարոս է եղեր, օրինակ երիտասարդը հազար ոսկի կուզե, տալու է, ինը հարյուր իննսունինը ոսկի եթե տալու ըլլաս՝ ամոթ է:
- Ատ ի՞նչ կը նշանակե:
- Քանի ոսկի ուզե, տալու ես, բրի Ֆիքս է եղեր:
- Ատ բրի Ֆիքսը ո՞վ կըլլա:
- Բրի Ֆիքս ըսելը վերջին գին ըսել է:
- Չի տաս նե ի՞նչ պիտի ըլլա:
- Չի տաս նե աղջիկդ մարդ չի առներ տե պատճառն ալ դուն կըլլաս եղեր:
- Ասանկ հաշիվներու խելքս չի հասնիր:
- Բայց եթե դուն հարս առնել ուզես և ստակ պահանջես՝ քաղաքավարության դեմ գործած կըլլաս:
- Ըսել է ալաֆրանկային հարմարվելու համար ուզողին ստա՞կ տալու է:
- Ատով չի վերջանար. փեսացուիդ ալ պարտավոր ես գործ գտնալ, եթե չի գտնաս՝ աղջիկդ փախցնելու իրավունք ունի:
- Աստված պելանին տա:
- Փախչելու ստակ չունենան նե՝ ճամփու ծախքն ալ դուն պիտի տաս, որպեսզի ազատությունը հարգած ըլլաս:

- Գետնին տակը անցնին բոլորը:
- Ամեն իրիկուն ազատ պիտի ըլլան թատրոն կամ պարահանդես երթալու, զվարճանալու: Թատրոն ըսվածն ալ դպրոց է եղեր, մարդս չիմացածը հոն պիտի սորվի եղեր:
- Ստակ մի տար:
- Չի տաս նե մեկալ օր թատրոնեն մեկը կուզա օթյակի ստակը կուզե:
- Մի՛ տար:
- Չի տաս նե բարեգործական նպատակները քաջալերած չես ըլլար եղեր:
- Աստված անոնց հախեն զա:
- Ամեն շաբաթ ինչ մոտայի զգեստ որ ելլա՝ անկե առնելու ես եղեր:
- Մի՛ առներ:
- Չառնես նե աղջիկդ կը հիվանդանա:
- Թող հիվանդանա:
- Բժիշկին ստակ տալու է, դեղերու ստակ տալու է:
- Մի՛ տար:
- Չի տաս նե՝ սնանկացեր է կըսեն:
- Լեզունի՛ն չորնա:
- Ամիսը մեկ անգամ աղջիկանդ լուսանկար պատկերը հանել տալու ես: Օրինակ՝ անգամ մը կանգնած, անգամ մը՝ նստած, երրորդ անգամ՝ ոտքը ոտքին նետած, հինգերորդ անգամ՝ ձեռքը ծունկին դրած, վեցերորդ անգամ՝ ծունկը ձեռքին վրա դրած: Նկարվելու է ուղիղ կայնած, նկարվելու է խնդումերես, նկարվելու է նվազելու ատեն, երգելու ատեն:
- Աստված պելանին տա:
- Սպասե, դեռ ուրիշ ըսելիքներ ալ ունիմ:

3.

- Բարի իրիկուն, Թորոս աղա:
- Բարի իրիկուն, Մարկոս աղա:
- Չրույցնիս չի մոռնանք, Թորոս աղա:
- Կըսեի թե ամեն ամիս լուսանկար պատկերը հանել տալու է:
- Շատ լավ, բայց այդքան լուսանկար պատկերները ինչ պիտի ընե աղջիկ մը:
- Նշանածներուն պիտի դրկե: Անոնք ալ ատ պատկերները գիրքի մը մեջ պիտի դնեն և եկող գացողներուն ցույց պիտի տան եղեր:

Մեյ մալ քարթ տը վիզիթի խնդիր մը կա:

– **Քարթ տը վիզիթը** ի՞նչ է:

– Մեկը շնորհավորել ուզես տե երթալու ժամանակ չունենաս նե՝ անունդ թուղթի մը վրա կը գրես և կուղարկես, ասով դուն գացածի պես կըլլաս եղեր:

– Ի՞նչ ամոթ բան. թուղթի կտորը ի՞նչպես կրնա մարդու տեղ բռնել:

– Կը բռնե:

– Կատարյալ խենթություն: Հյուրին տրվելիք սուրճը, անուշը այդ թուղթի՞ն պիտի հրամցունեն:

– Ատ չի գիտեմ, գիտցածս ան է որ ամիսը երկու երեք հարյուր դուրուշ տալու է լուսանկար պատկերի և քարթ տը վիզիթի համար, եթե ասոնք չընես՝ անկիրթին մեկն ես, իսկ եթե լուսանկար պատկերի և **քարթ տը վիզիթի** համար ամսական երկու երեք հարյուր դուրուշ տալու կարողություն ունիս՝ զարգացյալ մարդ ես, վասնզի ատոնց նայելով՝ ստակ չունենալն ալ դեմ է ալաֆանկային:

– Աստված պելանին տա:

– Այո, անոնց բոլոր ըսածներուն հարմարվելու ես: Եթե երիտասարդ ես՝ ճիտեղ ակնոց մը կախելու ես:

– Աչքերս պակասություն մը չունենան նե ինչո՞ւ պիտի ակնոց դնեմ:

– Աչքերդ կուզեն լավ տեսնան, կուզեն գեշ. խնդիրը ատ չէ. կարևորը ակնոց դնելն է. ասանկ երթա նե մեյ մեկ քիթոց կամ մեյ մեկ ականջոց ալ կախելու են:

– Մենք անոնց ինչո՞ւ պիտի նմանվինք, եղբայր:

– Շաբաթը երեք անգամ սափրվելու է, դեմքիդ վրա մազ ըսված բանը պիտի չըլլա: Եղավ՝ ալաֆրանկային դեմ ես:

– Ըսել է պեխերնիս ածիլելու ըլլանք նե՝ առաջին կարգի ալաֆրանկա կըլլանք:

– Հարկա՞վ: Նեղ կոշիկներ հագնելու է. քալելու ատեն ոտքդ պիտի ցավի, մատներդ **նասր** պիտի ըլլան. ոտքիդ վրա **նասր** չըլլա նե՝ անքաղաքավարի ես:

– Չարգացած մարդու ոտքը անպայման **նա՞սր** ըլլալու է:

– Անշուշտ: Ատկե գատ՝ քալելու ատեն քիչ մը կոտրտվելու է, փատի պես շիտակ քալելու չէ: Աղջիկներեն քիչ մը դաս առնելու է՝ աջ ոտքդ առաջ նետած ատենդ՝ ձախ ուսդ խաղցնելու ես, ձախ ոտքդ նետած ատենդ ալ աջ ուսդ խաղցնելու ես. երկու քայլդ մեկեն առնես նե՝ քիչ մը ծռելու ես, մեջքդ կոտրտելու ես, աջ ու ձախ օրորվելու ես: Բայց այդ ատեն ցեխի մեջ կիյնաս

եղեր՝ վնաս չունի, դուն քալելու կանոնները պահե...

– Քարո՞զ կը կարդաս, մարդ աստուծո:

– Փողոցը օրիորդի մը հետ դեմ դեմի եկար մի՞ իսկույն մեկ կողմ պիտի քաշվիս, ճամփա պիտի տաս որ օրիորդը անցնի, առանց ատ ընելու ճամփադ շարունակես նե՝ անկիրթ կըլլաս: Մեկ խոսքով՝ քաղաքավարի ըլլալու է ըսինք ա:

– Ըսել է բոլոր երիկմարդերը ծովը թափելու է:

– Հարկավ թափելու է, մանավանդ ալաֆրանկայի օրենքներուն դեմ գացող մարդերը: Օրինակ՝ ինչքան Թորոս, Մարկոս, Կիրակոս, Մարտիրոս և այլն կա՝ բոլորի ոտքերեն մեյ մեկ քար կապելով ծովը նետելու է, վասնզի անունը Թորոս եղողը լուսավորյալ չ'ըլլար եղեր, բայց փիլիսոփայի չափ խելք ունի մարդը՝ որո՞ւ հոգը: Թորոս անունը ալաֆրանկային դեմ է՝ վերջացավ:

– Ատանկ բան չէի լսած:

– Եթե կուզես մաքուր ալաֆրանկա ըլլալ, անունդ դիր ժագ, Բիեր, Վենսան, Բոլ, Ժոզեֆ կամ ատոնց պես անուն մը: Մեկ Բիեր մը կրնա մարդս ալաֆրանկա ընել:

– Կը նշանակե եթե երկու ալաֆրանկա անուն դնեմ, կատարյալ ալաֆրանկա կը դառնամ:

– Անկասկած, սակայն այդ անուններուն համապատասխան պիտի վարվիս, զքեզ հարմարեցնելու ես անունիդ:

– Ինչպե՞ս:

– Օրինակ անգամ մը որ անունդ Բոլ կամ Բիեր եղավ, այլևս նարգիլե չես կրնար քաշել:

– Ինչո՞ւ:

– Որովհետև ալաֆրանկա անուն ունենալ և նարգիլե քաշելը հաստ զգեստ հագնելով եվրոպական գլխարկ դնելու կը նմանի:

– Ատոր ալ ճարը կա. նարգիլե քաշելու ատեն անունս կը փոխեմ:

– Շիտակը՝ մեկ քեֆի համար անուն չեմ կրնար փոխել:

– Փոխողները հոգի չունի՞ն:

– Միայն ատով չի վերջանար: Անգամ մը որ անունդ Բոլ դարձավ, առավոտները կաթ խմելու ես:

– Կաթը ինձի կը դիպչի:

– Չէ, ալաֆրանկայի համաձայն կաթը օգտակար է, վնաս չի տար:

– Շատ լավ է ատիկա: Կույրին ուզածն ալ երկու աչք է: Կը նշանակե կաթ

խմելու ատեն ալաֆրանկա անուն գործածեմ նե կաթը պիտի չի դիպչի ինձի: Լավ, կաթը խմելես առաջ անունս Բոլ է կըսեմ, վերջացավ գնաց:

– Ատանկ է:

– Էֆենտիմ, խոսքը խոսք կը բանա կըսեն: Ըսելն ամոթ է, ես մայասուլ ալ ունիմ: Ալաֆրանկային հետևողները մայասուլին չեն հավատար, մայասուլ չի կա, կըսեն: Աճապա ալաֆրանկա անուն մըն ալ մայասուլիս համար գործածեմ նե այդ փորձանքեն ալ կընամ խալսիլ:

– Քանի որ ալաֆրանկայի մեջ մայասուլ չի կա, այդ փորձանքեն ազատվելու համար ալաֆրանկա դառնալու է:

– Ես բժշկի ստակ տալեն գլուխս ազատած չունիմ: Հիմակվընե շուտ չ'ըլլար, ալաֆրանկա կըլլամ, կը վերջանա:

– Եղիբ, բայց անգամ մը բժիշկին հարցրու:

– Ինչո՞ւ պիտի հարցունեմ, եղա վերջացավ: Ինձի օգուտ ընե նե մեր մսագործին ալ լուր կը դրկեմ, ան ալ թող ալաֆրանկա ըլլա, վասնզի երեք ամիսեն ավելի է որ մայասուլի պատճառով պառկած է խեղճը: Աֆ կընեք, ինձի թող տվեք երթամ ատ փորձը ընեմ, վաղը՝ կը տեսնվինք:

4.

– Կը ներեք, Թորոս աղա, նորեն ձեր գլուխը պիտի ցավցունեմ:

– Հոգ չէ, հրամանեցեք, նստեցեք: Կիրակոս՝ Մարկոս աղային նարգիլե մը բեր: Ինչ ըրիք տեսնանք, փորձեցիք, մայասուլնիդ անցա՞վ:

– Փորձեցի: Ձեր բացատրածին համաձայն՝ քանի որ ալաֆրանկայի մեջ մայասուլ չկա եղեր, գլուխս եվրոպական գլխարկ մը դրի, անունս ալ փոխեցի ալաֆրանկա դարձա, որպեսզի այս մայասուլեն ազատվիմ, սակայն արդյունք մը չի չտեսա:

– Բժիշկի չի գացի՞ր:

– Գացի: Ես մայասուլ ունիմ ըսի նե, ատանք խոսք մ'ընեք, ամոթ է, ըսավ: Ալաֆրանկա եղող մարդը ես մայասուլ ունիմ ըսե նե՝ օրենքի դեմ է վասնզի ալաֆրանկայի մեջ մայասուլ չի կա, ըսավ:

– Ցավդ բացատրեցի՞ր:

– Բացատրեցի. մայասուլ չէ, ըսավ:

– Հապա ի՞նչ է:

– Արյունս բորբոքված է եղեր, աղիքներուս մեջ անկանոնություն մը կա եղեր, սև թոքս ճերմակցեր է տե ճերմակն ալ սևցած է եղեր, արյունս ուղիղ մեյ մը ներքև, մեյ մը վերև կը վազե եղեր, երբեմն ալ դեպի գլուխս կը բարձ-

րանա եղեր: Ինչ գիտնամ լայն ասպարեզ գտնելով մեյ մը ասդին մեյ մը անդին կը վազե եղեր:

– Է, այս հիվանդության անունը ի՞նչ է եղեր:

– Եղբայր, այս հիվանդության անունը շատ զվարճալի բան մըն է. ըսավ նե խնդալեն ճաթեցա:

– Ի՞նչ էր, չե՞ս հիշեր:

– Քանի մը բառ ըսավ, բոլորի վերջը ուս մը կար, միտքս չէ, բայց հիմա ծառան կուղարկեմ կը հարցունեմ:

– Ատ հիվանդությունը ինչե՞ն առաջ կուգա եղեր:

– Ցուրտեն, տաքեն, խոնավութենեն:

– Ատոր հնա՞րը:

– Գլուխս պաղ, ոտքերս տաք պահելու եմ:

– Ըսել է սենյակիդ վրան ցուրտ ըլլալու է, տակը տաք: Կամ տաք սենյակի մեջ նստած՝ գլուխդ դուրս հանելու ես:

– Ամառը ի՞նչ ընելու է:

– Ամառն ալ ոտքերդ պատուհանեն դուրս հանելու ես, կամ ամառը ոտքերդ տաք ջուրի մեջ դնելով գլուխդ ալ ջրհորի մեջ կախելու ես:

– Հատուկ կարևորություն պիտի տրվի եղեր կերակուրը ուտելուն: Ծաշեն ետքը պիտի չի նստիս, պիտի զբոսնուս: Ստամոքսը ոչ շատ ծանր, ոչ ալ թեթև պահելու է եղեր: Կերակուրն ալ ալաֆրանկա ուտելու է, ալաթուրքա, այսինքն ձեռքով պիտի չուտես:

– Ալաֆրանկայի մեջ կերակուրը ոտքո՞վ կուտեն:

– Մեկ ձեռքդ պատառաքաղ, մեկ ձեռքդ դանակ և մեկ ձեռքդ ալ գդալ բռնելով հացն ու միսը մանր մանր կտրելու է և դանդաղ ուտելու է, որպեսզի շուտ մարավի, միսն ալ շատ եփած ըլլալու չէ, կեսուսն ուտելու է.:

– Ատոնք ընես նե հիվանդությունդ պիտի անցնի՞:

– Մի վախճար, ըսավ բժիշկը, հիվանդությունդ մայասուլ չէ, վտանգավոր բան մը չէ, բայց բուժվող հիվանդություն ալ չէ:

– Թող մայասուլ չըլլա տե, թող չի բուժվի:

– Հա ամա, ցավը ինչ որ էր, նորեն ան է, միայն անունը փոխվեցավ և ալաֆրանկա անուն մը դրվեցավ:

– Ծիշտ մեր ալաֆրանկա պարոններուն պես, իրենք ինչ որ են, նորեն ան են, միայն անունները ալաֆրանկա է: Եթե անուն փոխելով հիվանդությանն էր և մարդիկ փոխվեն, բոլոր հիվանդները անուննին կը փոխեին: Բերանս բանալ մի տար, աստվածդ սիրես, բառերը փոխելով մեր աչքերը

կը գոցեն: Օրինակ ծառադ կը վռնտես. ծառան հրաժարվեր է, կըսեն, մեկը եթե ոտքիդ կոխես, անուշադրության արդյունք է, կըսեն, երիտասարդին մեկը անամոթություն մը ընե նե սիրո կրակով վառված ըրածը չի գիտե խեղճը՝ ըսելով կը պաշտպանեն, ասդին անդին պարտք ընելեն ետքը խանութը փակողին՝ խանութը գոցեց որպեսզի գող չի մտնա, քանի մը օրեն նորեն պիտի բանա, կըսեն, իր պարտքը չի տվողին գործիմաց կըսեն, իր պատվով ապրողին ապուշ է, կըսեն, շողոքորթին աշխարհիկ մարդ է կըսեն, ճշմարտությունը խոսողին հանդերձյալ մարդ է կըսեն, ծանրագլուխ մարդուն պաղ մարդ է կըսեն, կապիկի պես մեյ մը ասդին մեյ մը անդին պտըտողին աս ինչ տաք տղա է, կըսեն, իրենց ուզածին պես զվարճանալ չի կրցած կնիկները հյուրասենյակը երթան նե՝ մատամները գործ ունին կըսեն, մազը մորուքը ճերմկած ծերուկի մը որևէ կնոջ մը քսվիլը տեսնան նե ինչ մաքուր սրտով մարդ է, կըսեն:

– Շարունակե՞մ թվել: Ասոնք, պարզապես ճերմակին սև, սևին ճերմակ, էրիկմարդուն կնիկ, կնիկմարդուն էրիկ կըսեն: Ասոնք կլվելու բա՞ն են, եղբայր:

– Խոսքդ չի մոռանաս, հիմա կուգամ:

5.

– Ալաֆրանկայի վրա այսքան հարձակվելիս եթե չես ուզեր՝ ինձի հետ մի խոսիր:

– Չէ, ալաֆրանկայի մը պատճառով հին բարեկամս չեմ կրնար լքել:

– Չես կրնար լքել նե՝ լսե: Աչքիդ ինչ որ գեշ երևա, գիտցիր, որ ալաֆրանկա է: Մենք խարտալը եփելով ցավոտ տեղերու վրա կը դնենք, ալաֆրանկայի մեջ խարտալը եփելով տպակած միսի կամ այլ կերակուրի հետ կուտեն: Մեր ստամոքսը ասանկ բան կընդունի՞:

– Չ'ընդունիր:

– Մաքրության պայմաններեն մեկն ալ եղունգներուն կարճ ըլլալ չէ: Ալաֆրանկայի մեջ եղունգները բաժի չափ կերկընցնեն և մարդիկ լուսավորյալ ըլլալն ու չըլլալը կորոշեն անոր եղունգներեն: Խենթություն չէ՞ ասիկա:

– Խենթություն է:

– Կնիկներն ալ էրիկմարդոց պես ճաշի ժամանակ գինի պիտի խմեն և էրիկմարդոց պես գինովնալու ալ իրավունք ունին եղեր: 19-րդ դարու մեջ գինովությունը երկու սեռի համար հավասար պիտի ըլլա եղեր:

Ասիկա անամոթություն չէ՞:

– Գետինի վրա նստած ճաշելը խավարյալներուն հատուկ է եղեր, լուսավորյալ ըլլալու համար սեղանի մոտ դրված աթոռի վրա նստելով ճաշելու է: Գետինը նստած ճաշողները հինգլուխ, անխելք, քաղաքավարութենեն հեռու մարդիկ են: Սեղանի մը համար այսքան հայիոյանք կը մարսվի՞:

– Չի մարսվիր:

– Եղբայր, ասոնց քով քաղաքավարությամբ ճաշել ալ չկա: Սեղանի վրա պնակ մը կերակուր եկածին պես՝ բոլորը մեկ գդալը վերցնողը կը հարձակվի այդ ամանին վրա: Գդալներով այնտեղեն վերցնելով՝ իրենց առջևի ամանի մեջ կը լեցունեն: Բոլորը մեկտեղ նույն ամանեն ուտելը ալաֆրանկային դեմ է եղեր: Այդ իրարանցումին ատեն եթե ալաֆրանկային վարժված ես, ճարպիկ գտնվելով առջևիդ ամանը կը լեցնես, ալաֆրանկային վարժված չես նե՝ անոթի կը մնաս: Ավելի զարմանալին կա: Իրենց այդ անքաղաքավարության համար ներողություն խնդրելու փոխարեն՝ աղան մեր կերակուրին չի հավնեցավ և անոր համար չի վերցուց կըսեն: Աղային վայել ճաշ չունենալնուս համար կը ցավինք, ըսելով կոկորդները կը լեցունեն: Վա՛յ անամոթներ, վա՛յ: Թե մարդս անոթի կը թողուն և թե իբր թե կը ցավին եղեր: Այս անքաղաքավարությանը կրնա՞ս դիմանալ:

– Չեմ կրնար:

– Ճաշեն ելար մի՞ մեկը մեկուն աղջիկը, մեկալ մյուսին կնիկը, մյուսը ասոր հարսը, աս անոր կիսուրը թևը առած պիտի պտըտին, որպեսզի կերածնին մարսեն: Ըսենք թե քալելը մարսողական է, կնիկը ինչո՞ւ համար է: Մարդ եթե առանց կնկան քալե՝ կերածը չի՞ մարսեր: Մարսելու համար անպատճառ կնի՞կ պիտի ըլլա: Իմ խելքս ասոր չի հասնիր:

– Չի հասնիր:

– Կնիկ ըսածդ եթե մարսողական է, ամեն դեղատուն մեկ երկուական կնիկ թող դնեն, որուն ստամոքսը որ ավրվի՝ ուղիղ դեղատուն թող երթա, թևը կնիկ մը անցունե՝ վերջացավ. ալ ինչ հարկ կա խարտալի կամ որևէ այլ դեղի: Այդպես չէ՞:

– Այդպես է:

– Պարոնները կերածնին մարսելեն ետքը ըսենք քի տեղ մը հյուր պիտի երթան: Մինակ երթան նե չ'ըլլա՞ր: Չէ. չ'ըլլար: Կին արմատը հավաքույթներու զարդն է եղեր, մատամներն ու մատմագելներն ալ հետերնին տանելու է եղեր: Չի տանիս նե՝ քեզմե տգետ մարդ չի կա:

– Չի կա:

– Մեյ մ'ալ տեսնաս՝ պարը մեջտեղ կը հանեն: Պարը լուսավորության մեկ

ճյուղն է եղեր: Շատ աղեկ, երկու երիկմարդ իրարու հետ պարենն են չ'ըլլա՞ր: Չ'ըլլար: Մեկը երիկ, մյուսը կնիկ պիտի ըլլա, որ լուսավորություն ըլլա: Ամոք չէ՞:

– Ամոք է:

– Ահա ասանկ, Մարկոս աղբար, ճաշելու համար կնիկ պետք է, կերածդ մարսելու համար կնիկ պետք է, զվարճանալու համար՝ կնիկ, պարելու համար՝ նորեն կնիկ պետք է, ես աս ալաֆրանկայի մեջ կնիկեն գատ բան մը չի տեսա:

– Չի տեսար:

– Շատ աղեկ ընդունինք, որ կերածը մարսելու համար մարդ թեղ կնիկ մը պիտի առնե, եթե ատանկ է. ինչո՞ւ տգեղ կնիկները չեն առներ: Բոլորը աղվորը կառնեն: Արդյոք տգեղ կնիկները մարսողական չե՞ն կրսես: Կամ պարի ատեն ինչո՞ւ բոլորը աղվոր կնիկ հափշտակելու կաշխատին: Տգեղ կնոջ մը կամ օրիորդի մը հետ պարելը լուսավորության դե՞մ է:

– Դեմ է:

– Ահա, եղբայր – այս պատճառներով ալաֆրանկան շատ պարապ բան կերևա ինձի, և ատանկ տեղ մը գտնվիմ նե թուլություն կուգա վրաս: Հոք երանելիին պես կանիծեմ ծնած օրս:


– Կանիծես ա:

– Հապա ասոնց կարգ մը ձևերը, սովորությունները անհասկանալի խոսքերը ինչ ընենք:

– Ի՞նչ կրնանք ընել:

– Վաղվան թողունք նե չ'ըլլա՞ր:

– Կըլլա:



ԱԼԱՖՐԱՆԿԱՅԻ ՍՈՒԱՐԵՆԵՐԸ

– Սկսե տեսնանք, Թորոս աղա, խոսքերնիս չի մոռանանք:

– Ասկե մեկուկես ամիս առաջ, գիշերվա ժամը 8-ին գիշերազգեստս և գիշերվա ֆեսս հագած, չիբուխս վառած, «Ձեն հոգևոր» կարդացած ժամանակս, չաթ, չաթ դուռը ծեծեցին: «Ձեն հոգևորն» ու չիբուխը ձգած երբ պատուհանը բացինք և ով ըլլալը հարցուցինք – Անթուանն եմ, ըսավ: Անթուանեն բան մը չհասկացանք, և անքաղաքավարություն մը ըրած չըլլալու համար որուն կողմեն կուգաս հարցուցինք նե մոնսինյո Պաթիստը դրկեց, ըսավ:

– Շապիկցու պաթիսթա էին դրկեր:

– Չէ, եղբայր, համբերի: Անթուանեն բան մը հասկցած չըլլալուս իբր թե տեղեկություն մը առնելու համար որուն կողմեն եկած ըլլալը հարցուցինք: Եկուր տես որ Պաթիսթեն ալ բան մը չհասկցվեցավ: Հասկացած չըլլալս չիմացնելու համար հարցուցինք թե այդ մոնսինյո Պաթիստը որոնցմե կըլլա:

– Էֆենտիս, ըսավ, մոնսինյո Պաթիստը մոնսինյո Ապոլոնին տղան է, մոնսինյո Աբոսթոլին հայրն է, մոնսինյո Բիերին աներն է, մատամ Ատելիային երիկն է, և մատամ Ադիլինան ալ անոր կնիկն է:

– Ատիկա չհասկանալու բան մը չէ, մոնսինյո Պաթիստը Ատելիայի երիկը ըլլա նե մատամ Ատելիան ալ ուրիշի կնիկը չպիտի ըլլա յա:

– Կաղաչեմ, խոսքս մի կտրեր: Ասոնք լսելես ետքն ալ բան մը չհասկացանք նե հարցուցի, թե այս մոնսինյո Պաթիստը ինչ ազգե է: Հայրը հայ է, ըսավ, մայրը կաթուղիկ իր ինչ ըլլալը դեռ որոշված չի:

Շատ աղեկ, անուշա, ըսինք, դուն աս մարդուն հորը և ազգականներուն անուններուն հայերենը ըսե քի ինչ ըլլալնին հասկնանք: Ըսավ թե Աբրահամին տղան է, Իսահակի պաճանախը, Հակոբի աներձագը, Դավիթին...

– Ծննդոց գիրքն է ասիկա:

– Դավիթի եղբայրն է, ըսավ: Է, ինչ կուգեք, հարցուցինք նե այս իրիկուն սուարե տանսանք կա, ըսավ, մատամնիդ առեք և հրամանեցեք: Պիտի չերթայի ամմա, հայտե անգամ մը ատանկ տեղերը տեսնամ ըսելով առանց



զգեստս փոխելու չիբուխնիս, Չեն հոգևորնիս ու կնիկնիս առինք, ելանք գացինք: Դուռը ծեծեցինք վեր ելանք: Քանի մը կնիկներ, աղջիկներ նստած են: Սենյակեն ներս մտած չմտած ասոնք քահ քահ խնդալ մը չսկսի՞ն:

– Թող չսկսին:

– Վրաս գլուխս կը նայիմ խնդալիք բան մը չկա: Էնթարիս այդ օրը լվացված է, ֆեսս ըսես գիշերվա ֆես է, չիբուխս յասիմայե, քեհրիբարով, լավ ալ կաշխատի «Չեն հոգևորն» ըսես պատռված չէ, կնիկս կարգին կնիկ, ասոցն ասանկ խնդալը հեչ չկրցա հասկնալ: Տարօրինակն ալ այն է, որ ես ասանկ վրաս – գլուխս նայած ատենս անոնք կը շարունակեն խնդալ:

– Անամոթներ:

– Է, անանմոթին հետ անամոթ ըլլալու է: Կնիկնիս և «Չեն հոգևորնիս» քովերնիս առած չիբուխնիս լեցուցինք և սկսանք «Չեն հոգևորնիս» կարդալ: Անդին կը պարեն, կը ցատկեն, կը պոռան, և «Մանգումեի» ըսածին պես և այլն, և այլն: Մեյ մալ տեսնամ բոլորը լցվեցան սենյակը: Չայներնին քիչ մը կտրեցին: Այստեղ կնիկ մը խնդալով, կոտրտվելով, քովս եկավ, կը ներեք, ըսավ: Ներելու բան մը չկա ըսինք նե ատիկա ձեր ազնվութենեն է ըսավ, բան մը լուր չունիմ ըսինք նե ատիկա ձեր մարդասիրությունն է, ըսավ: Ծանրմ, ինչ է եղեր, հարցուցինք նե ատիկա ձեր քաղաքավարությունն է, ըսավ: Հալլա հալլահ, աստվածդ սիրես բացեն խոսե քի բան մը հասկնանք ըսինք նե ատիկա ձեր քնքշութենեն է, ըսավ: Ալ գլուխս թասը տաքցավ, ոտքի ելա, այ կնիկ, ըսի, միտքդ հասկցուր, չե նե հիմա չիբուխս, «Չեն հոգևորն» ու կնիկս կառնեն կեյլամ կերթամ: Ասոր վրա, նորեն կոտրտվելով ըսավ քի սենյակին ներս մտած ատեննիդ քիչ մը խնդացինք նե պատճառն այն էր որ ձեր արտաքինը չէինք կրցած հաշտեցնել սուարեի հետ: Մտածեցի, մտածեցի, տեսա որ ես մեկու մը հետ քեն պահած չեմ որ հաշտվիմ, բայց գուցե մտքես ելած է մտածելով անգամ մը հարցնենք և տեսնանք թե ով է աս սուարե ըսված մարդը, արհեստը ինչ է: Հարցուցինք նե նորեն սկսան խնդալ: Ես ալ կարծեցի թե բելքի աս սուարե ըսվածը անանկ մայմուն, մասխարա մարդ մըն է, որուն անունը տրված ատեն ասոնց խնդալը կուգա կոր: Սակայն այդպես չէ եղեր: Սուարե ըսածնին ինչ ըլլա լավ. այդ գիշերվա անունն է եղեր:

– Է, քուկին արտաքինդ այդ սուարեի հետ կոված էր, որ պիտի հաշտեցունեին:

– Ես ալ ատոր վրա զարմացա, այդ խոսքերեն ալ բան մը չկրցանք հասկնալ:

– Գիտեմ, որ գիշերվա էնթարիս մեկու մը հետ կռիվ ըրած չէ, և էնթարին կրնա կռիվ ընել: Նորեն ըսինք թե այ կնիկ, մենք քու այս խոսքերեն ալ բան

մը չկրցանք հասկնալ: Էֆենտիս, ըսավ, գլուխը քիչ մը շարժելով, այս խոսքը թուրքերենին աղեկ չի գար կոր, ֆրանսերենին մեջ ասանկ կըսեն, երբ մարդ մը ասանկ տարագով պարահանդես երթա.

– Անմիջապես ֆրանսերեն սորվելով ամեն ինչ հասկնալու էիր:

– Սորվելու ժամանակ չի մնաց: Մյուս կողմեն մեկը եկավ, մեկնեց մեր չհասկացածը: Չեր արտաքինը սուարեի հետ հաշտեցուցած չեք ըսելը կը նշանակե այս զգեստը անվայել է սուարեին, ըսավ: Մենք ալ ըսինք քի մեր արտաքինը սուարեի չի վայլեր նե ձերը կը վայլե: Շիտակը խիստ զայրացա, անկյուն մը քաշվեցա, բացի «Չեն հոգևորն»: Այդ ժամանակ մանդալից գեշ հոտ մը գալ սկսավ: Աս ու ան կողմեն սկսան այդ մասին խոսիլ: Այսօրվա պես միտքս է, ըսեմ տե քաղաքավարություն սորվե: Սորվե տե ուրիշներուն ալ սորվեցուր: Ասոնց քթերը, ածուխները, ականջները, մանդալեն անգամ իրարու բոլիթիքա կընեն կոր, լսելու ըլլաս նե կապշիս կը մնաս: Լսե.

– Մատամ, մանդալը ուր կտանիք ըսի:

– Էֆենտիս, գեշ հոտ մը կա, ատոր համար դուրս պիտի հանեն:

– Նեղություն մի կրեք, հոտ չկա, մեր քիթը հոտ չառներ:

– Այդ ձեր քթի ազնվութենեն է:

– Կը ներեք, ատիկա ձեր ածուխի փափկանկատութենեն է, ըսավ:

– Չեր քիթին այդպես ըսել կը վայլե:

– Տիկին, ձեր ածուխը մեր քիթը ամոթով թողուց, Մանգումեի ըսածին պես և այլն, և այլն և այլն: Ալ աս խոսքերը լսելուս ելիր ըսի կնկան, և «Չեն հոգևորնիս» մնաք բարովը դրի և դռնեն դուրս ելանք, երկու քայլ առինք, մեյ մալ ծառան ըսավ, թե այս դուռը փողոցի դռան չի պատասխաներ: Առ քեզի անհասկանալի խոսք մըն ալ:

– Արդյոք այդ դուռը և փողոցի դուռը նամակ կուտան կառնեն եղեր, կամ իրարու հետ կը խոսին եղեր, որ այս դուռը մյուսին պատասխան չի տար եղեր:

– Ով գիտե: Այդ դուռը աստուծմե գտնե, պատասխան չտվող դռան ալ լեզուն չորնա ըսելով մեզ փողոցի դռնեն դուրս հանե ըսինք: Ինչ որ է, հանեց: Հազիվ փողոց ելանք, երկու քայլ առինք, ծառան, նորեն ըսավ, թե աս փողոցը ձեր տունը չի տաներ: Փողոցը չի տանիր նե մենք կերթանք, ֆեներ /լապտեր/ ունինք, ան կը տանե, ըսինք, առինք քալեցինք: Մխալ փողոցներ մտանք, ելանք, ճամբան խառնեցինք, վերջապես մեծամեն տուն հասանք: Ահա քեզի ալաֆրանկա մեկ հավաքոյթի մեկ պատմությունը.

– Է, ձեզ դուռը անոնց դռան պատասխան տվա՞վ:

– Գալ շաբաթ կըսեմ:

ՊԱՐԻ ԴԱՍ

– Խեր ըլլա Մարկոս աղա, աս ինչ կերպարանք է, գլուխնիդ դրվածը զանգակավոր քյուլլահը է, ի՞նչ է: Մեյդան օյունու պիտի խաղաս:

– Եղբայր ժամանակներուն հարմարվելու է:

– Ժամանակներուն հարմարվելու համար քեզե քյուլլահ դնելու է:

– Չէ, եղբայր, այս շաբաթ բարեկենդան չէ:

– Բարեկենդան ըլլալով ինչ կըլլա:

– Տղաքը խնդրեցին պաղատեցին թե մասխարա ըլլանք: Ես ալ աս տարիքս եկած և հիչ մասխարա եղած չըլլալուս միտքս փոխեցի և որոշեցի մասխարա ըլլալ:

– Մասխարա եղողի գլուխն քեզե քյուլլահ դրվելու է:

– Քեզե քյուլլահ թող չըլլա տե ուրիշ բան մը ըլլա, միայն թե գլուխը անպատճառ տարօրինակ բան մը ըլլալու է, որ մարդիկ խնդան:

– Մասխարա դարձան ուր պիտի երթաք:

– Չոճուխները պիտի առնեն պարահանդես տանիմ, հոն պիտի պարենք:

– Է, դուն պարել գիտե՞ս:

– Երեկ պարի ուսուցիչ մը բերինք, եղբայր, ատ դյուրին բան է եղեր պարելը, կարևորը ոտքն է, օրինակ մեկ, երկու, երեք, մեկ, երկու, երեք, մեկ երկու, երեք, մեկ երկու երեք.

– Է, ատոր վե՞րջը:

– Նորեն մեկ, երկու, երեք, մեկ, երկու, երեք... առաջ ձախ ոտք, հետո աջ ոտք, հետո ձախ ոտք, աս ոտքերը անգամ մը որ միտքդ պահես սորվեցար գնաց:

– Ադ է նե բան մը չէ:

– Չախ ոտքդ ձախ կողմը պիտի նետես, աջ ոտքդ ալ աջ կողմը, և այդպես պիտի դառնաս:

– Մխավմունք մը չըլլա: Չախ ոտքը ձախ կողմը, աջ ոտքը աջ կողմը նետես նե ոտքերդ կը բացվին և կը կայնիս այդ դրության մեջ: Ինչպե՞ս կրնա դառնալ:

– Եղբայր ըսինք մեկ, երկու, երեք, մեկ, երկու, երեք:



– Մեկ, երկու, երեք, կամ չորս, հինգ, վեց, աս թիվերուն ըսելիք չկա, բայց ինչպե՞ս դառնալու է:

– Ջանըմ, դուն չես հասկնար, ուսուցիչը ըսավ թե խնդիրը մեկ, երկու երեքի մեջն է: Խոսքը չեն երկնցներ, իշտե մեկ, երկու երեք ըսելով կը սկսիս դառնալ: Ասկե զատ քովդ աղջիկ մը կամ կնիկ մալ պիտի ըլլա:

Ան ալ դուն պիտի դարձնես:

– Ան ալ իր գլուխն անկյուն մը կայնած դառա նե չըլլա՞ր:

– Չէ, մեջքեն բռնելով, դուն պիտի դարձնես, օրինակ, երես երեսի գալու եք: Դուն ձախ քայլը նետեցիր մի ան ալ աջը պիտի նետես:

– Այդ հաշվով մենք ձախ պիտի երթանք, ան աջ:

– Այո:

– Մենք ցած, ան վեր:

– Այո:

Ըսել է իրարմե պիտի բաժնվինք:

– Չէ, առանց բաժնվելու, մեկդ աջ, մյուսդ ձախ պիտի երթաք:

– Խելքդ թոցուցիր, աղբար, երկու հոգի մեկ-մեկը բաժնվելու կրնան մեկը Ղալաթիա, մյուսը Պոլիս անցնիլ: Հաշիվին մեջ սխալ մը չըլլա:

– Չէ, եղբայր, հաշիվը պարզ է, մեկ, երկու, երեք, մեկ, երկու երեքի վրա է գործը: Իշտե այս հաշիվով ալ պիտի դառնաք: Զուկին երեսդ հյուսիս դառնա նե անոր երեսն ալ հարավ պիտի դառնա, քու երեսդ արևելք ըլլա նե արևմուտքը քու ծոծրակիդ կողմը կը դառնա կոր և տամայիդ երեսին կը հանդիպի:

– Աշխարհագրության դաս կուտաս, մարդ աստուծո:

– Իշտե այս ձևով դառնալու է, միայն պիտի աշխատիս, որ գլուխդ չի պտըտվի, վասնզի...

– Ինչպե՞ս կըլլա: Ես դառնալու ըլլամ նե գլուխս իր տեղը կը մնա՞, ան ալ կը դառնա: Խենթ ես, ինչ ես: Ըլլալու բա՞ն է, որ մարդուս մարմինը դառնա, գլուխը տեղը մնա...

– Ըսենք թե գլուխդ դարձավ, գետին ինկար, անմիջապես պիտի կայնիս:


– Այն ատեն մեկ, երկու, երեքը ըսելու չէ:

– Մեկ, երկու, երեքը հեչ պիտի չի մոռնա, ձեռքերդ արյունի մեջ ալ ըլլան, պիտի ըսես:

– Հայերե՞ն պիտի ըսեմ թե թուրքերեն:

– Նվագողներուն պիտի նայիս, եթե նվագողները հայ են, հայերեն պիտի ըսես:

- Տամայի ձեռքերեն հայերեն պիտի բռնե՞մ չենե - թուրքերեն:
- Տամադ ինչ լեզու որ գիտե, այդ լեզվով ես բռնելու: Տամա կա, որ անուշ լեզվով կը բռնվի, տամա ալ կա որ սերթ լեզվով կը բռնվի...
- Պար ըսածնին աս է եղեր, ուրիշ բան չի կա:
- Ուրիշ պարեր ալ կան եղեր, օրինակ չորս ոտք, հինգ ոտք, վեց ոտք, խնդիրը ոտքի մեջ է: Եղբայր:
- Ատոնք ալ սորվեցար:
- Ուսուցիչը ըսավ քի այս տարի մեկ, երկու երեք լավ մը միտքդ պահե տե, մյուս պարերն ալ գալ տարի կը սորվիս: Շատ հավնեցավ ինձի, ընդունակությունդ տեղն է, ըսավ:
- Ըսել է, վաղը իրիկուն պարահանդես պիտի երթաս:
- Եթե տերը կամենա:
- Գնա տե տեսածներդ հետո ինձի պատմե:
- Դուն ալ երկուր, Թորոս աղա, մեկ տեղ կը պարենք:
- Հապա մեկ երկու երեք մոռնամ նե... հա մոռցա հարցնել բուքա պարելու ատենդ քեչե քյուլլահը հանես նե չըլլա՞ր:
- Չէ, քանի որ քյուլլահով պիտի պարեմ, անով սորվելու է, որ չի մոռնամ: Կրնա ըլլալ որ Ֆեսով սորվելով Ֆեսը հանելու ըլլամ նե մոռնամ :
- Ըսել է, սորվելու ատեն ես ալ քեչե քյուլլահ դնելու եմ:
- Հարկավ:
- Մնաս բարով,
- Բարի եկաք:
- Շաբաթ օր կը տեսնվինք:
- Ինձի խոսքի մի բռնե՞ր... մեկ, երկու երեք:



ՊԱԼՈ

- Ինչ լուր, Մարկոս աղա, որոշածիդ պես պարահանդես գացիր տե պարեցի՞ր մի:
- Որոշածիս պես պարահանդես գացի, բայց որոշածիս պես չի կրցա պարել:
- Պատճա՞ռը: Մեկ, երկու, երեք, ըսելով չի քալեցի՞ր:
- Մեկ, երկու, երեք ըսելով դեպի առաջ քալեցինք, ամնա փողոցի մեջ քալելու պես կը քալեինք կոր, խնդիրը հեն դառնալու, հեն ալ քալելու մեջ է եղեր:
- Առջի օր տանը շատ լավ կը պարեիք կոր:
- Եղբայր, տան հաշիվը շուկան չանցնիր կըսեն, Տունը ես իմ գլուխս նորեն կը պարեմ կոր, բայց պարահանդեսի մեջ չի կրցա պարել, վասնզի հոն դժվարություն մըն ալ եղավ դեմս:
- Ի՞նչ դժվարություն:
- Պարահանդեսի մեջ թե պիտի դառնաս, և թե կնիկ մը կամ աղջիկ մըն ալ հետդ դարձնելեն զատ ոտքերդ ալ մուգիքային պիտի հարմարցնես: Ես ըսես շատ լավ կը դառնամ կոր, դիմացինս ալ կը դարձնեմ կոր, բայց եկուր տես որ ոտքերս մուգիքային չեմ կրնար կոր հարմարցնել:
- Այդ պզտիկ բանն ալ թող նվագողները ընեին և իրենց մուգիքան ձեր ոտքերուն հարմարցնեին:
- Տամային ոտքերն ալ իմ ոտքերուս չեն հարմարիր կոր:
- Ըսել է պարը շատ լավ սորված եք, գործը մնացեր է միայն ոտքերնիդ հարմարցնելուն:
- Այո - անգամ մը որ ոտքերս հարմարցնեմ, ալ անկից ետքը չեմ վախճար խնդիրը ոտքերը հարմարցնելու մեջ է եղեր, մենք ասիկա ուշ սորվեցանք, պարապ տեղը զվարճութենեն զրկվեցանք.
- Ինչպե՞ս:
- Վարը ասդին անդին պտըտելու ժամանակ մեյ մալ տեսնամ, դիմակավոր մը եկավ քովս, ականջս քաշեց:
- Աղվո՞ր էր:
- Դեմքը դիմակով ծածկված էր:
- Խոսքն ու զրույցը զոնե տե՞ղն էր:



– Գեմքին դիմակ կա, չի հասկցվիր որ... ականջես քաշելուն պես մեկեն ի մեկ խելքս վրաս եկավ,– ինձի որպես տամա կընդունե՞ք, ըսավ:

Գլուխս վրա ըսելուս չմնաց, թևս մտավ, մեզի ուղիղ բունչ ծախողի խանութը տարավ: Հոն մեզի շատ պատիվներ ըրավ, բունչ, քոնյակ, շամբայն, վիրմութ, կակաո, և անունը չի լսած կարգ մը խմիչքներ կերթան կուգան: Մտքես կըսեմ աս ինչ ջյոմերդ տամայի հանդիպեցանք: Մեյ մալ, դուրս գալու ժամանակ, մարդը եկավ երկուքուկես ոսկի ուզեց: Ո՞վ պիտի տա ըսինքնե դուն պիտի տաս ըսավ: Ճանըմ, ուրիշը ուզե, ստակը ես տամ, մատամը ուզեց, ստակն ալ ան պետք է տա ըսած չըսած պրե դուն էջ ես, մատամը հիչ փարա կուտա չըսե՞ մի...այդ ատեն դեմքս բանջար դարձավ: Քովիս մատամը հասկցավ զայրոյթս, բերանը բացավ վաճառողին.– չե՞ս ամչնար կոր,– ըսավ, ան, քուկին գիտցած մարդերեն չէ, ըսաւ, ան դրամին դրամ չըսեր, երկուքուկես ոսկու տեղ հինգ ոսկի կուտա եւ ասանկ կարգ մը բաներ ըսելեն ետքը ինձի դառնալով ըսաւ:

– Հանե, սվոր փողերը տուր: Ասանկ կնկան ի՞նչ կըսես: Հանեցինք երկուքուկես ոսկին տվինք և ճաշարանեն դուրս եկանք: Բայց դուն այդ կնկան սերթոթյունը նայե, որ դուրսն ալ կարգ մը խոսքեր ըսավ մարդուն:

– Սերթ կնիկ է եղեր:

– Չէ, սերթ կնիկ չէր, բայց ինչ օգուտ որ ոտքերս չկրցա հարմարցնել ինչ որ է, նորեն թևը մտած պտըտելու ատեն՝ վալս մը չընե՞նք, ըսավ:

– Ընենք,- ըսի և սկսեցա մեկ, երկու երեքի դասս կրկնել: Մեկ, երկու երեքը ջրի պես գոց ըրի, հայտե, ըսի տամային, մեջքեն բռնեցի...

– Գետի՞ն գլորեցիր:

– Բռնեցի մեջքեն, սկսա դառնալ: Նայեմ, կայնել երեսս կը նայի կոր:

– Կայներ դի ի՞նչ կը նայիս չի դառնա՞ս,- ըսի: Ան ալ սկսավ դառնալ, բայց ոտքերը չկրցանք հարմարցնել:

– Ինչու՞:

– Իմ երեք քայլ առնելուս՝ ան վեց քայլ կառներ կոր:

– Ատանկ պիտի ըլլա, կնիկ մարդու քայլը պզտիկ ըլլալով, անոնց երկու քայլը մեր մեկ քայլը ըսել է:

– Ան վեց քայլ, ես երեք քայլ, առնելուս պես՝ մեջտեղնիս բավական չափով բացվեցավ... Թևերնիս քիչ մը երկար ըլլար նե՛ թող տասնըվեց քայլ ալ առներ, վնաս չունի, տեղը հարմար է. մեկ խոսքով՝ ան դարձավ, ես դարձա, ան դարձավ, ես դարձա, մեյ մալ տեսնամ մեջք մեջքի եկանք: Տաման խնդալեն կը ճաթի կոր...

– Այ,եղբայր, մեկ, երկու, երեք ըսելով չե՞իք քալեր:

– Ինչպե՞ս չէ, մեկ, երկու երեք ըսելով կը քալեի, քալելս լավ էր, ջանըմ, ասոր խոսք չի կա, տաման ալ շատ հավնեցավ քալելուս, եկուր տես որ տամայի ոտքերուն չենք կրնար կոր հարմարցնել:

– Կռնակ կռնակի եկավ նե, ի՞նչ ըրիք:

– Տաման լավ կը պարե՞ր վալսը:

– Երեսը դիմակ կա, հայտնի չ'ըլլար որ... մեկ երկու երեք գիտենք, ըսինքնե, ան բուքա է, ըսավ: Քիչ մը համբերե, ետքը կը պարենք ըսավ:

– Լավ:

– Ելանք նորեն գազինո գացինք, և քանի մը հատ ալ տնկեցինք: Ախ, գոնե ոտքերնիս հարմարցնեինք...

– Տամայիտ երեսը չտեսա՞ր:

– Քանի մը անգամ աղաչեցի, որ դիմակը վար առնե տե երեսը բանա:

– Չ'ըլլար, ըսավ: Երեսդ անգամ մը տեսնամ ըսի նե չէ, ամոթ է, ըսավ...

Վերջապես չերկնցնեմ, քանի մը հատ խմելեն ետքը, բուքա խաղալու ժամանակ չի մնաց: Արդեն ոտքի վրա կայնելու կարողություն ալ չի մնաց: Վերջապես ալ մեկ, երկու, երեքին չի նայելով՝ սկսանք գլորվելու պարը պարել: Ախ, անգամ մը ոտքերս հարմարեին...

– Ետքը՞:

– Ետքը պարահանդեսեն ինչպես դուրս գալս չեմ գիտեր:

– Վերջապես անցած գացած օր է:

– Միայն առտվան արթնցա նե՛ տեսա որ քսակս քովս չէ:

– Մեկ, երկու, երեքը սկսեիր...

– Մեկ, երկու, երեքով դրամը կը գտնվի՞:

– Կը կորսվի տե չի՞ գտնվիր:

– Վերջապես՝ քսակնիս ալ վրա տվինք, քնանալ ալ չի կրցանք և ոտքերնիս ալ չի կրցանք հարմարցունել:

– Եղբայր, ոտքեն ոտք տարբերություն կա, ձեզի տամա մը որոշեցեք և միշտ անոր հետ պարելով մեկ-մեկուդ ոտքերուն վարժվելու եք: Ամեն տամայի ոտք մեկ չ'ըլլար:

– Ես ալ ատանկ կը կարծեմ, մեր կնկան սովորեցնելու է տե միասին պարելու է:

– Կը խնդրեմ, կնկանդ հետ պարել սորվելու ժամանակ՝ ինձի ալ իմացունես տե գամ և սեյր ընեմ:



– Մարկոս աղա այսօր զձեզ քիչ մը տկար կը տեսնամ, անկողինեն նո՞ր ելած եք, ինչ է:

– Հա, մինչև հիմա չըրած բաներս այս տարի կընեն:

– Խեր ըլլա ինչ է պատահեր:

– Անցած օր մեր կնկան հետ պարել կը սորվեինք, երբ ծառան վեր ելավ և նամակ մը տվավ ինձի: Բացինք նամակը, մեջեն թատրոնի տոմսակ մը ելավ:

Ճանըմ, աշխարհքս աս ինչքան ավրվեր է, որ մարդ ըսածդ /ինչպես կըսես Մանգումեն/, դրամ վաստկելու

համար ամեն ինչ կընեն. սուտ ալ կը խոսի շողոթորթություն ալ կընեն: Նամակին մեջ մեր մասին կարգ մը գովեստներ կային: Ես մեծապատիվ եմ եղեր, էֆենտի եմ եղեր, շատ ալ թատերասեր եմ եղեր, և միշտ թատրոն երթալով խումբը քաջալերած եմ եղեր: Եկուր տես որ աս տարիքիս եկած եմ, տակավին թատրոն գացած չունիմ, շատ անգամ ալ չեմ թողուր որ ուրիշները երթան: Ինչ որ է: Նամակին մեջ կարգ մը պարապ խոսքերե ետքը ըսված էր, որ դուք ժողովուրդին մեծ ծառայություններ ըրած եք. ժողովուրդը ձեզի պես մարդոց ոտքը լվալու տե ջուրը խմելու է, ուստի՝ վստահ ըլլալով ձեր ազգասիրությանը, չենք տարակուսիր, որ տոմսակը կընդունիք և ատով թե՛ դերասանները կը քաջալերեք, թե՛ խաղին հեղինակը, թե՛ հուշարարը, նույնիսկ տոմսավաճառն ալ քաջալերած կըլլաք:

– Է, ընդունեցի՞ր գոնե:

– Կնկանս հետ չի կրցի գլուխ հանել և՛ չի մեռած գոնե անգամ մը, աս թատրոն ըսվածն ալ տեսնանք ըսելով՝ ճաշեն ետքը հագա նոր վերարկուս, կնիկս ալ իր հարսանեկան շրջագգեստը հագավ, ելանք գացինք:

– Լավ զվարճացա՞ք:

– Սպասե քիչ մը: Ներս մտանք չի մտանք, երիտասարդ մը ելավ դեմերնիս, տոմսակնիդ տվեք, ըսավ: Տոմսակը ինչո՞ւ պիտի տանք եղեր, ըսավ մեր կնիկը առաջ նետվելով. մենք անոր ստակ տված ենք:

– Ճանըմ, տվեք տեսնանք, ըսավ երիտասարդը:

Շիտակը ասոր վրա ես ալ քիչ մը գեշ եղա, ասոնք մեր տոմսակեն ինչ կուզեն, ըսի, տոմսակ կուզես նե փարան տուր, հաստ մըն ալ դուն առ, երբ ըսինք,– պե ճանըմ, ըսավ երիտասարդը,– տոմսակը տվեք, որ տեսնամ թե ո՞րն է ձեր օթյակը և ցուցունեմ: Տվինք: Երիտասարդը առջևնիս ինկավ տարավ, օթյակ մը բացավ և աս է, ըսավ թիվ 13...:

– Ուղուրսուզ թիվի հանդիպե՞ր, եք:

– Թիվի՞ն ալ ուղուրլուն ուղուրսուզը կըլլա:

– Այո:

– Շարունակեցեք:

Մտանք ներս, նստեցանք: Խաղը սկսելուն դեռ ժամանակ կար:

Մանչուկը կանչեցինք և ըսինք՝ սրկե նարգիլե մը բեր:

– Կը ներեք, հոս նարգիլե չեն քաշեր, ըսավ:

– Շատ աղեկ, ըսինք:

Սիկարա մը վառեք էինք, որ երիտասարդը ներս մտավ.

– Կը ներեք, ըսավ, հոս սիկարա չեն խմեր:

– Կեցիր նայինք, դպրոցի մե՞ջ ենք. ի՞նչ է, ըսինք:

Բայց պարապ նստիլ ալ չ'ըլլար, կնկանս հետ բարթի մը սկամպիլ խաղանք, ըսինք, խաղի թուղթ ուզեցինք նե.

– Կը ներեք, հոս թուղթ ալ չեն խաղար, ըսին:

– Է, հոս հապա ինչ կընեն, ինչ կը խաղան, ինչ կը խմեն, հարցուցինք նե՝ հոս սուս փուս կը նստին, ըսվեցավ:

– Անանկ է նե ես ալ իմ կնիկս առնեմ թատրոն տանիմ որ քիչ մը սուս կենա, ամեն իրիկուն տո–տո–տո կը խոսի, հիչ ձայնը չի կտրեր:

– Աղեկ ամա, մեր փարայով գերի ինկանք, լեզունիս քաշեցինք սուս–փուս նստանք: Կես ժամեն սկսան նվագել՝ ամենեն մեծ գլխացավը: Նվագողները բոլորն ալ առջևնին կարգ մը թուղթեր դրած էին անոնց կը նայեին, ու կը նվագեին: Ամա ի՞նչ՝ ոչ մանի կա, ոչ կազել: Մեր կնիկն ալ ընդհակառակը կազել շատ կը սիրե: Դարձավ ինձի ըսավ, թե չըլլա՞ր ապսպրես որ կազել մը երգին: Ես ատանկ բանի ստակ տվողներեն չեմ՝ ամա, ստիպված նորեն կանչեցի երիտասարդը, ձեռքը մեջիտիե մը դրի, և ապսպրեցի որ կազել մը երգեն:

– Կը ներեք, հոս կազել չեն երգեր ըսավ: Կո՛ւզեք նե աս մեջիտիեով ձեզի լիմոնաթա բերեմ:

Ճանըմ, ամեն մարդ իր գրպանը լեցնելու կը նայի: Աստված մի արասցե,

եթե կոշիկդ ալ կորսվի, և ծառան կանչելով՝ քանի մը դուրուշ տաս ու սրկե գույգ մը կոշիկ բեր ըսես, կը ներեք հոս կոշիկ չի գտնվիր, կո՛ւզեք նե ձեզի բոնչ մը բերեմ տե խմեցեք, պիտի ըսե: Ամա բոնչը ոտքդ կրնա՞ս անցունել, որո՞ւն հոգը: Ինչ որ է՝ քանի մը վայրկյանեն վարագույրը բացվեցավ: Մեյ մա՛լ տեսնամ՝ մեկը դուրս եկավ՝ ա՛հ, վա՛հ, ո՛ւհ եո՛հ, բյո՛ւֆ ընելով:

- Փորձանքի մը հանդիպած չըլլա՞ր:
- Ի՞նչ գիտնամ, չըսեր որ, չի հարցվիր որ...
- Չէ նե բան մը պիտի ըսեր տե կամչընար:
- Թատրոնի շանային առջև ծակ մը կար, մեյ մա՛լ տեսնամ՝ անկե գլուխ մը դուրս եկավ, առջևն ալ տետրակ մը: Սկսավ կարդալ:
- Ի՞նչ կը կարդար:
- Կարդացածը լավ չի հասկցվիր, մյուսը չի թողուր որ... աս մարդը տետրակը կարդալ սկսելուն պես՝ ո՛ւֆ, բո՛ւֆ ընողն ալ սկսավ խոսիլ: Աս՞ լսես, թե ան լսես:
- Հարկավ, կամ մեկը խոսելու է, կամ մյուսը:
- Չըսե՞ս ատոնց օրենքն այդ է եղեր: Տետրակը մինչև կարդացող չըլլա, դերասանը բան մը չի կրնար ըսել: Հետո դերասանը սկսավ **Մամուլի** պես ինքզինքը գովել, **Օրսզիրի** պես բերանը եկածը ըսել, **Մանգումեի** պես երկու խոսքով հասկցնելիք միտք մը ժամերով բացատրել: Ժամանակով շատ ճարպիկ մարդ է եղեր, մեկը սպաններ է, մյուսին աղիքները դուրս թափեր, մեկալին յուճրուխ մը տալով գետին ձգեր է, իսկ ինքը ոչ մեկեն չի վախնար եղեր և այլն և այլն: Այդ ատեն վարագույրին ետևեն ոտքի ձայն մը լսվեցավ: Աս ըրի, ան ըրի **Մամուլի** պես ինքզինքը գովող մեր հերոսը, ձայնը լսելուն պես, ամա՛ն ինծի բան մը կըլլա, վրաս մարելիք կուգա, ըսելն ու կռնակի վրա իյնալը մեկ չընե՞: Լավ հերոսի հանդիպեցանք, ըսի, սպասենք տեսնանք ինչով պիտի վերջանա:
- Է, մեր ի՞նչ գործն է, թե աս է ըրեր, ան է ըրեր:
- Ան թող պառկած մնա, վարագույրին ետևեն աղջիկ մը ելավ. աս ալ սկսավ ինքզինքը ծանոթացնել:
- Ափսո՛ւս ինծի, մե՛ղք ինծի ըսավ, հետո սկսավ լալ: Կես ժամ ետքը տեսավ գետին ինկած մարդը և...
- Մինչև այդ ժամանակ աչքերը ո՞ր էին:
- Խաղին օրենքով կես ժամ ետքը պիտի տեսնա եղեր: Մարած մարդուն քովը գնաց: Ի՞նչ է պատահեր, հարցուց: Ան ալ՝ քիչ մը ջուր բերեք երեսիս թափեցեք, որ խելքս գլուխս գա, ըսավ:

- Մարած մարդը կրնա՞ խոսիլ:
- Մեր գիտնալով պիտի չի խոսի, բայց ասոնց օրենքով կը խոսի:
- Ասիկա ուղղակի ժողովուրդը տղու տեղ դնել է:
- Ինչ որ է, ասոնք սկսան իրարու հետ խոսիլ: Ջիրար կը սիրեն եղեր տե բացատրվելու հարմար տեղ մը կը փնտրեն եղեր: Հոն ըլլայիր տե ասոնց խոսքերը լսեիր: Մեկը մյուսին՝ հոգի՛ս, ան ասոր՝ սի՛րտս, աս անոր՝ աղիք՝ նե՛րս...
- Ինչ գիտնամ, ասոնց պես խոսքեր: Վերջապես ասանկ քիչ մալ խոսելեն ետքը մտան ներս: Վարագույրը քանի մը անգամ գոցվեցավ, և կես ժամեն նորեն բացվեցավ: Մեր հերոսը՝ ես կը մեռնիմ, ահա մեռա ըսելն ու գետին իյնալը մեկ չընե՞: Աղջիկն ալ՝ դուն կը մեռնիս նե, ես ալ ահա կը մեռնիմ ըսավ և անկյուն մըն ալ ան պառկեցավ: Վարագույրին ետևեն ուրիշ մըն ալ ելավ.՝ քանի որ ասոնք մեռեր են, ես ինչու պիտի ապրիմ, ըսավ, ան ալ գետին ինկավ: Վարագույրը գոցվեցավ: Խաղը վերջացավ:
- Հարկավ, ալ դերասան չի մնաց, որ խաղա:
- Չմեռնեին նե խաղը վերջանալիք չուներ, վասնզի երկու կողմն ալ շատ տաքցած էին:
- Խաղին անունը ի՞նչ էր:
- Շիտակը ուշադրություն չի դարձուցի: Խաղը վերջանալեն ետքը ըսին թե մեկ վարագույրով կատակերգություն մըն ալ պիտի ցույց տան: Մեյ մա՛լ հայտարարվեցավ թե այդ կատակերգության ձեռագիրը մոռցեր են Բերա:
- Թող ժողովուրդը հետերնին տանեին և Բերայի թատրոնը խաղային:
- Ատ ալ չ՛ըլլար: Վերջապես կատակարգությունը չխաղցվեցավ, մենք ալ ելանք մեր տունը եկանք, տված ստակնիս ալ վրա գնաց:
- Թատրոն ըսածնին ա՞ս է եղեր:
- Իմ տեսածս աս էր. ժողովուրդը տղու տեղ դրած՝ պարզապես կը խաբեն:
- Տեսեք, ես կը մեռնիմ ըսելով կը պառկիմ, մեկը ելլա տե «հիմա մի մեռնիր, ետքը մեռիր» ըսելու ըլլա նե խաբրը չեն կոտրեր, կես ժամ ետքը կը մեռնին:
- Շիտակը հոն ըլլայի նե չէի համբերեր և քանի մը ծանր խոսք կընեի:
- Փայտի կտոր մը վերցուցած սուրի տեղ կուրծքերնուն վրա կը դնեն, կը մեռնին, կը մեռցնեն, ժողովուրդն ալ կը ծափահարե, կեցցե՛ կը պոռա:
- Եղբայր, ժողովուրդնիս ալ բոլորովին չոճուխ դարձած է:
- Ինչ է նե, այսօր որոշած էինք կնկանս հետ շուտ արթննալ և պարելու փորձ ընել, այս թատրոնին պատճառով չի կրցանք ընել:

– Վնաս չունի, բայց բան մը պիտի հարցունենք քեզի: Թատրոնին մեջ տեսածներդ միտքդ մնա՞ց:


– Այո:

– Անգամ մը ցույց տուր տե ես ալ տեսնամ:

– Մինակ չ'ըլլար. աղջիկ ալ պիտի ըլլա, տղա ալ պիտի ըլլա, բազմություն ալ:

– Ճանըմ, կնիկդ կա, փառք աստուծո, բազմություն պետք է նե դուռ-դրացի կը կանչենք, ես ալ խոհարարը, այվազը, մեր պախալը, հացագործը կառնեն կուգամ, սա խաղը անգամ մը տեսնանք:

– Շատ աղեկ: Վաղը չէ մյուս իրիկունը հրամմեցեք:



ՀԱՍՈՒՆՅԱՆ ԽՆԴԻՐ

– Ճանըմ, Թորոս աղա, ըսե նայիմ, ի՞նչ բան է աս Հասունյան խնդիրը: Ընտիր այլուրի գինը բարձրացուցե՞ր են, ինչ են ըրեր:

– Այո, հասունը շատ թանկ ծախել ուզելնուն աս կողմիները չեն ընդունիր:

– Աս կողմիները կըսես նե հացագործները ըսել կուգես:

– Չէ, հասունը, այսինքն ընտիր այլուրը չուտողները:

– Լավ, անոնք ալ կիսասն այլուր թող ուտեն, ինչ ընենք, ամեն մարդ իր գրպանի համաձայն կրնա ուտել. ընտիր այլուրն ալ թող հարուստները ուտեն, արդեն ընտիր այլուրը հարուստի ուտելիք է:

– Ատանկ է ամա, աս կողմիներուն կիսասն հաց ուտել ալ չեն թողուր, ատոր համար աս խնդիրը մեծցավ և Գաղիո ուշադրությունը գրավեց:

– Գաղիան ի՞նչ իրավունք ունի խառնվելու մեր կերակուրին:

– Էֆենտիմ, աս Հասունը Հռոմեն ծախված ըլլալով, Պապի մատն ալ կա գործին մեջ: Գաղիան կաթոլիկ ըլլալուն՝ Հասունի խնդիրն ալ կաթոլիկության խնդրի փոխված է:

– Հիմա մեր կերած այլուրը կաթոլիկ է կըսես, կաթոլիկներուն եկեղեցի՞ն կերթա:

– Չէ ճանըմ, Հասունն է կաթոլիկ, առաջ կաթոլիկներուն պատրիարքն էր:

– Խելքիդ եկավ մարդ աստուծո, այլուրը ի՞նչպես կրնա պատրիարքություն ընել:

Ըրավ, ատոր համար հիմա Հասունը չեն ուզեր:

– Անանկ է նե պարկ մը ուրիշ այլուր թող առեն և պատրիարքական աթոռի վրա նստեցունեն, լմննա երթա, աս կռիվին վերջը պիտի չի գա՞:

– Չէ, պիտի չի գա, որովհետև հասունյանները կաթոլիկը մենք ենք, կըսեն, իսկ հակահասունյաններն ալ ճշմարիտ կաթոլիկը մենք ենք, կըսեն... ասանկ խառն գործը ի՞նչպես կրնա մաքրվի:

– Վիճակ թող ձգեն, վիճակը որուն որ իյնա՝ կաթոլիկը ան թող ըլլա:

– Վիճակով ասանկ գործ կըլլա՞, մարդ աստուծո:

– Քանի որ ատ մարդիկ չիտեն իրենց ինչ ըլլալը, վիճակեն զատ ուրիշ բան չի կրնար փրկել: Բայց լավ, թող ան ալ կաթոլիկ ըլլա, ան ալ, ինչ վնաս. ժամանակ մը այնքան քահանաներ կողարկեին Անատոլու՝ հայերը կաթոլիկ ընելու համար, հիմա ինչո՞ւ կը վոնտեն կաթոլիկ են ըսողները. ավելո՞րդ դարձած են ասոնք:

- Չեն վռնտեր. եթե կաթոլիկ եք Հասունը պիտի ընդունիք կըսեն:
- Կաթոլիկ եղողը անպատճառ հասուն, ընտիր ալյո՞ւր պիտի ուտե: Կրնա ըլլալ որ ընտիր ալյուրը մարդուն մարտողութեանը վնասե:
- Կաթոլիկ եղողը իրավունք չունի իր ախորժակը քաշածը ուտելու, կաթոլիկը պետք է նայի թե կերածը Պապի ստամոքսին չի՞ դիպչիր. իր ստամոքսը կարևոր չէ: Կաթոլիկներուն բոլոր կերակուրները Պապի ստամոքսով պիտի անցնին: Պապը իր ստամոքսին դիպչող բան մը տեսածին պես կարգիլէ: Արգելքին ետևէն ալ բանադրանք մը կուղարկէ:
- Պապին այս օրերս շուտ շուտ հիվանդանալն ալ արդոյք կապ չունի՞ անոնց իր ստամոքսին դիպչող որևէ բան կերած ըլլալուն հետ:
- Այո, հասունը թողած օղ ուտելը ատ պատճառով է: Պապը օղը չի մարսեր:
- Եթե չի մարսեր, թող հանէ, ականջները կախէ:
- Չի կրնար հանել:
- Թող հանէ:
- Չի կրնար հանել:
- Վրայեն ալ քիչ մը ընտիր ալյուր թող ուտե:
- Չեն թողուր:
- Չըսե՞ս, Պապին ստամոքսին պատճառով գլուխնին փորձանք եկավ: Կերակուր ուտելէ առաջ Պապին լուր տալու և անոր ստամոքսէն արտոնություն առնելու է:
- Հարկավ:
- Բոլոր պապերուն ստամոքսն ալ ասանկ փափո՞ւկ է, թե մինակ ասոր ստամոքսն է:
- Բոլորի ստամոքսը մեկ է, իրենք տարբեր են:
- Է, կաթոլիկները առաջուց չի գիտեի՞ն ասիկա. հիմա՞ սորվեցան:
- Մեկ մասը հիմա սորվեցավ, մեկ մասն ալ մոտ ժամանակէն պիտի սորվի:
- Հասունը ուտել չուզողները ի՞նչ պիտի ուտեն:
- Լողոֆէթ պիտի ուտեն:
- Լողոֆէթ ըսածդ ալ ուտելու բա՞ն է:
- Չէ:
- Անուշ է, չէ նե թթու:
- Եթե ուտեն նոր հայտնի պիտի ըլլա:
- Բայց Հասունին տեղը պիտի բռնե՞: Պապին ստամոքսը պիտի չավրե՞:

- Չավրելէն զատ օղն ալ մարսել պիտի տա, որպէսզի Պապը օղի վրայեն ալ ընտիր ալյուր ուտե:
- Անա՛ն, աս կրոնքին մեջ ալ կերակուրէն զատ ուրիշ բան չի կա: Պապի ախորժակէն զատ ուրիշ կրոնք չի կա՞:
- Չի կա:
- Է, հակահասունյանները լողոֆէթը պիտի մարսե՞ն:
- Անոնք պիտի չուտեն, էֆենտիմ, անոնք հին սուտերով նոր օղեր ուտելու պիտի նային:
- Շատ լավ է. ըսել է խնդիրը լուծված վերջացած է, ամեն մարդ իր ախորժակին համապատասխան կերակուր պիտի ուտե, այնպես չէ՞:
- Այո, բայց այս կողմինները կարճ ատենէն օղն ալ պիտի կորսնցունեն:
- Տեղը թող ուրիշ օղ մը առնեն և ուտեն:
- Չեն կրնար ուտել, քանի որ թեվերսուրուսը կա, թեվերսուրուսը կը վնասե:
- Թող թեվերսուրուս ուտեն:
- Չ'ըլլար, թեվերսուրուսը ուժեղ է:
- Բեվերսուրուսը ո՞վ է:
- Չես ճանչնար:
- Է, հակահասունյանները ի՞նչ քաղաքականության պիտի հետևին:
- Անոնք ալ ատ կը մտածեն հիմակուհիմա. եթե նոր լուր մը առնեն ձեզի կիմացունեն:



ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ



– Անցած ըլլա, Թորոս աղա, գլուխդ կապեր ես, կը ցավի՞:

– Չէ:

– Կապեր ես որ չի ցավի՞:

– Չէ, ճանըմ, գլուխս կոտրեցավ, ատոր համար կապեր եմ:

– Գլուխդ բանի՞ մը զարկիր:

– Անցած իրիկուն կամաց կամաց քալելու ատենս հանկարծ կտորեն սառույցի կտոր մը ինկավ, գլուխս պատռեց:

– Եղբայր, մարդ քալելու ատեն քիչ մըն ալ վեր նայելու է:

– Թող աստվածդ սիրես. Պոլսո մեջ

չեմ գիտեր մարդ ինչպես քալելու է: Ոտքս կոխած տեղիս ուշադրություն դարձնեմ կըսես՝ վերեն բան մը կ'իյնա գլխուդ, վեր նայիմ ըսես՝ մինչև մեջքդ ցեխի մեջ կ'իյնաս, առջևս նայիմ ըսես՝ ետևդ եկող բեռնակիրներուն կը դիպչիս, ետիս նայիմ ըսես՝ առջևեղ եկող կառքին կը դիպչիս, աջ կողմս նայիմ ըսես՝ ձախեն շունը կը հարձակվի, ձախիս նայիմ ըսես՝ աջեն կը զարնեն, դուն իմ տեղս եղիր տե քալե նայիմ. դեռ բեռ կրող ջորիները, ավանակները մի հարցուներ, որոնցով լեցված են փողոցները: Ասոնք տեսած ատենդ քաղաքավարությամբ մեկ կողմ քաշվելու ես որ անցնիմ: Հիմա, եղբայր, եթե կուզես աս փողոցներեն ողջ առողջ անցնիլ, ներքևը, վերևը, աջը, ձախը, առջևը, ետևը, միաժամանակ նայելու ես. չէ՞ նե՛ կամ ոտքդ կը կոտրվի, կամ գլուխդ կը ջարդվի:

– Գլուխնուդ ի՞նչ դեղ դրիր:

– Մեհլեմ:

– Հա՛, լավ հիշեցի, Հոլլըվեյի հապերեն առնեիր, կոտրված տեղը քսեիր, որովհետև Հոլլըվեյի հապերը, մեհլեմը բոլոր հիվանդությունները, վերքերը դանակի նման կը բուժեն:

– Հիմակուհիմա շատ չի ցավիր:

– Է, ցուրտերուն հետ ինչ ըրիր նայինք:

– Ի՞նչ պիտի ընենք, շան նման դողացինք:

– Ածուխ չունեի՞ք:

– Աստված պելանին տա. օրացույցներուն հավատացինք տե ածուխը քիչ առինք: Օրացույցին կը նայիս՝ օդերը տաքցած ըլլալու է, խաչը ջուրը պիտի իյնա, երկինքը կը նայիս՝ ձյունեն զատ ուրիշ բան չիյնար: Աս տարի ամեն ինչ փոխվեցավ, ի՞նչ եղավ, չեմ գիտեր:

– Օրացույցները սուտ չեն խոսիր, եղբայր:

– Է ինկածը խա՞չ էր, թե ձյուն:

– Թե խաչ էր, թե ձյուն: Աս անգամ երկուքը մեկեն ինկավ:

– Յուրտը և տաքը միասին ի՞նչպես կրնան իյնալ:

– Ինկան:

– Եկուր նայե, որ ձյունը ուրիշ անպատեհություն մ'ալ ունի, չորս կողմը գայլեր կերևան եղեր: Անցած իրիկուն որսորդական շուն մը տեսա և գայլ կարծելով շատ վախցա:

– Ի՞նչ ըրիր:

– Գայլը կրակեն կը վախնա կըսեն, ես ալ ծխախոտի տուփը հանեցի որ կրակ ընեն, մեյ մ'ալ տեսնամ՝ տուփին մեջ աբեթ չի մնացեր: Չի մնացեր ըսելով սագի պես կայնելու չե՛ս ա: Փորձեցի տուփը ցուցունել, գայլը ինչե՛ն պիտի գիտնա թե տուփին մեջ բան կա՞ թե չի կա: Մեյ մ'ալ նայիմ, գայլ կարծածս փախչելու տեղ կը մոտենա, մոտեցավ, մոտեցավ, ձեռքես տուփը հափշտակեց, սկսավ ուտել: Ան ատեն խելքս գլուխս եկավ, հասկցա ամեն բան, բռնեցի շունը, լավ մը ծեծեցի:

– Շունը ի՞նչ հանցանք ունի:

– Շունին հանցանքը այն է, որ գայլի կը նմանի: Ասանկ վտանգավոր ժամանակ ի՞նչ գործ ունի փողոցները: Ետքեն ամեն բան հասկցա: Անբան երիտասարդին մեկը ժամանակե մը ի վեր որսի սեր ունենալով՝ որսորդի մը շունը գողցեր է, բայց կարողություն չունենալով կերակրել խեղճ կենդանին, ստունեն վռնտեր է: Դժբախտ շունը՝ վարժված չըլլալով մեր ժամանակի քաղաքականության, այսինքն անոթության և ցուրտի՝ ով որ տեսնա անոր վրա կը հարձակվի: Ժողովուրդ աս վախեն փրկելու համար՝ գայլերը բռնելու տե անոնց վրա մեյ-մեկ նշան դնելու է, որպեսզի մարդիկ կարող ըլլան գայլը շունեն զատել և ըստ այնմ վարվիլ:

– Է, ցուրտ եղած օրերը վառարա՞ն վառեցիր թե մանդալ, սենյակդ ինտո՞ր տաքցուցիր:

– Ինչո՞ւ կը հարցունես:

– Որովհետև վառարանը, կըսեն սենյակին տակի մասերը կրնա տաքցնել:

– Ըսել է մեր վերևի հարկի սենյակը տաքցնելու համար վառարանը տանիքի վրա դնելու է:

– Մանդալն ալ սենյակին բարձր տեղերը կը տաքցնե, այսինքն կես մեջքեն վերևը:

– Այդ հաշվով՝ մանդալ գտնվող սենյակը նստողները երբեմն գլխիվայր պետք է նստին որ մարմիննուն ամեն կողմը նույն տաքության մեջ գտնվի: Գլխիվայր չնստողներուն համար ալ մանդալը պետք է շրջել, որպեսզի սենյակի վարի կողմերն ալ տաքնան: Աս հարցը լուծելու համար եվրոպայի ակադեմիաներեն մեկը շատ փորձեր է կատարեր, վերջապես ատանկ է որոշեր:

Փառք աստուծո, որ մեր սենյակին ոչ վարի կողմը տաքցավ, ոչ ալ վերի, որովհետև ոչ մանդալ վառեցինք, ոչ ալ վառարան:

– Ինչո՞ւ բնավ ածուխ չէի՞ր առեր:

– Սակարկության մեջ չի համաձայնեցանք, մեր քսակը օխա մը ածուխի համար 15 փարա է որոշեր, եկուր տես որ ածխավաճառները 40 փարայեն վար չեն տար: Ասոր վրա զայրացա և ետ դարձա, ինչ ընենք, երբ աժաննա ան ատեն կառնենք, երբ աժաննա, ան ատեն կը մսինք:

– Ատոր ըսելիք չի կա:

– Առաջ ըսած եմ, հիմա ալ կըսեմ, ան որ դրամ, հագուստ չունի, ամենևին մսելու իրավունք չունի:

– Ըսել է աղքատները մսելու իրավունք չունին:

– Հարկավ չունին, եթե մեկը կուզե լավ մը մսիլ, հարուստ ըլլալու է:

– Խելքս ատանկ բաներու չի հասնիր, հիմա թողունք ատոնք, ցուրտերը բավական վնաս են հասցուցեր մարդոց, կըսեն:

– Այո, թրամվայի ճամբաները փակվեր են. Խասգյուղի նավերեն մեկը դեպի կամուրջը գալու ատեն կաթսան սառեր է, ճամբորդները մնացեր են ծովու վրա: Մարդուն մեկը կնոջը հետ կամուրջեն անցնելու ատեն կնիկը կորավեր է և այլն, և այլն:

– Աստված վերջերնիս բարին ընե, եթե ցուրտը նորեն կրկնվի, շատ վաճառականներու գրասենյակները պիտի սառի, տոմարները սառույց պիտի կապեն և մարդիկ իրենց առնելիքները ստիպված պիտի ըլլան սառույցի վրա գրել:

– Բերանդ խեր բաց, մարդ աստուծո:

ՆԻՆԻԹ-ԱՄԻՉ ԼԵՉՈՒ ՄԸ՝

– Մարկոս աղա, աս օրերս *Մսկ-գունե* կը կարդա՞ս:

– Կը կարդամ, ի՞նչ կա:

– Խորեն եպիսկոպոսի՝ Երուսաղեմի վրայոք *Կուրիերի* մեջ տպած նամակին թարգմանությունը կարդացի՞ր:

– Կարդացի:

– Ի՞նչ հասկացար:

– Մարդս կարդացածը անպատճառ հասկնալու է:

– Հարկավ:

– Կը կարծես թե ամեն մարդ իր միտքը հասկցնելու համար բան մը կը գրե կամ կը կխոսի:

– Ես ատանկ կը կարծեմ: Ի՞նչ լեզվով է կատարվեր այդ թարգմանությունը:

– Արապերենի կը նմանի:

– Չըսե՞ս՝ հնարված լեզու է:

– Այդպես է: Բայց թարգմանության մեջ անանկ բառեր կան, որ ոչ տեսած եմ, ոչ լսած և ոչ ալ լսելու եմ: Ասոր անոր հարցուցի նե՝ գնա գրողեն հասկցիր, ըսին:

– Գրողը ո՞վ է:

– Թուրքերենի վարժապետը:

– Է ատ բառերը ուրկե՞ գտեր է:

– Ուրկե՞ պիտի գտնա: Գործարան բացեր է, ինքը կը շինե:

– Ատ բառերուն բառարանը առաջուց ինչո՞ւ չի հաներ որ ամեն մարդ հասկնա:

– Եղբայր, բառերը հնարեր է, բայց անոնց նշանակությունը դեռ գտած չըլլալով՝ մեկ մեկ կը փնտրե. անոնք ալ գտածին պես՝ բառարանը պիտի հանե:

– Առաջ իմաստները գտներ տե ետքեն բառարանը շիներ նե չէ՞ր ըլլար:

– Բառարաններուն օրենքին հետևած է. բառարանը բանալուդ պես՝ առաջ բառը, ասպա իմաստը չե՞ս կարդար. ահա ատոր համար թուրքերե-



նի վարժապետն ալ առաջ բառերն է հնարեր, ետքն անոնց իմաստը պիտի գտնա:

– Իսկ եթե չի գտնա՞:

– Ան ալ ուրիշը թող գտնա, երկու ձմերուկ մեկ թևի տակ չի պահվիր:

– Ըսել է ատ նամակը հասկանալու համար բառարանի տպվելուն սպասելու է:

– Սպասելու հարկ չի կա, Պեշիկթաշի եկեղեցու ժամկոչին քովը կերթաս, թուրքերենի վարժապետը կը հարցունես:

– Ան գիտե՞:

– Եթե չի գիտնա ալ՝ կը հարմարցնե, պարապ ետ չի դարձներ. օրինակ՝ երբ հարցուցեր են, թե ի՞նչ կը նշանակե **սարավեթամիզաթ** բառը՝ կատարյալ մարդ կը նշանակե, ըսեր է, այս բառի մեջ անցյալ կատարյալը որոշյալին խառնվեր է տե, ասոր վրա՝ հատուկ անունը օգնության է հասեր, որպեսզի բաժնե, մեյ մ'ալ տեսնաս՝ ժխտականի եղբայրը եկեր մեջերնին է ինկեր, առ քեզի մեկ խառնակություն:

– Ոստիկան չե՞ն կանչեր:

– Ոստիկանը ո՞վ կը լսե, եզակի թիվն ալ գործին խառնվելով ամեն ինչ անհասկանալի վիճակի հասցուցեր է:

– Եկեղեցու մոտ ասանկ կռիվ ըլլա նե ոչ որ չի՞ բաժներ:

– Բաժնելու բան չէ, էֆենտիմ, ատավեթամիզաթի հետ կը խաղա՞ս դուն, **սարավեթամիզին** ինչ ըլլալը մինչև հիմա ոչ որ չի գիտցեր:

– Ի վերջո ի՞նչ է եղեր:

– Վերջապես **պեխեպն** ալ լսեր է ամեն ինչ:

– Պեխե՞տն ով է:

– Ան ալ **սարավեթամիզաթի** պես բան մըն է, ինչին ինչ ըլլալը չի հասկցվիր որ:

– Է հիմա սա Երուսաղեմի խնդրույն մեջ իրավունքը հայերո՞ւն կողմն է թե հույներուն:

– Ատիկա գիտնալու համար բառարանին սպասելու է:

– Ատանկ է նե բառարանը չելած՝ հույները ի՞նչ իրավունք ունին մեր վրա հարձակիլ:

– Քանի բառարանը չէ ելած՝ լավ առիթ է ըսելով գլուխ բարձրացուցեր են: Տես ինչ կըսե թուրքերենի վարժապետը. կըսե թե աս գործի համար հզոր լեզու և հրամանի՜ի՜ի՜ի՜ի՜ պետք կա:

– Է ատոր վե՞րջը:

– Նինինի դատաստանի խորհո՜ւրդ – ո՜ւրդ–ո՜ւրդ պիտի ըներ կըսե:

– Կըսե յա, ինչ ալ ըսե իրավունք ունի, որովհետև ըսածեն բան մը չի հասկցա, սակայն նինինի–ներեն կռահեցի, որ իրավունք ունի:

– Ատանկ է այդքան նի՜նի՜նի՜ներուն իրավունքը մեծ կըլլա:

– Ախ, բառարանը եթե հանած ըլլար, կամ ժողովուրդը թուրքերենի վարժապետին չափ զարգացած ըլլար, այն ատեն խնդիրը լավ մը կը հասկնալին:

– Էֆենտիմ, հոս հասկնալու և չհասկնալու բան չի կա: Քանի նինինիները հոն են, պարզ է, որ իրավունքը մեր կողմն է:


– Քանի որ ասանկ նորելուկ լեզու մըն է, թող բոլոր թերթերուն մեջ տպեն:

– Չեն տպեր: Խմբագիրները իրենց չի հասկացած լեզվով բան չեն տպեր:

– **Մանգումեն** ի՞նչպես տպեր է:

– Կը նշանակե ինքը կը հասկնա ատ լեզուն:

– Փա՛ռք աստուծո, որ աս լեզվով հասկցող մը գտանք:



ՉԵՌՆՈՑԱՎԱՃԱՌԻ ԽԱՆՈՒԹԻՆ ՄԵՋ

– Մարկոս աղա, երեկ զձեզ Բերայի կողմերը տեսա: Ի՞նչ գործ ունեիք հոգնտեղվանքը:

– Կնկանս ձեռքերը քիչ մը սզեղ ըլլալուն՝ կուզե ուրիշներեն ծածուկ պահել, ատոր համար խնդրեց որ գույգ մը ձեռնոց գնեն: Ես ալ կնոջս խաթրը չի կոտրեն ըսի և Բերա ելա՝ ուզածը գնելու:

– Բերայի խանութներուն հավնեցա՞ր:

– Հարկավ: Հաճախորդ վաստկելու համար խանութները աղջիկներով ու կնիկներով լեցուցեր են: Բերայի խանութներեն առևտուր ընելու ատեն մարդու քեֆը կուգա:

– Հապա կարգ մը մարդիկ ինչո՞ւ կը բողոքեն թե առևտուր չի կա:

Բոլորն ալ իրենց խանութներուն մեջ մեյ մեկ աղջիկ կամ կնիկ թող դնեն և առևտուր ընեն:

– Ատ աղջիկները կամ կնիկները խնդումներես կը դիմավորեն հաճախորդները, բայց հետո, անոնց գնալեն ետքն ալ կը ծաղրեն:

Քեզի՞ ալ ատանկ դիմավորեցին:

– Հարկավ: Ուր որ աղվոր աղջիկ մը կամ կնիկ մը տեսնայի իսկույն ներս կը մտնայի և ձեռնոց կը հարցունեի: Մտած խանութս շապիկի կամ գլխարկի խանութ ալ ըլլար, ես նորեն ձեռնոց կը հարցունեի: Օրինակ՝ երբ գլխարկի խանութ մը մտա և ձեռնոց հարցուցի,– պրե էսեկ, հոս ձեռնոց կըլլա՞, ըսավ: Ատ խոսքը իմ խոշս ալ եկավ, խնդալով խանութն դուրս եկա:

– Է, ձեռնոց չառի՞ր:

– Բերայի Շիտակեն վեր ելած ատենս՝ տեսա՝ խանութներեն մեկուն դրան վրա թիթեղե ձեռնոց մը կախված է:

– Ատ ի՞նչ կը նշանակե:

– Եղբայր, մարդիկ իրենց ապրանքին ինչ ըլլալը ցույց տալու համար աս ճամբան բռնած են: Օրինակ՝ կոշկակարը իր խանութին դրան վրա երկաթե կոշիկ մը կախեր է, ձեռնոցավաճառը՝ ձեռնոց, սայլապանը՝ սայլ: Ահա աս նշաններուն նայելով վերջապես ձեռնոցավաճառին խանութը գտանք, ներս մտանք:

– Ձեռնոց ունի՞ք, հարցուցինք նե՝

– Ես թուրքերեն չգիտնալ, հոս ձեռնոց չկա ըսավ:

– Է, հապա ասոնք ի՞նչ են, հարցուցինք, ցույց տալով ձեռնոցները:

– Ատոնք ձեռնոց չեն, ասոնք *կսակ* են,– ըսավ, կուզես նե *կսակ* տամ, ձեռնոց չունիմք, ըսավ:

Ես ատանկ բան կը կլլե՞մ տե *կսակը* ձեռնոցի տեղ կառնեն: Երեխա՞ են, ինչ են, քանի՞ տարեկան են: Անմիջապես հասկցա միտքը՝ *կսակը* ձեռնոցի տեղ պիտի ծախե, ետքն ալ վրաս պիտի խնդա:

– Դուն ալ տարօրինակ մարդ ես, եղբայր, ձեռնոցը ձեռն չե՞ս կրնար ճանաչնալ:

– Կը ճանչնամ ձեռնոցի կը նմանի կոր, բայց կրնա ըլլալ որ ձեռնոց չըլլա, ամեն ձեռնոցի նմանող ձեռնոց է, ամեն մարդու նմանող մա՞րդ է, մարդ ըսածդ մարդու նման ըլլալու է, որ մարդ ըլլա:

– Խանութն պարա՞պ դուրս եկար:

– Չէ: Մենք աղջկա հետ խոսքի բռնված էինք, որ խանութին տերը եկավ և ի՞նչ կը փափագիք, ըսավ: Ձեռնոց կուզենք ըսինք նե՝ – է ասոնք հապա ի՞նչ են, գուլպա՞ են, ըսավ: Ձեռնոց են, ինչո՞ւ չես առներ:

– Ասոնք *կսակ* են, ըսի: Պե եղբայր, *կսակ* ֆրանսերեն ձեռնոց կը նշանակե, ըսավ:

– Կը ներեք, սինյոր, ըսինք, մենք ֆրանսերեն չենք գիտեր, որ ձեռնոց ըլլալը հասկնանք: Ատկե ետքը մտմտուքը առավ ինձի, թե մեր կնկա ուզածը ֆրանսերեն ձեռնոց էր թե թուրքերեն:

– Խե՞նք ես, ինչ ես, եղբայր, ձեռնոցի՞ն ալ ալաֆրանկան կամ ալաթուրքան կըլլա:

– Քաղաքավարության ալաֆրանկան կըլլա տե, ձեռնոցինը չըլլար, վերջապես մարդը ըսավ թե քու ուզածդ ասոնք են, ինչ թիվ կուզես, կնկանդ ձեռքը ի՞նչ թիվ է:

– Մեր տան թիվը ութսունըննե է, բայց կնկանս ձեռքի թիվը չեմ գիտեր ըսինք: Ձեռքի՞ն ալ թիվը կըլլա եղեր:

– Եղբայր, կնկանդ ձեռքերը մե՞ծ են թե պզտիկ, ըսավ մարդը:

– Ոչ մեծ են, ոչ պզտիկ:

– Ատանկ է, նե, ըսավ, քեզի անանկ ձեռնոց մը տամ, որ ոչ մեծ ըլլա, ոչ պզտիկ: Ասոր վրա գույգ մը ձեռնոց հանեց տվավ:


– Երկու ձեռնոցը շատ է, սինյոր, մեկ հատը հերիք է, ըսինք նե՝ մարդը, իր ապրանքը քշելու համար, համառորեն պնդեց:

– Մեկ ձեռնոցը ի՞նչ պիտի ընես, քու կնիկդ մե՞կ ձեռք ունի, չըսե՞ մի:

– Ամմա բան է ըսեր: Մեկ ձեռնոց ունեցողը մեկ ձեռք պիտի ունենա նե՝ երեք ֆես ունեցողն ալ երեք գլո՞ւխ պիտի ունենա:


Շիտակ է, բայց խանութպան ըսածդ ապրանքը քշելու կաշխատի: Հաճախորդ ըսածդ ալ աչքը չորս բանալու է, որ չի խաբվի: Վերջապես, բավական խոսքերե ետքը՝

- Ես մեկ ձեռնոց չեմ ծախեր, ըսավ:
- Ատ ուրիշ բան: Ի՞նչ իրավունք ունի կնկանդ քանի ձեռք ունենալը հարցունելու:
- Հարկավ: Հետո՝ եղբայր, առևտուր ալ չկա, կամաց կամաց ծախքերը քիչցնելու կաշխատինք: Մենք ալ մտածեցինք՝ հիմակուհիմա մեկ ձեռնոց առնենք, օր մը մեկ ձեռքը թող անցունե, օր մը՝ մյուս ձեռքը: Ետքեն՝ երբ առևտուրները բացվին հատ մըն ալ կառնենք:
- Չէ, մեկ ձեռնոց չ'ըլլար եղեր: Քանի որ կնիկը երկու ձեռք ունի, ձեռնոցն ալ երկու հատ պիտի ըլլա եղեր: Քանի որ կնիկս տասը մատ ունի, տասը մատանի՞ պիտի առնվի... ամեն մատին մեյ մեկ մատանի՞ դրվելու է, ամեն ձեռքին մեյ մեկ ձեռնոց՞ պիտի դրվի:
- Դրամի որոգայթ է, եղբայր, դրամի որոգայթ, ատ մարդոցմե զգուշանալու է:
- Ես ալ չառի, պարապ ետ եկա:
- Կնիկդ ի՞նչ ըսավ:
- Գործը կնկանս մոտ չի բացի: Անոր ըսի քի Բերա ձեռնոց չի մնացեր: Գալ շաբաթ վարեն պիտի բերեն:



ԲՈՒՆ ՓՈՐՉԱՆՔԸ

- Մարկոս աղա անգամ մը ցած նայե, սա դիմացեն անցնող սյուալու երիտասարդը կը ճանչնա՞ս կոր:
- Ասոված պելան տա, բարով խերով չի ճանչնայի:
- Եղբայր, դուն ալ հեչ լավ բան չես ըսեր: Հիմա ինչ ունի այդ երիտասարդը: Մեջքի ոսկի ժամացույց, ոսկի շղթայով, մատը ադամանոյա մատնի, քիթին վրա աղվոր ակնոց, վրան գլուխը նոր ու մաքուր, երևցածին նայելով հարուստի զավակ ըլլալու է:
- Չէ, եղբայր, հարուստի զավակ չէ, Հայրը հարցնես ապրուստեն դժգոհ մարդ մէ, ինքը ըսես պարապ – սարապ պտըտողներուն գլխավորը:
- Պարապ–սարապ պտըտողը այսքան շքեղ կրնա՞ հագվիլ:
- Որքան շքեղ հագված տեսնաս գիտցիր, որ ատոնց բոլորն ալ պարապ պտըտողներ են:
- Ըսել է պարապ պտըտողները բոլորեն շատ կը վաստկեն կոր, անանկ է նե մենք ալ խանութներիս գոցենք տե պարապ պտըտինք, քանի որ պարապ պտըտելը շահավոր է, աշխատանքի մեջ ըլլալնիս հանցանք է:
- Այդպես չի, եղբայր, ասոնք քսակահատ, խաբեբա ըլլալով ասկե անկե պարտք առնելով ասոր անոր կը խաբեն կոր:
- Քեզի ալ խաբած է, ինչ ըրած է, որ այդքան բարկացած կը խոսիս կոր: Ատանկ ըլլալու է, որ աչքերը պատուհանի վրա էր:
- Ինձի ալ ուրիշ տեսակ խաբել ուզեց ամա չի կրցավ: Պատմեմ տե լսե: Անցած օրը օդը շատ ցուրտ ըլլալուն շուկա չելա: Ճաշեն ետքը սենյակս քաշված աշխարհքի գեշության մասին կը մտածեի: Մեյ մալ տեսնամ դուրը բացվեցավ, աղջիկս ներս մտավ: Ինչ՞ կա հարցուցի նե ձեզի գաղտնի ըսե՛ք մը ունիմ, աղա պապա, ըսավ: Շատ աղեկ, ըսե ըսինք նե կը քաշվիմ կոր, ըսավ մի քաշվիր ըսինք նե, կամչնամ կոր, ըսավ: Մի ամչնար, ըսինք նե կը վախնամ կոր, ըսավ: Մի վախնար ըսինք նե բերանս առաջ չ'երթար որ ըսեմ ըսավ: Անանկ է նե դուրս ելիր ըսելուս չի մնաց, աղջիկնիս ծունկերի վրա իյնալով երկու ձեռքերը իրար զարկավ և «հայրիկ, կրակ ներսեն բռնկեր է»



ըսած չըսած աճապա տուներնիս կը վառվի կոր տեի ցատկեցի ոտքի, իսկ անիկա «կրակը տանիքը առեր է, խորովեր է, ըսավ նե արդյոք մեր կնիկը քեպապ ընել ի քեն տան տանիքը կրակի՞» է տվեր ըսելով ինքզինքս դուրս նետեցի: Խոհանոց մտա, տեսա որ բան մը չի կա, հազար ու մեկ բան միտքս կուգա, կերթա, արդյոք բարեկամներեն մեկուն տունն է պատահեր մտածեցի և իրողությունը լավ մը հասկնամ ըսելով նորեն վեր ելանք և հարցուցինք մեր աղջկան, թե որտե՞ղ է կրակը, քանի՞ տուն է վառեր, թուլումպաճիները հասե՞ր են: Վերջապես հասկցանք որ մեր աղջիկը աստված գա հախեն, գեռնին տակը անցնի, մեկուն սիրեր է տե...

- Աղջիկը մը առանց հորը կամքը հարցնելու ելլա երիտասարդ մը սիրե...
- Սիրեր է տե ատիկա հաս...
- Ըլլալու բան է ասիկա...
- Կըցընել ու...
- Ով կը համ...
- Չերե, տե...
- Բե...
- Շիտակ...
- Բե... եղ...
- Ըսելու...
- Բայր
- Չի համարձակվիր եղեր: Գործը բանաստեղծության է հասցուցեր և խնդիրը ուժեղ ցույց տալու համար կրակեն է սկսեր: Այս կրակը սիրտին մեջ է եղեր:
 - Հիմքեն /քանճայլա/ քանդելու է, եղբայր, որ ուրիշ սիրտեր ալ չվառե:
 - Խորովածն ալ իրեն սիրտն է եղեր: Վերջապես, ահա նոր ասկե անցնող երիտասարդին սիրահարված է եղեր:
 - Աճայիպ... աղջիկ մը առանց հոր կամքը հարցնելու ելլա մեկուն սիրտը տա...
 - Մինչև այդ օրը աղջիկս ատանկ հանցանքի մը մեջ գտնված չէր: Ինչ որ է սատանային խաբվեր է ըսելով, թող տվինք որ երթա ատ ուզած երիտասարդին սերը առնե: Ասոր վրա կարգ մը գիրքեր բերավ մեզի, սկսավ թարգմանել: Ժամանակին Բոլ մը կա եղեր, մեյ մալ Վերժին մը կա եղեր: Ահա աս Բոլը Վերժինը կը սիրե եղեր, և հետը կարգվիլ չկարողենալուն համար մեռեր է եղեր: Աս բանը գրողն ալ բանաստեղծն է եղեր: Աղջիկնիս ալ այդ գիրքը

դպրոցը կարդացած է եղեր տե անկե սորվեր է, ասոր պես կարգ մը խոսքեր ընելեն ետքը ըսավ թե ինքը ազատ է, լուսավորյալ է և իր արարքներուն լավ կամ գեշ ըլլալը ինձմե սորվելու պետք չունի եղեր: Ինքը ասանկ բաներ ավելի լավ կը հասկնա եղեր պարել ալ գիտե եղեր և պարել գիտնալուն համար ուզած երիտասարդը առնելու իրավունք ունի եղեր, ըսավ ու սկսավ պարել...

- Ատիկա զավակ չէ եղեր, այլ պելա-փորձանք:
- Հարցուցինք թե ատ երիտասարդը կրնա՞ իրեն պահել: Իմին ի՞նչ գործս է, ըսավ: Ես անոր քով աշակերտ չեմ երթար, որ հարցունեմ թե ամսականս պիտի կրնա՞ս տալ: Ես զայն սիրեցի, և երբ մարդ մեկը կը սիրե, պարտավոր չէ հարցնել, թե ստակ ունի՞: Վերժինը Բոլը սիրեց նե Բոլը ստակ ունի տեի մեզի հարցուց:
 - Բոլը ով կըլլա կոր:
 - Ես ինչ գիտնամ: Ըսվածին նայելով առավ-փախալին մեկը ըլլալու է, բարով խերով չ'ըլլար տե, ուրիշներուն զավակներուն ալ գեշ օրինակ չ'ըլլար: Սվոր նայե անգամ մը Բոլը աս է ըրեր, Բոլը ան է ըրեր տեի մենք ալ անոր ըրածին պես ընելու ենք:
 - Վերջապես ի՞նչ որոշեցինք:
 - Որոշումին խոսքը կըլլար: Աղջիկիս այդ վարմունքը տեսնելով ինքզինքես դուրս եկա: Ինձի պես քիպար մարդ մը, որ մինչև հիմա մեկուն ետևեն խոսք մը ըսած չէ, բոլոր մարդոց հարգանքը կը վայել, ինչ պիտի ընեմ, կը մտածեի արար աշխարհի աղջկանս այս վարմունքը լսե նե: Ասանկ կը մտածեի, մազերս կը փետտեի: Ուրիշ բան է, երբ ըսեն թե Մարկոս աղան իր ծեի, մազերս կը փետտեի: Ուրիշ բան է, երբ ըսեն թե Մարկոս աղային աղջիկը, աշխնչին տված է, ուրիշ չան երբ ըսեն թե Մարկոս աղային աղջիկը, առանց Մարկոս աղային հարցնելու Մարկոս աղան աներ դարձուցած է անբանին մեկին: Կըլվելո՞ւ բան է աս խոսքը: Կը մաքրվի ասանկ աղտը: Թոշմած ճակատս մինչև մինչև հիմա մաքուր պահեմ տե գերեզման մտնելու ատեն պիտի աղտոտեմ, ըսելով կը մտածեի և արցունքները հեղեղի պես կը թափվեին աչքերես: Այդ գետնին տակն անցնելիք աղջիկը, հոր տարիներու ընթացքին վաստկած նամուսը մեկ վայրկյանի մեջ աղտոտել աշխատող այդ անամոթ և ապերախտ աղջիկը չելլա ըսե քի տգիտութենեղ է, որ ատանկ կը մտածես: Ալ աս պատասխանին վրա համբերությունս հատավ, ականջներս գոցեցի, բերանս բացի և գետնին տակն անցնելիք Բոլին ու Վերժին վրան ալ պետք եղածին պես հարձակեցա: Այս այդ Բոլ ըսված սրիկան անգամ մը ձեռք անցունեմ նե...

– Վազ անցիր եղբայր, կերթա անոնց ականջը կիյնա...

– Ադ մեկը ալ հոգս չէ, եկուր տես որ աղջիկս ըսավ թե եթե մեկ երկու հարյուր ոսկի տալով այդ լակոտը մեզի փեսա չընենք, աղջիկս իրիկուն մը ինքզինքը ջրհորը պիտի ձգե տե խեղդվի եղեր: Դուն իմ տեղս ըլլաս նե ինչ կընես:

– Ջրհորը հողով լեցընել կուտամ:

– Ծախսի դուռ մըն ալ բանանք, անանկ չէ: Տեսանք որ գլուխ ելլալու բան չէ, ստիպվեցանք տունին կեսը տալ, ասոր ալ հոժար չեղավ, տղուն ստակ է պետք, ըսավ, սա քանի օրս նոր զգեստներ կարել պիտի տա, տան հիմքը կրնա գրպանը դնել, դերձակի խանութը երթալ, զգեստ գնել:

– Չգեստ առնելու ատեն դերձակը կը տանես ձեր տունը, տան հիմքի կեսը ցույց կուտաս:

– Եղբայր, անոնք իրենց գիտցածին տեր կը մնան: Գլուխսին մտցուցածին կատարելու կը նային:

– Վերջապես մեկ աղջկանդ խոսք հասկցնել չկրնալով անոր բոլոր ուզածները պիտի կատարես:

– Շվարեր մնացեր են: Հիմակու հիմա խնդիրը այս վիճակի մեջ է: Ինչ ընելիքս ես ալ չեմ գիտեր.

– Եթե աղջկանդ խոսքը կատարես, գեշ կը սորվի: Վաղը ելլա տե ուրիշ երիտասարդ մը ալ ուզե նե...

– Ինչ գիտնամ: Ատիկա ալ կընե:

– Հիմա խոսքը կատարե նե կընե ա...:

– Բոլը և Վերժինը ասանկ բան մը ըրած են աճապա:

– Եղբայր, այն ատեն ալ «Մատամ, Քամելիա»ն, օրինակ կը բերե:

– Ադ մատամ Քամելիան որոնցմե կըլլա կոր:

– Աստված անոր ալ հախեն գա:

– Անանկ է նե մեն այս գիրքերը լավ մը կարդանք տե, ասոր համաձայն որոշումնիս տանք, վասնզի այս աղջիկը ամեն օր մեյ-մեկ գրքե օրինակ բերելու ըլլա նե տարին տասներկու ամիս տուններնիս առանց հարսնիքի չ'ըլլար:



ՄԱՆՉՈՒՄԵԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒՄ

Եկեղեցական ու դպրոցական բարենորոգումներե առաջ մանգումեական բարենորոգման կարևորությունը արևի պես պայծառ է:

Քաղաքական, ազգային, գրական, փանոսական, հայիոյական այս թերթը հառաջադիմության վերաբերյալ հողվածներ տպագրելու հետ մեկտեղ ժողովուրդը և հատկապես զավառցի հայերը խաբելու մասին ալ կը խոսի երբեմն:

Փանոսյան դպրոցը իր աշակերտներուն մեկ մասը ցրվելեն ետքը, մյուս մասը փոխադրեր է Կալաթայի եկեղեցու մոտակայքը գտնվող փողոց մը: Հիմա ատ դպրոցին օգնել ուզողներուն տեղեկություն տալու համար երեք օրվա հեռավորութենե բացատրություններ սկսեր է տալ: Օրինակ՝ Փանոսյան վարժարան գալ ցանկացողները իբր թե նախ պիտի բարձրանան Բերա, անկե ուղիղ ճամբով պիտի հասնին Տյորթ Յովի բերանը, հոն լուսանկարիչ Ապտուլլահ եղբայրները կան, ասոնց դեմը մեծ փողոց մը կա, ատ փողոցեն ցած իջնելու է եղեր, դիմացնին ապարանք մը պիտի գա, աս ապարանքը շատ գեղեցիկ ապարանք մ'է եղեր, եթե ուզես այսօր կառուցել աս ապարանքը շատ գեղեցիկ ապարանք մ'է եղեր, եթե ուզես պարտեզ, սարնըճ, 10.000 ոսկիով հազիվ կրնաս կառուցել: Աս ապարանքը պարտեզ, սարնըճ, ջրհոր ալ ունի: Ահա ատ ապարանքեն կը սկսիս վար իջնալ: Դիմացդ ուրիշ փողոց մը կելլա աս փողոցին ալ խաթերը չի դիպչելու համար՝ քիչ մըն ալ անկե կը քալես, քալեցի՞ր, առանց կանգ առնելու նորեն քալելու է: Քիչ մըն ալ առաջ երթալուդ պես աջ թեքվե, եթե աջ կողմդ փողոց չկա, ձախ կողմդ մոլորվե... աջն ու ձախը եթե չի գտնաս՝ եկուր Իփսի խան, մեզի հարցուր: Քիչ մըն ալ երթալեդ ետքը նորեն աջ թեքվե, հետո աջ ու ձախ պիտի մոլորվիս, և մեյ մալ տեսար՝ Ղալաթիո եկեղեցվույն առջևն ես, քիչ մըն ալ ձախ գնա, իշտե Փանոսյան վարժարանը հոն է:

Աստված իմ կրնա՞ ըլլալ որ մարդ **Մանգումե** կարդա տե չի ճաթի, ատ մասին գրե տե **Մանգումեն** չի ճաթեցնե:

Մարդ աստուծո Ղալաթա երթալու համար Բերա ինչ գործ ունիս, աս ու ան ժամերով փողոցները պտըտցնելն ի՞նչ կելլա. Սանտրքճըլար ըսված


փողոցն չերթա՞ս: Տերը մի արասցե եթե մեկը **Մանգումեին** հարցունե թե Բերա որ ճամբով կերթցվի, մինչև Զյուչյուկ չեքմենն պիտի խրկե, ասոված չընե եթե Մամուլը երթա և հարցունե թե որ կողմեն Փրկիչ կերթցվի, Իփսի խանեն կերթցվի պիտի ըսե և խեղճ **Մամուլը** խենթի պես աս ու ան կողմը թափառելու պիտի ստիպվի:

Մանգումեին նայելով, օրինակ, Կալաթա, օրինակ Խավիար խան երթալ ուզողը կամուրջի մոտ նավ նստելով՝ նախ Սամաթիա պիտի բարձրանա, անկե պիտի ացնի Սկյուտար, Սկյուտարեն Գապաթաշ, անկե Սիրքեճիի կայարանը, Սիրքեճիի կայարանեն Բերա դուրս գալով, Ապտուլլահ եղբայրներու լուսանկարչատան առջևեն պիտի իջնա Խավիար խան:

Այս հաշվով Գավառներեն Փանոսյան վարժարան եկողները Ամերիկայի կողմեն գալու են:

Մանգումեն ալ, ահա, ուզելով գավառցիներուն կլեցնել թե Փանոսյան վարժարանը Բերա կը գտնվի, աս ճամբան է բռներ:

Ասոված գործին հաջողություն տա:



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄ

Առանց շարժումի կյանք և հոգի չկա (ըսել է Շիրքեթի Խայրիեի նավերն ալ հոգի ունին, քանի որ ամեն օր կամուրջեն կը շարժին: Հետո՝ ամոնք երկու հոգի ունենալու են, քանի որ թե առաջ կերթան և թե ետ): Միևնույն տեղը կայնած մնալը անկենդանության կամ մահվան նշան է: (Տուները պալատները



քանի որ չեն շարժիր, ուրեմն մեռելներ են պետք է թաղել ատոնք, որպեսզի տաք օդի տակ երկար մնալով չի նեխին: Իսկ եթե պահել պետք է, լավ կըլլա որ մոմիա դարձվին, հետո պահվին): Բարենորոգումը ամեն պարագայի մեջ կապված է անհրաժեշտության հետ (է, ասիկա վերի խոսքերուն հարմարեցա՞վ), որովհետև բարենորոգումը չեղած տեղը հառաջադիմություն չ'ըլլար (կը նշանակե հառաջադիմություն չեղած տեղն ալ բարենորոգում չ'ըլլար):

Դպրոցական բարենորոգումը, շիտակը, եթե կուզեք, տուներեն պետք է սկսիլ (բոլոր տուները քանդելու և տեղը նորը շինելու է), սակայն հառաջադիմությունը դպրոցական բարենորոգումն սկսած ըլլալով (ետ դառնաս տե տուներեն սկսիս նե չ'ըլլա՞ր, ո՞վ հառաջադեմ էֆենտի), հիմակուհիմա թոռունք տուները (հրամայեցեք փողոցներեն սկսինք), եկուր սա փողոցները կտրենք և դպրոցներուն նայինք (հայտե քու ըսածդ թող ըլլա նայե նայինք):

Մեր ազգին մեջ կարգ մը բարենորոգումներու պետքը կա (ատիկա հասկցանք ա, ո՞ր է սա դպրոցներեն պիտի սկսեիր, մոռցար), բայց ատոնք ե՞րբ, ո՞րտեղ և ո՞ր կողմեն սկսելու է (ինչո՞ւ կը բարկանաս եղբայր, դուն հիմա սկսե Իփսի խանին մեջ, կուզես թևեն սկսե, կուզես ոտքեն, ատիկա քու գիտնալու բանդ է):

Մենք մեր ազգին անզգայության ախտեն վարակված ըլլալը շատոնց հիմացուցեր ենք, ատ պատճառով շատ ալ նախատիքներ ու անարգանքներ լսեր ենք (խե՛ղճ տղա), մեր հույսերը ի դերն ելլալու վրա են, քանի որ նշ ոք իր գիտցածեն հրաժարիլ չ'ուզեր (անպիտան վայրենիներ, ինչո՞ւ ձեր ոչ ոք իր գիտցածեն հրաժարիլ չեք ուզեր, քիչ մը հրաժարվեցեք), ոմանք ալ կեղևան գիտցածեն հրաժարիլ չեք ուզեր, քիչ մը հրաժարվեցեք), ոմանք ալ կեղևան մեր շինածը քանդելու կաշխատեին (անամոթնե՛ր, լիրբե՛ր):

Արդարև, ազգերնուս մեջ պզտիկ հառաջադիմություն մը կը նշմարվի (քանի՞ տարեկան կըլլա ատ հառաջադիմությունը), բայց ասիկա մեկ կողմ թողունք (թողունք ամա, եթե ըսածնուդ չափ պզտիկ է, կրնա ըլլալ որ վախնա, ըսե թող մոտերնիս կայնի), հառաջադիմության նավն ալ վերջին ալեկոծություններուն պատճառով քիչ մը ետ քշվելու վրա է. (հառաջադիմության այս նավային ընկերությունը նո՞ր է ստեղծվեր, այս ընկերության նավերը Խասգո՞ւղ կաշխատեն թե Պողագ իչի):

Ազգ մը ամբողջությամբ խելացի, կատարյալ և խելոք չի կրնար ըլլալ (արդյոք ի՞նչ է պատճառը), ազգ մը ամբողջությամբ ինքն իրեն չի կրնար առաջ երթալ (պարանով նավի մը ոտքին կապելու է), չի կրնար բան մը ընել (ինչե՞ն կըլլա ասիկա), ըստ երևույթին հոս գաղտնիք մը կա (աման սա գաղտնիքը ըսե տե գիտնանք), ժողովուրդ մը շարունակ մեքենայի վիճակին մեջ գտնվելու է (նավի՞ մեքենայի, թե շոգենավի), անոր մեջեն, անիվին կամ շոգիին տեղեն առաջնորդներ կելլան (ներեցեք էֆենտիս, որ խոսքերնիդ կը կտրեն, դպրոցներուն պիտի անցնեինք, բայց տակավին ծովուն վրա ենք, նավուն անիվին, ծովուն ալիքներուն մեջտեղը սեղմվեցանք մնացինք, անցիր սա դպրոցներուն):

Քանի մը անամոք ու լիրք մարդիկ, որոնք հայհոյանքե ու թեթևութեն գատ ուրիշ բան չեն հասկնար (համրիչը քաշեք) մեյ մեկ գրիչ առած իջեր են հրապարակ (ափսո՛ւ) և բարենորոգումներուն դռանը կանգնած՝ ներս մտնողներուն սրունքները խածնել կաշխատին (խելոք կեցիր, գրիչ, չի խածնես), և այս գազաններուն միսն ու ոսկորն ալ ազգերնիս կուտե (է, ինչո՞ւ կուլաս, քիչ մը ոսկոր ալ քեզի թող տան, արդեն ազգին ու թերթերուն միսը անչափ կերար, որ այլևս ազգը միս չունի որ տա):

Թեև այս գազաններուն ակռաները մենք ջարդ ու փշուր ըրած ենք (աստվածդ սիրես՝ ինծի ինչո՞ւ լուր չի տվիր), սակայն մեզմով գործը չի լմննար (անանկ է նե՛ դուրս ելիր ատ գործին մեջեն), մեկ ձեռքը ծափ չի տար, կըսեն (սպասե տեսնանք, ճի՞շտ է):

Մեր ազգին գիտակից մասին այսչափ նախատինք տալե ետքը ձեր գյուղը ասանկ խոսքերուն նախատի՞նք կըսեն, մեր գյուղը ասանկ խոսք ընողներուն անկիրթ, թեթև, հայհոյող կըսեն) հիմա անցնինք դպրոցական բարենորոգումներուն (վերջացա՞վ):

* * *

Մարդ ըսածդ իր չի գիտցած գորին մեջ չի մտնե նե՛ լավ կընե:

Եկեք տեսնենք, ի՞նչ կը հասկնանք դպրոց ըսելով (մեկն կը հասկնանք): Նախ՝ հասկնալու ենք թե ինչ ըսել կուզենք դպրոց ըսելով (կը նշանակե ինչ ըսելնիդ դուք ալ չեք գիտեր):

Մեկ կողմը հայր ու մայր, մյուս կողմը վարժապետ, մեկ կողմն ալ խեղճ երախան (եթե լանսիե խաղալու է, մեկ կողմ մըն ալ պետք է), հիմա ուշադրություն դարձնենք ասոնց մտածումներուն և ըրածներուն (հարկավ դարձունելու է). առաջին կողմը՝ չի հասկնալով ուսման կարևորությունը, կուզե որ երախան տուն գալեն ետքը հանգիստ նստի (առաջին կողմին ուզածը հիմա հասկցվեցավ), բան մը չի կոտրե (վերջացա՞վ), բան մը չի թափե (դեռ կա՞), վնասակար բան մը չընե (ա՞լ, ա՞լ), չի պոռա (վե՞րջը), չի կանչե (վե՞րջը), չի խաղա (ա՞լ, ա՞լ), խելոք շան մը կամ կատվի մը պես անկյունը կծկված մնա:

Գանք վարժապետներուն (եկանք), ասոնք աղքատ, կեղծավոր մարդիկ են, կույրկուրայն (կուզես նե մյուս կողմը անցնինք) կաշխատին (անցանք):

Հիմա գանք երրորդ կողմը (ես արդեն եկեր եմ, դուն նո՞ր կուգաս), մարդիկ կուզեն որ երախաները տունը հանգիստ նստին, բան մը չի կոտրեն (աս կողմը ճիշտ առաջին կողմին կը նմանի), բան մը չի թափեն, չի պոռան, չի կանչեն, խելոք մնան, ասոնց զբոսանքն ալ տարբեր ըլլա (ահա ասոր կըսեն դպրոցական բարենորոգում, վերջապես ծովի վրայեն ցամք իջանք):

Հայրն ու մայրը այնպես պետք է համոզեն երախան, որ ան դպրոց երթալը լսելով շաքար, լոխում առածի պես (շաքարավաճառին խանութին մեջ դեռ երկար մնալո՞ւ ենք) ուրախանա (սա դպրոցդ շաքարավաճառի մը խանութը փոխադրես նե չ՞ըլլար):

Անշուշտ երախաներուն համար վախ մը պետք է (եկուր քեզի քորգուլուք շինենք), սակայն ուրիշ ձևի վախ մը (ծածուկ ըլլա նե՛ գեշ չ՞ըլլար), անանկ վախ մը որ, անանկ որ, ասանկ որ, այդպես որ, քանի որ, օրինակ, երախաները հայր ու մայր, ազգական բարեկամ, դուռ դրացի, վարժապետ ճանչնալով և դպրոցին տված վախեն չի վախնալով՝ պիտի կարծեն թե դպրոց եթե երթան՝ և դպրոցին տված վախեն չի վախնալով՝ պիտի կարծեն թե դպրոց եթե երթան՝ վարժապետը երգ պիտի սորվեցնե բուքա պարել պիտի տա, զբոսանքի պիտի տանի, և հորերնուն ձեռքեն դրամ պիտի քաշե (այս միջոցը գեշ չէ):

Ասոր պես քանի մը ուրիշ միջոցներ ալ կան, ատոնք գիտնալը հարկավոր է, այս միջոցները ծառերու ճյուղերուն, տերևներուն, արմատներուն կը նմանին (անտառ մտանք, խարխափելու է):

Եթե դպրոցները կարգավորելու համար աշակերտներեն շաբաթական դրամ ուզվի, կասկած չի կա, որ դպրոցներուն կեսը պիտի պարավի, որովհետև մարդիկ իրենց զավակներուն կրթության մասին այնչափ չեն մտածեր, որքան անոնց ֆեսիս, կոշիկին, շրջագգեստին և գլխարկին մասին (կարուձևի խանութ մտանք) կարկանդակի մասին (փուռի մեջ ենք, անոթի եղողը թող հրաման), աս բոլորի մասին գրածներուս կարևորություն չեն տար (սիրտս թունդ հանեցիր, մարդ աստուծո): Խումբ մը ազգային ախտեր (լռե, ամոթ է, ախտի ազգ) ինձի ծաղրելու կաշխատին:

Ամբողջ Պոլսո մեջ, իր զավակին մոր կաթին հետ՝ ընտիր կարկանդակ (նոր չի կերա՞նք, ա մարդ) և ամբողջ մարմնով՝ շավարի հետ մեկտեղ (ամառվա զգեստ չունեցողը թող գա, պատրաստելու վրա ենք, շուտ թող գա, որովհետև շատ չենք կրնար սպասել, դեռ ուրիշ խանութներ ալ պիտի մտնանք) և մարգարիտ և ադամանդ (հաճախորդ եկավ, ով ոսկերիչներ, պատրաստ եղեք), և ուզած բաճկոնդ և տաբատդ կը գտնվի, համեղ կերակուրներ, աղանդեր ալ կը գտնվի (էֆենտիս, ես հոգնեցա, այլևս չեմ կրնար կոր քալել, ձեզի բարի ճամբա, մեկ դպրոցական բարենորոգության համար Պոլսո մեջ խանութ չի մնաց մտանք ելանք, փառք տիրոջը, աստված մի արասցե, եթե ազգային բարենորոգման սկսիս՝ տարին տասներկու ամիս նստելիք չունինք: Դուք ձեր քեֆին նայեցեք, սակայն ձեր փնտրած բարենորոգումը որ կարկանդակավաճառին խանութին մեջ գտնանք՝ մեզի ալ իմացուցեք որ երբեմն առավոտները հոն ուտենք կարկանդակը):

Մեկ խոսքով՝ աշխարհիս վրա հայտնի բոլոր գիտությունները ըստ մեզի՝ պետք է երեք խումբի բաժնել (բաժնե նայինք), ասոնցմե շատերը երիկ և կնիկ հարուստ և աղքատ (աստված իմ, գիտություններուն երիկ կնիկն ալ կա եղեր, այս հաշվով գիտությունները տաբատ և շրջագգեստ ալ պիտի հագնին, կը նշանակե աս գիտությունները երախաներ ալ պիտի ունենան, ասիկա ալ, ըստ երևույթին, բնության մեկ գաղտնիքն է) և մեծ ու պզտիկ (միջնեկը չի մոռանանք) բոլորին համար ըլլալու է (թզուկներն ալ մե՞ջն են արդյոք), այսինքն՝ բոլորն ալ սորվելու են, օրինակ՝ գրել, օրինակ՝ կարդալ, օրինակ՝ թիվ գիտնալ, օրինակ՝ քիչ մը շիմի, քիչ մը ֆիզիք, օրինակ՝ աստղաբաշխություն, օրինակ՝ բուսաբանություն, օրինակ՝ գիտնալը, օրինակ՝ շատ, օրինակ, անհրաժեշտ, օրինակ է:

Մեկ խոսքով՝ աղջիկները անպատճառ մարդակազմություն և ֆիզիոլոժիք գիտությունները պետք եղածին չափ լավ գիտնալու են (մարդակազմությունը շատ կը սիրե աս մարդը... հնարավորության չափ քիչ սորվի նե չ'ըլլա՞ր

արդյոք): Եթե կնիկները մարդակազմություն չի գիտնան, գերի, խաղալիք կըլլան (որքան իրար մոտ նմանություն), կամ բեռ ու կահ կարասի, կամ գոմեշի պես կըլլան (եթե Ազապյան վարժարանի աշակերտուհիներն ալ իրենց տնօրենին պես ասանկ քաղաքավարի խոսքեր կընեն, ըսելիք չկա):

Մեկ խոսքով՝ յուրաքանչյուր գիտություն լույսի կանթեղ մըն է (գիտությունները տեղափոխելու ատեն զգուշությամբ տանելու է, որպեսզի իյնալով չի կոտրվին), լույսը ամեն տեղ և ամեն ժամանակ, և ամեն մարդու համար լույս է (լուսավոր սենյակի մեջ ալ վառելու ըլլանք լո՞յս է), արանց համար օգտակար եղող լույսը կանանց համար վնասակար չի կրնար ըլլալ (կարծես աչքի ցավ ըլլա), սակայն այս կամ այն կինը այս կամ այն գիտությունը սորվելով կրնա գեշ նպատակի համար գործածել ասիկա խոսք չէ (եթե խոսք չէ՝ ինչո՞ւ կըսես):

Մեկ խոսքով՝ ամեն երիկ գիտե որ կրակով հրդեհ կը վառվի (սիկար ալ կը վառվի), դանակով մարդ կը սպաննվի, թույնով մարդ կը մեռնի, ասոնք գիտնալը մեկ-մեկ գիտություն է (այս գիտություններն ալ ձեր դպրոցներուն մեջ կը տրվի՞ն), ահա ամեն գիտություն ալ ասանկ է:

Մեկ խոսքով՝ աս ալ չի մոռնաք ըսելու, թե աղջիկները ամեն գիտություն տղաներեն ավելի շուտ կրնան սորվել (սուտ է):

Մեկ խոսքով, եթե հարյուր աղջիկներու մեջ ձգենք Ազապյան վարժարանի աղջիկներեն երկուքը և մենք ալ հեռուեն նայինք, պիտի տեսնենք որ մյուս աղջիկները տակառի պես պիտի կենան և մեր աղջիկներուն վարվելակերպեն, խոսվածքեն, քաղաքավարութենեն և գիտութենեն ամչնալով՝ մեկիկ մեկիկ պիտի փախչին (ձեզի ատանկ ըսել կիյնա, ձեր պարտքն է ատանկ ըսելը, որպեսզի մարդիկ խաբվելով իրենց աղջիկները Ազապյան վարժարան դրկեն):

Կարճ պատասխան. – **Մանգումեի** ընթերցողներեն ոմանք մեզի կը հարցունեն թե ե՞րբ պիտի վերջանա «Դպրոցական բարենորոգում» հոդվածը:

Մենք հետևյալ պատասխանը կրնանք տալ, հիմակուհիմա ատիկա ոչ ոք չի կրնար գիտնալ, գրողն ալ չի գիտեր, սակայն եթե **Մանգումեի** սերը ոք չի կրնար գիտնալ, և աստված ալ ողջություն տա, գալ գարնանը «Դպրոցական վառվի, բռնկի, և աստված ալ ողջություն տա, զալ գարնանը «Դպրոցական բարենորոգումներուն» վերջը կրնանք տեսնալ, իսկ եթե սերը մարի, մեկեն ի մեկ, չսպասված տեղը կը վերջանա: Ուրիշ բան մըն ալ կա, եթե ժողովուրդը պարապ խոսքեր լսելու, մեկ խոսք տասը անգամ լսելու, և հինգշաբթի օրվա շուկայի նման խառնակ բաներ կարդալու համար դրամ տալ ուզե, այս հոդվածին վերջը գալիք չունի:

ԱՐՏԱՔՆՈՑԱՅԻՆ ԲԱՐՆՈՐՈԳՈՒՄ

«Դպրոցական բարենորոգումներուն» նվիրված հոդվածը վերջացավ: Մենք առաջուց գուշակած էինք, որ հոդվածը հարկավ օր մը պիտի ավարտվի, շատեր չէին հավատար, սակայն ի վերջո գուշակությունն իս իրականացավ և ատ հոդվածն ալ վերջացավ:

Հիմա սկսին ճեմիշներու (արտաքնոցներու) բարեկարգման մասին խոսիլ (զգվող թող չի կարդա): Շատեր՝ այս մեր հոդվածը կարդացած ատեննին (արտաքնոց պիտի վազեն) մեզի պիտի մեղադրեն (պարապ խոսք, ատիկա ձեր կարծիքն է) և ըսեն, աս մարդը գրելու բան չի գտեր տե՛ գացեր եկեր արտաքնոցներո՞ւն վրա գրել սկսեր է ու պիտի խնդան: (Քիչ մըն ալ թող խնդան, ի՞նչ կըլլա, խոսքիդ կապը չի կտրվիր ա, հետո՛ դուն անոնց մի նայիր, դուն գիտցածդ նվագե, թող ճիշտ ըլլա տե՛ անոնք ինչ կուզեն թող ըսեն):

Մեր կարծիքով բարեկարգումը ամեն կողմն պետք է սկսիլ (կը խնդրեն, ո՛վ ընթեցող, դեռ մի խնդար, քիչ մը սպասե տեսնանք աս մարդը ինչ պիտի ըսե, տեսնանք մտած դուռնեն պիտի կրնա՞ ելլալ, թե մեջը պիտի մնա ու պիտի խեղդվի) թե չէ մեկ կողմը պակաս կը մնա և բարեկարգում չ'ըլլար (հարկավ, դպրոցն ու արտաքնոցն են, որ մարդ արարածը կը տարբերեն անասուններեն, ո՛վ հայեր, ըսեք, դպրոցներուն համար այնքան դրամ կը ծախսվի, արտաքնոցներուն ո՛վ երկու փարա տված ունի, դպրոցներուն համար բազմոցներ, գրասեղաններ կառնվին, օր մը օրանց արտաքնոցներուն համար բազմոց մը առնվա՞ծ է):

Բարիզ մեծ կարևորություն կը տրվի արտաքնոցներուն մաքրությանը մարդաշատ փողոցներուն մեջ գեղեցիկ արտաքնոցներ շինված են, որոնց պատերուն վրայեն շարունակ բարակ ջուր կը վազե (ատ պատերուն վրան ալ արտաքնոց չըլլա՞), մենք անոնց հատուկ ուշադրություն դարձուցինք: Բարիզի արտաքնոցները այստեղի ամենեն կատարյալ պարտեզներուն մեջ գտնվող պալատներեն գեղեցիկ են: Այս արտաքնոցները մարդիկ դրամով կը մտնան (մենք ալ քեզի դրամ տանք, մտիր անոնց մեջը նստե):

Հոս շատեր ձեռքերնին դրամ ունին և գործ կը փնտրեն և չեն գտնար, ահա եթե ասանկ արտաքնոցներ շինել տան, թե՛ ժողովուրդին ծառայած կըլլան և թե դրամ կը շահեն, ինչո՞ւ չեն ըներ (իսկ եթե ժողովուրդը գրավե ատ արտաքնոցները և ալ դուրս ելլալ չուզե ի՞նչ պիտի ընենք. գործը երկու կողմով բռնելու է):

Մենք այս գաղափարը քանի մը տարի է որ կը պաշտպանենք (գրավելո՞ւ գաղափարը), եթե դրամ ունենայինք, Պոլսո բոլոր թաղերուն մեջ արտաքնոցներ շինել կուտայինք, հիմա ալ եթե ընկեր մը գտնանք, ամեն գոհողության պատրաստ ենք (ատանկ ըլլալեն ետքը գործին կեսը լնցած կրնա սեպվիլ):

Մեր հասարակաց արտաքնոցներեն երբ ներս մտնանք ու պատերուն նայինք, մարդու սիրտը կը խառնե (տես ասիկա ճշմարիտ է), ամեն պատի վրա կարծեք բարակ վրձնով հատուկ նախշեր ըրած են (էոժեն Սյո՞ւ ես, ի՞նչ ես, մարդ աստուծո, աս ի՛նչ նկարագրություն է):

Էո՛ֆ, ի՞նչ եղաք, գեշ հո՞տ առիք, (սիրտ խառնեցիր, մարդ աստուծո, աստված քու պելադ ալ տա, աս հոդվածը շարողին ալ, գրողին ալ, գրել տվողին ալ), ... այս աստիճան վայրենություն (ոչ մեկ թերթի մեջ տեսնված է) անասուններուն մոտ անգամ տեսնված չէ (իմ ըսածս ալ ատ փողոցը կելլա):

Ո՞վ է այս բոլորը ընողը, քանի մը հոգի՞, ո՛չ շատե՞ր, ո՛չ փոքրիկ խո՞ւմբ մը՝ ո՛չ (հասպա ո՞ր խումբն է...), քիչ մնաց բերնես գեշ խոսք մը փախցունեի (ըսե, **Մանգունե**) հայերուն մեջ ասանկ աղտոտ մարդիկ շատ կան (ահա ասիկա սխալ է, հայերը այս խնդրո մեջ մաքուր են):

Քաղաքակրթության մեջ առաջ կերթանք ըսելով՝ պարծեցողները (ոտքով պիտի առաջ երթանք, ո՛վ արտաքնոցներու բարենորոգիչ) մեր մոտ տեսնված այս աղտոտութենեն հեշտությամբ կրնան գուշակել, թե որքան ենք առաջ գացեր (դուն մի ըսեր՝ մարդուս քաղաքակրթությունը ոտքերեն կը հասկցվի եղեր):

Տարբեր տարբեր անամոթություններով անմիտ հոդվածներով իրենց թերթերը լցնող խմբագիրները այս խնդրո մեջ շատ հետամնաց են (ըրած խոսքերուն նայե անգամ մը, ո՞վ ըսավ քեզի թե քու կարծիքովդ անմիտ հախոսքերուն նայե անգամ մը, ո՞վ ըսավ քեզի թե քու կարծիքովդ անմիտ հախոսքերը ժողովուրդին ոտքերուն մաքրության վրա հսկիչ կարգված են, գնա աղոթի ո՛վ բարենորոգիչդ արտաքնոցներու, որ քու ըսած աղտոտություններդ մաքրելու համար հսկիչ չկա, եթե ըլլար, ամենեն առաջ **Մանգունեի** այս, կամ ասոր նման շատ մը հոդվածները մաքրել պետք պիտի ըլլար):

Այս կեղտոտություններուն մասին խոսելուս՝ թող չի կարծվի թե մեր թերթի պարունակությունը ասանկ բաներու պատշաճեցնելով անոր վաճառքին նպաստելն է, մինչդեռ, և նույնիսկ, և մասնավորապես, և անշուշտ, հիմակուհիմա արտաքնոցներուն պատերուն փակցնելու ուրիշ հայտարարությունն է, որ շատերը մեր **Մանգունե** առեք և փակցուցեք չենք ըսեր (մեղա՛, ներ չի գտնվելով՝ մեր **Մանգունե** առեք և փակցուցեք չենք ըսեր (մեղա՛, հազար անգամ մեղա) մենք արտաքնոցային եկամուտի պետք չունինք, սա-

կայն դրամագլուխ ունեցող մը ելլա տե աս գործը կատարե նե մենք ալ մեր շահը հաշվի առնելով ազնվորեն մեր գրությամբ սույն արտաքնոցային վաճառականին ստանալիք արդյունքին մասնակցելու պատրաստ ենք:

Նկատի ունենալով որ այս աղտոտությունները դպրոցներու մեջ ալ կան, և սահկա փորձով գիտենք, Ուսումնական խորհուրդին ուշադրությունը կը հրավիրենք, որպեսզի ամավերջին քննություններուն ատեն այս կարևոր բարեկարգման վրա ուշադրություն դարձնե:

Հիմա, կարգ մը անտաշ թերթեր մեզի պիտի ծաղրեն, սակայն անոնք, ինչպես եկեղեցական, դպրոցական, անանկ ալ արտաքնոցական բարենորոգումներեն անտեղյակ են, քանի որ անոնք չեն գիտեր թե ինչ ըսել է դպրոց և ինչ ըսել է արտաքնոց: Խաբելը մեղք է, սակայն խնդացնելը՝ լավ, հիմա քիչ մըն ալ խնդացնենք (խեղկատակության անցանք թե մեյդան օյունու կը խաղանք), այո՛, խնդացնենք (դիր տեսնանք միմուսի գդակը):

Այս արտաքնոցներուն մեջ անանկ ազդագրեր կան, որոնք հախճապակե պատի վրա ներկով գրված ըլլալով, կանգնած մարդու ուղղակի դեմը կիյնան (այս բանը ըսելու կարիք չկա, մարդ ըսածդ անշուշտ դիմացը պիտի նայի, այդ հաշվով, հայտարարություններ կարդալու համար, թերթերուն դրամ տալու չի, արտաքնոցներեն մեկը նստելով կարդալու է):

Ինչպես ըսինք, այդ արտաքնոցները մտնողներեն դրամ կառնվի (ներեցեք, էֆենտիս, բան մը հարցունեմ, եթե մեկը արտաքնոց մտնա տե գործը գլուխ չի բերե՝ դուրս գալու իրավունք պիտի ունենա՞, թե տված դրամին խաթեր համար անպատճառ հարկադրված պիտի ըլլա գործը վերջացնել, եթե ատանկ է գործը սկիզբեն լավ նախապատրաստելու տե հետո մտնելու է ներս), այո՛, դրամ կառնվի, (մի գայրանա, անուշա, սակայն դրամ չունեցողները ի՞նչ ընեն, արդյոք մարդ արարածի հանգստության համար բնության տված իրավունքեն պիտի զրկվին):

Ափսոս, որ Թուրքիո մեջ բոլոր ժողովուրդները քաղաքակրթության առաջին պայմաններեն մեկը եղող արտաքնոցները ասանկ խեղճ վիճակի մը մեջ կը թողուն... ողբալի՛ վիճակ (զիս հուզեցիր, մարդ աստուծո, բայց ի՞նչ կրնայինք ընել, արտաքնոցները բամբակի մեջ փաթեթելով դարակներուն վրա՞ դնենք, թե բաճկոն, տաբատ հագցունելով թներնիս մտցունենք ու պտըտցունենք), Ափսոս այս արտաքնոցներուն (արտաքնոցնե՛ր, արտաքնոցնե՛ր, ինչ ըսեք իրավունք ունիք, որովհետև ձեր ծառայություններուն դիմաց աղամորդիեն որևէ վարձատրություն չեք կրնար ստանալ, մարդիկ ձեր արժեքը չեն գիտեր, ձեզի չեն հարգեր, ինչ էք զարմացած նստեր հոս, ելեք

Բարիզ գացեք, ո՛վ արտաքնոցներ, խե՛ղճ արտաքնոցներ, Բարիզ գացեք ու տեսեք թե հոն ինչպես պիտի գնահատվի ձեր արժեքը: Եվ ամեն հաստատություն, և ամեն առողջական գործի հիմքը եղող ընդհանուր շահը, կամ իր շահը (շահերը իրար խառնվեցան) և ընդհանուրի հանգստի շահը (այս լեզուն հասկցողը թող առաջ անցնի) և հանգստի (էֆենտիս, քիչ մը անհանգիստ կերևա) մեջ փնտրելու փիլիսոփայութենեն (արտաքնոցային փիլիսոփայություն է) բան մը չեն հասկնար (հասկցանք, մարդ արարածի հանգիստը և երջանկությունը արտաքնոցներուն մեջ է):

Եթե մեր բովը քիչ մը հայրենասիրություն գտնվի, անկասկած մարդիկ պիտի աշխատին վերացնել հիշյալ աղտոտությունները (հայրենասիրության ինչ ըլլալն ալ վերջապես հասկցանք): Հիմա, մաքրասեր մարդիկ երբ կարդան մեր այս խոսքերը (զգվելու են) գուցե բարկանալու են (հոգ մի ընեք, խենթի խոսքին ոչ ոք իրավունք չունի բարկանալու):

Ահա ասով վերջացուցինք մեր այս հողվածը, շարունակենք դպրոցական բարենորոգումը, որքան ալ որ վերջացավ ըսինք, չի վերջացեր, ինչպես որ առանց արտաքնոցի բարենորոգում չ'ըլլար, անանկ ալ առանց դպրոցի բարենորոգում չ'ըլլար, այո՛, արտաքնոցը և դպրոցը ձեռք պետք է մեկնեն մեկ մեկու, որպեսզի ազգերնիս առաջ երթա:



ԹԱՐԱՊԻԱՅԻ ԽՆՋՈՒՅՔՆԻՍ



Ոմանք, չիմանալով (արդեն այս ոմանք ոչ մեկ բան գիտեն) որ կնիկներն ալ տոմսակ պիտի առնեն, կը հարցունեն (որո՞ւ), այո՛, և այո՛, այո և կին տոմսակ պիտի առնեն, միայն երախամերուն տոմսակ պիտի չի հարցվի (ճիշտ Շիրքեթի խայրիեի շոգենավերուն պէս), տոմսակնիս երկու տեսակ է (մեկ տեսակը կնիկներուն, մյուս տեսակը էրիկմարդոց համար ըլլալու է) և հետո երկու գույնով է, երկու մեծիտիենոցները դեղին են, մեկ մեծիտիենոցները՝ սրճագույն:

Թե՛ նա՛վ մտնելու և թե պարտեզ մտնելու ատեն տոմսակները նայվելու են, ճաշի ատեն դեղին տոմսակ ունեցողները պիտի հրավիրվին սեղան (եթե սատանային մեկը սրճագույն տոմսակը դեղին ներկէ՝ հաշիվդ ի՞նչպէս պիտի գիտնաս):

Պարտեզեն դուրս եկողներուն, այսինքն պարտեզին մեջ չի գտնվողներուն մեկ-մեկ քոնքոնարք պիտի տրվի (ըսել է բոլորիս ալ մեկ մեկ քոնքոնարք պիտի տրվի, քանի որ ոչ մեկերնիս պարտեզ պիտի չի մտնանք):

Ինչպէս որ իմացուցեր էինք (մենք տակավին բան մը իմացած չենք) ճիշտ հինգ հարյուր հոգու համար (եթե հինգ հարյուր մեկ ըլլա, չը՞լլար)

Երկար սեղան մը պատրաստված է (լայն սեղան մը պատրաստված ըլլար նե ավելի աղեկ կըլլար) և աս ալ, կրնանք ըսել, որ մեր մոտ առաջին անգամ պիտի տեսնվի (ասիկա անշուշտ պատմության մեջ պիտի անցունել և ըսել թե մեր ժողովուրդին մեջ առաջին անգամ ըլլալով Փանոսյանը հինգ հարյուր հոգիի համար սեղան պատրաստեց, և ասիկա պետք է գրել Քոլումպոսին Ամերիկան գտնելուն քովը):

Մեզ մոտ ախտ (Փանոսյան) դարձած է, որ փոքր և հարևանցի գործ չենք կրնար ընել (ատիկա ձեր անձնագոհութենեն է... բայց սեղանը պատրաստեցինք, ատանկ թողուցինք, անոր վրա բան մը դրվելու չէ՞) և ահա այդ է պատճառը, որ մեր ամեն մեկ նախաձեռնության ատեն չափեն ավելի կը հոգնինք, կաշխատինք բոլորին ցանկությունն ալ կատարել (շիտակը հինգ հարյուր հոգիի համար սեղան պատրաստելը, անոր փայլ տալը ամեն խոհարարի գործ չէ) և ահա մեր ալ վարձատրությունը ատիկա է, մենք ալ ատով կը փառա-

վորվինք (այսինքն խոհարարությամբ) ճիշտ է նաև այն, որ ամեն լավ գործ դժվար կըլլա (իրավունք ունիս), ջանք ու եռանդ կը պահանջե (հարկա՛վ), մեր խնջույքին տոմսակները երկու տեսակ են (հասկցանք ատիկա), այսօրվն ալ սկսած ենք ծախել (ահա մենք ալ այսօրվն որոշեցինք չառնել):

ԿԻՐԱԿԻ ՕՐՎԱ ԽՆՋՈՒՅՔՆԻՍ

Երեք հազար ոտք երկարություն, վեց հազար ոտք լայնություն ունեցող և հին կողմեն խոշոր ծառերով, տերևներով և աս ծառերուն ստվերներովը շրջանակված, և մութացած ճամբուն վրա գետեղված և 190 ոտք երկարություն ունեցող և 280 թևաչափ լայնք ունեցող և վրան ալ բան մը չի գտնվելու պայմանով պատրաստված սեղանին հիսուն հատ կատարյալ և մաքուր ամանները և երկու կողմի կանաչությունները, դեղնությունը, բլուրները, ձորերը, և խորունկ լռությունը (բանաստեղծության սկսավ, սուս եղեք, ձայն մի հանք), թռչուններուն ձայնը բոլորին վրա լավ տպավորություն մը թողուցեր էր:

Բոլորն ալ անոթցած ըլլալով, ոմանք կատակ ընելով (անոթնալուն ալ կատակը կըլլա) մեկ ընտանիքի պէս «հայտե տեսնենք, կերակո՛ւր, կերակո՛ւր» ըսելով, պոռալով և – մեզի հոգնեցուցած ըլլալուդ պատիժը պիտի կրես, հիմա մեզի պիտի չի կրնաս կշտացունել, ըսելով խնդալ սկսան: (Տան տանա՛ պզտիկս):

Փիլիսոփայությունը վերջացած ըլլալով՝ անցնինք մարդկության կրթությանն ու դաստիարակությանը նպաստող հինգ հարյուր հոգինոց սեղանին, ճիշտ երկու հարյուր հոգի սեղան նստելեն ետքը աշակերտուհիները ոտքի կայնելով մյուսյու Գրիսթիանի ղեկավարությամբ անանկ աղվոր աղոթք մը կատարեք են որ ոչ թե մարդոց սիրտերուն, այլև թռչուններուն, ծառերուն, տերևներուն, ջրի կուժերուն վրան ալ խոր տպավորություն գործեր է:

Ազգերնուս մեջ գտնվող շատ մարդոց՝ հինգ հարյուր հոգինոց սեղանին ինչ ըլլալը չգիտնալուն պատճառով սեղաննուս մեկ կողմը պարապ մնացեր էր, միայն սա կրնանք ըսել, թե սեղանին երկարությունը շատ ըլլալով, մյուս Գլուխը գտնվողները պետք եղածին պէս չեն լսեր այս կողմը նստածներուն խոսքերը:

Ճաշը կես ժամեն ավելի տևեց, միայն փոռեն գառները եկած չըլլալով՝ կափսոսանք, որ գառ չի կերանք, աստուծով գալ տարի առաջ առատ կուտենք:

Ճաշի ժամանակ ամեն մարդ նստած, կերակուրի ափսեներուն գալուն կը սպասեր, սրբիչի կը սպասեր, սակայն սրբիչներեն ալ փուռեն եկած չըլլալով՝ աղջիկները նորեն սկսան դայլայլել և ամեն ոք «կեցցես» պոռալով, բաժակները պարպելով, զինիի շիշերն ալ փուռեն եկած չըլլալով և աղջիկները նորեն սկսան դայլայլել:

Այս խնջույքին առնվազն 100-150 հոգի մասնակցած ըլլալով հանդերձ, սեղանին վրա կաթիլ մը խմիչք չերևաց (դրամը չի բավէ նե միշտ ատանկ կըլլա) և աս ալ մեր ազգին համար մեծ փառք մըն է (եթե սեղանին վրա հաց ալ չի գտնվիր, ազգերնուս փառքը ավելի մեծ կըլլար), այս խնդրին վրա բոլորն ալ համաձայն են եղեր, այնպես որ երբ երիտասարդ մը իր հետ շիշ մը օղի բերեր է, խրատելով վոնտեր են և աս ալ առաջին անգամ է պատահեր մեր ազգին խնջույքներուն մեջ:

Մեր սեղանին մասնակցած և անոթի մնացած եվրոպացի շատ մը խելոք մարդիկ մեզի հրավիրեր են իրենց սեղաններուն և մենք ալ ատ հրավերը ընդուներ ենք:

Ահա մենք մեր ազգը ասանկ կը սիրենք, փոքր բան հանձն չենք առներ, ատանկ հինգ տարեկան աշակերտի գործ հանձն չենք առներ, և կարգ մը անկիրթ, զինով, անբան մարդոց ականջ կախելով հրապարակը թողուլ չենք ուզեր, այո՛, մեր աղջիկները պիտի խնդան, պիտի խաղան, պարեն ու արտասանեն, ըսեն ու խոսին, այո՛, տոմսակը երկու տեսակ է, մեկը բաց շագանակագույն է, մյուսը փակ շագանակագույն, դրամ ունեցողը բաց գույն տոմսակեն կրնա առնել, չունեցողը՝ փակ գույն տոմսակեն, իսկ շատ դրամ ունեցողը կրնա երկուքեն ալ առնել: Եվ այս բաց շագանակագույնն ալ առաջին անգամ ըլլալով հրապարակ ելած է:

Հիմա մեր խնջույքը պատվողներուն խորին շնորհակալություն կը հայտնենք, սեղանին վրա պատահածներուն համար սրտանց ներողություն կը խնդրենք և կը հուսանք որ գալ տարի փորերնին պիտի կշտացունենք, ուստի կը խնդրենք որ պատվեն մեր սեղանը:



ԲՈՒԺՈՒՄ

(Կատակերգություն մեկ վարագույրով)

Նիկողիմոս – հիվանդ
Գասպար – ծառան
Բարդեմ – Նիկողիմոսին բարեկամը

(Վարագույրը բացվելուն՝ ննջարան մը կերևա. Նիկողիմոս աղան, անկողնու մեջ նստած կը մտածե, անկողնին մոտ կերևա դեղերու տուփ մը, օշարակի շիշ մը, տղրուկի սրվակ մը, սպեղանի մը և այլն, և այլն):



ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻԼ

Նիկոյ. (ծառան կանչելով) – Գասպար, Գասպար.

Գասպ. (դուրսեն) – կուգամ, աղա, եկա (սենյակեն ներս կը մտնա):

Նիկոյ. – Երեք ժամն ի վեր ո՞ր ես, դեղարանը գտա՞ր.

Գասպ. – Տեր իմ, դեղարանը գտնամ ըսի ճամբան կորսնցուցի:

Նիկոյ. – Ուրեմն ճամբան գտնամ ըսեիր նե դեղարանը պիտի կորսունցունեիր:

Գասպ. – Տեր իմ, ձեր ըսածին պես գացի Էմին Էոնյու, հոն շատ մը կառքեր տեսա. կերևա այդ օրը կառքերու վաճառքի օր է եղեր, կամաց մը անցա կառքերուն քովեն, որպեսզի դեղարանի կողմը երթան: Գիմացս գոց փողոց մը ելավ:

Նիկոյ. – Էմին Էոնյուի մոտ գոց փողոց չկա:

Գասպ. – Կառքերը գոցած էին ճամբան տեր իմ, ետ դառնամ տե փողոցեն դուրս գամ ըսի, մեյ մալ տեսնամ՝ անկե ալ առաջ ճամբա չի կա: Աջ գացի ճամբա չի կա, ձախ դարձա ճամբա չի գտա, վերջապես կառքերուն մեջտեղը կորսվեցա, չի կրցա դուրս գալ:

Նիկոյ. – Ես ալ հոս կը սպասեմ որ Գասպարը դեղ բերե տե խմեն:

Գասպ. – Մեկ երկու ժամեն կառքերը շարժվեցան ան ատեն ձեր ըսածին

պես ուղղակի դեղարան գացի և դեղագործին ըսի՝ աղային համար լուծողական և պնդողական դեղեր տուր: Աս խոսքիս վրա դեղագործը բարկացավ, քու աղադ խենթ է, կատարյալ հիմար, բժիշկի դեղագիրը մինչև չըլլա դեղ չեմ կրնար տալ, ըսավ և ինձի վռնտեց:

Նիկող. – Վռնտելու ի՞նչ իրավունք ունի, բժիշկին դեղագիրը օգուտ չի տվավ անցածները լուծողական էր տվեր, ամենևին չազդեց, գնա կողմես բարև ըրե, թող ատ դեղերը տա: **(Ծառան կերքա):**

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼ
ՆԻԿՈՂԻՄՈՍ, ԲԱՐԴԵՄ

Բարդ. – Ատ ի՞նչ է, Նիկողիմոս աղա, անհանգի՞ստ ես:

Նիկող. – Ոչ, բարեկամ, գարունը քիչ մը մարմիննիս կազդուրենք ըսինք, բայց կերևա թե քիչ մը շատ կազդուրեցինք, տեսակ մը թուլություն եկավ վրաս:

Բարդ. – Ի՞նչ դեղեր գործածեցիր:

Նիկող. – Նախ թևես արյուն առնել տվի. քիչ մը հանգստացա, ասոր վրա սափրիչը կանչեցի մյուս թևես ալ արյուն առնել տվի, աս ու ան խորհուրդ տվին տասնըհինգ քսան տգրուկ փակցնել, որպեսզի արյունը մաքրվի, արյունս միշտ ալ աղտոտ ըլլալով՝ քառասուն տգրուկ փակեցուցի:

Բարդ. – Լավ...

Նիկող. – Աս գործն ալ երբ վերջացուցինք՝ ըսին թի սաբարինա օշարակ խմե որ արյունդ բոլորովին մաքրվի, հիմակ ալ սկսանք ատ ջուրը խմել, որպեսզի արյուննիս մաքրվի:

Բարդ. – Անանկ է նե այլևս քանի մը տարի կրնաք դեղ չի գործածել:

Առողջացած ըլլալու եք:

Նիկող. – Օշարակը գործածելես ետքը ստամոքսի թուլություն մը եկավ վրաս, անանկ թուլություն մը, որ չեմ կրնար բացատրել, իսկույն բժիշկը կանչեցինք, մարդը նաբբա բռնեց, դուն թուլություն չունիս, ըսավ, մենք ալ, մտածելով որ մարդկային սխալ մըն է գործեր ենք, այցեզինը ձեռքը դրինք ճամբեցինք: Եկուր տես որ թուլություննիս չանցավ:

Բարդ. – Չըլլա քի բժիշկը թուլությունը սխալ հասկցած ըլլա, բնության թուլությունը բնավորության թուլություն հասկցած ըլլա:

Նիկող. – Ո՞վ գիտե: Հաջորդ օրը երբ նորեն կանչեցինք և ըսինք թե օգուտ մը տեսած չենք, նորեն քննեց, դուն թուլություն չունիս, ըսավ, թու-

լությունը արդյոք ձեռքիս մե՞ջը կը փնտրեր, չեմ գիտեր, ալ ասոր վրա բարկացա, եղբայր, դուն պնդության դեղ մը տուր, ուրիշ բանի մի խառնվիր, ըսի, վերջապես ձեռքեն դեղագիր մը փրցուցինք, ծառան դրկեցինք, դեղերը բերավ, սկսանք կլլել:

Բարդ. – Գոնե անցա՞վ:

Նիկող. – Անցավ ըսելն ալ խո՞սք է. անանկ անցնիլ մը անցավ որ տասը օր դուրս չելա, ինչ ըրինք օգուտ չի տվավ, ասոր վրա նորեն բժիշկը կանչեցինք և ըսինք թե աս պնդության դեղը շատ գորավոր ըլլալով, թուլության դեղ մը տա նե լավ կըլլա: Եղբայր, աս անգամ ալ անանկ դեղ մը տվավ որ այսօր իններորդ օրն է դուրսեն ներս եկած չունիմ:

Բարդ. – Ասոր միջո՞ցը:

Նիկող. – Ասոր միջոցը ես գտա, ամեն օր բժիշկի դրամ չի տրվիր, մտածեցի, կարճ խելքովս դյուրին միջոց մը գտա, օրինակ՝ տեսնելով, որ թուլության դեղ խմելով թուլություն կունենամ պնդության դեղ առնելով պնդություն, որոշեցի ասոր միջին ճամբան գտնալ, երկու տեսակ դեղերեն ալ պատրաստել տալ և մեկ անկե կուլ տալ, մեկ մյուսեն: Նորեն ծառան դեղարան դրկեցի, բայց դեղագործը՝ քու աղադ խենթ է, ըսեր է և վռնտեր է:

Բարդ. – Վռնտելու ինչ պետք կա, եթե խենթ ես, խենթության դեղ մը թող տար:

Նիկող. – Ականջ չի կախեցի, ծառան նորեն դրկեցի, տեսնամ ինչ պատասխան պիտի բերե, եթե նորեն չի տա, թուլության դեղը մեկ դեղագործեն կառնենք, պնդությանն ալ մեկ ուրիշ դեղագործե մը. ասանկ ձգելու չի գար եղբայր, ախորժակս փակվեր է, աչքերս մթներ են, սենյակը աչքիս մութ կերևա:

Բարդ. – Մոմ վառե:

Նիկող. – Կատա՞կ կընես. մարդ աստուծո մոմ վառելով թուլությունը կանցնի՞:

Բարդ. – Ինձի հարցնես նե քանի մը հատ խենթության հապ կուլ տուր:

Նիկող. – Արդեն հապ կուլ տվինք:

Բարդ. – Իմ ըսած հապերս կըլես նե՞ բան մը չի մնար:

Նիկող. – Կը ներեք. դուրս պիտի ելլամ, (կելլա):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ
ԲԱՐԴԵՄ (ՄԻՆԱԿ)

Բարդ. – Եթե աս մարդը ողջ մնա, շատ բան, ասանկ բուժում ամենևին լսած չունեի: (Երկու ժամ կանցնի, Նիկողիմոս աղան չ'երևար): Աս մարդը ո՞ր մնաց, եթե պնդության դեղերը հիմա չազդեն...

Նիկող. – (դուրսեն կը պոռա). – **Բարդեն աղա, Բարդեն աղա...**

Բարդեն. – Ի՞նչ կա:

Նիկող. – (դուրսեն). – Եկո՛ւր, հասի՛ր, սա թևես բռնե՛...
(Բարդենը կերթա, վարագույրը կիջնա):



ՍԻՐՈ ԳՈՂ

(Կատակերգություն մեկ վարագույրով)

Ա... 80 տարեկան մարդ մը

Բ... Ա-ին բարեկամը

Գ... Երիտասարդ մը

(Վարագույրը բացվելուն՝ փողոց մը կերևա: 20-25 տարեկանի մոտ պճնագ-գեստ երիտասարդ մը, մատներուն վրա կոխելով և շուրջը նայելով՝ կամաց մը փողոցին անկյունը կը կայնի):



ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻԼ

Ա. (ԻՆՔՆ ԻՐԵՆ)

Աս ի՞նչ է. Այս գիշեր բոլոր տուները մոմ կը վառի, ժամը 12-ը եղավ. Գիշերվա աս ժամին ինչ պետք կա տուները մոմ վառել. Այս քաղին բնակիչները բոլորն ալ խնջո՞ւյք ունին... (քիչ մը մտածելէ ետքը) սիրուիս ալ նամակով իմացուցած էր թե ժամը 10-ին պիտի իջնա դռան մոտ, որպեսզի քիչ մը տեսնվինք: Ժամը 12-ը եկավ, ոչ ոք չի կա, չերթա՞մ դռան զանգակը խառնեն... խառնեն, բայց նախ դռան կողմը երթամ (կերթա):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼ

(Վարագույրը բացվելուն՝ ննջասենյակ մը կերևա, Ա... մահճակալին վրա նստած կը մրափե, Բ... ներս կը մտնա):

Բ. - Ինչո՞ւ մահճակալին վրա նստեր կը մրափես, աստվածդ սիրես ելիր տեղդ պառկե:

Ա. – Հյուրի կը սպասեմ եղբայր, հյուրի:

Բ. – Աս ժամուն հյուր կըլլա՞:

Ա. – Կըլլա... երկու շաբաթ է որ աչքերս գոցած չեմ:

Բ. – Ի՞նչ անկիրթ հյուր է եղեր ատ մարդը... Երկու շաբաթ է ի վեր խոսք տալ և չի գալ կըլլա՞:

Ա. – Կըլլա:

Բ. – Ո՞վ է նայինք այդ մարդը:

Ա. – Աստված հոգին առնե, ով ըլլալն ալ չեմ գիտեր:

Բ. – Ավելի լավ, պառկե, երբ հյուրը գա և դուռը զարնե ան ատեն կելլաս:

Ա. – Եղբայր սպասվող հյուրը անցած օր տուն մը գացեր է, առանց դուռը զարնելու ներս է մտեր, որքան ապրանք կա առեր տարեր է, հիմա հասկցա՞ր ով ըլլալը:

Բ. – Հասկցա:

Ա. – Անցած տարի մլուկ կար մեր տունը, անկե չէինք կրնար քնանալ, աս տարի ալ գողի սարսափը ելավ:

Բ. – Լավ անանկ է նե ծածուկ տեղ մը նստե, ինչո՞ւ մոմ կը վառես: Գողը եթե մոմի լույսը տեսնա կուգա:

Ա. – Կը վառեմ որ գողը մութ տեղը չիյնա տե մեկ տեղը կոտրե, առաջին անգամ մեր տունը պիտի գա ճամբան չգիտե:

Բ. – Է, աս անբունությունը ամեն գիշեր կը քաշվի՞:

Ա. – Չի քաշվիր, բայց չեմ գիտեր թե երբ պիտի գա որ ըստ այնմ շարժիմ, այսքան սպասելես ետքը գոնե գա տե իմ օրս անցնի ու հանգիստ քնանամ:

Բ. – Վարեն ձայն մը առի, կարծեմ փողոցին դուռը կը խառնեն, եկուր երթանք, դռան ետևեն նայինք: (կերթան):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ

(Վարագույրը բացվելուն՝ տան գավիթը կերևա. Ա. և Բ. դռան ետևը կայնած կը նային: Դուրսեն դուռը կը խառնեն):

Գ. – Լավ է, վար իջավ... դուռը չի բանա՞ս, անխիղճ:

Ա. – (Բ–ին) – Աս ինտոր գող է, որ դուռը բանալ կը հրամայե:

Բ. – Սպասե քիչ մը.

Գ. – Ես քեզի համար անքուն գիշերներ կանցունեմ, սիրուդ պատճառով հանգիստ կորսնցուցեր եմ, ոտքերդ պազնեմ բա՛ց դուռը:

Ա. – Աս ինչ քաղաքավարի գող է, որ ոտքերս ալ պիտի պազնե, ափսոս ոտքերս ալ լվացած չեմ.

Գ. – Ինձի սպասցնել մի տար, դուռը բաց, գույգ մը խոսք պիտի ըսեմ ու երթամ, անխիղճ, այսչափ սպասցնել կըլլա՞, ալ չափը կանցունես:

Ա. – Անշուշտ գողը դռան մոտ այդչափ կայնեցնելու չէ:

Գ. – Ափսոս որ քեզի համար խենթեցա:

Ա. – Տունս պարպել է միտքը:

Գ. – Երիտասարդությանդ վրա հույս դնելով ինձի մեռցունե՞լ կուգես:

Ա. – Աս գողը անպատճառ սխալ տեղ մը եկած է, իմ տարիքս 60–ի և 70–ի մեջ կորսված է:

Գ. – Գերիդ ըլլամ, բաց սա դուռը:

Ա. – Անգամ մը բանանք տեսնանք ո՞վ է սա անուշ լեզու գողը: (Դուռը կը բացվի):

Գ. – Անխիղճ, ինձի ինչո՞ւ այսքան սպասցնել տվիր, ինչո՞ւ մութ տեղը իջեր ես: (Գրպանեն լուցկի մը կը հանե, մոմը կը վառե):

Բ. – Օ, օ, մյուսյու Գ... դո՞ւք եք, ի՞նչպես է եղեր որ ձեր ազնվությունը բարեհաճեր է մեր տունը գալ.

Գ. – Կը ներեք, օղը լավ էր տե... ես ալ... որովհետև... օրինակ... այսինքն...

Ա. – Ո՞վ կը փնտռեք:

Գ. – Այսինքն եկա հարցունելու թե նավը առտուները ժամը քանիի՞ն կերթա:

Բ. – Մխալ եք եկեր, տղաս, նավամատույցը քիչ մը վարն է...

Գ. – Կը ներեք որ զձեզ անհանգստացուցի. մնաք բարով, երբեմն երբեմն դուք ալ մեր տունը եկեք, տեսնվինք:

Բ. – Շատ աղեկ, սակայն դուք ալ նավային երթևեկության ազդերեն հատ մը առեք քովերնիդ պահեցեք, որպեսզի նավերուն շարժվելու ժամանակը իմանաք, և մեյ մ՛ալ ասանկ նեղություն չի կրեք:

Գ. – Մնաք բարով: (Ինքնիրեն) օձիքնիս ազատեցինք, բան մը չի կասկածեցան (կերթա):

Բ. – Է՛, դուն աս նավին պատմութենեն բան մը հասկցա՞ր:

Ա. – Լավ ամա նավային ընկերությունն ալ մեղավոր է, ինչո՞ւ յուրաքանչ–յուրին մեկ–մեկ ձրի ազդ չի տար և գիշերով մարդոց ասանկ անհանգիստ ըլլալուն պատճառ կը դառնա:

Բ. – Հա՛, հա՛, հա՛, կը նշանակե գործին ի՛նչ ըլլալը չի հասկցար:

Ա. – Չի հասկցա, ի՞նչ է եղեր:

Բ. – Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛:

Ա. – Ճանըմ ինչո՞ւ կը խնդաս:


Բ. – Հա՛, հա՛, հա՛:

(Վարագույրը կիջնա)



«ԹԱՏՐՈՆԻՆ» ՎԻՃԱԿԸ

(Կատակերգություն մեկ վարագույրով)



(Վարագույրը բացվելուն՝ **Թապրոնին** գրասենյակը կերևա, այս սենյակին երկայնությունը վեց, լայնությունը երեք մեթր ըլլալով, այսինքն՝ վրան բաց թրամվայի կառքերեն քիչ մը փոքր ըլլալով, ժողովուրդով լեցուն է: **Թապրոնին** տնօրենը, խմբագիրները, թարգմանիչները, ծախողները և առնողները հավաքված՝ ժողովին բացվելուն կը սպասեն: Տնօրենը ժողովը կը բանա):

ՏԵՄԻԼ ԱՌԱՋԻՆ

ՏՆՕՐԵՆԸ ԵՎ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԸ

Տնօրենը. – Այսօր գձեզ հրավիրելուս նպատակը անշուշտ չեք գիտեր:

Ժողովականները. – Չենք գիտեր:

Տնօրենը. – Չձեզ հոս հրավիրելուս և ձեր հոս հրավիրվելուն բուն նպատակը **Թապրոնին** վերաբերող կարգ մը կարևոր խնդիրներու վրա ձեզի հետ խորհրդակցելու անհրաժեշտությունն է, սակայն, ինչպես կը տեսնաք, գրասենյակնիս շատ փոքր է, ուստի կը խնդրեմ որ գերերը, որոնք շատ տեղ կը զբաղեցնեն սենյակեն դուրս ելլան և իրենց մտքերը հայտնեն պատուհանն: (Գեր մարդիկ դուրս կելլան, սենյակին մեջ կը մնան 20 հոգի), դուք ալ նստեցեք, ոտքի վրա մի կայնիք: (Ժողովականները չորս կողմը կը նային, բայց աթոռ չեն գտնար որ նստին): Ես ձեր բոլորին հանգիստը կուզեմ: Ահա ժողովը կը բանամ, պատրաստ եղեք: (Ժողովականները կը հորանջեն), Սո՛ւս կեցեք: (Ժողովականները կը հազան), էֆենտիներ, ժողովը պիտի բանամ, բայց կը սպասեմ որ ձեր լեզուներուն և քիթերուն խոսք հասկցունեք: (Ժողովականները նորեն կը հորանջեն ու կը հազան): **Թապրոնիս** ներքին կանոնադրության 12-րդ հոդվածին համաձայն, խոսքի ընթացքին հորանջողները և հազացողները երկու ոսկի տուգանք տալու պարտավոր են: Եթե

կուզեք այդ հոդվածը անգամ մը կարդացուցեք ձեր քթին ու բերնին, հետո որքան կուզեք հազացեք, հորանջեցեք և այլն: (Ալ չեն հորանջեր): Ժողովը բացված է, ցանկացողը կրնա իր ըսելիքը ըսել:

Ժողովական մը. – Ի՞նչ խնդրո մասին պիտի խոսինք:

Տնօրենը. – Ինչ խնդրո մասին որ կրնաք կարծիք հայտնել, այդ խնդրո մասին խոսեցեք: (Ոչ մեկը չի խոսիր): **Թապրոնուս** օրե օր հառաջադիմելուն վրա կարծիք հայտնեցեք:

Ժողովական մը. – **Թապրոնին** հառաջադիմության բուն պատճառը շատ ծախվիլն է, որպեսզի **Թապրոնը** հառաջադիմե, պետք է շատ ծախվի:

Տնօրենը. – Շատ ծախվելուն միջոցը կա ատիկա բան մը ըսել չէ:

Ժողովականը. – Է, շատ լավ:

Տնօրենը. – Օրինակ, թերթ մը շատ ծախելու համար պետք է աշխատիլ որ քիչ չի ծախվի:

Ժողովականը. – Շիտակ է:

Տնօրենը. – Ըսենք թե շատ ծախելուն ճամբան գտանք, հիմա տեսնաք քիչ չի ծախվելուն ճամբան ի՞նչ է: (Այդ միջոցին անձանոթ մը կուգա և դռան մոտ կը կայնի):

Տնօրենը. – Չո՞վ կուզեք:

Անձանոթը. – Էֆենտին, սա Խասագեղի նավերուն վրայոք ինչո՞ւ բան մը չեք գրեր: Շատ կամաց կերթան:

Տնօրենը. – Շատ աղեկ, կը գրենք, որպեսզի արագ երթան:

Ժողովական մը. – Գրենք, բայց գրելը մեր գլխուն փորձանք մը չի բերե:

Տնօրենը. – Անանկ է նե գրենք թե Խասագյուղի շոգենավերը շատ լավ կաշխատին, կայծակի արագությամբ կերթան, նույնիսկ երբեմն՝ ածուխը այնքան շատ կըլլա, որ արագութենեն նավահանգիստին վրա կելլան: Պետք է գրել, թե նավերուն սենյակներն ալ շատ գեղեցիկ են, թե՛ կողքերեն լուսամուտ ունին, թե՛ տակեն, վերջապես պետք է գրել թե Խասագյուղի շոգենավերը ժողովուրդին մեծ ծառայություն կընեն, և ապագային ալ պիտի ընեն: Ասոնք գրելեն ետքը Գատրգյուղ բանող քիվ 6 շոգենավն ալ քիչ մը պետք է գովել: (Անձանոթը կերթա): Հիմա գանք մեր **Թապրոնին** (Անձանոթը հազիվ դուրս գացած՝ ուրիշ մը կուգա, տնօրենին նամակ մը կուտա):

Տնօրենը. – (Նամակը կը կարդա). – Մենք, Պոլսո կատուներս, դիմելով ձեր **Թապրոնին** կուզենք մեր վիճակը բացատրել: Երկու ամիս է, որ բերաննիս կտոր մը թոք դրած չունիմք: Անոթի կը պառկենք, անոթի կարթննանք, ասոր պատճառը մսին թանկ ըլլալն է, քանի որ շատերը, միս առնե-

լու չափ ստակ չունենալով՝ թոք կուտեն, և զմեզ կը գրկեն մեր սնունդեն: Ո՛վ մարդոց թերությունները ծաղրող **Թապրոն**, քիչ մըն ալ մեր այս վիճակին նայեցեք և խղճացեք, թրամվայի ջորիներուն պես ոսկոր ու մորթ դարձած ենք:

Անցած օր մեր ընկերներեն մեկը կուգե մուկ մը բռնել, մուկը կը հարձակի խեղճ կատուին վրա և պոչեն բռնելով՝ քաշքշելով քաշքշելով կը տանի տեղ մը և այնտեղ կտոր կտոր կընեն ու կուտեն: Կլվելո՞ւ բան է կատուներուն համայնքին նկատմամբ եղած այս անարգանքը: Աշխարհիս ստեղծումեն մինչև այսօր մուկերուն վրա իշխանություն ունենալու մեր ուժն ու իրավունքը մսի թանկության պատճառով հիմա մեր ձեռքեն պիտի առնվի՞: Ձեր աչքերը անգամ մը դարձուցեք մեր վրա և գթացեք մեզի, (ժողովականներուն աչքերը կը լցվին, իսկ տնօրենը հուզումեն կը ծալլե նամակը, մեկ կողմ կը դնեն): Է ժողովականներ, աս թոքի խնդրոյն վերաբերյալ ի՞նչի քվե կուտաք:

Ժողովականներ. – Մենք քվե չենք տար:

Տնօրեն. – Անանկ է նե ես ալ աս նամակը մսագործին կուղարկեմ, թող կարգավորեն: Հիմա գանք **Թապրոնի** խնդրոյն:

(Այդ պահուն հիսուն տարեկանի մոտ կնիկ մը կը մտնա ներս).

Տնօրենը.– Ի՞նչ կա, տիկին ինչո՞ւ կուլաս:

Տիկին. – Դուք հոս ինչո՞ւ նստեր եք:

Տնօրեն. – Հապա ո՞ւր նստինք:

Տիկինը. – Պարտքերնիդ ի՞նչ է:

Տնօրեն. – Հաշվետոմարը գիտե: Բայց ինչո՞ւ կուլաս, ատ ըսե:

Տիկինը. – Լսած չե՞ք... Անցածները տղաս Պալըքպազարին վրա գտնվող թյությունճի մը խանութը երթալու համար նավակ մը կը նստի, նավավարը մեկ–երկու թիակ դեռ չի քաշած՝ ինչպես կըլլա նավակը բանի մը կը զարնվի կռնակի վրա կը դառնա, տղաս ալ, նավավարն ալ կը խեղդվին:

Տնօրենը. – Հոգ մընեք, ասկե ետքը կը գրենք և աստուծով ձեր տղան ալ նորեն չի խեղդվիր: (Կինը կերթա): Հիմա գանք մեր **Թապրոնին** վերաբերող խնդրոյն: (Տիկինը դուռնեն դուրս ելած չելած խոհարարը կուգա).

Խոհարարը. – Էֆենտիմ հաշիվնիս մաքրենք:

Տնօրենը. – Ժողովականներ ձեր կարծիքը ի՞նչ է.

Ժողովականներ. – Հիմա մեր կարծիքներուն ատենը չէ:

Տնօրենը. – Ժողովականները որոշեցին դրամ չի տալ, (խոհարարը կեր-

թա): Հիմա գանք մեր **թապրո...** (խոսքը չի վերջացուած՝ ներս կը մտնեն սրճարանատերը).

Սրճարանատերը. – Սուրճին պարտքը 650 դուրուշ է:

Տնօրենը. – Ժողովականներ, ժողովը կը փակեմ, որովհետև եթե բաց մնա, շատեր պիտի գան դրամ ուզեն և մենք պիտի չի կրնանք մեր գործին նայիլ:

Ժողովականներ. – Շատ լավ կըլլա, երբ տեսնանք, որ այլևս դրամ ուզող չկա, նորեն ժողովը կը բանանք:

(**Վարագույր**)



ԱՄԱՌԱՆՈՅԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

(Կատակերգություն մեկ վարագույրով)



Կ...

Շ... Կ-ին կնիկը

Ֆ... Կ-ին աղջիկը

(Վարագույրը բացվելուն՝

Կ-ին տանը սրահը կերևա.

Կ-անհանգիստ կը քալե, ձեռ-

քով ճակատը շփելով, ատկե

կերևա որ պարտատերերուն

տրվելիք պատասխաններուն

վրա կը մտածե: Կինը՝ Շ. աթո-

ռի վրա նստած, հին ժանյակե մը իրեն համար խըչըխ կը կարե: Աղջիկնին՝ Ֆ. անկյուն մը նստած կուլա):

Կ. Շ. Ֆ.

Շ. – Խըչըխս ահա վերջացուցի: Երբ պիտի երթանք օդափոխության:

Կ. – Ճանրմ, օդափոխությունը դաշտահանդես չէ որ... Այս տարի ալ չերթանք նե չ'ըլլա՞ր:

Շ. – Չ'ըլլար, անգամ մը սա խեղճ Ֆ-ին երեսը նայե: Երեսին վրա գույն չի մնացեր:

Կ. – Գույն չի մնացեր նե՝ քիչ մը կարմիր թող քսե, ի՞նչ ընենք:

Շ. – Երեք օր է որ ջղային նոպաներ կունենա, ակռաները կողպեքի պես կը գոցվին, գիշերներն ալ գեշ գեշ երագներ կը տեսնա:

Կ. – Թող չի տեսնա: Գլուխս ցավեն կը պայթի, այսօր երեք չորս փոլիցա պիտի գա:

Շ. – Փոլիցա՞ պիտի գա:

Կ. – Փոլիցային տրվելիք գանձարկղիս մեջ մանդր մը չի կա, ի՞նչ պիտի ընեն, չգիտեն:

Շ. – Ավելի լավ, օդափոխության կերթանք, քեզի գրասենյակիդ մեջ չեն գտնար:

Կ. – Լավ, բայց եթե հոս չըլլամ, գրասենյակը կը գոցեն, դռան վրա ալ մեծ կնիք մը կը դնեն:

Շ. – Ավելի լավ, այն ատեն ոչ որ չի կրնար գրասենյակդ մտնալ: Ասոնք պարապ խոսքեր են, մեր խելքը ատանկ բաներու չի հասներ:

Կ. – Փոլիցային ալ անանկ ժամկետ մը դրված է որ... տեսածնուն պես՝ դրամը տուր կըսեն:

Շ. – Դուն ալ քանի մը օր ատ փոլիցիս կըսես, ի՞նչ կըսես մի տեսնար, ի՞նչ ընենք... ի սեր օդափոխության: Այս տարի Սկյուտա՞ր պիտի երթանք, թե Կղզի:

Կ. – Փոլիցիս գոնե երեսունմեկ օրվա ըլլա՞ր:

Շ. – Բայց Կղզիին օդը ավելի աղեկ ըլլալու է:

Կ. – Մեկե մը կառնեինք, կուտայինք:

Շ. – Կուգես Պեոյուկ Տերե երթանք: Իմ կարծիքովս հոն ալ օդը գեշ չէ:

Կ. – Արդեն ժամանակներն ալ լավ չեն, այս միջոցիս փոլիցա քաշելը միտք ունի՞ չեն գիտեր:

Շ. – Գատը քեոյի համար ալ լավ է կըսեն... (Ֆ-ին) Մի լար, աղջիկս մի լար, աչվներդ արյան փոս դարձան. մի լար, անշուշտ տեղ մը պիտի երթանք:

Կ. – Այո՛, տեղ մը պիտի երթանք, եթե այս փոլիցաները չի վճարենք, մեր երթալիք տեղը բանտն է:

Շ. – Չէ ամա Հիսարին օդն ալ բավական կը գովեն:

Ֆ. – (Ինքն իրեն) – Հիսար երթանք ի՞նչ ընեն, մյուսյու Գ... Պեոյուկ տերե գացեր է:

Շ. – Է, նայինք ո՞ր գնալ որոշեցիր, Կ. աղա:

Կ. – Որոշեցի կամաց կամաց բանտ երթալ: Եթե կուգեք դուք ալ հրամմեցեք: Այս տարի ամառանոց երթալ չկա, հասկցա՞ք:

Ֆ. – Ամա՛ն, բան մը կըլլամ, ծունկերս կը դողան, աչքերս սևցան ձեռքերս կապուտցան, երեսս կանաչցավ:

Շ. – Ամա՛ն, սիրտս կը խառնե, գլուխս կը դառնա, ամբողջ մարմինս կը ցավի: Եթե ամառանոց չերթանք, այս տարի անպատճառ կը մեռնինք:

Կ. – Ճանրմ ի՞նչ եղավ, ի՞նչ կըլլաք: Գուցե երթանք:

Ֆ. – Օֆ, քիչ մը ինքզինքս գտա: Պեոյուկ տերե երթանք նե բան մը չի մնար:

Շ. – Ինձի ալ Կղզիի օդը կավ կուգա, նաթուրայիս կը հարմարի:

Կ. – Չերթանք նե ի՞նչ կըլլա:

Ֆ. – Ամա՛ն, ամա՛ն, ծունկերս կը դողան... աչքերս... ձեռքերս...

Շ. – Միրտս նորեն սկսավ խառնիլ:

Կ. – Տարօրինակ է: Ուրիշներ հիվանդ ըլլան նե ամառանոց կերթան դուք

ալ ամառանոց երթալո՞ւ համար հիվանդ կըլլաք:

Շ. – Ստամոքսս կը թթվի:

Ֆ. – Սիրտս կը խառնէ:

Կ. Դուն ստամոքսիդ վրա քիչ մը շաքար ցանէ, որ չի թթվի, դուն ալ սիրտիդ վրա քիչ մը շիպ նետէ, որպէսզի հանգստանա: Աստուծով քանի մը օրեն ամառանոց կերթանք:

(Շ. և Ֆ. ուրախութենէն կը ցատկեն, Կ. ձեռքը ճակատին դրած ամառանոց երթալու համար ո՞ր բարեկամէն դրամ ուզելու մասին կը մտածի):

(Վարագույր)



«ԱՍԻԱՅԻՆ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բան մը լավ հասկնալու համար **Ասիա** կարդալու է:


Այս թերթը իր երեկվան թիվին մեջ Սկյուտարի թիվ 14 նավի պատմությունը ընելով՝ կըսէ թէ ասկէ քանի մը օր առաջ հիշյալ նավը առտվան Սկյուտարէն դուրս գալու ատեն անանկ մառախուղի մը հանդիպէր է, որ աչքը չի տեսնար եղեր, արևն ալ նավուն ոտքի կողմն կերևա եղեր:

Շատ աղէկ, մտառը գտնվող մարդը տեսնալ չի կրցողը՝ այդքան հեռուէն արևը ինչպէս կրցեր է տեսնալ, ատանկ թանձր մառախուղի մեջ արևը ինչ գործ ունի: Ըսենք թէ **Ասիային** խաթեր համար ունեցեր է, բայց որքան անվարժ նավապետ է եղեր, որ արևը նավուն գլխուն կողմը չի հրավիրեր: Ենթադրենք. հրավիրեր է, բայց արևը՝ մեր երեսփոխան էֆենտիներուն պէս հրավերը չի ընդուներ, նավապետը նավուն գլուխը դէպի արևը դարձնելու չէ՞ր, այս նավապետը երբեք գիշերները մեկու մը տունը հյուր չի՞ գացեր. լապտերը ետևէ՞ն կը տանին թէ առջևէն: Սակայն նավը կամուրջին կողմը երթալու տեղ՝ դէպի Վառնա կերթա եղեր, ինչ կըլլա, կարևոր նավը առաջ տանիլն է, ըլլա այս կողմը, ըլլա այն կողմը:

Ափսոս որ Շիրքէթի Խայրիէի ընկերությունը անանկ անվարժ նավապետներ ունի, որոնք նավերը իրենց ուզած կողմը տանելու փոխարեն՝ իրենք նավին ուզած կողմը կերթան:

Ասիային ալ ամենէն շատ մտահոգողը այս պարագան է, որուն պատճառով թիվ 14 նավը ալ պիտի չի մտնէ եղեր և ասիկա ալ մեծ վնաս պիտի բերէ Շիրքէթի Խայրիէի ընկերության, որուն արժեթղթերը երկու շաբաթ ի վեր կիյնան:

Սակայն մազ մնացեր է որ նավը ջուր առնելով ընկղմի եղեր տէ բոլոր ճամբորդներէն ալ ծովը թափվին: Ալ ինչ կուզեք. 30 փարայով թէ՛ Սկյուտարէն մինչև կամուրջ պիտի գային և թէ ծովու լոգանք պիտի ընդունէին: Դամբան սորվեցանք, ասկէ ետքը սիրտերնին տկար, ախորժակնին գոց եղող, բան մտնալու պետք ունեցողները Սկյուտարի թիվ 14 նավը թող մտնան մեկ օրվա մեջ կառողջանան, 30 փարա տալով աս նավը նստելու է, սակայն հա-



քերնիդ քիչ մը առաջ բերեք, երեսնիդ իմ կողմս դարձուցեք, ասանկ ծիծաղեցնող խոսքեր կըսեր:

- Է, մատամը ատոնք ինքը իրեն չէ՞ր կրնար ընել:
- Ուրկե պիտի ըներ, փատի պես կայնած էր ամեն բան լուսանկարիչը կըներ:
- Վերջապես:
- Վերջապես ժամ մըն ալ ասոնք դիտելէ ետքը համբերությունս հատավ.
- մյուսյու, քիչ մըն ալ ինձի նայե, ըսի:
- Է՛...

- Հիմա լսե մտքեդ չանցած խոսքերը: Լուսանկարիչը - ինչու անասունի պես կայներ ինձի կը նայիս, այն կողմը նայիս չ'ըլլա՞ր, չըսե՞ մի. - այս վերաբերմունքը մատամին ցույց տրվող վերաբերմունքին չէր նմանիր, մտածեցի, արդյոք հանցանք մը գործեցինք ատոր համար՞ զայրացավ, ըսի, վերջապես շատ աղեկ, պարոն, ըսինք - ձեռք սանկ դիր պե, պոռաց երեսիս, ամա՛ խոսքը չի հասկացող մարդու հանդիպեցանք հա՛, ինչու սագի պես կայներ երեսս կը նայիս ըսելով՝ սկսավ ինձի հանդիմանել: - Պե ճանըմ, ըսի, կը տեսնաս որ չեմ գիտեր ընելիքս, հարյուր մետր հեռուեն նշան ընելու տեղ քովս գալու ըլլաս տե քիչ մը առաջ մատամին ըրածիդ պես կարգադրես նե չըլլա՞ր: Մարդը բարկությամբ քովս եկավ թևս կոտրելով - աջ ձեռքդ ասանկ դիր, ըսավ ու նորեն տեղը գնաց: - Աջ նայե, ձախ նայե ըսելով՝ քանի մը խորհուրդներ տվավ և - գալ շաբաթ եկուր նկարները տար ըսավ, բայց թևս կոտրվեցավ. փառք աստուծու որ կես մեջքես վեր քաշվեցա, եթե ամբողջ հասակով նկարվելու ըլլայի՝ անտարակույս ոտքերս ալ կոտրվելու էին:

- Բավական նեղություն քաշեր ես գոնե պատկերդ աղվոր եղա՞վ:
- Ի՞նչ աղվոր: Թեիս ցավեն կրցա՞ կայնիլ որ.-
- Այդքան փորձանքե ետքը պատկերդ ալ գե՞շ ելավ:
- Անտարակույս:
- Ատանկ է նե մարդ աղվոր պատկեր մը քաշել տալու համար ի՞նչ պիտի ընե:
- Կնիկ ըլլալու է:
- Ճանըմ ատանկ բան կըլլա՞:
- Չ'ըլլար նե ասանկ թևդ ու ձեռքդ կը կոտրվի:



ԾՈՎՈՒ ԲԱՂՆԻՔԻ ՕԳՈՒՏԸ

- Կիրակոս աղա, ծովու լուգանք, կառնե՞ք, շատ օգտակար ու առողջարար է կըսեն, ափսոս, ես չի կրցա փորձել:

- Վազ անցիր, աստվածդ սիրես, թող կորսվի ատ ծովը, հիսուն վաթսուն դուրուշեն գատ քանի մը հատ ալ սրբիչ, փեշտըմալ կորսնցուցի. կսկիծը սիրտես չ'ելլար:



- Սակայն օգուտ մը ունի, որ Պոլսո բնակչության չորսեն երեքը՝ կնիկ, աղջիկ, օլուխ-չոճուխ, էրիկ մարդ մինչև ծերերը առտվանց կանուխ ծովը կը վազեն:

- Գետնին տակը անցնին: Ասոնք բոլորը ալաֆրանկայի հետևանքներն են. աշխարհքս պիտի կործանի կըսեն, ճիշտ է նե հիմա է, հապա ան կնիկներն ու աղջիկները, աստված խեղճ ամուսիննին մխիթարե, հազիվ ամառվա զգեստի, գլխարկի, հովանոցի, կոշիկի փորձանքեն ազատված՝ հիմա ալ ծովուն լուգանքը ելեր. հացի փարս վաստակելու համար արյուն քրտինք մտնելենին չի բավեր, օրական 5-10 դուրուշ ալ լուգանքի պիտի տան:

- Կիրակոս աղա, հանցանքը մինակ կնիկներուն վրա մի ձգեր. տես, դուն ալ, աս տարիքիդ ծովը մտեր ես:

- Հ՛ա, աշխարհքիս կործանման օրը եկած է ըսի նե՝ ատոր համար է: Հիմակվան երիտասարդները ոչ թե տարիքը առած ծերերը, գերեզմանատան մեռելներն ալ կրնան գլխե հանել: Ախ, քանի այս ախտը՝ գեշ ու վնասակար բաներուն հետևելու սովորությունը մեր ազգին մեջ կա, օրե օր առաջ երթալու տեղ՝ կասկած չունիմ, որ ետ ետ պիտի երթանք: Աստված փրկե զմեզ:

ԾՈՎՈՒ ԲԱՂՆԻՔ

Ծովու բաղնիքի ժամանակն ալ եկավ. շիտակ է որ տակավին ձմերուկը չի հասեր, սակայն քանի աս տաքերը կան, ձմերուկի հասնելուն ո՞վ կը նայի:

Ջիղերու տկարություն, գլխու ցավ, մայասուր ունեցողները, գրպանին դրամ չունեցողները, ամենքը ծովը կը վազեն, որովհետև աս ծով ըսվածը՝

Հորվեի հապերուն պես ամեն հիվանդություն կը բուժե, նույնիսկ հիվանդ չեղողները կրնա հիվանդ ընել:

Սական եկուր տես որ աս դեղը գործածել ոչ որ չի գիտեր: Չես հավատար ան, օր մը, եթե պարապ ժամանակ ունենաս, - փառք աստուծո, հիմա պարապ ժամանակեն շատ ի՞նչ կա, - գնա ծովու բաղնիքներեն մեկը աթոռ մը առ, նստե լսե ըսված խոսքերը:

- Առաջ գլուխդ թրջե, որ արյունդ վեր չի բարձրանա:
- Եղբայր, առաջ ոտքերդ ջուրը կոխե, որ արյունդ վեր բարձրանա:
- Կես մեջքեդ մտիր, որ արյունդ թե՛ վեր բարձրանա, թե՛ վար իջնա:
- Կամաց կամաց մտիր:
- Մեկեն ի մեկ նետվե ջուրը:
- Քրտինքդ սրբե, ետքը մտիր:
- Մարմինդ ջուրեն մի հաներ որ չի մսիս:
- Ջուրին տակը երկար մի մնար որ գեշ չըլլաս:
- Ականջներդ բամբակ կոխե որ ջուր չերթա:
- Ականջներդ թուքով թրջե որ ջուր չի մտնա:
- Դողալուդ պես ջուրեն դուրս ելիր:
- Շատ մի շարժվիր որ ծովուն օգուտը տեսնաս:
- Շարժվե որ արյունդ խաղա:
- Աջ ականջդ ջուր լեցվելուն պես՝ ձախ ոտքդ բարձրացուր, աջ ոտքիդ վրա ցատկե:

- Կտոր մը թուղթ ցառե ականջդ մուխին բռնե:
- Փոքրիկ շիրիկայով մը ջուրը ականջեդ դուրս քաշե:
- Եթե չի քաշես՝ ականջդ կը խուլնա:
- Չէ, ինքն իրեն կելլա:
- Ջուրեն ելլալեդ ետքը մերկ մի կայնիր իսկույն հագուստդ հագիր:
- Ծովեն ելլալեդ անմիջապես ետքը մի հագվիր, լավ չէ:

Ինչպես ըսի՝ գործ չունիս նե մինչև իրիկուն ծովափը նստե և ասանկ խոսքեր լսելով զվարճացիր: Սակայն քիչ մը հեռուն նստե, որովհետև ոմանք այնքան ուժով ծովը կը նետվին, որ կրնան վրադ գլուխդ թրջել:

Հապա այն մեջքերնին դուրս կապած, ելումուտքը խախտված հաշվետոմարներուն պես գլխիվար ծովուն հատակը իջնողներուն ինչ ըսենք:

Ո՞ր մեկը ըսեմ, եղբայր, ծովու բաղնիքները թե՛ օգտակար են և թե հաճելի: Ուստի ասանկ տաք օրերուն ծովը չերթալ տե տաք բաղնիք երթալը խելոք մարդու գործ չէ:

ՉՐԻ ԲՈՒՏՐԱ

- Կուռնիկ աղա, շատ ուրախ կը տեսնամ զձեզ, ինձ կա:

- Խեր է, խեր, Աբիսողոմ աղա, ճանըն աս օմնիպուսի կառքերուն մեզի ըրած լավությունները հիշելով՝ մարդուս խնդալը կուգա. գիշեր ցորեկ կաղոթեմ ատիկա մեր քաղաքը բերողին, եղբայր, դուն ալ նկատած ըլլալու ես. տունը բուտրա կրելով հոգիս կելլար, օխաներով կը կրեի. շաբաք մը ետքը հետքը չէր մնար, այդքան բուտրա մարդ եթե ուտելու ըլլար՝ չէր վերջանար: Մի ըսեր միմակ երեսնուն չեն քսեր եղեր, ինչպես կը կարծենք, այլ կուրծքերնուն, թևերնուն, ոտքերնուն ալ կը քսեն, կը ծեփեն եղեր. մինչև հիմա բուտրային տված ստակով խանութ մը կրնայի բանալ: Հիմա փառք տանք ատ կառքերուն որ ժամանակե մը ի վեր աս փորձանքեն մեզի ազատեցին:



Առտվան կանուխ, արթննալեն ետքը կնիկները երբ կելլան պատուհանները կը բանան, որպեսզի օդ առնեն, իսկույն երեսնին, թևերնին, վրանին գլուխնին ճեփ ճերմակ կը ներկվի, այլևս բուտրայի մուտրայի պետք չ'ըլլար:

- Ատանկ է, բայց մեր Սկյուտարի վիճակը տարբեր է - քիչ մնաց Պողազ իչի երթայիր:
- Վերջնականապես հրաժարվեցա երթալե. ասկե ետքը ամառ ձմեռ ասկե քայլ մը այն կողմ չեմ ըներ:
- Բայց ատ ձրի բուտրան մեր վրան գլուխն ալ կը ճերմկցնե:
- Է, ինչ ընենք, ծախքեն ազատվելու համար ատ փորձանքին ալ դիմանալու ենք:

* * *

- Բարի լույս, Վիչեն աղա:
- Աստուծո բարին, բարեկամ:
- Չեզի ուրախ լուր մըն ալ պիտի տամ:
- Ի՞նչ է նայինք:

- Տեսնամ պիտի գիտնա՞ս:
- Ուրկե գիտնամ:
- Անշուշտ պիտի չի գիտնաս:
- Ըսե նայինք:
- Հիմա կըսես:
- Աման շուտ ըսե նայինք, ինչ է:
- Քիչ մը սպասելնիդ կարժե: Անցած օր ձեզմե բաժնվելէս ետքը բուտրայի մասին մեր խոսվածներուն վրա կը մտածեի, երբ միտքս բան մը ինկավ:
- Ի՞նչ ինկավ:
- Չըսե՞ս, եղբայր, խնայողության ուրիշ ճամբա մըն ալ կա եղեր.
- Ի՞նչ ճամբա է նայինք.
- Այսպէս, բարեկամ ճերմակ բուտրայի ծախքէն ազատելու համար օճնիպուսի հրապարակին վրա գտնվող տան մը մեջ ապրելու որոշում չի տվի՞նք:
- Տվինք:
- Կարմիրի համար ալ ի՞նչ գտնամ լավ ըլլա:
- Անոր համար ալ բան մը գտա՞ր,
- Օճնիպուս նստելով Գըզըլ թոփրախ (Կարմիր հողի) երթալու է:
- Իրավ որ կեցցես:



ԳԱՆՉԱՆԱԿԻ ՀԱՇԻՎ

- Տարեգրուիս է, անցած տարվա հաշիվները նայեցա՞ք:

- Նայեցանք:

- Ինչպե՞ս գտաք. ի՞նչ է մտեր գանձանակը, ի՞նչ է ելեր:

- Այս տարի մեր գանձանակէն միայն ելել է, փոշիէն զատ բան մը չի մտեր: Ասանկ երթա նե գանձանակն ալ պիտի ելլա գրասենյակէն.

- Չէ. ատիկա սենյակին զարդն է:

- Եթե մեջը դրամ ըլլա:

- Մարդ աստուծո, շատերուն գանձանակին մեջ ճերմակեղենէն զատ ուրիշ բան չկա, բայց բոլորն ալ ունին: Սենյակէն ներս մտնողին աչքին գոնե բան մը կերևա, ատկե զատ՝ պարտատերը դրամ ուզելու գա նե երբեմն կը մտնաս պարապ արկղին մեջ ու կը պահվտիս: Աշակերտդ ալ ադան դուրս ելավ, կըսե և ճամբու կը դնե եկողը:

- Ամեն պարտատերի գալուն արկղի մեջ մտնալ պետք ըլլա նե տարվա տասներկու ամիսը անկե դուրս գալու չէ: Մեծ արկղ մը շինել տալու է, մեջն ալ մահճակալ մը դնելու պառկելու է:

- Պարտքերնիդ շա՞տ է:

- Աստված պակաս չընե, բավական կա:

- Շիտակը իմ խելքս ալ չի հասավ, արդյոք հաշիվնիս սխա՞լ կը բռնենք չեմ գիտեր: Եթե խնդիրը առնել ծախելու մեջ է, մենք ալ, փառք աստուծո, ուրիշներուն պես կառնենք ու կը ծախենք, պարապ նստած չունինք:

- Աժան առնելով՝ թանկ պիտի ծախես:

- Շիտակը ես ատանկ բաներու կարևորություն չեմ տար: Եթե ապրանքը լավ ըլլա, զինը չեմ նայիր, կառնեմ ու կը ծախեմ:

- Եթե թանկ առնելով աժան ծախես՝ վնաս կընես.

- Վնաս կընեմ, բայց առուտուր ըրած կըլլամ, եթե ուզես աժան առնել և թանկ ծախել, առուտուր չես կրնար ընել, ամբողջ օրը պարապ կը նստիս:

- Ինչո՞ւ:

- Չե՞ս հասկնար: Ուրիշներուն աչքը չի՞ տեսնար, ինձմե թանկ առնելու



տեղ՝ կերթան իմ աժան առած տեսող կառնեն, գործը կը լմննա:

– Ասանկ երթա նե ձեր գանձանակը ամեն տարի բաց պիտի մնա:

– Ո՞վ կրնա բանալ. Լավ գոցած եմ.

– Ինքն իրեն կը բացվի:

– Երախա՞ ես, ի՞նչ ես, մարդ աստուծո, արկղը ինքն իրեն կը բացվի՞:

– Ըսել կուզեն թե քեզի վնաս պիտի տա:

– Մեջը մարդ չկա, որ վնաս տա, տալու ալ ըլլա նե իրեն պիտի տա:

– Ուրիշ կողմն ալ վնաս կրա՞ծ ես:

– Մեյ մ'ալ, հաշիվ ըրի որ ապրանքները տեղափոխելու համար եթե բեռնակիրին վարձ չի տրվի, ապրանքները կը վաստկին. Եթե սենյակի վարձ ալ չի տրվի՝ հաշիվները ավելի աղեկ կերթան:

– Անանկ է նե դուն ալ բեռնակիրի և սենյակի վարձ մի՛ տար.

– Ապրանքները որո՞ւն ծախեն:

– Հա... ատիկա չի մտածեցինք, սպասե՛, ապրանքները որ խանութն կառնես նե՛ հոն ծախեն:

– Որո՞ւն ծախեն հոն:

– Մարդ աստուծո մեկուն օձիքեն բռնե, տար ատ խանութը, ծախեն:

– Հապա գրասենյակին վարձքը ի՞նչ ընեն:

– Ատ ալ կամաց կամաց կուտաս, ծառաներդ կը ճամբես:

– Չէ ծառաները ճամբել չ'ըլլար, իմացող չիմացողը ինչ կըսես, մեկը լայնքին կը չափե, մյուսը երկայնքին, գործը լավ չերթար, ատոր համար ծառաները կը ճամբե կըսեն, ինչ գիտնան, թե մենք դրամ վաստակելու ճամբան գտած ենք.

– Ատանկ է, բայց ծառաները դրամ կուզեն:

– Կուզեն:

– Տալու ես:

– Տալու է:

– Բայց դրամ չունիմ կըսես:

– Չունիմ:

Հապա ուրկե՞ պիտի տաս:

– Ծառաները ուրկե՞ պիտի առնեն:

– Քեզմե պիտի առնեն:

– Ես դրամ չունիմ:

– Չունիս նե ծառաներդ ճամբու դիր:

– Հարկա, հարկավ, դնելու է, ուրիշները ինչ իրավունք ունին իմ գործիս

խառնվելու, ծառաներես գոհ չի մնացի, ճամբեցի, կըսեն, կը լմննա: Հետո սուտ ալ չէ, առավոտները ուշ կուգան, իրիկունները շուտ կերթան, հաճախորդի չեն նայիր: Պարտատեր մը գալուն պես՝ ինձի ծածուկ տեղ մը պահելու տեղ «աղան հոս է» կըսեն, ասանկ ծառա՞ կը պահվի, թե՛ հացս ուտեն և թե պարտատերին եկած ատենը «աղաս հոս է» կըսեն: Վռնտելու է, եղբայր, ատանկ անկիրթ ծառաները վռնտելու է: «Աղաս հոս է» ըսելը կը վայլե՞ ծառայի մը: Ծառայի մը պարտքն է իսկույն լսել աղային բերանեն ելած խոսքը, իր գլուխն «աղան հոս է» ըսելը ի՞նչ պիտի ըլլա:

– Գուցե հոն չես:

– Ատանկ է, գուցե այդ պահուն հոն չի գտնվիլս պետք է :

– Հարկավ մարդս ամեն բոլոր իր գրասենյակը գտնվելու պարտավոր չէ:

– Վաղվնե շուտ չըլլա. բոլորն ալ մեկ-մեկ պիտի ճամբեն:

– Մեկ մեկը ինչ պիտի ըլլա, բոլորը մեկեն ճամբե լմննա:

– Բայց դրամ՝ պիտի ուզեն եղեր... մինչև հիմա ինչո՞ւ չուզեցին տե՛ ճամբու դնելու օրս պիտի ուզեն: Ըսել է անոնց միտքը մաքուր չէ:

– Փարա մը չես տար:

– Այո՛, գրասենյակս ես կը բանամ, ես կը գոցեմ, պատուհանին մոտ նստած դուրս կը նայիմ, պարտատերի մը գալը տեսնալուս պես՝ շուտ մը կը գոցեմ դուռը, ներսեն երկաթը կը դնեմ, իսկ եթե տեսնամ որ մեկը դրամ կը բերե, իսկույն դուռները կը բանամ, աս ճամբով թե՛ ծախսե կազատիմ և թե...

– Ասոր ըսելիք չի կա. Աստուծով եկող տարի գանձանակին վիճակն ալ կը փոխվի, մնաք բարով:

– Երթաք բարով, բարեկամ, մեր այս ծրագիրը մեկու մը չլսես, ուրիշներ ալ չի սորվին ու չի շահին. Մի վախճար:



ԱՂՋԻԿՆԵՐՈՒՆ ԽԱՔՎԻԼԸ



– Պոն ժուր, բարեկամ, ինչ է, նորեն քիչ մը սրդողած կերևաս, ճանըն դուն ինչո՞ւ ասանկ փոխվեցար. իմ մասին մեկը բա՞ն մը ըսավ քեզի: Տասնհինգ օր է որ քու մեկ ժպիտդ տեսնալու արժանի չեմ ըլլար:

– Աման, ալ ինձի պետք չէ քու ատ շողոքորթող հաճոյախոսութիւններդ. Քեզի հազար անգամ պիտի չըսեմ թէ այլևս զիս մոռցիր, ինձի հետ մի խոսիր:

– Հոգյակս, կաղաչեմ ներողամիտ ըլլաս և բարեհաճիս ըսել քու ատ պաղ վերաբերմունքիդ պատճառը:

– Վայ, ուրեմն տակավին չես գիտեր: Ըսել է դուն զիս թեթևաբարո աղջիկներուն տեղը դրած ես, որոնք կը հավատան քեզի պէս երիտասարդներուն հազարումեկ խոստումներուն. Ատոր համա՞ր օձիքս թող չես տար:

– Աստված չընէ հոգիս, քեզի կը վայլե՞ ատանկ խոսքեր. Ինձի կը վայլէ՛ սուտ խոսիլը. Չէ ատիկա չեմ ընդունիր: Աս աստիճան ալ անվստահություն կըլլա՞, անխիղճ. Մոռցած ես թէ ինչ անձնագոհություններ ըրած եմ քեզի համար:

– Աման հիմա պիտի մարիմ քու ատ անձնագոհություններդ հիշելով:

– Կը ժխտես հա, վնաս չունի դուն երջանիկ եղիր տե՛ թող ես ալ դժբախտ ըլլամ, բայց գիտցած եղիր, որ քեզի համար իմ ըրած գոհողությունները պզտիկ բաներ չէին. Անգամ մը հիշէ: Քեզի տխուր չի ձգելու համար քի՞չ ջանք թափեցի, որպէսզի հորդ ու մորդ աչքը մտնամ և ազատորեն ձեր տունը գամ, տեղ մը երթայիմք նե հովանոցդ ու պայուսակդ շարունակ ես չէի՞ բռներ կառք նստելու ատեննիս առաջ քեզի չէի՞ նստեցուներ տե՛ ետքեն ես չէի՞ նստիր, բազմության մեջ եղած ատեննիս աս ու ան չէի՞ հրեր, որ ոչ մեկը քեզի չի դիպչի, ալ ո՞րը ըսեմ, թանկագինս, աս ամենե՛ն ետքը քեզի կը վայլե՞ զիս լքելը:

– Քեզի կը վայլե՞ զիս խաբելը:

– Ո՞վ կը համարձակի քեզի խաբել:

– Քեզի քանի՞ անգամ ըսած եմ՝ կառք մը վարձե, քիչ մը պըտըտիմք, ես ուրիշներեն ինչո՞վ պակաս եմ որ բոլորը իրիկունները կառքով կը պտըտին, իսկ ես ատ զվարճութենէն զրկված եմ:

– Հոգիս, աս գեշ օդերուն հաճույք մը պիտի չի ստանաս մտածելով քու ատ առաջարկդ չի կատարեցի: (Չէ նե մեկ ոսկու եղա՞ծն ինչ է):

– Լավ ատ մեկը թողունք: Բոլորը «Արիֆին խարդախությունը» օպերան կը գովե. քանի՞ անգամ ըսի քի օթյակ մը վարձե տե՛ մենք ալ երթանք, տարի՞ր, մինչդեռ գիտես թէ ես որքան կը սիրեմ օպերան:

– Անուշիկս, դուն անոնցմէ հազար անգամ լավ կըրնաս օպերա երգել, ատկե՛ գատ՝ վախցա քի տեսնելով այդ խարդախությունը՝ կը սորվիս տե՛ գլուխս խաղ մը կը խաղաս: (Օթյակի տալու դրամ ունենամ նե ինձի տաբատ մը կառնեմ):

– Աս ձմեռ Բերայի բոլոր աղջիկները նոր մոտայի շրջագգեստ կարել տվին ու հազան, քանի՞ անգամ ըսի քի կտոր մը կերպաս ալ ինձի առ, նույնիսկ մատդ ալ թել կապեցի, որպէսզի չի մոռանաս, ըրի՞ր: Ո՞ր է հովանոցս, ո՞ր է գլխարկս, ո՞ր է ձեռնոցս:

– (Օ, շատ առաջ գացիմք) – Աման աս տարվան անշնորհք ու վնասակար մոտային ալ ինտո՞ր հանվեր ես, ինտո՞ր կը հագնին: Բայց վնաս չունի, սիրելիս, բոլոր ուզածներդ տասնըհինգ օրեն պիտի առնեմ, մինչև հիմա չառնելս լուրջ պատճառ մը ունի, քիչ մը դրամի նեղության մեջ էի, արժեթուղք մը առի տե՛ բոլոր դրամներս անոր տվի:

– Քանի՞ փարանոց բան է ատ առածդ:

– Ի՞նչ փարա... հազար ոսկինոց է, տասնըհինգ օրեն հարյուր ոսկի պիտի վաստկին, հավատա, հոգիս, ատ հարյուր ոսկին ալ քու վրադ պիտի ծախսեմ: (Կեցցե՛ ասանկ սուտը, եթէ անցնի՝ շատ բան):

– Ամիս մըն է աս բոլորը խնդրելով տե՛ լեզվիս վրա մազ բուսավ, չըլլա տե՛ ասկե՛ ե՞տքը պիտի ընես, ամենևին չեմ հավատար: Ատի՛ր:

– Ատի՛ր մի, կուզես նե երթա՞մ հիմա առնեմ, հոգիս, ինչո՞ւ պիտի խաբե քեզի: Եթէ դրամի նեղության մեջ չի գտնվեի ինչո՞ւ պիտի չի կատարեի ուզածդ:

– Ըսել է իրա՞վ տասնըհինգ օրեն պիտի առնես:

– Հարկավ, սխալս, կյանքս, (աստվա՛ծ իմ, սուտ խոսիլը ինչ դժվար բան է եղեր):

– Բայց գիտցած ըլլաս որ եթէ տասնըհինգ օրեն չառնես, այլևս պիտի չի կըրնաս երեսս նայիլ: (Հազիվ համոզեցիմք, հետո աստված ողորմած է):

– Հոգիս, ինչ պետք կա այսքան կասկածամտության: Աստուծով շատ երջանիկ պիտի ըլլանք ետքը:

– Անանկ ե՛ նե ատի՛ր...

– Նորե՞ն ատի՛ր:

Խե՛ղճ մարդ նորե՞ն խաբվեցար:

ՎԱԹՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Անցյալները օր մը մեր գրասենյակին դուրսը՝ փողոցին մեջ փերեզակ մը իր ծախու նյութերը քարոզելով կը պոռար մինչև իրիկուն:

Որչափ որ զինքը լռության հրավիրելու ազդարարություններ ըրինք՝ մարդը այնչափ հաճախեց իր քարոզին ձայնը, գլուխնիս ցավեցնելու չափ: Այսուամենայնիվ իր խոսքերը բավական զրոսեցուցիչ ըլլալով՝ ալ հարկադրվեցանք գործերնիս ձգել և զինքը մտիկ ընել. ընթերցողներ դուք ալ մտիկ ըրեք, որպեսզի իրավունք տաք մարդուն զմեզ զբաղեցնել կարենալուն:

– Ինչ որ կուզես առնել, առ վաթսուն փարայի, սիրուն ափսեներ՝ վաթսուն փարայի, հաշվեմատյաններ՝ վաթսուն փարայի, սնանկացյալի ապրանքներ՝ վաթսուն փարայի, կես օխա «Փունջ», ան ալ վաթսուն փարայի, կերպասեղեններ՝ վաթսուն փարայի, կամուրջեն մինչև Ազսարայ թրամվայ՝ ան ալ վաթսուն փարայի, Շիրքեթի թիվ 1 շոգենավին մեջ մեկ տիրեմ ջրհորի ջուր՝ ան ալ վաթսուն փարայի, կամուրջի նավերուն մեջ ոջլոտ մինտերներ՝ վաթսուն փարայի, այբուբենը չի գիտցող խմբագիրներ՝ վաթսուն փարայի, խաբերայի ապրանքներ՝ վաթսուն փարայի, ստահակի գրպաններ՝ վաթսուն փարայի, ստախոսի ապրանքներ՝ վաթսուն փարայի, փաստաբաններու առատություն՝ վաթսուն փարայի, ճամբորդի ապրանքներ՝ վաթսուն փարայի, թրամվայի ընկերության բաժնետոմսեր՝ վաթսուն փարայի, ինչ ալ առնես՝ վաթսուն փարայի, բարեկենդանի դիմակներ՝ վաթսուն փարայի, պարտապանի դեմքեր՝ ատ ալ վաթսուն փարայի, ամեն տեսակեն ալ կա վաթսուն փարայի, տոպրակ մը սուտ՝ ան ալ վաթսուն փարայի, կիսամաշ ապրանքներ վաթսուն փարայի, մարդու կաշին քերթող օճառ՝ ան ալ վաթսուն փարայի, խաբերայի ապրանք՝ վաթսուն փարայի, խմբագրի մը աղտոտ թիկնոցը՝ ատ ալ վաթսուն փարայի, - հավնե, հավնածդ առ՝ վաթսուն փարայի, կառնես առ, չես առներ մի առներ՝ ատ ալ վաթսուն փարայի, առուտուրի փախստականներ՝ վաթսուն փարայի, Շիրքեթի խայրիեի



հայտարարություններ՝ վաթսուն փարայի, ինչ որ առնես առ վաթսուն փարայի, սուտ ու մուտ լուրեր՝ ատ ալ վաթսուն փարայի, աճուրդի ապրանք՝ վաթսուն փարայի, տամդայով թերթեր վաթսուն փարայի, անոթի պտըտող դերասաններ՝ վաթսուն փարայի, անգղիական ապրանք՝ վաթսուն փարայի, գաղիական լուրեր՝ ատոնք ալ վաթսուն փարայի, սպանական *պոռն*-եր՝ վաթսուն փարայի, Վիեննայի տաբատ՝ ատ ալ վաթսուն փարայի, ճայթերու ճարտարապետներ՝ վաթսուն փարայի, աճուրդի ապրանք՝ վաթսուն փարայի, Շիրքեթի խայրիեի թիվ 15 շոգենավը՝ ան ալ վաթսուն փարայի, սիրուն դերասաններու և դերասանուհիներու լուսանկարներ՝ ատ ալ վաթսուն փարայի, ինչ ալ առնես վաթսուն փարայի, սողցի բերան սրողներ՝ վաթսուն փարայի, տամդայով նկարվելեն ետքի թերթերը՝ վաթսուն փարայի հավնե, հավնածդ առ՝ վաթսուն փարայի, երկու ժամեն պատռվող գուլպաներ՝ վաթսուն փարայի, բամբակե ձեռնոցներ՝ վաթսուն փարայի, ջերմի և կաթվածի դեղեր տվող բժիշկներ՝ վաթսուն փարայի, ատամնաբուժներ՝ ատ ալ վաթսուն փարայի, հրդեհեն չի վառվելու համար պատրաստված ջուր՝ վաթսուն փարայի, թրամվայի կոտրած պատուհաններեն ներս թափվող անձրև՝ վաթսուն փարայի, սարաֆներուն քառնուն – հիսուն փարայի համար բացած տոկոսները՝ վաթսուն փարայի, ինչ կառնես նե առ՝ վաթսուն փարայի, *Օրագիրին* սկիզբը՝ վաթսուն փարայի, *Թապրոնին* շատախտությունը առ ալ վաթսուն փարայի.



ՈՒՆԱ ՎՈՒԹԱ ՈՒՆԱ ՖԱ ԹՈՒ ՖԱ

– Ատ ի՞նչ է **բայրոն**:

– Ի՞նչ պիտի ըլլա, ունա վոլթա, ունա ֆա թու ֆա... ահա աւ է: Դրոշմի վրա լրագիր փակցունելու սովորությունն սկսելէն ի վեր խմբագիրք շվարեր մնացեր են, ինչ ընելիքնին չիյտեն, և ամեն մեկը ուրիշ կերպով մը հաց ճարելու միջոց կը փնտրէ կոր, մենք ալ, ի՞նչ ընենք, այսօրվնէ աճուրդով զբաղվիլ սկսանք... ունա վոլթա... էյ պարոններ, էյ աղաներ, էֆենտիներ, մյուսյուներ, ունա վոլթա ամեննին չգործածված, նոփնոր քրամվայի բաժնետոմս մը՝ մեկ ոսկիի, ունա լիրա, միա լիրես, քրամվայի բաժնետոմս մը՝ դիմացկուն, աղվոր գույնով, ալաֆրանկա ձևով, ամառն ալ կրնա գործածվիլ, ձմեռն ալ:

Ունա վոլթա, երեսուն ոսկինոց ապրանքը մեկ ոսկի, մեկ ոսկիի՝ մեկ քրամվայի արժեթուղթ, աժան, ունա լիրա...

– Քսան փարա կավելացնեն:

– Մեկ քրամվայի արժեթուղթը մեկ ոսկի, քսան փարա, ունա լիրամ, վենթե բարա², միա լիրաս, իքոս բարատիս³, օն անդր, Հայկազունք, աժան ապրանքը չփախցունենք, քրամվայի արժեթուղթ՝ մեկ ոսկի, քսան փարա... ուն լիվր վեն բարա...⁴ Ուզող չկա. ունա Ֆա թու Ֆասա կուտամ, կուտամ կոր, քրուա Ֆուա⁵, թա տոս⁶, մեկ արժեթուղթը մեկ ոսկի, քսան փարա, աժան ապրանքը մի փախցունենք, ունա Ֆա թու Ֆա ա ա ա:

– Է, **բայրոն**, երկար ըրիր ա:

– Այո, սիրուն ընթերցողս, քիչ մը երկար պիտի ընեն, որովհետև տարին 10.000–ի մոտ դրոշմի տուրք կուտանք կոր... ունա Ֆա թու Ֆա ա ա ա... տվի, էտոսա, տաքե⁷, գնա խերը տես...

Թու թու թու թու թու թու թու...

Էյ քատերասեր ընթերցողք, էյ հաճախորդներ, էյ լեկթեր, ահա ձեզի ամենին չի գործածված, քոքոնայի պես աղվոր **Փուկ** մը, ունա վոլթա, երկու բարա, տվե բարա, տիո բարատիս, երկու բարա, մեկ **Փուկ** էյ էյ... թու



րու թու թու թու... ունա վոլթա, մեկ աղվոր **Փուկ**, երկու բարա, տվե բարա, մեկ՝ առնողը կը գոջա, մեկ՝ չառնողը, տերը կարիքի մեջ է տե՛ անոր համար կը ծախե, եկեք, տերը ուրախացուցեք, քոքոնայի պես աղվոր **Փուկ** մը, դրոշմով **Փուկ** մը, պատուհաններուն վրա փակցունելու համար շատ աժան **Փուկ** մը, երկու փարայի մեկ **Փուկ**, «ի գուր ուրեմն» մեկ **Փուկ**... գովացուցիչ **Փուկ** մը, երկու փարայի, ունա Ֆա թու Ֆա... մեջը պարապ **Փուկ** մը, ունա վոլթա, հաճախորդ չկա՞. ունա Ֆա թու Ֆա ա ա ա... մտիր տոպրակը... թու թու թու թու թու թու ... լիքիտասիոնի պատճառով աժան պիտի ծախենք, ունա վոլթա: Հոռմեն եկած բանադրանք մը, անուշ բանադրանք մը, հաճելի բանադրանք մը, անմիտ բանադրանք մը, քառասուն փարանոց բանադրանք մը, ունա բիասթրե ունա բանադրանքե¹⁰, միա դրոսիա միա բանադրանքիս¹¹, ուն բիասթր, ուն բանադրանք¹²: Առնող չի կա: Արդուկված, օսլայված բանադրանք...

– Երկու դուրուշ ևս...

– Էյ հաճախորդներ, երեք դուրուշ մեկ բանադրանք. Հոռմեն եկած լավ ապրանք, պոյով պոսով բանադրանք, Հոռմի ապրանք, չի գործածված ապրանք:

Ժամանակին Հոռմի հետ հարաբերություն ունեցող վաճառականի մը սնտուկին ելած բանադրանք մը,– տեր փրկե գնե՛գ,– Հոռմի բանադրանքը երեք դուրուշի. թրի բիասթրե, թրիս դրոսիս, կամ թրիս դրոշիս¹³, էյ առնող չի կա՞, կերևա թե առնող չի կա. դուք չեք ուզեր առնել, բայց ես պիտի տամ, բռնի պիտի տամ... թու թու թու թու թու ու թա թի թե թո թի թա տո ո ո ո: Մյուս բռնի պիտի տամ... թու թու թու թու թու ու թա թի թե թո թի թա տո ո ո ո: Մյուս շաբաթ նորեն հրամմեցեք, սնտուկին տակեն նոր նոր ապրանքներ պիտի ելլան, աղվոր աղվոր կերպասներ, բաճկոններ, վերարկուներ, գլխարկներ, տաբատներ, կնկա գուլպաներ և այլն և այլն. քեթալիփա, քեթալիփա, էչեթերա, էչեթերա: (Հասկցաք ա, գալ շաբթու):

Թու թու թու թու թու թու...

Ունա վոլթա... մեկ տուզին դիմացկուն վարժապետ երեք դուրուշի. թրի բիասթրե ունա տուզինա վարժապետեձձո¹⁵. ուն տուզին տը վարժապետեր՝ քրուա բիասթրը¹⁶, միա կամ էնա տուզինա վարժապետոս՝ թրիս դրոշի¹⁷, ավելցնող չկա՞... ունա վոլթա, մեկ տուզին պարապ պտըտող վարժապետ, դասի ատեն քնացող վարժապետ, քնացած ատեն դաս տվող վարժապետ, մեկ տուզին վարժապետ՝ երեք դուրուշի, անոթոթյան դիմացող, ցուրտեն չի փախչող, ծեծեն չի վախեցող վարժապետ, մեկ տուզին վարժապետ, վարժապետ մեկ տուզին՝ երեք դուրուշի, ունա վոլթա վարժա-

Աստված ողջություն տա, այս տարի ալ բանադրանք մը մեջտեղ ելավ՝ կերթա թող երթա նայինք: Մոտայի կերպարանք առած է. մենք ալ մոտայի սիրահար ըլլալով՝ մոտ ատեններս բանադրանքի չենք արկված մարդոց մատներով պիտի ցույց տանք:



Խեղճ **Մեծնուսի հավաքիսը** անցած իրիկուն Ոսկերեքանի եկեղեցիին մեջ բանադրանքի ենթարկվեր է: Ասկե ետքը ոչ մեկը **Մեծնուսի հավաքիսին** հետ պիտի չի տեսնվի, անոր գրածներուն վրա դատողություն պիտի չընէ, վրան պիտի չի նայի:

- Հանցանքը ի՞նչ է եղեր:
- Տարօրինակ բան. մարդ մը բանադրվելու համար անպատճառ հանցանք մը գործած պիտի ըլլա:
- Հարկավ, իրենց կարծիքով անոր մեկ հանցանքը բռներ են:
- Եղբայր, իբր թե հասունյան և հակահասունյան խնդիրը հրահրեր է, ուզեր է բորբոքել:
- Հրահրել ուզեր է նե հակահասունյան խնդրին վրա էմիլյանի բաժանմանը վերաբերող ջուրեն թող քսեն, վերջացավ գնաց, հոս բանադրանքը ի՞նչ գործ ունի:
- Կը ներեք, եղբայր, բանադրանքը հիմա սոխի պես ամեն կերակուրի համար կը գործածվի...
- Պապն ալ Գերմանիա գտնվող հին կաթոլիկներուն տված բանադրանքը նորոգեր է կըսեն...
- Խոսքերնուն նայինք նե՝ օրինակ մեկը մեկու մը պարտք ունենա ու չի տա նե քանի մը անգամ կը զգուշացնեն, նորեն չի տա նե կը բանադրեն, օրինակ մեկը խնդրո մը առիթով կնկանը հետ կը կռվի և առանձին կը նստի, կնկանը մոտ նստե կըսեն, կուզես մի՛ նստիր, բանադրանքը ետևեղ կուզա:
- Է, ասոր ետքը:
- Մենք առաջ առնել ուզեցինք, հիմա ետքը չենք կրնար առնել:

- Խեղճ **Մեծնուսի հավաքիս**, ինտո՞ր ալ բանադրվեցավ, ո՞վ ըրավ, ժամը քանի՞ին ըրած է, ամսու քանի՞ին ըրած է:

- Եղբայր, Վիեննայեն հեռագիր առած չեն որ ժամանակը, օրը, ժամը գիտնամ, իշտե անցած իրիկուն եղած է ըսինք:
- Պատճառը չի հարցուցի՞ր **Մեծնուսին**:
- Ի՞նչ հարցունեմ. ան ալ բան մը գիտցած չունի, Անտոնյանները ուզեր են մեկը բանադրել, փնտրեր են, փնտրեր են, **Մեծնուսն** հարմար գտեր են: Մեծնուսն հանցանք չունի եղեր, բայց ատիկա կարևոր չէ, Անտոնյաններուն մարդ մը պետք էր բանադրանքի համար, անոնք ալ ատ մարդը գտեր, գործերնին առաջ տարեր են, գործը վերջանա տե, **Մեծնուսն** ալ ետքը հարմար ատեն հանցանք մը թող գործե:
- Բայց ան ալ հրդեհի մոտ հովհարով կերթա եղեր, կը վայլե՞:
- Կարճ կապե, արդեն հրդեհի մոտ ո՞վ ջուրով կերթա որ ան ալ երթա...
- Է հիմա **Մեծնուսն** հերետիկո՞ս եղած կըլլա:
- Հերետիկոս, բայց ո՞ր տեսակեն, մեկ քառո՞րդ տեսակեն թե տարբեր, ատ բաները լավ մը չի կրցա հասկանալ:
- Սա բանադրանքը քիչ մը բացատրես նե լավ կըլլա:
- Ուրկե՞ սկսիմ:
- Ուրկե կուզես:
- Հիմա բանադրանքին գործյամբը **Մեծնուսի** գրասենյակը որքան մեծ լան կա նե պիտի չորնա:
- Թող չորնա, եղբայր, թող չորնա, որ ետքեն ջուրը նետեն թացցնեն:
- Թուղթերն ալ պիտի չորնան:
- Աղեկ:
- Մեն գիրին թներուն տակ փայտ մը պիտի տնկեն:
- Թող տնկեն նայինք:
- Ճե գիրին գլուխը մսագործի խանութներուն մեջ որպես կեռ պիտի գործածեն:
- Թող գործածեն:
- Վյունին գլուխը ավելի կոթ պիտի ընեն:
- Թող ընեն:
- Յ գիրին պոչը գինիի տակառներու համար շրջանակ պիտի ընեն:
- Տակառներուն աչքը լույս:
- Ըթ-ին պոչը շերեփի պիտի ընեն:
- Թող ընեն:

- **Մեծնուսին** թուղթ ծախող Ավրամշիին խանութը մուկերու բանակ պիտի թափվի:
- Չարդարյանին աչքը լույս:
- Ուտելու ատեն կերակուրը պաշտոնյաներուն կոկորդին մեջ պիտի մնա և տասը գավաթ ջուրով ցած պիտի չիջնա:
- Ա՞լ:
- Բաժանորդներուն սրունքներուն վրա 50 փոքր 18 մեծ վերք պիտի բացվի:
- Թող բացվի:
- Խմբագիրին թևերուն տակը ութը հատ վերք պիտի ելլա, տպարանի մեքենաներուն անիվներուն մեջը անհաշիվ կոշտեր պիտի բուսնին:
- Թող բուսնին:
- Գիրերուն կապարները ձկնորսները որսի ցանցերու համար պիտի օգտագործեն:
- Թող օգտագործեն:
- Տպագրիչին մատներուն ծայրերը ձիու պայտի չափ եղունգներ պիտի բուսնին:
- Թող բուսնին:
- Ընթերցողներուն աչքերուն ակնոց պիտի չի դիմանա:
- Թող չի դիմանա:
- Թերթին լուրեր տվողները հարբուխ պիտի ըլլան:
- Թող ըլլան:
- Հեռագրի թելերը պիտի կտրվին:
- Թող թող կտրվին:
- Ներքին լուրերուն լարերը պիտի կտրվին: Արտաքին լուրեր բերող նամակները դուրս պիտի չի գան փոստայեն:
- Թող չի գան:
- Բեվերսուրուսին բովանդակության իմաստը անհասկնալի պիտի ըլլա: Սրբազան Պապի կոնդակի երկարությունը երկու օխա մետաքսի չափ պիտի երկարի որ տպարանին չորս կողմը փաթթե ու կապե:
- Հասունին ծրագրած խարդախությունները անոր գլուխն ու մարմինը պիտի ուտեն: Շիրքեթի Խայրիեի հայտարարություններուն համաձայն ժամը 3-ին դուրս եկող շոգենավը ժամը 10-ին պիտի ելլա:
- Աղեկ:
- Գրպանը հինգ փարա պիտի չի մնա սարաֆներուն մուրհակները պիտի

փնտրե ու չի գտնա: Առևտուրի հրապարակին վրա որքան բամբակ որ կա կոկորդը պիտի լցվի և շունչը կտրվի: **Մեծնուսի հավապիս**, պոռագող լրագրավաճառներուն ոտքերը երկու թիզ նասր պիտի ելլա:

- Թող ելլա:
- Խանութներուն մեջ կախված **Մեծնուսները** անձրևեն հավա պիտի ըլլան: Հայտարարություններուն բոլոր սյունակները երկու մատ ժանգ պիտի բռնեն: **Մեծնուսն** ոչ մեկ փորձանքե գերծ պիտի ըլլա, հոգին պիտի ելլա:
- Հավիտյանս հավիտենից ամե՛ն:
- Ամե՛ն, սակայն այս անաթեմայի բոլոր մասերը կարդացվե՞ր են:
- Այո՛, սակայն քահանաները, իրենց սովորությանը համաձայն մեկ մասը իրենց մտքեն կարդացած են, մնացածն ալ քիչ մը պոռալով, քիչ մըն ալ քթերնուն տակեն:
- Չըսե՞ս այս բանադրանքը մեկ տեսակ չէ, մեկ մասը քթի տակեն, մյուս մասը ականջի տակեն, աչքի տակեն, ոտքի տակեն, ձեռքի տակեն ըլլալու է:
- Ատանկ է:
- Բոլորը տակեն, բնավ վրայեն չի կա՞:
- Եղբայր, Պոլսո բանադրանքն ալ այսքան կըլլա, Հոռմեն եթե ապսպրվի՝ կրնա ըլլալ որ ուրիշ տեսակն ալ գա: Գալու ըլլա նե նորեն կը տեսնվինք: Ատիո:



ԱՆՏՈՆՅԱՆՆԵՐԸ

Անձրևեն փախչինք ըսինք,
կարկուտի բռնվեցանք,
անձրևեն փախչելու չէինք, բայց
որո՞ն միտքեն կանցներ թե
կարկուտի պիտի բռնվինք:

Ի՞նչ ընենք, ճակատագիրը
ասանկ է եղեր: Հասունյաններեն
ազատեցանք օձիքը Անտոնյան-
ներուն տվինք:

Ես ասոնք լավ մարդ գիտեի,
ասկայն չորեքշաբթի ավուր
Մեճմուսյին ուղղված նամա-

կը երբ կարդացի, զարմացա: Չըսե՞ս՝ ասոնք եթե ուզեն ազգը տակնուվրա
կրնան ընել եղեր, ասոնց հետ ոչ ոք գլուխ չի կրնար հանել եղեր, և ասոնք
ըսողներն ալ Անտոնյաններուն կողմնակիցներն են: **Մեճմուսյի՞ն** է մնա-
ցեր անոնց հետ գլուխ ելլել ըսելով՝ փոխանակ արդարությունը պաշտպա-
նելու, Անտոնյաններուն զորավոր ըլլալեն **Մեճմուսյին** անիրավ ըլլալը կու-
զեն ցույց տալ:

Ըսել է **Մեճմուսյին** ամենեն մեծ հանցանքը հակառակորդին զորավոր
ըլլալն է:

Կը նշանակե՞ մեր կաթոլիկ ազգակիցները ասանկ հանցանքի մը մեջ չի
գտնվելու համար նայելու են որ իրենց թշնամին թույլ ըլլա, եթե զորավոր ըլլա
դեղ տալով թուլացնելու է և հետո թշնամի ընելու է: Եվ քանի որ Անտոնյան-
ները զորավոր են եղեր, անոնց հետ թշնամություն ստեղծելը սխալ է, անոնց
առջևը ծունկի գալու է, փեշերը համբուրելու է և ինչ ըսեն նե կատարելու է,
որպեսզի անոնք ալ ազգը տակն ու վրա չընեն կամ վրան տակը չընեն:

– Եթե ապօրինի գո՞րծ մը ընեն:

– Լուռ մնալու է, լուռ, չի կրցա՞նք հասկցունել... զորավոր թշնամին կրնա՞
անիրավ ըլլալ, զքեզ վերջին դատաստանի օ՞րը կը կարծես:

– Է, ասոր վե՞րջը:

– Ասոր վերջը թույլ թշնամի փնտրել գտնելն է, տես անոնք ինչպես գտեր
են **Մեճմուսն** ու գլուխն հարված կիջեցունեն:

– Բայց **Մեճմուսն** ուրիշ հանցանք մըն ալ ունի:



– Ո՞րն է:

– Թող բոլոր միաբանությունները միանան, կըսես, ասիկա ըլլալի՞ք բան է:

– Աս հանցանքին ըսելիք չունիմ, որովհետև միություն քարոզել են մեծ
հանցանք չկա:

– Է, Մարտիկ աղա, քու կարծիքդ ի՞նչ է նայինք:

– Իմ կարծիքս սա է որ կարդացած մարդոց ձեռքեն պիտի չի կրնանք
ազատիլ, կարդացածները երախա են, մենք պուպրիկ, մեզի առած կը խաղ-
ցունեն, իբր թե երբեմն կը հազցունեն, երբեմն կը մերկացունեն, և քիչ մը
սղմելուն պես ռեզիմե պուպրիկներուն պես ճը՛րտ ճը՛րտ ձայն կը հանենք,
ձայն հանելնիս վնաս չունի, բայց միշտ անոնց ձեռքն ենք:

– Աս երախաներուն ձեռքեն ե՞րբ պիտի ազատինք:

– Երբ երախաներուն խելքը գլուխնին գա և պուպրիկի հետ խաղալեն
հրաժարին:

– Է սա երախաները մեծնալնիք չունի՞ն:

– Կարծես չունին:

– Անանկ է նե մենք ալ անոնց ձեռքեն ազատելիք չունինք:

– Ատանկ ըլլալը նո՞ր գիտես:



ԽԵՂԸ ՄԱՐԴ

Մարդու սիրտը կը լցվի, լացը կուգա, բայց չի լար... Որոշեր են ասկե ետքը գործ մը լավ չուսումնասիրած, չի պարզաբանած՝ ոչ մեկուն մեղքը չառնել:

Խեղճ Քազանճյան...

Բոլորը աս մարդուն մեղքը կառնեին թե ան է «Մեճմուսն» բանադրել տվողը, մինչդեռ խեղճը լուր ալ չունի եղեր, առանց լուր ունենալու բանադրել տվեր է, այսինքն՝ բանադրել են տվեր՝ առանց իրեն իմաց տալու: Հիմա աս անմեղ մարդը ասոր անոր կըսե եղեր թե ինքը բանե մը լուր չունի, և քանի որ լուր չունի, ըսել է **Մեճմուսի** դեմ Ոսկեբերան եկեղեցվո մեջ կարդացված թուղթը անիկա կարդացնել չի տվեր, և քանի որ աս գործեն ամեննին լուր չունի (կարծեն ընթերցողն ալ լուր չունի), ըսել է այդ թուղթը կարդացող վարդապետը գրքի մեջ է կարդացեր:

Շատ աղեկ, բայց թուղթը ո՞վ գրած է. ասկե ալ լուր չունինք, ատ թուղթը ի՞նչպես է ինկեր եկեղեցի, ասանկ թուղթերը քոնքրամարքա չունին, որ Օրթագյուղեն կամ ուրիշ վայրե մը եկած ըլլալը հասկնանք, ըսել է ասկե ալ լուր չունինք: Է, հապա ի՞նչ միջոցով պիտի գիտնանք... միջոցը սա է՝ թուղթը բռնել և ոստիկանության հանձնելու է, ոստիկանապետին ալ ստիպելու է, որ ուրկե եկած ըլլալը հաստատե:


Կամ... կեցիր, կեցիր, միտքս բան մը ինկավ, գտա թուղթը գրողն ալ, կարդացողն ալ, գտա, սիրտերնիդ թող հանդարտի: Բախտ նայելու արհեստին մեջ որքան առաջացած ըլլալս հարկավ հասկցաք այսօրվա գուշակություններես: Եկող թիվին մեջ Հայր Քազանճյանին բախտը կը նայինք, ամեն բան մեջտեղ կելլա, կը լմննա, քանի որ աս գործը բախտ նայելե գատ ուրիշ ձևով կրնար մաքրվիլ:

Երկու երեք օր ալ սպասեցեք, եկող թիվերուն մեջ բացված բախտեն կը հասկնանք թե Քազանճյանը խեղճ է, թե խեղճը Քազանճյանն է: Մի անպարեք:



ՏԵՄՆՈՂԻՆ ԵՐԱՆԻ

Միտով կարկանդակներուն մեջ՝ միս:
Օրն է բուն վագող ձիերուն ոտքերը՝ պայտ:
Ճովինո մը որ գրպանը դրամ ունենա:
Օրիորդ մը որ երեսը բուտրա քսած չըլլա:
Մուտքն ու ելքը հավասարակշռող տոմար մը:
Թրամվայի արժեթուղթերեն շահած մարդ մը:
Ճամբեն դուրս չելլող շոգեկառք մը:
Քոնսուլիտ խանին մեջ որս չի բռնող սարաֆ մը:
Թերթերուն մեջ՝ ճշմարտություն:
Չուխաճյանի թատերախումբին մեջ՝ ամսականը ստացող դերասան մը :
Փողոցը իր ձին չի վագցնող ձիավոր մը:
Պակաս չի կշռող կշեռք մը:
Պոլստ կողմերը ապակիները փոշիով չի ծածկված լապտեր մը:
Առանց դրոշմի թուղթի կտոր մը:
Մեջքի փայտովը դիմացեն եկողը չի հրող բեռնակիր մը:
Սրճարաններուն մեջ առանց բակլայի սուրճ:
Ծակ չունեցող մարբուն:
Խասազյուղի շոգենավ մը որ արագ երթա:
Ժամանակին պարտքը տալու կարողություն ունեցող մարդ մը:



ՓՅՈՒՍՔՅՈՒՆԱՎՈՐ ՓՈՐՉԱՆՔ

– Փորձանքի՞ն ալ փյուսկյուլավորը կըլլա. ֆե՞ս է, ինչ է:

– Եղբայր թերթը դրոշմ կունենա տե փորձանքը փյուսկյուլ չ'ունենար:

Ամա մնանցուցիր հա՛, թերթն ու փորձանքը և փյուսկյուլն ու դրոշմը:

– Հարկավ պիտի մնանցունեն, Թուրքիայի պես երկիր մը թերթին դրոշմը փորձանքին փյուսկյուլին հետ կամ դրոշմով թերթը փյուսկյուլավոր փորձանքի մնանեցնենք մե չի՞ հարմարիր:

– Ճանըմ աս դրոշմը թերթին տուրքն է, բոլոր բաներեն տուրք կառնվի տե թերթեն չ'առնվի՞ր:

– Օրենքին նայիս՝ պիտի առնվի, ջուրեն ալ առնելու է, աչքեն ալ առնելու է, օրինակ, եթե մեկը ապրելու համար օդի պետք ունի, օդեն ալ առնելու է, առնելու է հա առնելու է:

– Լավ որ դուն կըսես:

– Ավելի ճիշտ ըսեմ՝ ամեն մեկուն հոգիեն ալ տուրք մը առնելու է, որպեսզի աս տուրքը ինչու համար որ գործածվի, օգուտ տա, ատանկ չէ՞:

– Ատանկ է:

– Անանկ է մե դուն երկու քու կյանքիդ տուրքը այս տարվա համար տուր:

– Ըլլալու բան չէ. ատանկ բան կըլլա՞: Հինգ տասը տարիեն հոգիս պիտի հանե՞ս:


– Դուն չըսի՞ր որ կըլլա:

– Ինչպես ալ գտանք փյուսկյուլավոր փորձանքը:

– Փորձանքը փյուսկյուլ չ'ունենար կըսեիր, քու քովդ ինչ գործ ունի:

– Կունենա եղեր, եղբայր, սակայն թերթի դրոշմին փյուսկյուլավոր փորձանքին հետ ինչ հարաբերություն ունենալը չի կրցա հասկնալ:

– Թերթը քաղաքակրթության հոգին չէ՞, կարևոր ուժ մը չէ՞, ինչպես որ



քու հոգիեդ տուրք առնելը տարօրինակ կըլլա, քաղաքակրթության հոգին ալ տուրք առնելը տարօրինակ բան է, և աս վիճակը փյուսկյուլավոր փորձանք չի՞ համարվիր:

– Հիմա թերթերը մեռնելո՞ւ են:

– Ո՞վ գիտե, կամ պիտի մվաղին:

– Ճանըմ անգամ մը թող մեռնին կամ մվաղին, տեսնանք անկե ստքը դրոշմով թերթին գլուխը փյուսկյուլավոր փորձանք եկած ըլլալը կը հասկնանք:

– Ուրեմն սպասե անոնց մեռնելուն կամ մվաղելուն:



ԹՐԱՄՎԱՅԻ ՎԻՃԱԿԱԽԱՂԸ

Աչքերնիս, լույս, լսածնուս
նայելով՝ թրամվայն ալ վի-
ճակախաղի որոշում է տվեր:
Անշուշտ տալու էր, թրամ-
վայը ինչո՞վ պակաս է շոգե-
կառքերեն: Թրամվայնիս ալ
շոգեկառքերուն չափ արագ
չի՞ քալեր, անոնց չափ ժո-
ղովուրդին չի՞ սպասարկեր,
անոնց չափ աչքը չի՞ հաներ,
զլուխ չի՞ կոտրեր: Իրարմե
ի՞նչ տարբերություն ունին.
մեկ շոգին կը քաշե, մյուսը՝
կրակը կը տանի, աս ասանկ
ըլլալով թրամվայը ինչո՞ւ վի-
ճակախաղ պիտի չունենա:



Մեզ հասած լուրերուն նայելով՝ թրամվայի ընկերության արսիոնը ունե-
ցողներեն ոմանք միութուն մը կազմեր են և հասկանալով որ իրենց բոլոր
դրամները պիտի կորսվին, որոշեր են ընկերության ապրանքները իրենց մեջ
բաժնել:

20 բաժին ունեցողներուն՝ մեկ գրաստի երկուսուկես ոտքը և 50 տիրեմ
պոչ, կես պայտ, մեկ վակոնի անիվ, մեկ դուռնա:

19 բաժին ունեցողներուն՝ մեկ ոտքը, մեկ ձիու սանձի կաշի, 100 թել պոչ,
2 կոտրած պատուհան:

18 բաժին ունեցողներուն՝ ոսկոր ու մորթ դարձած կես ջորի մը:

17 բաժին ունեցողներուն՝ 102,5 տիրեմ ձիթայուղ, կես անիվ, հին միմտեր
մը, փողոցները կախված ժամացույցներեն մեկուն սլաքը:

16 բաժին ունեցողներուն՝ մտրակ մը, կազը մեջը լապտեր մը, մեկ մետր
կաշի:

15 բաժին ունեցողներուն՝ վակոններուն առաստաղներուն տախտակնե-
րեն երեք հատ, կառապանին կայնած տեղը, և քոնտյուրքեորին հագած վե-
րարկուեն 3 կտոր:

14 բաժին ունեցողներուն՝ գիծերեն հանված կամ հանվելիք երկաթներեն

մեկ հատ: (Պարտեզներուն մեջ իբրև ջորի խողովակ կրնա գործածվիլ):

13 բաժին ունեցողներուն՝ պատռված վարագույր մը, կես դուռնա, նետվե-
լու սահմանված կաշի մը:

12 բաժին ունեցողներուն՝ կես բազմոց, մեկ քառորդ վակոն:

11 բաժին ունեցողներուն՝ պատռված առագաստ մը, գույգ մը հին կոշիկ,
5-10 թել պոչ:

10 բաժին ունեցողներուն՝ մեկ օխա մատիտ, 100 հատ գործածված տոմ-
սակ:

9 բաժին ունեցողներուն՝ գործածված տետրակ մը, տոմսավաճառի պա-
յուսակ մը:

8 բաժին ունեցողներուն՝ կես օխա անկողիններեն թափված բուրդ, երեք
հարյուր տիրեմ փոշի:

7 բաժին ունեցողներուն՝ հարյուր տիրեմ «ճամբա՝» հիսուն տիրեմ
«ճամբայեն ել՝»:

6 բաժին ունեցողներուն՝ մեկ քառորդ ջորի, մեկ երկու օխա կոտրված
ապակի:

5 բաժին ունեցողներուն՝ դրան երկու մանտալ, կես օխա աղբ:

4 բաժին ունեցողներուն՝ հարյուր տիրեմ «օ՛ֆ, բյո՛ւֆ»:

3 բաժին ունեցողներուն՝ թուղթերը մեջ դնելու և առջևը մոմ վառելու հա-
մար շրջանակ մը:

2 բաժին ունեցողներուն՝ երկու թել պոչ:

1 բաժին ունեցողներուն՝ կես դուռնա:

Աստուծով աս բիանքոն շուտով կըլլա կը վերջանա, մենք ալ շահած թիե-
րը կը հրատարակենք:

Հեյ կիտի աշխարհ, դրամնիս առին, ձեռքերնիս թուղթով լեցուցին...

Կեցցե՛ք քաղաքակրթությունը, կեցցե՛ հառաջադիմությունը:

ԽԱՆՍՏՈՎ ՄԱՐԴԸ

- Լսեցի՞ք Կիրակոս աղա.
- Ի՞նչը, խեբ ըլլա.
- Ճանըմ սա խանատով մարդուն մասին չի լսեցի՞ր:
- Խանատով մա՞րդ մի... վազ անցիր աստվածդ սիրես, զվարճանա՞լ կու-
զես, տրամադրությունդ տեղը կերևա:

– Չե՞նք ճանրմ, ըսածս կատակ չէ, տարօրինակ է, որ աշխարհքս զարմացնող բանը դուն չես լսեր:

– Պարապ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ, ամեն մարդ իր մտածմունքը ունի:

– Պարա՞պ մի, վա՛յ միամիտ մարդ վա՛յ:

– Է, ի՞նչ է եղեր նայինք:

– Ի՞նչ պիտի ըլլա. մարդուն մեկը թռչունի պես թռեր է:

– Հա՛, հա՛, հա՛. գոնե կրցե՞ր է:

– Այո՛, օդապարհիկով քանի մը արշին բարձրացեր է, բայց երբ իր թևերը փորձել ուզեր է ...

– Ե՞տքը:

– Թևերուն ուժը քիչ ըլլալով՝ մեկ վայրկյանի մեջ ինքզինքը գետինը գտեր է:

– Ինկեր է, ըսե՛ սըվոր:

– Այո՛.բայց առաջին փորձը ըլլալով...

– Վա՛յ, վա՛յ, վա՛յ, աստված իմ դեռ ինչե՛ր պիտի տեսնանք: Եթե մենք աս ճամբան բռնենք, քանի քանի մարդիկ օդը պիտի ելլեն, քանիներն ալ մյուս աշխարհքը պիտի իջնան:

ԹՐԱՄՎԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆՏԸ

Ի՞նչ ըսեմ, հոգիս, դուն վիճակեղ գոհ մարդու չես նմանիր, քառասունով ծախսածդ այսօր երեք փարայով չես առներ: Ուրիշներուն վնաս տալով դրամ վաստկել ուզելուդ պատճառով գործդ հաջող չերթա, շատերուն գլուխը, աչքը հանած ըլլալուդ՝ առանց փորձանքի չես մնար, հաշվեմատյաններուդ ամեննին ուշադրություն չես դարձուներ, եթե դարձունեիր, հիմա հաշիվներուդ մեջ թրամվայի գիծերուն չափ բաց ըլլալը պիտի տեսնեիր:

Եթե ասանկ շարունակես, քիչ ատենեն ուրիշ վնասներու ալ պիտի ենթարկվիս, մոտ օրերս պզտիկ փորձանք մը պիտի գա գլուխդ, այսինքն ընկերության գործը լավ պիտի չերթա, սակայն հոգ մ'ըներ, ետքեն լավ պիտի ըլլա. վնասե պիտի ազատիս. խելքդ գլուխդ ժողվե և մեյ մ'ալ ուրիշին դրամին աչք մի տնկեր: Որքան ապրիլդ հստակ չեմ կրնար ըսել, սակայն ձիերդ այսօր վաղը իրարու ետևէ պիտի սատկին և դուն ալ կաշիի առևտուրի պիտի ձեռնարկես, բայց ատկե ալ օգուտ մը պիտի չի տեսնաս:

ԲԱՆՏ ԿԸ ՆԱՅԻՆՔ

ՃՈՎԻՆՈՅԻ ՍԸ ԲԱՆՏԸ

Բնավորությանդ մեջ թեթևություն մը կա, սիրող մաքուր է, սակայն անհանդուրժելի մարդ մ'ես, հոգիս: Կը կարծես թե աս աշխարհիս մեջ մարդոց կարգը անցնելու համար ձեռնափայտ մը, ակնոց մը, երկար օձիք, և գրպանը պարապ բանթալոն մը հերիք է: Միսալ ես, տղաս: Քեզի անանկ կուգա թե բոլոր աղջիկները քու վրադ կը խենթենան, պատրաստ են քեզի համար մեռնելու, անոնք կը ծաղրեն քեզի, իսկ դուն լուր չունիս: Եթե աս ընթացքդ չի փոխես՝ թշվառության պիտի մատնվիս, մարդ երեսդ պիտի չի նայի: Մոտ օրերս քեզի բախտ մը պիտի գա, պատրաստ եղիր որ չի փախցունես: Երկու տարի ետքը աղվոր աղջկան մը հետ պիտի կարգվիս. առած աղջիկդ ալ քեզի պես թեթև ըլլալուն՝ բնավորությունիդ պիտի բռնե, երբեմն երբեմն պիտի կռվիք, սակայն շուտով պիտի հաշտվիք: Այդ օրերը գործդ պիտի ավրվի, կնոջմեդ դրամ պիտի ուզես, կնիկդ պիտի չի տա, վերջապես քիչ մը նեղություն քաշելեդ ետքը պիտի որոշես պարապ պտըտիլ: Ահա ասոնք լսեցիր ա, մոտ օրերս գալիք բախտը լավ բռնելուդ նայե:

ԹՈՒՆԵԼԻՆ ԲԱՆՏԸ

Դարմանի տակե ջուր հոսեցնող սատանա, քուկին բախտդ քիչ մը մութ կերևա, սակայն գործդ տեղն է: Բռնած ճամբադ լավ է, տղաս, որովհետև կարճ է, մեզի գետնին տակը անցնելեդ ետքը՝ ջրհորեն դույլ քաշելու պես՝ ետքեն դուրս կը հանես և ո՛չ մեկուն վնաս տված չես ըլլար:

Դուն շատ թշնամիներ ունիս, սակայն հոգ մ'ըներ, քանի որ թշնամիդ գետնին երեսն է, դուն՝ գետնին տակը, ատոր համար ալ քեզի վնաս մը պիտի չի պատճառե: Բռնած գործդ օրե օր առաջ պիտի երթա. մոտ օրեն մինչև Թաքսիմ ճամբա պիտի բանաս, քիչ ատենեն աս ճամբան Պոլսո բոլոր կողմերը պիտի տարածվի: Բոլորն ալ գետնի տակեն պիտի երթնեկեն և դուրսը մարդ պիտի չի մնա. պարտք ունեցողները քեզի աղոթք պիտի ընեն, որովհետև գետնին տակը մութ ըլլալով՝ պարտատերերուն ձեռքեն պիտի ազատին: Ջանա՛, տղաս, որ մարդ ըլլաս: Միտքդ դրեր ես մինչև Գալաթայի աշտարակի գլուխը թունել բանեցունելու, ատկե հրաժարվե, քեզի վնաս

կըլլա, հետո գլուխնուս մեյ մ'ալ թունելի *սքսիոն* կելլա: Խոսքս լսե, մի վախ-

նար, եթե վախնալու ըլլաս՝ ինձի լուր տուր:



ՀԱՅՐ ՔԱԶԱՆՃՅԱՆԻՆ ԲԱԽՏԸ

Ճանըմ էֆենտիս, հոգիս, բնավորությունդ քիչ մը խիստ է, պզտիկ բանի մը համար կրնաս ազգը տակնուվրա ընել, մեկ միաբանություն մը պաշտպանելու համար՝ հինգ-տասը միա-

բանություն քանդելու կելլաս: Միրտդ մաքուր է, ուրիշներուն լավություն ընել կուզես, սակայն զբաղմունքիդ շատության պատճառով ժամանակ չես գտնար: Այս օրերս դեղին մորուքով ըսեմ, կապույտ աչքերով ըսեմ՝ մեկը զքեզ համոզեր է և դուն ալ եկեղեցվո մեջ մարդու մը դեմ թուղք մը կարդացուցեր ես, թեև ես կարդալ չի տվի, կըսես, սակայն բախտը սխալ ցույց չի տար: Ըրածիդ համար դուն ալ զոջացեր ես և անցած օր ժողովին մեջ կերպով մը այդ թուղքը հետս կոչեր ես: Լավ բնավորություն ունենալդ ատով հաստատեցիր: Քնանալը քիչ մը շատ կը սիրես, ճաշեն ետքը սուրճ կը խմես: Առտունները զգեստներդ կը հագնիս, իրիկունները կը հանվիս: Մոտ օրերս մեծ բախտի մը պիտի տիրանաս: Մեծ մարդ մը քեզի բարիք մը պիտի ընե, ատ մարդուն արժանիքը գիտցիր: Պարապ տեղը մի բարկացներ: Ատենոք էնֆիե կը սիրեիր. հիմա ձգեր ես, նարգիլե կը քաշես: Քիթդ ալ մեկ գաղափարի չի ծառայեր, եղբայր: Այս օրերս վախնալիք երազ մը պիտի տեսնաս, սակայն հոգ մ'ընե: Վերջդ բարի է: Մոտ օրերս ձեր և միաբանության միջև անմիաբանություն մը պիտի ծագի, սակայն կարճ ժամանակեն նորեն միաբանության պիտի փոխվի: Մտքեդ անհնար բաներ կանցունես, որոնց ոչ մեկը պիտի չի կրնաս ընել. պարապ տեղը մի հոգնիր: Վերջապես՝ երբեմն միաբանությամբ, երբեմն անմիաբանությամբ մինչև 130 տարի պիտի ապրիս:

ՎԱՐԴՈՎՅԱՆԻ ԲԱԽՏԸ

Փառք աստուծո, փառք աստուծո: Աստված չար աչքե պահե. սկզբունքիդ վրա հաստատ մարդ մըն ես: Բռնած գործդ առաջ տանելու համար ամեն փորձանքի, դժվարության կը դիմանաս: Երբեմն հասակեդ վեր գործերու ձեռնարկելով՝ դժվարություններ կը կրես, սակայն ասոր գլխարկը անոր գլուխը դնելով՝ տակը չես մնար: Հարյուր հազար արշին տարածության վրա Վարդովյան անունով թատրոն մը շինել տալու մտադրություն ունիս, սակայն պարտքերեդ չես կրնար ազատիլ: Բարեկամներ քիչ ունիս. թշնամու կողմե հարուստ ես, սակայն քանի այդ գորավոր կամքը ունիս՝ ոչ մեկեն մի վախնար:

Փառքը շատ կը սիրես, օրը չորս տաբատ և երեք վերարկու և ժամը մեկ ճերմակեղեն կը փոխես: Օճառին տված դրամդ հաշիվիդ հավասարակշռությունը կը խախտե: Սակայն հիմա հաշիվի նայողը ով է որ հավասարակշռության կորսվիլը կամ գտնվիլը հասկցվի: Միրտդ գեշ չէ, բայց շատ մաքուր ալ չէ... ասանկ ցույց կուտա բախտդ: Երբեմն խելոք վարվելով՝ տասը փարայով հարյուր ոսկու շահ կունենաս, սակայն շատ անգամ տասը փարա խնայել ուզելով՝ հարյուր ոսկի վնաս կընես: Խորհուրդ լսելու սովորություն չունիս: Շոգեկառքի վակոններուն պես՝ գիծդ դուրս չես գար՝ եթե ճամբան քանդված չըլլա: Մոտ օրեն գլուխդ փորձանք մը պիտի գա. մահճակալիդ վրա պառկած, քնացած ատենդ երազիդ մեջ խելքդ պիտի փախցունես և ցած պիտի գլորվիս. թեղ քիչ մը պիտի ցավցունես, սակայն մեկ երկու ժացած պիտի գլորվիս. թեղ քիչ մը պիտի ցավցունես, սակայն մեկ երկու ժամեն պիտի անցնի: Երբեմն վնաս կրելով, երբեմն հաջողությամբ թատրոնդ օրե օր առաջ պիտի տանիս և 112 տարի պիտի ապրիս:

ԱՂԶԿԱՆ ՄԸ ԲԱԽՏԸ

Ա՛ իմ անուշիկ աղջիկս, աղվոր աղջիկս, քուկին աստղդ շատ պայծառ կերևա, սակայն դուն արժեքը չես գիտեր: Շատ մը երիտասարդներ քու սիրուդ իրենց քունը կորսնցուցեր են գիշեր ցերեկ քեզի համար ա՛խ կը քաշեն: Միջահասակ, սև հոնքերով, սև պեխերով, թուխ դեմքով, գեր երիտասարդ մը քեզի կը սիրե, կուզե հետդ ամուսնանալ, սակայն դուն անոր երեսն ալ մը քեզի կը սիրե, կուզե հետդ ամուսնանալ, սակայն դուն անոր երեսն ալ չես նայիր: Աշխարհքս հոգդ չէ: Ամերիկյան կապիկի պես աս ու ան կողմ կը վազես, կը ցատկես: Ոմանց ծիծաղելով, ոմանց աչք ընելով, ոմանց հոնք կը վազես, կը ցատկես:

բարձրացնելով՝ երիտասարդները մատներուդ վրա առած կը խաղցունես: Մեծ մարդ մը կուզեր քեզի հետ նշանվիլ, սակայն դուն չուզեցիր. մոտ օրերս սիրտդ երիտասարդի մը պիտի տաս, աղավնյակըս, ամբողջ կյանքդ անոր հետ անցունելու որոշում պիտի տաս, բայց հայրդ և մայրդ քեզի այդ երիտասարդին պիտի չի տան, որովհետև անհկա թեթևաբարո, գեշ վարքի տեր մեկն է: Պճնանքը շատ կը սիրես, միմակ գլուխդ սանրելը երեք ժամ կը տևե. ամեն առտու երեսդ լավանտայով կը լվաս, բուտրայով կը չորցնես, մոտ ատեններս վրադ անհանգստություն մը պիտի գա, սակայն երկար պիտի չի տևե, պիտի անցնի: Ոչ մեկ երիտասարդի պիտի հավնիս, վերջապես երեսուն տարեկանիդ պիտի կարգվիս վաթսուն տարեկան մեկու մը հետ: Էրիկ կնիկ իրիկուն առտու պիտի կռվիք: 17 զավակ պիտի ունենաս, յոթը տղա, տասը՝ աղջիկ: Ամուսինդ՝ ծախքերուդ չի դիմանալով պիտի սնանկանա, այսինքն **լիքիդասին** պիտի ընես: Դուն ատ սնանկության ձայնը առնելուդ պես պիտի սկսիս ամուսինեդ բաժնվելու մասին մտածել, քիչ մը նեղություն պիտի կրեք, սակայն հետո ամուսինդ փաստաբանության սկսելով պիտի կրնա ընտանիքը պահել. ինչ օգուտ որ խեղճը, չի դիմանալով քու շատախոսությանը, իննսուն տարեկանին պիտի մեռնի. դուն ալ վաթսուն տարեկան դարձած պիտի ուզես նշանվիլ, ոչ մեկը պիտի չառնես քեզի. վիշտեդ անկողին պիտի իյնաս. մեկ երկու ամիս հիվանդ պառկելէ ետքը, պիտի ելլաս՝ ասեղնագործություն պիտի ընես, և զավակներուդ հետ հանգիստ կյանք պիտի անցունես: 80 տարեկանիդ աշխարհքը պիտի թողուս: Ահա ըլլալիքդ գիտցար. հիմակվնես խելքդ գլուխդ բեր, ըստ այնմ վարվե, խանձ աղջիկս:

«ՄԱՍԻՍ»-ԻՆ ԲԱԽՏԸ

Ճանըմ էֆենտիս գառնուկս, դուն շատ կեղծավոր մարդ կերևաս, սակայն կեղծավորությունն ալ չես կրնար գլուխ բերել, վրան բաց կը ձգես: Դիմացինդ խաբեբայի տեղ դնելով՝ միևնույն խնդրո մեջ հազար ու մեկ գույն կառնես: Ասոր անոր տունը, ապարանքը երթալով ծածուկ մեկու մը համար փոս կը փորես, գիշեր-ցերեկ կաշխատիս, որ ատ մարդը դատը կորսնցնես, սակայն հրապարակով անոր մասին բան մը չես ըսեր և պիտի չի կրնաս ըսել, որովհետև ատ մարդը քեզի հետ պայմանավորված է, որ բան մը չըսես: Դուն քեզի «պատվական» անունը տվեր ես, սակայն անգամ մը ականջդ դարձուր տես ժողովուրդը ինչ կըսես քու մասիդ. ժողովուրդի մոտ փարա-

յի մը արժեքը չունիս. կամաց կամաց ամենևին պիտի չունենաս, քանի որ աննշան պատճառով մը ամենն մոտ բարեկամդ կը վշտացնես: Մեկու մը երկու փարայի լավություն ընելուդ պես՝ կելլաս եկեղեցիներուն մեջ ծանուցում ընել կուտաս և լավություն ըրած մարդուդ վրա ազդելու կաշխատիս: Խմբագրությունը քու գործդ չէ, թանկագինս: Դուն միայն քծնելու շնորհք ունիս: «Վայ էֆենտիս, այսօր երեկվրնես լավ ես» ըսելու մեծ ընդունակություն ունիս: Ոչ մեկ խմբագրի հետ կրնաս լավ հարաբերություն ունենալ և որևէ խնդրո մեջ համակարծիք գտնվիլ անոր հետ: Մեփական կարծիք չունի. ունեցածիդ տերը ուրիշն է. քու տերդ ալ դուն չես, ուրիշներուն հրամանովը կը շարժիս: Քու գործիդ ուրիշը կը խառնվի և արդեն կեղծավոր մարդոց տերը ուրիշները կըլլան. դուն անոնց ծառան ես, ուր որ դրկեն՝ կերթաս, եկուր ըսեն՝ կուգաս, նստե ըսեն՝ կը նստիս, ելիր ըսեն՝ կելլաս և այս խեղճ վիճակիդ մեջ կը պարծենաս թե ժողովուրդին կը ծառայես: Լուրերդ շուկայեն աժան աժան կառնես, որպես նոր լուր կլլեցնելու կաշխատիս. նամակով եկած լուրերը որպես հեռագիր կը քշես: Թերթիդ երեք քառորդը հայտարարություն է. հայտարարություններու թե՞րթ ես, մարդ աստուծո: Մեյ մը քու վիճակիդ նայե, մեյ մալ պաշտոնակիցներուդ վիճակին: Քեզի նման հայտարարություններու տղմա կամ հայտարարություններու փլավ (ուրիշ թերթ մըն ալ կա՞): Ինչո՞ւ վրա վստահելով ելեր քեզի ուրիշներն բարձր դասելու կաշխատիս և բոլորը վրադ կը խնդացունես:

Դուն քնանալը շատ կը սիրես. նույնիսկ գրելու ատեն կը քնանաս: Սիրտդ մաքուր չէ. աղտոտ ալ չէ, սակայն անգամ մը լվացվելու պետք ունիս: Մոտ օրերս փողոցը պեյի մը կամ էֆենտիի մը առաջ խոնարհություն ընելու ատենդ վերարկուդ վրայեդ պիտի իյնա, բայց դուն պիտի չիմանաս: Ուրիշ օր մըն ալ մեկուն գետնամած բարև տալու ատենդ ձեռքդ գետնին պիտի դիպցունես և արյունոտես: Մեկը դատ մը ունի, եթե վաստակի՝ քեզի քսան հինգ ոսկի պիտի տա, բայց այդ դրամեն օգուտ պիտի չի տեսնաս, վնաս պիտի տեսնաս: Ասոնք կարդալով՝ պիտի զայրանաս, բախտդ նայողի դեմ պիտի բարկանաս, և գրիչդ կտրելով... սոխ պիտի մաքրես:

Խեղճ ծերունի. դուն ցնդեր ես այլևս, հրաժարվե խմբագրութենե և կեղծավորությունդ շարունակե: Այս վիճակին մեջ ապրիլը քեզի պատիվ մի ծավորությունդ շարունակե: Այս վիճակին մեջ ապրիլը քեզի պատիվ մի համարեր հանդերձալ, այդ գնով ամեն մարդ ալ կրնա ապրիլ: Քսանչորս տարեկան ես, հարյուր տարու չափ ալ կրնաս ապրիլ, քեզի համար հարյուր հիսուն տարի ալ կրնաս ապրիլ, սակայն ուրիշներու համար հարյուր հիսուն տարի առաջ արդեն մեռած ես, պատվելի:

Էֆենտիս, քու աչքդ մեծ բանի վրա է. քիչ ստակով Բոշիլտի չափ դրամ վաստակիլ կուզես, սակայն ատանկ գործ չի մնացեր, պարապ տեղը միտքդ մի հոգնեցուներ, մեղք ես: Հանգիստ չունիս, գիշերները երազիդ մեջ քոնսոլիտ կառնես կը ծախես, շատ դրամ կը վաստակիս, բայց երբ կարթննաս, կը տեսնաս որ ձեռքդ բան մը չի կա, չարթննալու ճամբան գտնաս նե աշխարհքիս ամենեն հարուստ մարդը կրնաս ըլլալ. բան ու գործ թողած՝ գոնսիլիտով զբաղվելովդ մեծ սխալ գործեր ես. առջի բերան քիչ մը վաստկեր ես, – բարով խերով չի վաստկեիր – քոնսոլիտին գաղտնիքը գտա ըսեր ես, – բարով խերով չըսեիր – զքեզ աշխարհքիս ամենեն խելոք մարդը կարծեր ես – բարով խերով չի կարծեիր – ետքեն սկսեր ես վնաս կրել. վնաս ուղղեմ ըսելով՝ կրկին վնաս կրեցիր, վաստակիմ ըսիր՝ վնաս ըրիր, բաց ծախեցիր՝ վնաս ըրիր, գոց ծախեցիր նորեն վնաս ըրիր, մեջեն ծախեցիր՝ վնաս ըրիր, ժամացույցդ ծախեցիր՝ վնաս ըրիր, և տակավին վնաս ընելու վրա ես: Երբեմն երբեմն քսակիդ մեջ դուն քեզի կառնես ու կը ծախես, կը շահիս, միշտ քսակիդ մեջ եթե առնես ու տաս, վիճակդ աղեկ կըլլա, տղաս: Ինքզինքիդ հանվող և ուրիշներուն չի հանվող մեկն ես. խորհուրդ լսել չես սիրեր, եթե լսած ըլլայիր, ոչ հայելիներդ ծախելով քոնսոլիտի կուտայիր, ոչ ալ կնկանդ աղամանդները զրավի դնելով՝ վերստին ստանալու անկարողության կը մատնվեիր, խեղճ երիտասարդ...

Քու բախտդ շատ փայլուն էր, սակայն դուն չիմացար. մեղք քեզի... ատ մասին շատ հոգ մ'ըներ, հույսդ մի կտրեր, սակայն ոտքդ կտրե Գոմիսիոն խանեն և ուրիշ գործ մը սկսե. շատ դրամ պիտի վաստակիս: Մոտ օրերս ազգականներեդ մեկը՝ հարյուր տարեկան ծերունի մը հանդերձյալ աշխարհը պիտի երթա. մեծ ժառանգություն մը պիտի ստանաս, խելքդ գլուխդ բեր և ատ դրամն ալ Քոնսոլիտ խան տանելով մի՛ վատներ – կուզես նե ինձի տուր, պահեմ, ետքեն տոկոսովը առ – խանութ մը բաց և գործ մը սկսե: Եթե աս ըսածս ընես՝ մեկ երկու տարիեն մեծ մարդ մը պիտի ըլլալ – ազգիդ ալ մեծ օգուտ պիտի տաս:

Դուն կորուստ մը ունիս, ատ ալ խելքդ է. եթե ըսածներս ընես՝ աս կորուստդ պիտի գտնաս և ամբողջ կյանքդ հանգիստ պիտի անցունես:

Մոտ օրերս թեթև հիվանդություն մը պիտի ունենաս, բայց հոգ մ'ըներ, շուտով պիտի անցնի և մինչև իննսուն տարեկան՝ հանգիստ պիտի ապրիս:

Յավալի, զարմանալի գառնուկս, սիրտդ մաքուր մարդ մը ես, սակայն ազգդ մեկեն ի մեկ լուսավորել ուզելովդ՝ մեծ սխալ մը գործեցիր. եվրոպացիներուն այսքան տարիներե ի վեր աշխատելով՝ կամաց կամաց ձեռք բերած արդյունքները մեկ շաբաթեն մեզի սորվեցունելու աշխատեցար: Արդյոք եվրոպացիները հառաջադիմեր են նե՝ մեկեն ի մեկ դաշնակեն, երգեն կամ մարմնամարզութենե՞ն սկսեր են, թե կամաց կամաց ամեն բան սորվելով՝ ատ տեղերը հասեր են: Առանց ասոնք հարցունել, սորվելու՝ մեկեն ատ տեղերը հասնելու ելլելդ հանցանք էր:

Խոշապը, միրգը կամ որևէ քաղցրավենի փորը կշտացնելե ետքը սեղան կը բերվի, դուն ըսես՝ գաղիացիներուն սեղաններուն վրա ասոնք տեսած ըլլալով՝ կարծեցիր թե անուշեղենով մարդ կրնա կշտանալ և սեղանի վրայեն կերակուրի ափսեները մեկ կողմ նետելով՝ երախաներուն առջև անուշեղեն դրիր. երախա ըսածդ ալ անուշեղեն շատ սիրելուն՝ դաստիարակությունը ինչ անուշ բան է ըսելով՝ սիրով անուշի վրա ինկալ: Շատեր քու վրադ հարձակեցան, պոռացին, թե սխալ ճամբա ես բռներ, թե ճշմարիտ է որ միտքդ երախաները դաստիարակել է, սակայն տված դաստիարակությունդ օրինավոր չէ, դուն աս բոլորին ականջ չի կախեցիր, սխալ ուղղելու չ'աշխատեցար, և այսօր ալ պարապ տեղը ջանք կը թափես: Սակայն քանի որ այդքան աշխատասեր ես, հոգնիլ չի գիտես, կրնաս ամեն ինչ տակնուվրա ընել:

Մոտ ժամանակներս Ագապյան վարժարանը պիտի գոցես, ուրիշ վարժարան մը պիտի բանաս, սակայն ան ալ պիտի չի հարատև: Ժողովուրդին խորհուրդ տալու ժամանակդ քիչ մը անվայել ու խիստ լեզու գործածեցիր և շատերը զայրացուցիր:

Տեղե մը դրամ կը սպասես: Հոգ մ'ըներ. ատ դրամը պիտի գա, բայց ասոր անոր պիտի բաժնես և ձեռքդ բան մը պիտի չի մնա: Գրասենյակդ գող մը պիտի մտնա, գանձանակդ պիտի բանա, սակայն մի վախճար, գանձանակդ պարապ գտնելով ետ պիտի դառնա: Քեզի հարուստ տեղե խարտույկ աղջիկ մը կուտան՝ չես առներ: Լավ կընես: Տեղ մը չես կրնար մնալ: Մանավանդ երբ պարտատերդ գա՝ սենյակդ չես ըլլար: Քնանալը շատ կը սիրես: Հոգեպարար երաժշտութենե շատ կախորժիս:

Քիչ մը պարտք ունիս, այդ մասին կը մտածես: Հոգ մ'ըներ: Հիմա առանց պարտքի մա՞րդ կա: Պարտք ըսածդ հերոսին մտրակն է, կըսեն:

Առանց մտրակի հերոս չ'ըլլար: Սակայն քու մտրակներդ քիչ մը շատ են. ինչ ընենք: Հերոսություններդ ալ քիչ չեն:

Քառասուն տարի ետքը գործերդ կարգի պիտի գան, և ութսուն տարիեն քանի մը փարայի տեր պիտի ըլլաս, որովհետև քու աստղդ թե՛ փայլուն է, թե՛ պոչավոր: Նայե, որ պոչը ձեռքդ չի մնա:

Հինգ տարիեն միջին հասակով, երկար քիթով, կարճ մազով աղջկա մը հետ պիտի ամուսնանաս. այս ամուսնութենեն տասներկու զավակ պիտի ունենաս. կեսը տղա, կեսը աղջիկ: Տղաներեն երկուսը լարախաղաց, երկուսը երաժիշտ պիտի ըլլան: Երկուքն ալ պարապ պիտի պտըտին: Աղջիկներեն մեկը դաշնակ զարնող, մեկը բանաստեղծ, մեկը դերասանուհի, մեկը բժիշկ, մեկը դեղագործ, մեկն ալ հիվանդ պիտի ըլլա: Հարյուր տասը տարի ապրելէդ ետքը հանդերձյալ աշխարհի պիտի երթաս և զավակներուդ մեծ ժառանգություն մը պիտի թողուս՝ քսան հազար ոսկի պարտք: Ահա, բարեկամս, քու ճակատիդ գիրը ասիկա է: Սորվե որ հետո չըսես թե չգիտեի...:

«ՓՈՒՆՁԻՆ» ԲԱՆՏԸ

Ա իմ աղվոր պուպրիկս նագելի պուպրիկս ստախոս պուպրիկս: Դուն ինձի համար խափանվեցավ՝ ըսիր, բայց ես չի խափանվեցա: Անուշիկս, քու սիրտդ ամուրի մարդու ճերմակեղենի կը նմանի՝ աղտոտ է, նախանձոտ է: Թերթ մը փակվածին պես՝ կուրախանաս, հայելիին առաջը կանցնիս, կը զարդարվիս, որպեսզի բոլորը քեզի նային ու հետաքրքրվին, սակայն ուրախությունդ պարապը կանցնի: Ոչ մեկը երեսդ չի նայիր քանի որ սիրվելու բան մը չունիս, պուպրիկս: Չնով մը գործդ կարգավորեր ես: Թերթդ նպարավաճառներուն կը ծախես, ստացած դրամդ կը ծախես: Հայտնի ալ չես ըներ: Ողջ ըլլա թերթդ, ազգին ալ կը ծառայե, նպարավաճառին ալ. անոր ավելի մեծ օգուտ կուտա: Քեզի ճարտասանի մը տեղը դրեր ես և կուգես որ ճարտասանությամբ դրամ վաստակիս. «ուր ուրեմն», «իզուր ուրեմն», «ոք ուրեմն», «ու՛ֆ ուրեմն» ըսելով՝ քաղաքականության հորիզոնը կը սավառնիս: Այդ հորիզոնը երբեմն ամպոտ կը տեսնաս, երբեմն լուսավոր, երբեմն մութ, երբեմն ալ բոլորովին չես տեսնար, ավիտս, քաղաքական հորիզոնն ալ ծաղր ու ծանակ ըրիր. թերթդ առնողներն ալ անոր հորիզոնին վրա կամ ձիթապտուղ կը տեսնան, կամ քաշեր պանիր, որովհետև թերթդ նպարավաճառեն կառնեն...

Քեզի շատ հավնած ես և ոչ մեկուն խոսքը չես լսեր: Քանի քանի անգամ ըսին, որ դուն թերթ կարդալու կարողություն ունիս, բայց խմբագրելու չունիս: Այս գործեն հրաժարվե, սակայն դուն չի լսեցիր և ժողովուրդը վրադ խնդացուցիր: Մեղքը որո՞ւնն է: Կը կարծես թե կարողություն ունիս, սակայն մարդիկ սուտ կը խոսին և քեզի խաբելու կաշխատին: Ափսոս երիտասարդությամդ, որ խոսք չի լսելով՝ բոլորի ծաղրանքին առարկա կըլլաս: Քանի մը բաժանորդ մեկ երկու հարյուր դուրուշդ կուգեն ուրանալ և կլլել, սակայն պիտի չի կրնան. կոկորդնին պիտի մնա: Մեկը քեզի հետ նստած գինի խմելն ետքը ուրիշներուն քով զքեզ կը ծաղրե, վրադ կը խնդա. անկե զգուշացիր: ... Արժեքդ չես ճանչնար, սիրունս, մեղք քեզի: Դուն թերթեդ օգուտ պիտի չի տեսնաս՝ թերթդ ալ՝ քեզմէ: Կրցա՞նք հասկցունել, թանկագինս: Երբեմն երբեմն մեծ երազներ կը տեսնաս. թերթդ «**Թայնզի**» կամ շրջագետտիդ չափ մեծցած կը տեսնաս, ծովի ավազի չափ բաժանորդ կերագես: Այս զառանցանքներեն հրաժարվե, որպեսզի տրամադրությունդ չավրես:

Քնանալը շատ կը սիրես, տասնըհինգ ժամ կը քնանաս, գլուխդ քիչ մը թմրած է նե՛ պատճառն այդ է, հոգ մ'ըներ: Ասկե առաջ **Օրագիր** անունով սիրական մը ունեիր, սերդ դրժեց ու լքեց զքեզ:

Հինգ տարի չանցած՝ պիտի ամուսնանաս, երկու տարին արու զաված մը պիտի ծնիս, սակայն կաթդ պիտի ցամքի և զավկիդ կովի կաթ պիտի տաս: Աս տղադ ալ մեծնալով քեզի պես խմբագիր պիտի ըլլա: Այս օրերս ժամ երթալով **Թասպրոնին** խափանման համար մոմ կը վառես, եթե փակվի օ՛խ, պիտի ըսես, մեղք դրամիդ: Քիչ ատենեն խմբագրությունը պիտի թողուս. վերջդ բարի է, սակայն շատ դրամի երես պիտի չի տեսնաս, և անթոթքեն մեռնելու վիճակի մեջ պիտի ապրիս մինչև ինձսուներ ինը տարեկան ըլլալդ: Մնաք բարով:

ՀԱՅՐ ԷՆՖԻԱՆՅԱՆԻՆ ԲԱՆՏԸ

Էֆենտիս, հոգիս, քեզմէ լավը չի կա: Թիկունքդ անկյունի մը տված հանգիստ ժամանակ կանցունես, կը կարծես թե դարմանի տակեն ջուր հոսեցնելդ մարդ չի գիտես. կը սխալիս, հիմա մարդիկ գոց նամակները անգամ կը կարդան:

Բախտդ անանկ ցույց կուտա, որ դուն թերթի մը խմբագրության մեջ ծածուկ կաշխատիս քեզի գաղափարակից գեր մարդու մը հետ, և ասիկա ալ գործդ առաջ տանելու համար կընես, խելքովդ կուգես Անտոնյան միաբա-

նությունը քու միաբանութեանդ ենթարկել, աս ցանկութենեդ հրաժարե, պարապ տեղը աղմուկ հանելու առիթ մի՛ տար: Մեծ մարդ մը քեզի շատ բարիք ըրած է, բայց սիրտդ հանգիստ չէ, որովհետև ասկէ առաջ ատ մեծ մարդուն դեմ գրած նամակդ հիմա մեջտեղ ելլա նե վիճակդ գեշ պիտի ըլլա. աս մասին կը մտածես:

Բախտդ անանկ ցույց կուտա որ այդ նամակին թիվն ալ հայտնի է, սակայն անոր **Թարրոնին** մեջ հրատարակվելու կամ չի հրատարակվելու մասին բախտդ խոհեմութեամբ լռութիւն կը պահես: Ատ մեծ մարդուն ձեռքը որպէս զենք կը գործածվիս, զնդակը կը լեցնես, ժողովին մեջ բլթակեն կը սղմես, եթե ատ զենքը օգտակար գործի մը ծառայեցնես ավելի լավ կընես, սիրուն: Մտքեդ մեծ մեծ պաշտոններ կանցունես, և պարապ տեղը միտքդ կը հոգնեցունես: Ամեն ինչ ժամանակ ունի, գեր բարեկամիդ վստահելով օղին մեջ տան հիմք դնելու մի աշխատիր: Հետո ատ մարդուն բոլոր ըսածներուն ականջ մի կախեր, որովհետև սալեպճիի ջրի սափորի պէս՝ մեջը կրակ կը վառի, բերնեն մեղր կը ծորի: Ատ մարդը իրարմէ բաժնված հատվածները միացնեն ըսելով այսօր կուսակցութիւն մըն ալ ինքը ավելցուցեր է: Հետո անիկա անխելքին մեկն է, միմակ բարեկամներուն քովը փիլիսոփա ճանչցված է: Լրագրական ասպարեզ մտնելուն պէս հայհոյողներուն մեծը պիտի դառնա, զգուշացիր անկէ: Քու սիրտդ մեկ կողմը շիտակ, մյուս կողմը օձի պէս թունավոր է, բավական ժամանակ է որ սիրտդ օձային կողմով կը գործես: Հրաժարվե ատկէ: Քնանալը ոչ կը սիրես, ոչ ալ չես սիրեր: Սովորութիւն մը հարգած ըլլալու համար քիչ մը կը քնանաս: Միջահասակ, երկար դեմքով, սև պեխերով, կապույտ աչքերով, դեղին մորուքով, ճերմակ մազերով մարդու մը հետ մոտերս քիչ մը պիտի ավրվիք, շատ չանցած ան մեծ մարդն ալ քեզմէ պիտի պաղի, սակայն հոգ մ'ըներ, ձեռքեդ ինչ կուգա: Քիչ մը ժամանակ անցունելէն ետքը քու միաբանութիւնդ Անտոնյան միաբանութեանը ենթարկել ուզող թերթի մը խմբագրութիւնը ընել պիտի ուզես, բայց պիտի մերժվիս, ի վերջո երկու միաբանութիւններէն ալ ձգելով քեզ ու քեզ միաբանութիւն մը պիտի ըլլաս: Աստված ողջութիւն տա: Ինչ ըլլալու ես նե՝ ահա քեզի իմացուցի, չի լսեցի՝ չըսես բռնած ճամփեդ փոխես և բոլորը քեզի թշնամի մի ըներ: Առողջութիւն:



ԹԱՏՐՈՆԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ



Աղա,

Քեզմէ լավը չի կա, գործերդ կարգի դրած՝ թիկնած բազմոցիդ՝ քեֆիդ կը նայիս: Չքեզ ժողովուրդին աստվածավախ, բարեպաշտ կլլեցնելով՝ ասոր անոր հոգին կրակի կուտաս: Հացագործին իրավունք կը կտրես, ջրկիրին դրամը կուտես, կուրանաս, չես տար: Խեղճը եթե դռանդ մոտ քիչ մը սպաս

սես և դրամ ուզես, գլուխդ պատուհանէն դուրս կը հանես ու մարդը կանապատվես: Պատիվդ արատավորած լինելու ամբաստանութեամբ ոստիկանութեան հանձնել կը սպառնաս: Փողոցը աղքատ մը տեսնաս նե՝ իբր թե խղճմտանքդ կը շարժի և հինգ տասը փարա տալ կուզես: Բայց իբր թե դրամդ մանր չըլլալուն՝ այնտեղէն անցնողներէն տասը փարա կառնես, աղքատին կուտաս: Սակայն հետո տասը փարան տիրոջը չես տար: Աս ու ան խաբելով՝ ուրիշներուն ողորմութիւն կընես:

Քու այս ըրածներդ տեսնելով՝ և չի կրնալով համբերել, անցյալները սրճարանի մը մեջ զքեզ երկար բարակ քննադատեցի, սակայն զղջացի: Բոլորը զքեզ պաշտպանել սկսան. «աղան սանկ լավ մարդ է, ազգին օգուտ կուտա, ազգային կարգ մը գործերու մեջ եռանդով կաշխատի» ըսելով՝ ձեր վրան փոշի չի ձգեցին: Կեցցես ի՞նչպէս ալ կրցեր ես այդ մարդոց զքեզ սուրբ կլլեցնել ու գործդ առաջ տանիլ: Սակայն եթե ինձի կը սիրես, եթե ինձի քու բարեկամդ կը համարես, այդ ճամբեդ հրաժարե, որովհետև այդ մոմը մինչև մայրամուտ կը վառվի. հետո ամեն բան մեջտեղ կելլա, Մեղք ես:

Համրիչիդ հատիկները հաշվելով՝ ասոր անոր դրամը մի ուրանար, մարդոց իրավունքը տուր կարգ մը որբերու դրամը մոտդ է, ատոնք մինչև հիւրոց իրավունքը տուր կարգ մը որբերու դրամին իրենց տուր, օճախ մարտդին մա պահել հերիք է, որբերը մեծցան, դրամին իրենց տուր, օճախ մարտդին օճախը չի վառվիր: Դուն ուրիշ մեղք մըն ալ ունիս. օրինակ՝ մեկը զավակ չունենալով՝ իր տունը քու վրադ գրած ըլլալով՝ հիմա կուզես որ այդ տան տերը դառնաս:

... Աղա, ինձի խոսեցնել մի տար, քու ինչ ըլլալդ ես շատ լավ գիտեմ, մար-

դու մը երեսը նայածիս պես՝ անոր ինչ ըլլալը աստուծով կը հասկնամ: Ինչ ալ ըլլա, տված խորհուրդներս լսե, աշխատե կատարել: Վերջո բարի կըլլա: Առայժմ ողջ եղեք:

ԹԱՏՐՈՆ

Տիկին,

Ձեզի չափն ավելի պճնանքի տված ըլլալնիդ անցյալները գրեր էի, անշուշտ շատ բարկացած ըլլալու ես որ այս անգամ ինձի դրկած նամակիդ մեջ հանդիմանություն, անեծք չէիր թողեր, թափեր էիր գլխուս:

Կնիկներու խոսքին շատ ալ կարևորություն տալու և բարկանալու սովորություն չունիմ, սակայն ձեր խոսքերին մեկ քանին արժանապատվության դիպած ըլլալով՝ այս անգամ քիչ մը բարկացա: Ամեն բան կը ներեմ, բայց զրպարտությունը չեմ ներեր:

Գրածիդ նայելով՝ իբր թե տեղ մը ետևես ըսեր ես. «Այս ի՞նչ թմրած, մոլորված մարդ է»: Եվ իբր թե քու այս խոսքերդ ալ մեկ ինձի իմացուցեր ատոր համար վրեժ եմ լուծեր և պճնամոլությունդ ծաղրեր եմ: Իբր թե եթե ինձի մարդու տեղ դրած՝ բարև մը տված ըլլայիր՝ զքեզ ոչ միայն պիտի չի ծաղրեի այլ պիտի գովեի:

Ենթադրենք թե ըսածներդ ճշմարիտ են, սակայն իմ թմրած, մոլորված ըլլալս կրնա՞ն քու չափեն ավելի պճնամոլությունդ առաքինության փոխել. հետո՞ կնկան մը մեկ բարևը իմ կարծիքս փոխելու չափ զորավոր կրնա՞ր ըլլալ, որպեսզի պճնանքդ քննադատելու տեղ զքեզ գովեի:

Ինչո՞ւ կը բարկանաս, տիկին, պճնամոլությունը պարկեշտություն չէ, ամեն օր նոր զգեստ կարել տալը ամուսնու դրամական հաշիվները տակն ու վրա ընել է, ուզած կերպասդ չառնելուն համար շաբաթներով ամուսնուդ հետ կռվիլը խելացի կնոջ գործ չէ:

Եթե քեզի մնա՝ կուզես օղիի շիշն ալ սեղանիդ դնել՝ ամեն իրիկուն գվարճանալ, նվագել, երգել: Եվ երբ ասոնք կը գրեն, կելլաս ինձի կարգ մը ծանր խոսքեր կընես: Ափսոս որ ինձի մնան ճշմարտախոս մեկուն խոսքերը լսելու, ճամբադ փոխելու տեղ՝ զիս կը զայրացունես:

Տիկին, լեզուդ քեզի քաշե, ես ոչ թմրած եմ, ոչ ալ մոլորված. եթե ըլլամ ալ՝ ատիկա քեզի չի վերաբերիր: Դուն նայե որ սա գեշ սովորութենեդ ետ կենաս, երեխաներուդ նայիս:

Ասոնք քեզի իմացունելով՝ և այսքանով նամակս վերջացնելով, մնամ հարգանքով՝ **ԹԱՏՐՈՆ**

ԼԵՌԸ ՄԱՐԳԱՐԵՒՆ ՔՈՎ ՉԵՐԹԱ ՆԵ ՄԱՐԳԱՐԵՆ ԼԵՌԱՆ ՔՈՎ ԿԵՐԹԱ



– Նիկողիմոս աղա, այս տարի ինչ է պատահեր, ամեն իրիկուն սուարե կերթաք կոր:

– Ինչ ընենք եղբայր, հիմա ամեն բան պաֆրանկայով կըլլա. տունը նստիլը քաղաքակրթության դեմ է եղեր. մարդ ըսածդ պտըտելու, պարելու է եղեր:

– Ատանկ է, բայց ասոնք քու ընելիք բաներդ չեն: Դուն տունը հանգիստ նստելու ես. շատ ծեր չես համարվիր, սակայն կարծեմ յոթանասունի մոտ ես:

– Այո, յոթանասուն ալ չըլլա՞ մոտ է:

– Է գոնե կրնա՞ս գվարճանալ:

Թըք, թըք, թըք...

– Անթրե:

– Անտրեն ով է, Նիկողիմոս աղա:

– Անթրե ըսելը՝ մտեք ըսել է. սուարեներուն մեջ շատ կը գործածվի: Ի՞նչ կա, մատամ, մա՞րդ եկավ:

– Ոչ, մարդ չեկավ, մյուսյու Բոլը բարև է ըրեր, աս գիշեր սուարե պիտի տա եղեր: Կը խնդրե որ մատամին և մատմազելներուն հետ բարեհաճիք ներկա ըլլալ:

– Մա ծխամորճս քեր տեսնանք. մատմազելները պատրա՞ստ են:

– Մատմազել Ֆիլոն դրացի մյուսյու Անթուանի հետ թուղթ կը խաղա, մատմազել Մարին սինյոր Նիքոլայի հետ կը պարե կոր, մատմազել Աննիկն ալ անկողիներն նոր ելավ, կը լվացվի կոր:

– Մատմազել Մարթա՞ն ուր է:

– Մատմազել Մարթան, անցյալ շաբաթ, մյուսյու Գասպարին հետ բուքա խաղալու ատեն փորձանքի է հանդիպեր, երբ խաղին պահանջին համաձայն մյուսյու Գասպարը անոր մեջքը քիչ մը ամուր սղմեր է, խեղճին մեջքին ոսկորը տեղեն ելեր է:

– Բուքայի փորձանքներեն մեկն ալ ատ է:

– Ի՞նչ ըներ խեղճ աղջիկը քավալիեին կրնա՞ր ըսել թե մեջքս մի բռներ:

– Բայց քավալիեն ալ տամային մեջքը կտրելու չէր, ինչ որ է, թող պատ-

րաստվինք տե երթանք, սա վերարկուս, լապճիներս բերեք: Ամբակում աղա դուք ալ հրամանեցեք:

- Ներեցեք, ես սուարեի մարդ չեմ: Մնաք բարով:
- Օրը վուառ, Ամբակում աղա:
- Քա մատնազել Մարի, խըչըխըս ո՞ւր է:
- Ֆիլո, բուտրայիս տուփը ո՞վ է առեր:
- Բարամանան է առեր և ամբողջ երեսը ծեփեր է:
- Ծո Պողոս, Նիկողիմոս աղային լապճիները բեր:
- Մայրիկ, հայրիկիս բանթալոնը տուր որ ինձի խըչըխըս ընեմ:
- Պատրաստվեցա՞ք աղջիկներ:
- Կը պատրաստվիք կոր, հայրիկ, հիմա կը վերջացնենք, դուն քիչ մը ծխամորճ քաշե. հիմա կուզանք:
- Թորոս, սա էնֆիեին տուփին մեջ քիչ մը էնֆիե դիր, տուր մատամին, որ մեջը քանի մը կաթիլ լավանթա կաթեցունե, հետո բեր:
- Աման Նիկողիմոս աղա, սուարեի մեջ էնֆիե կը քաշվի՞. աշխարհքիս առաջ խա՞ղք պիտի ըլլանք:
- Ալաֆրանկայի մեջ էնֆիե կա, գաղղիացիները քիթերնին էնֆիեի տուփին մեջեն դուրս չեն հաներ: Եթե դեմ է ալաֆրանկային, վազ կանցնիմ, քքի մը պատճառով ալաֆրանկայեն ետ չեմ ըլլար:
- Հարկավ, հարկավ, ժամանակներուն հարմարվելու է:
- Լեռը մարգարեին քովը չերթա նե՝ մարգարեն լեռան քովը կերթա... կը-սեն, մատնազելներ, պատրա՞ստ եք:
- Պատրաստ ենք... կը պատրաստվինք կոր... պատրաստվելու վրա ենք... հայրիկ, քիչ մըն ալ նարգիլե քաշե, հիմա կուզանք:
- Քա Աննիկ, առ այս կարմիրը մայրիկին տար, բայց անանկ ըրե որ հայրիկը չի տեսնա:
- Մատնազելներ պատրա՞ստ եք:
- Պատրաստ ենք, կըլլանք կոր:
- Թորոս, սա լապտերին մոմը վառե:
- Հիմա:
- Հայտե, ելեք նայինք:
- Քա տուտու, լաստիկներս ո՞ւր է:
- Մարի քալոշներս ո՞ւր է:
- Քա քիչ մը ան կողմը գնա, երեսիս քավեցար, բութրաս ամբողջ թափեցավ: Ծո Թորոս, գնա վեր, բութրային տուփը բեր:

- Տակավին չի պատրաստվեցա՞ք:
- Պատրաստվեցանք, ճանըմ, կը պատրաստվինք կոր...
- Մատնազելները եկա՞ն, մատամը ո՞ւր է:
- Մատամը գործ ունի, հիմա կուզա. ահա եկավ:
- Քալեցեք նայինք:
- Թորոս լապտերը աջ կողմդ բռնե:
- Թորոս ձախ կողմը բռնե, որ մենք ալ տեսնանք:
- Թորոս, սանկ բռնե որ ես ալ տեսնամ:
- Բրաֆֆ...
- Քա հայրիկը ցեխը ինկավ...
- Նիկողիմոս աղա, աստուծով՝ բան մը չեղար:
- Ըհ, ըհ, ըհ...
- Հայրիկի վերարկուն ամբողջովին ցեխոտվեր է:
- Ելիր հայրիկ, ինչո՞ւ պառկեր ես:
- Լապտերը աջ բռնե, ձախ բռնե, սանկ բռնե ըսիք, ինձի ասանկ ցեխը ձգեցիք: Թորոս, եկուր, լապտերը հիմա ալ ցեխին մեջ բռնե:
- Աման Նիկողիմոս աղա, ոտքեդ գլուխ ցեխոտեր ես. հիմա ինտո՞ր պիտի մաքրենք ատիկա: Քալելու ատենդ առաջդ չի նայեի՞ր:
- Հայրիկ, ինտո՞ր եղավ որ ինկար:
- Աննիկ, հայրիկին ձեռքին բռնե որ ոտքի ելլա. Մարի, դուն ալ ետևեն հրե, Թորոս դուն ալ չօգնե՞ս. աղատ ցեխն է ինկեր:
- Բըրթ...
- Ծո Թորոս, ինչո՞ւ կը խնդաս. խեղճ մարդը ցեխը ինկեր է, չի կրնա ելլալ, դուն կը խնդա՞ս:
- Խնդալու բան մը չի կա... Բըրթ... ես չեմ խնդար... բըրթ... խընդալու ի՞նչ կա:
- Քիչ մըն ալ դուն ջանք թափե, Նիկողիմոս աղա, որպեսզի ելլաս:
- Կնիկ, գիս կը ծաղրե՞ս, ինտո՞ր շարժվիմ, արդեն հազիվ կը քալեի. հիմա վրաս երեք հարյուր օխա ցեխ կա, ի՞նչպես ելլամ:
- Անանկ է նե մինչև առտու հոս պառկե:
- Թորոսը ձեզի տուն թող հասցնե, կառք մը վարձե, բերե:
- Տեր ողորմյա, խոսք տվինք թե կուզանք. չերթալ կըլլա՞: Գիտե՞ք ինչ մեծ ամոթ է ատիկա ալաֆրանկայի մեջ:
- Ալաֆրանկան ցեխին մեջ պառկելը ամոթ չի՞ սեպեր:
- Աման հայրիկ անանկ բան մը ըրկիր քի... սուարեեն ուշացանք, քատ-րիլը արդեն սկսեր են:

– Նիկողիմոս աղա չ'ըլլար: Մենք Թորոսին հետ սուարե երթանք, ետ գալու ատեն քեզի կառնենք կը տանինք: Հիմա չերթալը մեծ ամոթ պիտի ըլլա, ան ալ շատ մեծ ամոթ:

– Մեր բախտեն է քա Աննիկ, ուրիշ հայրիկներ այժի պես կը ցատկեն, չեն իյնար, ան ինչ անիծյալ ժամ էր որ մեզի հայր եղար տե հիմա ալ ասանկ ցեխը իյնալով՝ մեզի սուարենն ետ կը թողուս...

– Նիկողիմոս աղա, ալ մենք երթանք, աշխարհքիս առաջ խաղք ու խայտառակ չըլլանք. խոսք տվինք, ժամը 9–ին հոն պիտի ըլլանք, ինչ ընենք, ժամանակի ոգուն հարմարվելու է:

– Շիտակ է, հարմարվելու է:

– Դուն հոգ մըներ, երթալնուս պես Թորոսը կուղարկենք, կառք մը կը բռնե, քեզի տուն կը տանի, վրադ գլուխդ կը փոխե, կը բերե սուարե:

– Շատ աղէկ:

– Սակայն կաղաչեմ, հոգ մըներ, սիրտդ հանգիստ պահե:

– Հանգիստ չի պահելու պատճառ մը չի կա:

– Ոտքդ պագնեմ, հեջ մի մտածեր:

– Ճանըմ, մտածելու ի՞նչ կա:

– Մենք Թորոսը հիմա կուղարկենք. հայտե, աղջիկներ, քալեցեք:

– Հայտե, երթանք:

2.

– Վայ տիկին, դո՞ւք ալ մեր տունը կուգաք եղեր:

– Ինչո՞ւ պիտի չի գանք:

Վայ մատմազել Մարի, մատմազել Աննիկ, հրամմեցեք, ձեր թևը ձեր ծառային շնորհելու պատիվը կընե՞ք, որպեսզի վեր ելլանք, հոգնած կը տեսնամ զձեզ:

– Մյուսյու Բոլ, մատմազել Մարիին թևը մտիր:

– Նիկողիմոս աղան ո՞ւրէ, կերևա թե մենն չ'ախորժիր...

– Չենն ո՞վ չ'ախորժիր, մատամ: Նիկողիմոս աղան ալ կուզեր գալ, սակայն քիչ մը պառկիմ ըսավ, քունն ալ շատ ծանր ըլլալով՝ չի կրցավ ելլալ: Թորոսը հիմա պիտի երթա բերե:

– Միկարանիդ վառեցեք, մատամ:

– Մատմազել հոտ անհանգիստ կըլլաք, եթե կուզեք՝ սաքոնիդ հանեցեք, հանգիստ նստեցեք:

– Ոչ, մյուսյու Բիերին մոտ հանգիստ եմ:

– Ճանըմ, Նիկողիմոս աղան ինչո՞ւ չեկավ:

– «Այս ո՞վ է այսպես կը քանդե հոգիս... հոգիս...»:

– Մյուսյու Անթուանն է. նորեն ձայն ձգեր է գլուխը՝ կերգե:

– Թող ողջ ըլլա տե թող երգե:

– Տարօրինակ սովորություն մը ունի կամ կերակուր պիտի ուտե, կամ երգե, կամ բոլբա, վալս պարե:

– Թող ողջ ըլլա տե թող պարե:

– «Ժը սյուի մորի տը լարենը, բիտը լարենը, բիտը լարենը, բիտը լարենը, բիտը լարենը»:

Չաթ, չաթ, չաթ, չաթ:

Աս ի՞նչ վայրենի ձևով դուռ զարնել է:

Չաթա չաթա, չաթա չաթա, չաթ...

– Ով որ է՝ էշի պես մարդ մը ըլլալու է...

– Օ, հրամմեցեք, Նիկողիմոս աղա:

– Կը ներեք, տիկին, չի գիտցա թե ձեր ամուսինն է, եթե գիտնայի, ատանկ գեշ ընդունելություն չէի ըներ:

– Վնաս չունի, ճանըմ:

– Հրամմեցեք, Նիկողիմոս աղա, սանկ հանգիստ նստեցեք, փորձանք մեր եղավ. ներողամիտ եղեք:

– Վնաս չունի:

– Երբեմն մարդ կը սխալի:

– Ճանըմ ձեզի ի՞նչ եղավ, ինչ որ եղավ ինձի եղավ:

– Ատանկ է, բայց շիտակը ինձի ալ քիչ մը դիպավ. այսքան ժամանակվա բարեկամներ ենք. ինչո՞ւ այս իրիկուն մեր տունը գալու ատեն պատահեր.

ես ալ, ամուսինս ալ ամոթով մնացինք:

– Ամոթով մնալու ի՞նչ պատճառ կա:

– Ո՞վ ըլլա չի մնար:

– Հա, երկու ժամ ցեխի մեջ պառկիլ...

– Ի՞նչ ցեխ:

– Ատ մասին չէ՞ր ձեր խոսքը:

– Ինչո՞ւ մասին:

– Ցեխի մեջ իյնալուս մասին:

– Վայ, ցեխի մեջ ինկեր եք:

– Հապա քու հուզվելուդ պատճառը ի՞նչ էր:

– Դուռը քիչ մը ուժով զարկիք նե՛ աս ի՞նչ անկիրթ մարդ է, ըսի, ամա դուն ըլլալդ չէի գիտեր, գիտնայի նե չէի ըսեր...

– Երբեմն մարդ կը սխալի:

– Այո, ատանկ է:

– Թորոս, սա ծխամորճիս համար կրակ մը բեր:

– Աման, Նիկողիմնոս աղա, սա ցեխը իյնալդ անգամ մը պատմե տե լսենք, ով գիտե ինչ զվարճալի բան է եղեր. հա, հա, հա...

– Մատամ, կամաց խնդա, սենյակը կը ցնցես կոր:

– Հա, հա, հա:

– Թորոս, եկուր սա լապճիներս քաշե տե մուճակներս տուր:

– Նիկողիմնոս աղա, լապճիները ի հանեք. մուճակով բուքա կը խաղցվի՞:

– Մատամ, շատ աշխատեցա բուքա սորվիլ, բայց չի կրցա, ոտքերս չի վարժվեցան, երկու–երեքի մեջ կը շփոթիմ, ծերությունն ալ կա հարկավ, ատոր համար ինձի հարմար տամա մը չեմ կրնար կոր գտնել: Մատամ, դուք կը հաճի՞ք ինձի տամա ըլլալ:

– Կիրակոս, Նիկողիմնոս աղային ծխամորճին համար կրակ մը բեր:

– Ի՞նչ ըսիք, մատամ, ինձի տամա կըլլա՞ք:

– Թորոս, Նիկողիմնոս աղային էնֆիտի տուփը բեր:

Մատամ, ես ինչ կըսեմ, դուք ինչ կը պատասխանեք, կուզե՞ք ինձի տամա ըլլալ, ատ կը հարցունեմ:

– Կիրակոս, Նիկողիմնոս աղային առանց շաքարի սուրճ մը բեր:

– Մատամ, բուքայի ատեն կրնա՞մ զձեզ որպես տամ...

– Նիկողիմնոս աղա, հանգիստ նստեցեք, ոտքերնիդ ծալեցեք, որ չի մսին:

– Ոտքերուս համար ձեր ցուցաբերած հոգատարութենեն շատ շնորհակալ եմ, սակայն կուզեմ գիտնալ՝ ինձի տամա ըլլալ կուզե՞ք:

– Է, ալ ինչ կա չի կա նայինք. Նիկողիմնոս աղա:

– Չեզի տամա...

– Կը ներեք, Նիկողիմնոս աղա, ստիպված եմ զձեզ միմակ թողուլ ու քիչ մը սալոն ելլալ...

– Ես ալ սալոն կելլամ, մատամ:

3.

– Հայտե, մատմեզելներ, մատամներ, մյուսյուններ, պատրաստվեցեք քատրիլի:

– Ամեն քավալիե իր տաման, ամեն տամա իր քավալիեն թող առնե, գա:

– Մյուսյու ժորժ, դուն ինձի վիզավի եղիր:

– Մատմազել Աննիկ, դուն ալ ինձի տամա եղիր:

– Նիկողիմնոս աղա, դուն ալ հոս նստե, որ լավ տեսնաս:

– Պատրա՞ստ եք, մատմազելներ, մատամներ, մյուսյուններ:

– Այո:

– Սկսինք:

– Օն:

– Լաթերնան ո՞ր է:

– Ծառան չի գնա՞ց լաթերնա բերելու: Սա ծառան կանչեցեք:

– Մարկոս, Մարկոս:

– Հրամմեցեք:

– Ծո մենք քեզի լաթերնայի չի դրկեցի՞նք:

– Դրկեցիք:

– Չի գացի՞ր:

– Գացի:

– Չի բերի՞ր:

– Չի բերի: Մեկ երկու անգամ եկեր է, բաց ստակ ստացած չըլլալով՝ չեկավ: Ես պարտք չի տվողները զվարճացնելու ժամանակ չունիմ, ըսավ:

– Մի բարկանաք մատամ, ատոնց հետ զլուխ ելլալ չ'ըլլար:

– Անոնք անկիրթ մարդիկ են:

– Անկիրթ ըլլալնին անկե հայտնի է որ դրամ կուզեն:

– Աման, լաթերնան ալ բան է. բնավ չեմ ախորժիր սա լաթերնայեն, մարդուս զլուխը կը ցավցունե:

– Ես ալ չեմ ախորժիր: Աղջիկները թերրալամ թող ըսեն, թող պարեն...

– Հայտե:

– Թերրալա, թրիալա, թրիլալա, թրիլա...

– Ան ավան քաթըր...

– Ա ճանըմ, գաթըր ջորի կը նշանակե:

– Նիկողիմնոս աղա, դուն սխալ հասկցար: Գեշ բան մը չէ ատիկա:

– Շեն տը տամ... ա կոշ ա տրոսք:

– Թայլայլա, թայլայլա, թալալամ, թամ թիլալա թալա...

– Ի՞նչպես է Նիկողիմնոս աղա:

– Չէ, ինձի նայե, ես դյուրին դյուրին խաբվողներեն չեմ, հասկացա՞ր, կնիկ, դուն պիտի չի պարես, եկուր քովս նստե:

– Ճանըմ ի՞նչ եղավ, թող պարե, հարմա՞ր է որ քավալիեն մինակ թողու տե նստի:

– Չեմ ուզեր, կնիկ, քեզի կըսեմ տեղդ նստե:

– Ի՞նչ կա ի՞նչ եղավ:

– Ի՞նչ պիտի ըլլա, չեմ ուզեր ըսի, վերջացավ:

– Նիկողիմոս աղա, ոտքդ պագնեմ, թող աս բարթին վերջացնե:

– Ես բարթի մարթի չեմ գիտեր... սըվոր նեյե անգամ մը, մարդավարի պարեն նե չ'ըլլար, քավալիե է ինչ ատ սրիկան...

– Ճանըմ, տղան ի՞նչ ըրավ որ...

– Ի՞նչ պիտի ընե, շարունակ կնկանս ձեռքը կը սղմե:

– Քա մեղա, ինչ հին գլուխ մարդ է եղեր... գոնե տղուն միտքեմ բան մը անցած ըլլա, ասանկ ալ զրպարտություն: Նիկողիմոս աղա, պարապ տեղը միտքդ մի պղտորի. քատրիլի մեջ մարդու մտքեմ հեչ ատանկ բան կանցնի՞: Քավալիե է, հարկավ տամային ձեռքեմ ու մեջքեմ պիտի բռնե, պարելու օրենքը ատանկ է:

– Ուրեմն ալաֆրանկայի մեջ ատիկա ամոթ չէ:

– Չէ, հարկավ չէ, դուն չես գիտեր, ատոր համար կը բարկանաս, եթե քատրիլը վերջանալեն ետքը մեկը գա և կնկանդ ձեռք սղմե, ատոր ըսելիք չի կա:

– Ըսել է քատրիլի մեջ ձեռք սղմելը ամոթ չէ:

– Չէ, հարկավ չէ, եթե ըլլար, ո՞վ կը թողուր:

– Սակայն լավ գիտե՞ք որ քատրիլի մեջ տամայի ձեռքը սղմելեն վտանգ չի կա:

– Հարկավ, հարկավ, եթե ըլլար ո՞վ կը թողուր:

– Անանկ է նե եթե մեկը ուզե մը ձեռքը սղմել, թող քատրիլի հրավիրե:

– Նիկողիմոս աղա, ես աս խոսքերը ձեր սիվիլիզասիոնին չի վայելցուցի, ինչո՞ւ այդքան հին գաղափարներու կը ծառայեք, հիմա ամեն մարդ սիվիլիզասիոնի համար խելք կուտա, իսկ դուք հակառակը կընեք, ափսոս, ափսոս, շիտակը շատ կը ցավիմ որ ձեր վարդի պես աղվոր մատամին սիրտը կը կոտրեք, զինքը կը վշտացունեք:

– Աղեկ, մենք ալ բան մը ըսած չունինք, սա սիվիլիզասիոնի դեմ թող չըլլա տե քիչ մըն ալ կնկանս ձեռքը թող սղմեն, ինչ ընենք: Քանի որ քատրիլին օրենքը ատ է, մենք ալ հարմարելու ենք, սակայն, շիտակը խելքս շատ ալ չի հասնիր աս սիվիլիզասիոնին:

– Կամաց կամաց կը սորվիք, Նիկողիմոս աղա, մարդ ըսածդ մարդով կը-

լա, դուք տակավին նոր նոր մարդու կարգ անցնիլ սկսած եք, ատոր համար ամեն բան ձեզի տարօրինակ կուգա:

– Օրինակ, հիմա պարը վերջացեր է, ինչո՞ւ ամեն մարդ իր տեղը չի նստիր, քավալիեները ինչո՞ւ մեկ մեկ տամայի թևը մտած՝ կը պտըտին:

– Տամաները հոգնած են. քավալիեները կը պտըտցունեն որ քրտինքնին պաղի:

– Ատոր ալ խելքս չի հասավ, ասոնք ձի՞ են որ քրտինքնին պաղեցնելու համար պտըտցունեն:

Չեր այս խոսքը նույնպես դեմ է քաղաքավարության. կը հուսամ որ ներողություն պիտի խնդրեք:

– Ներողություն, բարտոն, սակայն ինծի տարօրինակ կուգա: Խնդրեմ, մի բարկանաք, բարտոն, բայց խելքս չի պառկիր, բարտոն, սակայն երեք ժամ այդպես թև թևի մտած քալելին և խնդալով, խաղալով խոսելին ջիղերուս կը դիպչի կոր, բարտոն, չեմ ըսեր թե եթե խոսին գեշ բան մը կըլլա, սակայն կըսեմ՝ եթե չի խոսին՝ ավելի լավ կըլլա:

Նիկողիմոս աղա, ատ կը ցավիմ որ երեխայի պես կը դատեք, մարդ կամ պիտի հարմարվի շրջապատին, կամ անկյուն մը քաշված՝ պիտի նստի: Մե՞նք պիտի հարմարվինք ընդհանուրին, թե ընդհանուրը մեզի, անշուշտ՝ մենք ընդհանուրին:

– Շիտակ է:

– Անանկ է նե ինչո՞ւ կը բարկանաք, ձգեցեք որ ձեր մատամը ուզածին չափ պարե, ցատկե, եթե քուններնիդ կուգա՝ գացեք մյուս սենյակը պառկեք:

– Կըլլա՞:

– Շատ լավ կըլլա, կարգ մը մյուսյուներ ձեզմե կը քաշվին, եթե հոս չըլլաք, անոնք ինչ կատակներ պիտի ընեն ձեր մատամին հետ:

– Ճշմարիտ է, Նիկողիմոս ապա, եթե դուք քիչ մը դուրս ելլաք՝ երիտասարդները շատ պիտի ուրախանան, որքան ալ ըլլա՝ պատկառելի մարդ եք, ձեզմե կը քաշվին:

– Կը քաշվի՞ն մի, ամերիկյան կապիկներու պես զըպ զըպ կը ցատկեն, ա՞տ է քաշվելին:

– Դուք եթե հոս չըլլաք, ավելի լավ պիտի ցատկեն, կը ներեք համարձակությանս, Նիկողիմոս աղա, սակայն ծերերուն պարտքն է՝ չի խանգարել երիտասարդներուն ուրախությունը, կը ներեք համարձակությանս, բայց երբեմն երբեմն երիտասարդները մինակ ձգելու է, որ ուզածուն պես զվարճանան, կարծիքով՝ ծերերուն պարտքը աս է:

– Իմ ներկայությամբ եթե իրարու ձեռք կը սղմեն...

– Ծերերուն մեկ պարտականությունն ալ երիտասարդներուն հանցանքը չի տեսնալն է:

– Ատիկա ըլլալո՞ւ բան է. իրարու հետ քըռըր քըսըր խոսին տե ես ալ աչքերս գոցե՞մ:

– Ինչո՞ւ ատանկ կըսեսք, Նիկողիմոս աղա, ծերերուն մեկ պարտքն ալ ամեն բանի ականջ չի կախելն է:

– Վայ կնիկս սիրեն տե ես ալ նայի՞մ

– Ծերերուն մեկ պարտքն ալ փոքրերուն թերությունները չի տեսնալն է Նիկողիմոս աղա:

– Իմ կարծիքս ալ ան է, որ Նիկողիմոս աղան իր աղջկան կամ կնկան մեկ պակասությունը տեսնելու ըլլա նե՝ չի տեսնալու պիտի տա:

– Հապա, Նիկողիմոս աղա, ծերություն ըսածդ ատ է:

– Նիկողիմոս աղա, ամեն բանի կարևորություն տալու չէ: Ծերությունը հապա ի՞նչպես կըլլա:

– Նիկողիմոս աղա, մարդս ամենեն առաջ իր կնկան թերությունները ծածկելու է, ծերության օրերը ատ է. մենք ալ ծերեր տեսած ենք. օրինակ, կուգան, սուրճ մը կը խմեն,– աղջիկներ, դուք ինձի մի նայիք, զվարճացեք կըսեն, կերթան կը պառկին: Եկուր տես որ Նիկողիմոս աղան ամենևին չի պառկիր:

– Ծերերուն պարտականություններեն մեկն ալ շուտ պառկիլն է:

– Գնա քիչ մը հանգստացիր, Նիկողիմոս աղա:

– Կը տեսնաս՝ քունդ աչքերեդ կը վազե:

– Ծերության պայմաններեն մեկն ալ քունը աչքերեն վազելն է:

– Պե ճանըմ, ես քուն չունիմ, ես ծեր չեմ, երիտասարդներուն հարմարած եմ:

– Ատանկ կըսես, բայց երբ քատրիլի մեջ կնկանդ ձեռքը քիչ մը կը սղմեն՝ աշխարհքը կը իրար կանցունես:

– Բայց ատանկ բան կըլլա՞:

– Հարկավ կըլլա, նայե, մյուսյու Ժորժն ալ ձեր աղջկա՝ մատմազել Մարիին հետ ամուր կընե կոր:

– Ամուրը ո՞վ է:

– Իշտե քորթե:

– Զորթեն որո՞ւն տղան է:

– Որո՞ւն տղան պիտի ըլլա, ի տե ամուրին տղան է:

– Ես այդ ընտանիքը չեմ ճանչնար:

– Ինչ կըսեսք, Նիկողիմոս աղա, մյուսյու Ժորժը ձեր աղջկա հետ քորթե կընե ըսել կը սիրե ըսել է. քանի մը օրեն պիտի նշանվին:

– Կը սիրե՞ մի:

– Կը սիրե:

– Ի՞նչ ըսիր, կը սիրե՞ ըսիր:

– Այո, կը սիրե, բայց ինչո՞ւ կը բարկանաս, ինչ վնաս ունի. հիմա ամեն մարդ ալ աս ճամբան բռնած է :

– Վայ սրիկա Ժորժ, վայ լիրբ, անկիրթ: Մատամ, լապտերը վառել տուր, երթանք... վայ անամոթ, վայ, լապտերը վառեցի՞ք. աղջիկս կը սիրե եղեր... ինձի ալ լուր չեմ տար հե՞... վայ անամոթ, աներես վայ... լապտերը վառեցի՞ր ծո... պատրա՞ստ ես, գետնին տակը անցնելիք Մարի, հայտե, քալե, ոտքերդ կոտրվին, վայ անամոթ վայ, երթալ պառկելու է եղեր հա... ամոթն ու խպնիլը վերցած է աշխարհքես, քորթե, ամուր, ինչ խաղբություն է մեջտեղեն չի պակսիր, քատրիլի մեջ ամուր. բուքայի մեջ քորթե, վալսի մեջ՝ ոտքը կոխել, թուղթ խաղալու մեջ աչքով ընել, թավլուի մեջ ձեռք բռնել բաթինայի մեջ թևը սղմել...

– Մի բարկանար, Նիկողիմոս աղա, ծերերուն մեկ պարտքն ալ չի բարկանալն է, ինչ է եղեր, ինչու պիտի բարկանաք ու ձեր մատամը վշտացունեք.

– Ծերերուն պարտականությունը սա է, Նիկողիմոս աղա:

– Շիտակը ձեր այդքան բարկանալուն վրա շատ կը զարմանամ, Նիկողիմոս աղա:

– Ճանըմ ինչո՞ւ կը զարմանաս:

– Կը զարմանամ, զարմանք կուգա կոր վրաս:

– Իմ վրաս զարմանք չի գար բարկություն կուգա:

– Փառք աստուծո, բարկանալու ինչ կա, մյուսյու Ժորժ ձեր աղջիկը կը սիրե եղեր, հետը պիտի նշանվի, դուք ուրախանալու եք, որ ձեր աղջիկը ալաֆրանկայի օրենքները սորվեր է և իր գլուխն առանց ձեզի նեղություն տալու սիրական մը գտած է: Մակայն մյուսյու Ժորժ աղջիկնուդ ձեռքը քիչ մը կը սղմե եղեր, ձեզի ինչ. ձեր ձեռքը չի սղմեր ա:

– Կը կարծեմ թե Նիկողիմոս աղային սխալ հասկցուցած են, ատոր համար կը բարկանա:

– Ես ալ կը կասկածիմ թե Նիկողիմոս աղան այս աստիճան պայաղի մեկը ըլլա: Անպատճառ սխալ հասկացուցած են:

– Եղբայր, իշտե մյուսյու Ժորժը աղջիկնիս կը սիրե եղեր. այստեղ սխալ հասկնալու բան չի կա:

– Կրնա ըլլալ որ մյուսյու ժորժը աղջիկներին չի սիրեր տե՛ աղջիկնիդ մյուսյու ժորժը կը սիրե, քիչ մը սպասելու է, որպէսզի գործին ինչ ըլլալը լավ մը հասկնանք, ըստ այնմ վարվինք:

– Մարի, հոս եկուր:

– Ճանըմ անոր ատանկ բան մի հարցուներ, երես կառնե:

– Ինչո՞ւ պիտի երես առնե:

– Չ’ըլլար, ես աղջիկս գոց մեծցուցած եմ, ատանկ խոսքեր կամչնա, հազարումեկ գույն կառնե, անիկա ատանկ բաներ լսած չէ:

– Լսած չէ նե ավելի լավ. անգամ մը կանչենք հարցունենք: Մարի...

– Չ’ըլլար ըսինք ա. իմ աղջիկս ամոթխած է, ատանկ բաներ չի գիտեր:

– Մարի ճիշտը ըսե. դո՞ւն մյուսյու ժորժը կը սիրես քե մյուսյու ժորժը կը սիրե գրեգ:

– Ան գիս կը սիրե, ես ալ գինքը:

– Տեսա՞ր, Նիկողիմոս աղա:

– Թու երեսիդ, ափսոս...

– Ահա մյուսյու ժորժն ալ եկավ:

4.

– Մոնսիմյո Նիկողիմոս...

– Ճանըմ ինչո՞ւ առջևս ծունկ կը չոքիս:

– Մոնսիմյո Նիկողիմոս, ձեր գերին՝ մոնսիմյո ժորժը ինքզինքը երջանիկ պիտի համարե ձեր աղջկա՝ մատմագել Մարիի ձեռքը ձեզմե խնդրելով:

– Աղջկանս ձեռքը իմ քովս ինչ գործ ունի:

– Այո, մոնսիմյո Նիկողիմոս, ձեր աղջկա ձեռքը ձեզմե միայն կրնամ խնդրել, եթե տալու չըլլաք... այո, այո, ձեզմե կը խնդրեն:

– Իմ քովս չէ ըսինք վերջացավ. աղջկանս ձեռքը ես չեմ առած...

– Ոչ, ոչ, մոնսիմյո Նիկողիմոս, խոսքը չի հասկանալու մի տաք. ինձի ձեզի փեսա, զձեզ ալ ինձի աներ ընելը ընդունելիդ խնդրել կը համարձակիմ:

– Ինչ պիտի ըսես, Նիկողիմոս աղա, մարդը ինքզինքը ձեզի փեսա ընել կուզե:

– Եվ քանի որ զձեզ իրեն աներ ընել կուզե...

– Ծերերուն պարտքն է...

– Ուրիշներուն աներ ըլլալ, անանկ չէ՞:

– Նիկողիմոս աղա, տարօրինակ բաներ կըսես, ծերերուն պարտքն է՝ պզտիկներուն հանցանքը չի տեսնել, թողունք որ հոս հանցանք ալ չի կա,

աղջիկնիդ՝ մատմագել Մարին ինչ հանցանք գործած է. սիրական մը գտեր է, նշանվիլ կուզե, այստեղ քեզի ինչ վնաս կա:

– Եթե նշանվիլը հանցանք է, ինչո՞ւ ամեն մարդ կը նշանվի, կը նշանակե՝ բոլորն ալ հանցա՞նք կը գործեն:

– Այո, մոնսիմյո Նիկողիմոս, ես անանկ կը կարծեմ քե առաջարկս ուրախությամբ պիտի ընդունիք, որովհետև շատ մատմագելներ մատամներ կարգ մը մատմագելներու ձեռքը առաջարկեցին ինձի, սակայն ես մերժեցի, որովհետև անոնց նկատմամբ սրտիս մեջ սիրո զգացում չի տեսա, ձեր աղջկա հրեշտակային դեմքը վառեց ինձի, այդ ամուրը՝ գետնին տակը անցնելիք այդ երեխան...

– Ճիշտը տակը մնար անոր:

– Այո, մոնսիմյո մոնսիմյո Նիկողիմոս, ամուրը բունը առավ աչքերես, սիրտս կրակ առեր կը վառի... oh լամուր... oh լամուր:

– Օհլամուրի մե՞ջ տեսնվեցաք...

– Ահ լամուր... oh լամուր:

– Օհլամուր կուզես, ինչ կուզես չեմ գիտե:

– Ահ, մոնսիմյո Նիկողիմոս, ահ... լամուր էոն քիվո տը լյունանիթե լը սեուլ լըվիե տյու մոնտ, բլյու ֆեդթիլ քը լա թեդ, քլյու պոյուլան քըլե ֆլո...

– Միտքդ ի՞նչ է եղբայր:

– Սեզ էսքլավ սոն բլյու նոմպրիո քը լեզ էթուալ, քադ թուք լա թեդ էսունիզ ա սե քա բոլա...

– Տեսա՞ր Նիկողիմոս աղա, ես քեզի չըսի՞ քի մի սպասեր, աղջիկդ մյուսյու ժորժին տուր:

– Ճանըմ...

– Լամբիդ տը լամուր է սան պողը, սոն բուվուառ է սան լիմիթ...

– Նիկողիմոս աղա, ես քեզի չէի՞ ըսեր քե աղջիկդ սա մյուսյուին տուր:

– Եթե տալու ըլլայիր, գործը մինչև հոստեղվանքը չէր հասնիր...

– Ահ, սոն էքսելանս Նիկողիմոս...

– Եղբայր, ըսածներեդ բան մը հասկցած չունիմ:

– Ահ մոնսիմյո, մոնսիմյո Նիկողիմոս, լամուր եք էսն անֆան քերիպիլ վեր թուք ավուառ է թու սավուառ, իլ ող թու է ոն նոդրիեն իուի բֆուզե... վույ մոնսիմյո Նիկողիմոս, վույ, աղջիկդ ինձի տուր...

– Նո, մուշու ժորժ, Նո մուշու ժորժ, լամուր թու երեսիդ, սուրաթիդ, ավուռ է թու կերպարանքիդ, ձևիդ, նո մուշու ժորժ, աղջիկս քեզի չեմ տար:

– Ես կառնեմ, որովհետև ժը լեմ տը թու մոն քեռո:

- Քեռորդ դու՞ն ես:
- Մոնսինյո Նիկողոսիմոս, կարծեմ դուք ինձի հետ գեշ վարվելու, ֆրանսերեն ծաղրելու իրավունք չունիք, պիտի չի համարձակվիք քաղաքավարությունը ծաղրել, հասկցա՞ք:
- Հասկցա, հիմա միտքդ ինչ է:
- Միտքս ձեզի փեսա ըլլալ է, թուսեմբլան վե թու պոնման լա ֆամ է լա բլյու քոմլեթ լա բլյու սյուսլիմ էոըվո տը լա քրիտիսիոն բեթրի տե բլյու...
- Բեթրին ալ կամուսնանա կոր:
- Բեթրին ֆաֆ լա բլյու կրանտ վերթյու է տե բլյու կրան վիս, էլ բեռնի թու լեղ էքսթրեմ, սե լայժ ու տը տեմոն, լա մեթրես ու լեաքլավ լա սենթ ու լեմբի էլ էթ, բիե թու, ֆեթ տը լեշել սուիալ, է բեոթ էթրտեֆինի ան տեո մու ամուր կնմանս ու հեն էնֆինի, հասկցա՞ մոնսինյո Նիկողոսիմոս:
- Հասկցա, բայց շատ ալ գործիս գալու բան չ'երևար:
- Եթե զձեզ մեզի աներ ընեք՝ գրասենյակային բոլոր գործերնիդ վրաս կառնեմ- և զձեզ կազատեմ գրագիրի ամսականեն. իմ փեսայությունս շատ օգտակար պիտի ըլլա ձեզի, աղջիկնիդ ամբողջ հոգով զիս կը սիրե, ես ալ զինքը կը սիրեմ. աս ասանկ ըլլալեն ետքը՝ առանց սպասելու հարսանիքը ընելու:
- Մուշու Ժորժ, կաղաչեմ մեյ մալ ատանկ թեթև կերպով աղջիկ մի ուզեր ինձմեն, ամեն բան իր օրենքը ունի, եթե կուզես ինձի փեսա ըլլալ, քահանա մը կը դրկես, աղջիկս կուզես, ես ալ կամ կուտամ, կամ չեմ տար:
- Ատիկա հին սովորություն է:
- Ես հին, նոր չեմ գիտեր:
- Ափսոս ձեզի, մոնսինյո Նիկողոսիմոս, ափսոս, որ տասնևիններորդ դարու մեջ կապրիք և տակավին հին խելքի կը ծառայեք:
- Հին խելք նոր խելք չեմ գիտեր: Հորմես ին որ տեսեր եմ, ան կընեմ, երթաք բարով:
- Օրըվուառ, մոնսինյո Նիկողոսիմոս, սակայն ես ասանկ պաղ վերաբերմունք չէի սպասեր ձեզմե- օրըվուառ, սակայն կը ցավիմ, օրըվուառ, սակայն ետքեն զոջալու:
- Երթաք բարով:
- Ատիո, մոնսինյո Նիկողոսիմոս, օրըվուառ, ուզես չուզես՝ ես մատմազել Մարին ինձի մատամ պիտի ընեմ:
- Լռե, անամոթ:
- Այո, մոնսինյո Նիկողոսիմոս, ձեր կամքին հակառակ՝ աներս պիտի ըլլաք:

- Անամոթ:
- Անամոթը դու՞ն ես, որ ամուրին ինչ ըլլալը մինչև հիմա չես հասկցեր, օրըվուառ, մոնսինյո Նիկողոսիմոս, շուտով կը տեսնվինք:

5.

- Աման, աման, բան մը կըլլամ կոր:
- Գետնին տակը անցնիս, ինչ կըլլաս կոր: Սուարեին մեջ բան մը չունեիր, տուն եկար, փորիդ ցա՞վը բռնեց:
- Այո, հայրիկ, փորս կը ցավի... կուզեմ որ մյուսյու Ժորժը ինձի մարի ընես:
- Մարի ինչ ըսել է՝ չեմ գիտեր. եթե փորդ կը ցավի, բժիշկ կանչենք թող գա դեղ մը տա:
- Դեղ չեմ ուզեր, մյուսյու Ժորժը կուզեմ, զայն տեսնամ նե փորիս ցավը կանցնի:
- Ատանկ է ամա, ես ալ ատ սրիկան տեսնելուս պես գեշ կըլլամ կոր, սիրտս կը խառնվի:
- Մյուսյու Ժորժին հետ բոլքա մը կամ մագուրքա մը պարելուս պես փորիս ցավը պիտի անցնի:
- Ասկե ետքը պարելը պիտի արգիլեմ, հասկցա՞ր, պիտի չի թողում որ իմ տունիս մեջ պարեն, պարողներն ալ տունս պիտի չի թողում:
- Անանկ է նե մտիր հավնոցը, հոն նստե:
- Ինչո՞ւ հավնոցը մտնամ, սենյակս կը նստիմ, պարելը անհրաժեշտ բան մը չէ: Կը նստինք, կը խոսինք, քիչ մը թուղթ կը խաղանք, քանի մը անգամ ալ տամա կը խաղանք:
- Մատմազելները տամա խաղալ ուրկե՞ գիտեն որ խաղան:
- Եթե չեն գիտեր՝ թող խաղացողներուն նային:
- Տամա խավարյալներուն խաղն է:
- Լուսավորյալներուն խաղերուն խելքս չի հասավ:
- Խավարյալներուն սովորությունը թող գետնին տակը անցնի:
- Լուսավորյալներուն սովորությունները թող ջնջվին երկրիս երեսին:
- Մա տամայի խաղը ջիղերուս կը դիպչի կոր:
- Մա քավալիեի խաղը հնարողին ճիտը տակը մնա:
- Ես մյուսյու Ժորժը կուզեմ:
- Ես ալ մյուսյու Ժորժը չեմ ուզեր:
- Ես քու ուզածդ չեմ կրնար ուզել. իմ հավնածս պիտի ուզեմ:
- Քու հավնածդ ալ ես չեմ ուզեր...

- Աղջիկ մեծցուր տե ասանկ խոսքեր լսե, ինչ կըսես, Համբարձում աղա:
- Ինչ ըսեմ, Նիկողիմոս աղա, ժամանակներուն հարմարվելու է, աշխարհքը մեզի չի հարմարի նե մենք աշխարհքին պիտի հարմարվինք:
- Ես մյուսյու ժորժը կուզեմ:
- Ուրեմն հարմարվիմ ըսեմ տե աղջկանս հավնած տղան ինձի փեսա՞ ընեմ:
- Քանի որ աղջիկնիդ մյուսյու ժորժ կուզե, իսկույն տալու ես:
- Հապա մյուսյու ժորժը դրամ չունի նե ի՞նչ ընելու է:
- Քիչ մըն ալ դրամ տալու է: Ի՞նչ ընես, աղջիկ զավակ է, կը բարկանա, կը հիվանդանա, տես գույնը ինտոր նետեր է, ետքեն մարդ չ'առներ:
- Ես մյուսյու ժորժը կուզեմ:
- Թե աղջիկս տամ և թե դրա՞մ:
- Հիմա օրենքը ատանկ է, հին սովորությունները վերցած են, ընդհանուրին հարմարվելու ենք. լեռը մարգարեին քովը չերթա նե մարգարե լեռան քովը կերթա կըսեն:
- Աղջիկս մյուսյու ժորժին տամ նե լավ կըլլա՞ արդյոք:
- Չեմ գիտեր:
- Ես մյուսյու ժորժը կուզեմ և հիմա կուզեմ:
- Եթե չի տաս՝ գեշ կըլլա, եթե տաս՝ խելքս չի հասնիր թե աղեկ ըլլա:
- Աս ինչ տեսակ գործ է. որ կողմն ալ դառնանք խերով չէ:
- Հիմակվան ամուսնությունները ասանկ են, Նիկողիմոս աղա:
- Ես մյուսյու ժորժը կուզեմ:
- Մյուսյու ժորժն ալ գետնին տակը անցնի, դուն ալ:
- Գեշ մի խոսիր, Նիկողիմոս աղա, տղան ինչ հանցանք ունի:
- Անանկ է նե աղջիկս թող անցնի գետնին տակը:
- Աղջիկդ ինչ հանցանք ունի, անկե՞ ինչ կուզես:
- Հապա ո՞վ անցնի գետնին տակը:
- Եթե անպատճառ մեկը պիտի անցնի գետնին տակը, թող ալաֆրանկան անցնի:
- Ես մյուսյու ժորժը կուզեմ:
- Բոլորն ալ թող գետնին տակը անցնին, աս գործին խելքս չի հասավ:
- Ես մյուսյու ժորժը կուզեմ:
- Աղջկան մը թևը բռնել տե անոր հետ պարել. ի՞նչ կը նշանակե ասիկա:
- Սիվիլիզասիոն:
- Աղջիկներն ալ իրենց տեղեն չելլան նե չ'ըլլա՞ր:

- Ատիկա քավալիեն վշտացնել կը նշանակե: Ալաֆրանկայի մեջ երիտասարդ մը եթե աղջկա մը պարելու հրավիրե՝ աղջիկը անմիջապես ելլալու է:
- Կատարյալ անամոթություն է, եղբայր: Անցյալ շաբաթ կնկանս ու աղջիկներուս հետ մեկուն տունը հյուր գացի: Մեյ մալ տեսնամ՝ դուռ դրացի լեցվեցան: Կյանքիս մեջ երեսնին չի տեսած երիտասարդներ քովս գալով՝ վայ Նիկողիմոս աղա, դուք սանկ լավ մարդ եք, նանկ մարդ եք, ըսելով հմ ու կնկանս մեջտեղը նստեցան, սկսան նախ կնիկս գովել, հետո զիս գովել:
- Քաղաքավարի երիտասարդներ են եղեր:
- Քանի մը խոսք հազիվ փոխանակած՝ պալ մը չընե՞նք, ըսին. Ես ալ կարծելով թե պալով, այսինքն մեղրով հելվա պիտի պատրաստեն,- Ըրեք, ըսի: Սկսան զիս ավելի գովալ, որ ալաֆրանկակը հարգեմ... Ես ալ կը մտածեի թե քանի որ մեղրով հելվա ալաթուրքայի մեջ ալ ընդունված է, թող շինեն: Այս մտքերով տարված էի, երբ մեյ մալ ինչ տեսնամ: դուրսեն քաթերնա կըսեն, լաթերնա կըսեն, ատիկա բերին: Սա՝ փողոցները դարակի պես բան մը կը պտըտցունեն նե՝ ատիկա է. Անոր կոթը մը անցուցեր են կը դարձունեն և դարձունելու ատեն ձայն կը հանե. Ահա ատիկա սկսան դարձունել, էրիկ կնիկ իրար անցան, սկսան դառնալ ու դառնալ:
- Օրենքը ատ է:
- Համբարձում աղա, ինչ ընեն լավ. Ատ մարդիկ մեզի հոն միս-մինակ թուրուցին: Եվ ասոնք ինքզինքնին լուսավորյալ կը կոչեն:
- Ատանկ ըրեր են, որպեսզի ձեր գլուխը չի ցավի:
- Այդ ժամանակ մատմազել մը՝ ոտքերը տնկելով, գլուխը ծռելով՝ եկավ քովս, մոնսինյո Նիկողիմոս, ըսավ, քեզի անկաժե կընեմ, թևես բռնեց, սանկ միտքը քիչ մը պղտորեցավ:
- Ահա ատիկա սիվիլիզասիոնն դեմ է:
- Չեռքես ի՞նչ կուզա, սիվիլիզասիոն չէ՝ ինչ սիոն կուզե ըլլա, չի կրցա հուզումս զսպել...
- Ալաֆրանկային տրված չըլլալնուդ է, եթե տրված ըլլաս, թևդ թևին քավի ալ բան մը չես զգար:
- Ըսել է ալաֆրանկա մարդս անզգա կընե:
- Է, ե՞տքը:
- Հետո ելա, թևս մատմազելին մեջքին անցուցի, ան ալ ձեռքը ուսիս դրավ... դրավ, ամա ծունկերս սկսան դողալ... ոտքի վրա կայնելու ուժ չունեի: Նստած պարել չ'ըլլար որ նստիս: Ինչ որ է, որպեսզի զգացնել չի տամ, ակռաներս սղմեցի, ակռա ալ չունիմ ա:

– Է...

– Մեյ մալ լավեցա՛վ՝ օն. Ջաղացի ձիերուն պես բոլորը սկսան դառնալ. Ես ալ դարձայ, աչքերս մթնեցան, աման ոտքդ պագնեմ, Համբարձում աղա, հոն ըլլալու էիր, որ հասկնայիր. Տեղը նեղ ըլլալուն՝ էրիկմարդոց երեսները կնիկներուն երեսներուն կը քսվիր, ան կողմեն մեկը կը հրե, աս կողմեն մյուսը ետևեդ կը զարնե:

– Անփորձութենէն է:

– Մեկը ոտքդ կը կոխե, մյուսին ֆիստանը կը պատռվի, աս կողմինին կոշիկը կելլա...

– Նիկողիմոս աղա, դուն առաջ պարել գիտեի՞ր:

– Եղբայր, արդեն շատ դժվար գործ չէ, տամային մեջքեն բռնելն է կարևորը. Ուրիշ դժվարություն չի կա:

– Ինչպես չի կա, դառնալը դժվար չէ՞:

– Ես դառնալուն շատ ալ կարևորություն չի տվի, քանի որ տամային երեսը նայած ատենս ուրիշ բան մը կըլլայի կոր... Էհ, Համբարձում աղա, ինձի պես մազը մորուքը ճերմակցած մեկը եթե պարելու ատեն ատանկ ըլլա, հապա երիտասարդները ինչ կըլլան: Հիմա դուն ըսե, սա պար ըսվածին մեջ հառաջադիմություն, լուսավորություն, բարոյականություն կա՞:

– Ես ալ չեմ ըսեր թե կա. Իշտե զվարճանալու միջոց մըն է, նստիլ աս ու ան բամբասելու տեղ...

– Աս ու ան սղմրտել հա՞:

– Ինչո՞ւ պիտի սղմրտեն, եղբայր, անմեղ զբաղմունք մըն է, ժամանակ կանցունեն:

– Եթե պարն ալ անմեղ է, ալ ըսելիք չի կա:

– Մարդը գիտե:

– Է, ես գե՞շ մարդ եմ, որ մեղքի մեջ ինկա:

– Չեմ ըսեր գեշ մարդ ես, սակայն վարժված չըլլալուդ՝ ատանկ եղեր ես: Պարելը օղիի մը նմանի, Նիկողիմոս աղա, սորված չեղողը առաջին գավաթեն գեշ կըլլա, սորված մարդը տակառով ալ խմե, բան մը չ'ըլլար:

– Ըսել է գեշ չըլլալու համար գինեմուլ ըլլալու է. Կը խմեմ, բայց չեմ պարեր, եղբայր:

– Խավարյալ է, կըսեն:

– Որո՞ն հոգը:

– Ինչո՞ւ ըսեն, այսօր վաղը բոլորս ալ պիտի երթանք այս անցավոր աշխարհքեն: Ամենուն հետ ալ լավ վարվելու է, վշտացունելու չէ: Մե՞նք

մնացինք աշխարհքս փոխողը:

– Ատանկ է յա, բուքա ըսեն՝ ցատկենք, քատրիլ ըսեն՝ դառնան, սուարե ըսեն՝ փողոցները իյնան, տեքուլթե ըսեն՝ կուրծքերնին, թևերնին բանան, ցեխ է ըսեն՝ ֆիստաննին բարձրացունեն ու սրունքնին ցույց տան, ինչ է՝ այս անցավոր աշխարհքեն պիտի երթանք. Եթե վաղը կնիկս ալ մեկուն հետ սիրաբանե՝ ան ալ անոր տալու է, քանի որ այս աշխարհքին մեջ պիտի չի մնանք:

– Նիկողիմոս աղա, դուք սխալ կը հասկնաք:

– Շիտակը հասկցուր տեսնեմ:

– Իմ իտեաս:

– Իտեա ըսածնիդ զավակնիդ է:

– Այսինքն իմ օրինիումը:

– Ան ալ չեմ ճանչնար:

– Այսինքն ես անանկ կը կարծեմ թե սիվիլիզասիոնի բոլոր օրենքները կատարելու, քաղաքակիրթ ժողովուրդներուն հետ հառաջադիմելու է:

– Ես ալ չեմ ըսեր ետ մնանք, անամոթություն, լրբություն չընենք, կըսեմ, անվայել արարքներե խուսափինք, կըսեմ. Իսկ եթե հառաջադիմություն ըսածնին անկրթություն, թեթևություն ըսել է, ատոր ըսելիք չունիմ: Ինձի նայե, Համբարձում աղա, եթե երիտասարդ մը աղջկա մը հետ այդքան ազատ վարվի, իրարու հետ ցատկեն, պարեն, խնդան, անպատճառ գործին մեջ չար սատանա մը կը մտնա:

– Ես մյուսյու Ժորժը կուզեմ:

– Հրամմեցեք, տեսա՞ք, ահա ասիկա գետնին տակը անցնելիք քատրիլին հնարածը չէ՞... սըվոր նայե անգամ մը, մյուսյու Ժորժը կուզե եղեր...

– Այո, կուզեմ, աղջիկ ըսածդ ազատ պիտի մեծնա, ուզածը պիտի առնե, չուզածը պիտի թողու, որովհետև...

– Որովհետև այս անցավոր աշխարհքեն պիտի երթանք, անանկ չէ՞:

– Հայրիկ, ես չի սիրած մարդուս հետ չեմ կրնար կյանքս կապել, չեմ կրնար ապրիլ. թոքախտ կըլլամ, կը մեռնիմ: Մյուսյու Ժորժը իմ հոգիս է:

– Հոգիդ ելլա:

– Ելավ. ահա աստիճաններեն կելլա կոր... ահա եկավ... վայ մյուսյու Ժորժ, պոնժուռ, քոման վու բորթե վու:

– Թրե պիան, մատմազել, է վո՞ւ...

– Մերսի պիեն:

– Մոնսինյո, մոնսինյո Նիկողիմոս, վուզեթ պեթ...

- Ի՞նչ կըսես, Համբարձում աղա:
- Շատ քաղաքավարի մարդ եք կըսես:
- Ատիկա իր համեստութենեն է:
- Մոնսինյո, մոնսինյո Նիկողիմոս, վուզեթ...
- Թուրքերեն խոսեցեք, մուշու, որ հասկանամ:
- Մոնսինյո Նիկողիմոս, կը ներեք համարձակությամս, դուք անասուն եք:
- Մուշու, կը ներեք համարձակությամս, դուք ալ էշի կը նմանիք:
- Նիկողիմոս աղա, պետք չէ ատանկ խոսքեր ըսել, չի վայլեր:
- Չի վայլեր ա. այս անցավոր աշխանհքս...
- Մոնսինյո Նիկողիմոս, դուք մահվանս պատճառ պիտի ըլլաք, ձեր աղջկա մահվանն ալ պատճառ պիտի ըլլաք, եթե զմեզ չամուսնացնեք:
- Հայտե դուք և մատմագելը քիչ մը դուրս եկեք, որպէսզի Նիկողիմոս աղային հետը քիչ մը խոսինք այս մասին:

6.

- Ինչ որոշեցիք, Նիկողիմոս աղա, գործը վերջացուցի՞ք:
- Հարկադրված եղանք վերջացունել, ինչ ընենք. այսօր պիտի գա. տեսնանք նշանը պիտի տա՞:
- Խերերնին տեսնաս, Նիկողիմոս աղա, թոռներու տեր ըլլաս, լավ անուն հանեն, մեկ բարձի ծերանան, տուն տեղ ըլլան... ահա մուշու Ժորժն ալ կուգա կոր: Նշանը բերած ըլլալու է:
- Հրամանեցեք, մյուսյու Ժորժ:
- Ի՞նչ կընեք, աներհայր, չի վայլեր, նստեցեք, փուր լամուր տը տիեռ:
- Ի՞նչպես եք, աղե՞կ եք:
- Մերսի պիեն: Այսօր նշանը պիտի բերեի, սակայն բան մը պատահեցավ... շիտակը շատ անհարմար զգացի...
- Ի՞նչ պատահեցավ:
- Շատ անհարմար բան:
- Արկա՞ծ մը:
- Չեք կրնար երևակայել, թե որքան անոթով մնացի:
- Պրոշը չի կրցա՞ք գտնալ:
- Պրոշը գտա, երեսուն ոսկիով ալ համաձայնեցանք, սակայն երբ հերթը դրամը տալուն եկավ... շատ անհարմար բան եղավ:
- Քսակնի՞դ կորսնցուցիք:

- Ոչ, երբ դրամը վաղը կուտամ, ըսի, ոսկերիչը չի վատահեցավ, ասիկա զիս շատ վիրավորեց:
- Ի՞նչ կըսես, Համբարձում աղա:
- Անհարմար բան է եղեր:
- Վերջը ի՞նչ որոշեցիք:
- Մտքես ըսի՝ երթամ աներհայրիկես երեսուն ոսկի առնեն, բերեն տամ ոսկերիչին, պրոշը առնեն, մեյ մալ մտածեցի՝ հարմա՞ր է որ տակավին չի նշանված՝ անկե դրամ ուզեն:
- Հարկավ հարմար չէ:
- Մեյ մալ մտածեցի՝ գուցե աներս աս բանը լսե ինքը կը հանե կուտա, գործը կը լմնցունե, բայց անոր ի՞նչ պարտքն է պրոշի դրամը տալը:
- Հարկավ պարտքը չէ:
- Իշտե գործը այս վիճակին մեջ՝ երթամ անգամ մը աներոջս հետ քոնսուլթասիոն մը ընեն ըսի:
- Գեշ չես ըրեր: Նիկողիմոս աղա, քոնսուլթասիոն ըսածնին հարգի բան մըն է:
- Պրոշի չափ հարգի՞ է:
- Չէ եղբայր, ասիկա ուրիշ բան է. քոնսուլթասիոն ըսելը երկու հոգի մեկտեղ գալով՝ ոկէ խնդրո մասին խոսիլ, վճիռ տալ ըսել է:
- Մոնսինյո Նիկողիմոս, առաջ հարսանիքը ընենք տե ետքը պրոշը տանք նե չ'ըլլա՞ր:
- Ատանկ բա՞ն կըլլա, անամոթ, աներես, պրոշ մը առնելու չափ դրամ չունեիր նե ինչո՞ւ կարգվելու ելար. խաբեբա, խարդախ, վարնոց...
- Մի բարկանաք, Նիկողիմոս աղա, ասիկա քոնսուլթասիոն է. անոր կածիքը աս է, տասնևիններորդ դարուս մեջ կարծիքները ազատ են, դուք ալ ձեր կարծիքը հայտնեցեք:
- Մոնսինյո, մոնսինյո Նիկողիմոս, կափսոսամ, որ ձեր բերնեն ելած խոսքերը ականջնիդ չի լսեր:

- Նիկողիմոս աղա անվայել լեզու գործածելը անիմաստ է:
- Մոնսինյո Նիկողիմոս, ասոր քոնսուլթասիոն կըսեն:
- Նիկողիմոս աղա, պաղարյամք վարվելու է:
- Մոնսինյո Նիկողիմոս լո՞ժիքըման պետք է խոսիլ:
- Նիկողիմոս աղա, խոսքերնիդ տրամաբանության հետ չի հարմարիր:
- Մոնսինյո Նիկողիմոս ես ձեզի բան մը առաջարկեցի. ուզեք կընդունիք,

ուզեք՝ չեք ընդունիր, սակայն զիս անարգելու ամենևին իրավունք չունիք:

– Ատանկ է, բայց ըրած առաջարկդ խելքի մո՞տ բան է, մարդուս վրա կատաղություն կուզա պե. լսվա՞ծ բան է որ հարսանիքը առաջ ըլլա տե պրոշը հետո տրվի:

– Չըլլալիք բան է նե՝ չ’ըլլար ըսե վերջանա:

– Չ’ըլլար, իշտե չ’ըլլար, վերջացավ, չի ալ կրնար ըլլալ:

– Անանկ է նե մոնսինյո Նիկողիմոս ձեզի ուրիշ առաջարկ մը պիտի ընեմ. չըլլար որ գոնե երեսուն ոսկի տաք, երթամ սա պրոշը բերեմ, աղջիկնուդ տամ, վերջանա, որովհետև այս օրերս քրիթիք վիճակի մեջ եմ:

– Կորսվե սրկե, անամոթ...

– Լոժիքեն մի հեռանար, մոնսինյո Նիկողիմոս:

– Ես լոժիք մոժիք չգիտեմ, քեզի տալիք աղջիկ չունիմ, հասկցա՞ր:

– Մոնսինյո Նիկողիմոս այս ամենը մեկ պրոշի համա՞ր է:

– Նիկողիմոս աղա մի բարկանաք. պրոշի մը համար սակարկությունը չեն ավրեր, երեսուն ոսկի տուր, թող երթա, պրոշը բերե, եթե չի տաս նշանը ետ կը մնա:

– Թող մնա:

– Աս ու ան ին պիտի ըսե, աղջիկդ բարոյապես սպաննած կըլլաս:

– Սպաննա՞ծ մի կըլլամ:

– Հարկավ: Ինչ ընենք, հիմակվան երիտասարդները քիչ մը տաքարյուն են, անոնք մեզի չեն հարմարիր նե մենք անոնց պիտի հարմարինք: Լեռը մարգարեին քովը չերթա նե մարգարեն լեռան քովը կերթա, կըսեն, քանի որ մյուսյու Ժորժին քովը մանր դրամ չի եղեր... տուր սա երեսուն ոսկին, թող երթա պրոշը բերե, գործը լմննա, ձգձգելեն ինչ օգուտ:

7.

– Գետնին տակը անցնի: Երեսուն ոսկի տուր որ երթա պրոշ առնե, աղջիկդ տուր, խոսքկապի դրամը քսակեդ տուր, ասանկ բան լսվա՞ծ է:

– Ճշմարիտ է որ հին ժամանակները ասանկ բաներ չէին ըլլար, սակայն լուսավորյալ դարու գործարար կըլլա եղեր, ինչ ընենք ընդհանուրին հարմարվելու է: Ահա փեսացունիդ՝ մյուսյու Ժորժն ալ կուզա կոր... հրամանեցեք մյուսյու Ժորժ, անթրե հրամանեցեք...

– Եկուր նայինք, առաջարկդ լոժիքըման ընդունեցի, Համբարձում աղային ըսի, քսան ոսկի պիտի տա:

– Տեսա՞ր, մոնսինյո Նիկողիմոս, լոժիքի շնորհիվ մարդ պաղարյամբ կը մտածե և հաղթողը իրավունքը կըլլա, լոժիքը մարդոց հատուկ գիտություն

մըն է, լոժիքը ճերմակը սևեն, շաքարը քարեն, քարը բրինձեն զատող բան մըն է:

– Քարը բրինձեն զատող մի ըսիր...

– Այո:

– Անանկ է նե ատկե հատ մը առ տե մեր խոհարարին տանք, քարոտ փիլաֆ ուտելեն ակռաներս կոտրվեցան:

– Իմ ըսածս նմանություն է:

– Լավ. առ նմանութենեն առ հատ մը, քարերը թող մաքրվին տե...

– Ոչ, եղբայր, այսինքն լոժիքը միտքը հիմքեն կը մաքրե և ճշմարտությունը երևան կը հանե, բրինձը մաքրելու համար լոժիքը բան մը չի կրնար ընել: Օրինակ, սա քսան ոսկի տալերնիդ լոժիքի համաձայն է, եթե չի տայիք՝ լոժիքին հակառակ գործած պիտի ըլլայիք:

– Չըսե՞ս աստված պահեր է:

– Հիմա... մոնսինյո Նիկողիմոս, քսան ոսկին կառնեմ, վաղը պրոշը կը բերեմ, իմ մատամցուիս՝ մատմագել Մարիին կուրծքը կանցունեմ, կիրակի օրն ալ հարսնիք կընենք:

– Շատ աղեկ, տղաս, աչքդ բաց, մարդ եղիր:

– Սակայն ձեզի խնդիրք մըն ալ ունիմ:

– Ի՞նչ է:

– Թեև չի վայլեր որ...

– Ըսե նայինք:

– Թեև հարմար չէ:

– Ըսե տեսնանք ինչ է:

– Թեև հիմա տակավին ժամանակն ալ չէ:

– Ճանրմ չըսե՞ս:

– Թեև դուն ալ օտար չես սեպվիր ամա...

– Ըսե, ինչ է:

– Այսինքն հիմա թեև ժամանակը չէ...

– Եղբայր, ինչո՞ւ կերկարես ըսե նայինք ինչ է:

– Այսինքն հարսանիքի համար բավական ծախք պիտի ըլլա:

– Հարկավ պիտի ըլլա:

– Այսինքն ծախքի համար բավական դրամ պետք պիտի ըլլա:

– Դրա՞մ, դրա՞մ մի, դրա՞մ մի... սըվոր նայե. բավական դրամ, մորեն լոժիք հա, գնա բանդ պե, կորսվե սրկե, երեսդ անգամ չեմ ուզեր տեսնալ, դուն

հոս զիս կողոպտելը՞ւ եկած ես...

- Ահա նորեն լոժիքի դեմ կը խոսիք:
- Աստված լոժիքին ալ պելան տա, քուկին ալ: Լոժիքի դեմ խոսած չըլլալու համար ունեցած չունեցածս քեզի՞ տամ:
- Մանքըքի համաձայն՝ մեր գիտցածով...
- Իմ գիտցած մանքիս դըյմայով և մածունով կըլլա...:
- Մեր գիտցածով...
- Քու գիտցածդ քեզի պահե:
- Մեր գիտցածով...
- Կորսվե ըսինք քեզի, ատանկ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունին: Համբարձում աղա, կը լսե՞ս աս անամոթին ըսածները:
- Երիտասարդ է եղբայր, ինչ կրնաս ընել. քիչ մը դրամ ալ հարսանիքի ծախսի համար տալու է:
- Չ'ըլլար եղբայր, չ'ըլլար:
- Աղջիկնիդ վշտացուցած կըլլաք:
- Ես հիմա կը կանչեմ աղջիկս և կը պատվիրեմ որ այլևս զայն չի սիրե ասանկով գործը կը լմնցնեն: - Մարի, Մարի, Մարի...

8.

- Մարի, մարի...
- Բիթ քա լամ քի քարալամ...
- Մարի, մարի հոս եկուր:
- Բիթ քա լա քի քալա...
- Մարի, Մարի:
- Կուգամ... քա ըիրամ...
- Հիմա շուտ հոս եկուր, հետո կը պարես:
- Եկա, եկա... քի քարարա...
- Ինչո՞ւ կը ցատկես հա կը ցատկես, եկուր սանկ նստե, քեզի քանի մը խոսք պիտի ըսեն:
- Թի լա լա...
- Գլուխ պելա:
- Վալսը կը փորձեն, բայց վեցերորդ ոտքը չեն կրնար կոր առնիլ... քի ըա ըա ըա...
- Ինքնիրենս մտածեցի և որոշեցի որ...
- Թա ըի ըա ըա...
- Քեզի կանչեմ և ըսեմ որ...

- Թա ըի ըա քի ըա...
- Մյուսյու Ժորժ անամոթին, լիրբին մեկը ըլլալուն՝ ինձի փեսա պիտի չի կրնամ ընել, դուն ալ ասկե ետքը զինքը պիտի չսիրես. ես քեզի համար ուրիշ հարմար, խելոք, վայելուչ երիտասարդ մը կը գտնամ, դուն ալ հարկավ հորդ խոսքը պիտի լսես, անանկ չէ՞...
- Թա ըի լալամ...
- Ճանըմ ես քեզի բան կըսեմ, դուն քարալամայեդ զատ ուրիշ պատասխան չես տար, քեզի կըսեմ քե մյուսյու Ժորժը ինձի փեսա պիտի չի կրնամ ընել.
- Ի՞նչ... մյուսյու Ժորժը քեզի փեսա պիտի չի կրնաս ընել՞...
- Այո, մյուսյու Ժորժը ինձի փեսա չի կրնամ ընել, որովհետև անիկա խարդախ, խաբեբա մարդ մը կերևա աչքիս:
- Կերևա... բայց խաբեբա չէ, եթե ըլլա ալ՝ նորեն զայն քեզի փեսա պիտի ընես, որովհետև սիրտս անոր տված եմ, հոգիիս պես կը սիրեմ զինքը, ես ինքզինքիս մեջ խորասուզվելով՝ հոն քոնսիանս մը կը գտնամ. այս քոնսիանս ներկայացուցիչ մըն է որ...
- Առևտուրի՞ ներկայացուցիչ է:
- Ոչ, այս քոնսիանսը անանկ ներկայացուցիչ մըն է, որ աշխարհքիս մեջ եղած բոլոր ներկայացուցիչներեն լավ կը դատե, ամենևին սուտ չի խոսիր և ես ալ անոր միայն կը հնազանդիմ:
- Քանի որ կը հնազանդիս՝ քեզի ատ մարդուն տամ, անունը ի՞նչ է:
- Քոնսիանս:
- Շատ լավ ես ալ քոնսիանսին աները կըլլամ, քանի որ լավ մարդ է... գաղիացի՞ է ատ քոնսիանս ըսածդ:
- Թե գաղիացի է, քե հայ, քե անգղիացի, քե հույն, քե գերմանացի...
- Անանկ է նե չեղավ, ես ատանկ ազգությունը անհայտ մարդու աղջիկ չեմ տար: Մարդ ըսածդ մեկ ազգության պիտի պատկանի:
- Չես հասկնար, հայրիկ, քոնսիանս ըսվածը խղճմտանք ըսել է...
- Խղճմտա՞նք մի, հապա ըսիր ներկայացուցիչ է, շատ մոտ եմ իրարու հա... ներկայացուցիչի և խղճմտանքի մեջ աշխարհքիս տարբերությունը կա:
- Յուրաքանչյուր մարդ քոնսիանս մը ունի, լա քոնսիանս է լա վրատըլամ, լե բասիոն սոն լա վոա տայու քոր, լա քոնսիանս էլը մեյլետր լիվըր տը մորալ քը նու դեյրոն, ալսինքն՝ ես մյուսյու Ժորժը պիտի առնեմ:
- Ո՞վ ըսավ:

- Իշտե իմ քոնսիանս, այսինքն խղճիս ներկայացուցիչը:
- Դուն ատ ներկայացուցիչի փոխե, աղջիկս, ես քեզի ուրիշ մը կը գտնամ, որովհետև կերևա որ քու քոնսիանսդ մյուսյու Ժորժին հետ խոսք մեկ ըրած է և կուզեն ինձմե դրամ քաշել:
- Ես քոնսիանսս չեմ կրնար փոխել: Գիտե՞ս ինչ ըսել է լա լիպերթե տը քոնսիանս: Եթե գիտնայիր, փոխե պիտի չըսեիր: Քոնսիանս ըսածդ անանկ բան մըն է, որ շարունակ մաքուր մնալու է:
- Ավելի լավ, փոխե, և մի գործածեր, որ չի հիննա...
- Չ'ըլլար, չեմ կրնար փոխել, ես մյուսյու Ժորժին չեմ կրնար բաժնըվիլ, դուն անգամ մը խղճմտանքիդ հետ տեսնված ունի՞ս:
- Չէ, չեմ տեսնված, արդեն որո՞ւն հետ կը տեսնվիմ որ...
- Անանկ է նե անգամ մը խղճմտանքիդ հետ տեսնվե տե ետքեն կը խոսինք...

9.

- Համբարձում աղա, քոնսիանս ըսվածը ո՞վ է:
- Ինչո՞ւ կը հարցունես:
- Մարին կըսե թե անգամ մը քոնսիանսիդ հետ տեսնվե, նայե ան ինչ կըսե մյուսյու Ժորժին հետ նշանվելու մասին:
- Հասկցա:
- Հասկցար նե անգամ մը սա մարդը կանչե, նայինք անոր կարծիքը ինչ է քանի՞ տարեկան է ատ մարդը, երիտասարդ է թե ծեր:
- Տարօրինակ բաներ կըսես, Նիկողիմոս աղա:
- Այստեղ տարօրինակ ի՞նչ կա, եղբայր, այսինքն իմ տարիքիս մա՞րդ է, նարգիլե՞ կը քաշե թե ծխամորճ:
- Ոչ նարգիլե կը քաշե, ոչ ալ ծխամորճ:
- Անանկ է նե ռեժիի ծխախոտներուն չի հավնիր...
- Հա, հա, հա:
- Ճանըմ ինչո՞ւ կը խնդաս. հոս խնդալու ի՞նչ կա, ըսածս շիտակ չէ՞:
- Ծիտակ է, սակայն խոսքը սխալ հասկցած եք:
- Այսինքն մե՞նք երթալու ենք անոր ոտքը:
- Ոչ:
- Հապա ո՞րն է սխալը:
- Եղբայր, այս քոնսիանս ըսվածը մարդ չէ, մարդուս մեջը կը գտնվի և խղճմտանք կըսվի:

- Տարօրինակ բան. մարդ կրնա՞ իր խղճմտանքին հետ տեսնվիլ:
- Ալաֆրանկայի մեջ ատանկ մտքեր շատ կը գործածվին, խղճմտանքի հետ տեսնվիլ՝ կը նշանակե սրտիդ հարցուր:
- Է սրտիս հարցնելու ըլլամ նե պիտի թողո՞ւ որ Մարին ատ խաբերա Ժորժին տամ, սիրոս համաձայն ալ ըլլա ես չեմ տար:
- Նիկողիմոս աղա, սիրո խնդրոյն մեջ պաղարյամբ վարվելու է, որովհետև ատիկա անակ փափուկ հարց մըն է, որ մեկեն ի մեկ որոշում տալը դժվար է: Խնդիրը երկու կողմե քննության առնելու է, օրինակ՝ դուք աղջիկս չեմ տար, կըսեք, տղան կուզե, դուք չեք ուզեր, անիկա կուզե:
- Ճանըմ աղջկանս գործը ե՞ս պիտի կարգադրեմ թե ատ օտար երիտասարդը:
- Զանի որ աղջիկնիդ սիրահարվեր է երիտասարդի մը, և քանի որ սիրահարությունն ալ անմեղ բան մըն է, և քանի որ աղջիկնիդ ալ անմեղ է, ուրեմն՝ դուք ալ ձեր հայրական պարտքը կատարելով՝ աղջիկնիդ տալու եք մյուսյու Ժորժին:
- Հարսանիքի ծախքն ալ տալու է, անակ չէ՞:
- Հարկավ տալու է. վաղը մյուս օրը, - աստված երկար կյանք տա, խերերնին տեսնաք - եթե թոռներ ալ ունենաք, անոնց զգեստներն ալ դուք կարել պիտի տաք:
- Ի՞նչ կըսես:
- Ճամարտությունը աս է, Նիկողիմոս աղա, վաղը մեկալ օր, - աստված մի արասցե, - եթե փեսանուդ գործը անհաջող երթա և դրամը հատնի, անոր գրպանին ծախքն ալ դուք տալու եք, ալաֆրանկան ասանկ կը պահանջե: Ահա գրպանին ծախքն ալ դուք տալու եք, ալաֆրանկան ասանկ կը պահանջե: Ահա մյուսյու Ժորժն ալ կուզա կոր, պիտի խնդրեմ որ խոժոռ դեմքով չընդունիք զինքը, որպեսզի չի վշտանա, խնդումներես ընդունեցեք և կերպով մը հարսանիքի դրամն ալ տվեք, մոնսինյո Նիկողիմոս:
- Հրամանեցեք, նստեցեք:
- Ես նստելու արժանի չեմ:
- Անանկ է նե կայնե:
- Ոտքի կանելու ալ երես չունիմ, որովհետև զայրացուցի զձեզ՝ ձեզմե հարսանիքի ծախք ուզելով, բայց ինչ կրնայի ընել, առանց դրամի հարսանիք կըլլա՞:
- Չ'ըլլար:
- Եթե ըլլար՝ զձեզ դրամ չէի ուզեր:

– Միտքդ ի՞նչ է:

– Միտքս ի՞նչ կրնա ըլլալ. քիչ մը դրամ տուր որ հարսանիքի պատրաստություն տեսնանք, կիրակի օր ալ հարսանիքը ընենք:

– Մյուսյու ժորժին ըսածը ճիշտ է. ես ալ կը խնդրեմ զձեզ, Նիկողիմոս աղա, շնորհ ըրեք՝ առ դրամը տվեք, դուք ազնիվ մարդ եք:

– Իմ մեծ հայրս մոնսինյո Նիկողիմոսին հորը քովը բավական ժամանակ աշխատած է, մոնսինյո Նիկողիմոսին հորը շատ կը գովե. ան ալ ազնիվ մարդ մե եղեր, դուռը զարնող աղքատը պարապ չի դառնար եղեր, միշտ ասոր անոր լավություն կընե եղեր:

– Այո, Նիկողիմոսին գերդաստանը շատ ազնիվ գերդաստան մըն է, Նիկողիմոս աղան ալ լավություն ընելու մեջ հորմեն ետ չի մնար:

– Դեմքեն ալ հայտնի է:

– Առատածեռն ըլլալը ակռաներեն կերևա:

– Բարերարությունը շատ կը սիրե:

– Լավություն ընելու համար մարդ կը փնտրե:

– Երեսեն բարություն կը թափի:

– Միրտն ալ շատ մաքուր է:

– Ասանկ մարդ չի գտնվիր:

– Նմանը չի կա:

– Ես հարսանիքին ծախքը չեմ տար ըսի նե՝ միտքս չի տալ չէր, կուզեի զքեզ փորձել:

– Տեսա՞ր ինչ է եղեր Նիկողիմոս աղային միտքը:

– Ես գիտեի ատանկ ըլլալը:

– Նիկողիմոս աղան անանկ մարդ չէ:

– Ես ալ ատոր համար ուզեցի:

– Կրնա ըլլալ որ վաղը հազար ոսկի տա և քեզի համար խանութ մը բանա: Եվ ինչո՞ւ պիտի չի բանա, ասանկ գերդաստանի մը շնորհիվ թող քանի մը ընտանիք ալ ապրի:

10.

– Պոնժուռ, հայրիկմ ժը վու բըմերսք, ժը վու...

– Իշտե հարսանիքին ծախքը տվինք, եկող շաբաթ ալ հարսանիքը պիտի ըլլա:

Ժը վու սյուի դեթերնենման թոպլիժե տը սը քը...

– Այո, սըքը, այսինքն ամուր բռնեցինք փեսան, առջի բերան եթե ատան

տանկ չընեինք, գործը գեշ կերթար, աղջիկս:

– Շատ շնորհակալ եմ, հայրիկ, որ ալաֆրանկայի հետևող մյուսյուի մը կուտամ ձեռքս, ասիկա ձեր հայրական սիրտ մեծ ապացույցն է: Սակայն ձեզի խնդրանք մը ունիմ:

– Ինչ է:

– Դուք ալ քիչ մը ալաֆրանկային մոտենալու եք, որպեսզի մեր վրա չի խնդան, օրինակ՝ ալաֆրանկայի մեջ ատանկ կարճ թիկնոցով պտըտիլ չ'ըլլար, սենյակի մեջ եղած ատեննիդ ալ թույլ տը շամպրը մը հագնելու եք:

– Սենյակի զգեստ է, տունը եղած ատեն ատ կը հագնին:

– Եթե օր մըն ալ նավ նստիմ, հատ մըն ալ թույլ տը նա՞վ պիտի առնեմ, ատ ի՞նչ տարօրինակ օրենք է, ամեն անգամ որ տեղս փոխեմ, զգեստս ալ պիտի փոխեմ:

– Օրինակ՝ ոտքերուդ ապալապճինները հանելու ես և հագնելու ես գեղեցիկ բանթուֆլա, ալաֆրանկային հետևողները բոլորն ալ ատանկ կը հագնին:

– Իսկ եթե ոտքերս մսին կամ պաղ առնե՞մ:

– Թող ալաֆրանկա ըլլա ու մեր վրա չի խնդան տե ինչ կուզե ան թող ըլլա: Եթե ունե մեկուն թևը ցավի, ոչ ոք զայն չի ծաղրե, սակայն եթե ապաթերիկ հագնիս, բոլորը վրադ կը խնդան, հիմա մսելու համար խաղք ու խայտառա՞կ ըլլանք աշխարհքիս առաջ: Կըլլա՞:

– Չ'ըլլար:

– Օրինակ՝ ձեր սա ակնոցն ալ մեկդի նետելով՝ ալաֆրանկա ակնոց մը պիտի գործածեք. ծխամորճի տեղ ալ սիկարա պիտի քաշեք:

– Աս տարիքես ետքը կրնա՞մ ատանկ բաներ սորվիլ:

– Պիտի սորվիք, հայրիկ, զձեզ այդ կերպարանքին մեջ տեսնողները պիտի ծաղրեն, քահ քահ խնդան ձեր վրա:

– Խնդալու ինչ կա. կերպարանքս ինչ ունի, կարճ թիկնոցիս ինչու պիտի չի հավնին, գուլպաներուս գույնը գե՞շ է, նախը վարե՞մ է. կը խնդան եղեր. թող խնդան, որո՞ւն հոգը:

– Ամեն կողմ հառաջադիմություն է, մենք ինչու ետ մնանք:

– Հառաջադիմելու համար կարճ թիկնոց հագնելու չէ՞, ատանկ օրե՞նք կա. ես կը հառաջադիմեմ տե ապալապճիններս չեն թողուր: Ո՞վ ըսած է ատիկա:

– Քանի որ ամեն մարդ բանթուֆլա կը հագնի, թույլ տը շամպրը կը գործածե, քանի որ ամենմարդ սիկարա կը քաշե, դուն ալ անոնց պես հագնելու

ես, անոնց պես խմելու ես: Եթե ատանկ չընես՝ ես ալ հարսանիքը կը հետաձգեմ, որովհետև ամենքը զիս պիտի ծաղրեն, պիտի ըսեն՝ հորդ կերպարանքը շատ տարօրինակ է:

– Առ քեզի փորձանք մալ:

– Ես ալ ուրիշ կերպարանքով աներ չեմ կրնար ըլլալ:

– Բոլոր հարսնուհիները մեր վրա՞ պիտի խնդացունենք. ըսածներս ընես նե ինչ կըլլա. տես ինտոր կը վայլե. քսան տարեկան երիտասարդ կը դառնաս մայրիկս ալ կուրախանա. մյուս սենյակը զույգ մը բունթուֆլա կա, հատ մըն ալ թոպ տը շամպրը. կուգես բերեմ անգամ մը հագցունեմ նայե ինչ լավ պիտի ըլլա... կեցիր բերեմ:

– (ինքն իրեն) թող բերե անգամ մը հագնիմ, քանի որ հառաջադիմությունը, քաղաքակրթությունը ատանկ կը պահանջե...

– Ահա բերի, հայրիկ, սա թիկնոցդ հանե, թեղ մտցուր, մյուս թեղ ալ մտցուր... մյուսն ալ...

– Քանի հատ թև ունեի՝ մտցուցի, սա թոպ տը շամպրը ըսվածը երեք թև՞ ունի:

– Ապալապճիներդ ալ հանե, սա բանթուֆլան հագիր, մյուսն ալ մեկալ ոտքդ անցուր, քիչ մը քալե նայմ...

– Ճանրմ սա գիշերանոցը շատ երկար է:

– Փեշերը բարձրացուր:

– Բարձրացնեմ, ամա ոտքերուս կանցնի, պիտի իյ...

– Կամաց, հայրիկ, կամաց, վեր ելիր, մի վախնար, բան մը չէ. ոևէ տեղդ ցավա՞վ:

– Հոգ մըներ, հայրիկ, հիմա կանցնի, ահա Համբարձում աղան կուգա, կը գրուցեք, ցավդ կը մոռնաս:

– Խեր ըլլա, Նիկողիմոս աղա, ինչ կերպարանք է, մաշալլահ, որքան ալ աղվոր վայլեր է:

– Վայ թևս...

– Ճանրմ թեղ ի՞նչ եղավ:

– Հառաջադիմելու ատեն ցավցուցինք:

– Ի՞նչպես եղավ:

– Քաղաքակրթության պատճառով... քանի որ բոլորն ալ թոպ տը չիտեմ ինչ կը հագնին...

– Է ետքը՞:

– Քանի որ բոլորն ալ բանթուֆլա կը հագնին...

– Ատկե ինչ կելլա:

– Քանի որ բոլորը սիկարա կը քաշեն:

– Հետո՞:

– Քանի որ բոլորը վրանիս պիտի խնդան, որպեսզի չի խնդան, որպեսզի մեզի չի ծաղրեն, թևերնիս ցավցուցինք. այսինքն ուրիշներուն հարմարվեցանք, ալաֆրանկա եղանք, թևերնիս տեղեն հանեցինք:

– Եթե ալաֆրանկա եղար, մի վախնար, թեղ տեղեն ելած չէ, որովհետև ալաֆրանկա բժիշկները թևը ելլալ չեն ընդունիր:

– Բայց թևս կը ցավի:

– Որո՞ւն հոգը, կը ցավի, բայց ելած չէ, ալաֆրանկայի մեջ թևը տեղեն ելլալ կամ կուտրիլ չի կա:

– Անանկ է նե աստուծով է որ ալաֆրանկա եղանք, հետո ինկանք, եթե ալաֆրանկա չեղած իյնայինք, գուցե թևերնիս կուտրեինք:

11.

– Վայ Նիկողիմոս աղա վայ, սա ինչ սիրուն կերպարանք է. Բերայի երիտասարդներուն նմաներ ես:

– Կաղաչեմ հին սովորություննիդ ձգեցեք տե ասկե ետքը ինձի մոնսինյո Նիկողիմոս ըսեք, Նիկողիմոս աղա խոսքը ալաֆրանկա չէ, թոպ տը շամբրիս պատվույն կը դիպչի:

– Ներեցեք:

– Հետո՞ ներս մտնելու ատեննիդ սենյակին դուռը զարկեք, և մինչև անթրե չըսվի՝ ներս մի մտնաք, որովհետև ալաֆրանկային մեջ ատանկ չընելը մեծ ամոթ է:

– Չէի գիտեր:

– Բոլոր հառաջադիմելու վրա են, մենք ինչու ետ մնանք:

– Իրավունք ունիք, լսածիս նայելով՝ աղջիկնիդ Գեվորգ աղային կուտաք եղեր:

– Մյուսյու Ժորժին կուտամ, հարսանիքի ծախքն ալ կուտամ, ալաֆրանկայի մեջ հարսանիքի ծախքը աները կուտա եղեր:

– Ձեզի խաբեր են:

– Ինձի խաբեր են մի, դուն գիտե՞ս թե որքան դժվար է ալաֆրանկա մարդ մը խաբելը, եթե աղջիկս մյուսյու Ժորժին չի տայի, բարոյապես մեռցուցած մը պիտի ըլլայի զինքը, որովհետև լամուր սենթրոտյուի բլյու դեղեման տան լը քեոր քը լը վան տան գյուն մեզոն ուվերթ, լամուր է բլյուֆոր քը լա կեր, սե

քեմոն մալ քոնթանժիտիեռ քի դան քրենեթիք սեռ քիլ բոսետ. հրամմեցեք, դուք իմ տեղս եղեք տե աղջիկնիդ մի տաք. սակայն ես ալ առաջ, երբ սի-վիլիզասիոնին ինչ ըլլալը չէի գիտեր, քեզի պես կը մտածեի, հիմա միտքս պայծառացավ:

– Նիկողիմոս աղա:

– Նիկողիմոս աղան դուն ես, հասկցա՞ր, քեզի չըսի՞ մյուսյու Նիկողիմոս ըսե ինձի:

– Մոնսինյո Նիկողիմոս ձեզի խաբեր են... ալաֆրանկա ըսելով՝ ձեզմե դրամ կը քաշեն, մյուսյու ժորժը խաբերային մեկն է:

– Լոժիքին դեմ կը խոսիս:

– Մյուսյու ժորժը անամոթին մեկն է:

– Մանթրըրը ձեռքեդ բաց մի թողուր:

– Լիրքին մեկն է:

– Պաղարյամբ դատելու է:

– Աներեսին մեկն է:

– Ձեր քոնսիանսին հետ տեսնվեցա՞ք:

– Առավ փախավին մեկն է:

– Հառաջադիմութենեն, սիվիլիզասիոնեն լուր ունի՞ք. օր մը թոպ տը շամպր հագած ունի՞ք:

– Բոպ տը շամպր չեմ գիտեր. բայց ինչ որ ըսի՝ ճիշտ են:

– Բոպ տը շամպր չգիտցող մարդու մը ըսածներուն ես ականջ չեմ կրնալ կախել: Մյուսյու ժորժը Մատմագել Մարիին համար կայրի, մոխիր կը դառնա:

– Ան ալ մոխիր պիտի ըլլա, քեզի ալ մոխիրի վրա պիտի նստեցունեն:

– Մյուսյու ժորժը լոժիքի դեմ չի վարվիր, լոժիքի դեմ չի խոսողը գեշ մարդ չ'ըլլար, սակայն սիրո մեջ կրնա ըլլալ որ քիչ մը խիստ ըլլա, ինչ ընենք, պլամեն ընոն ժեոն օմ տեթ րամուրեո սե ըրբորչե րա քելքեոն տեթրը մալատ, լե զամուրեո սոն քոմ լե բըթի զանֆան իլ նե ֆո քը լե պերսե ընոն ընո բուր լե զանգորմիր, իլ է քենբոսպը տեթը ամուրեո է սաժ ան մեմ քան: Դուք այս բոլորը գիտե՞ք մոնսինյո Կիրակոս:

– Դուք ասոնք մյուսյու ժորժեն սորվելով գոց ըրած եք:

– Սա մը վու ըրկարտ բա:

– Ի՞նչ ըսիք:

– Ըսածս սա է որ խելքերնիս գլուխնիս բերենք տե հառաջադիմենք: Երիտասարդները չեն կրնար մեզի նմանվիլ, մենք անոնց պիտի նմանվինք. լե-

նը մարգարեին քովը չերթա նե մարգարեն լեռան քովը կերթա, կըսեն. Աս անցավոր աշխարհքիս մեջ ինչու ասոր անոր հետ գեշ ըլլանք:

– Անանկ է նե մնաք բարով, ձեզի հետ խոսիլ չ'ըլլար:

– Մնաք բարով կոշտ խոսք է, քաղաքավարության ալ դեմ է, բանթուֆլա-յիս ալ դեմ է, ատիո պիտի ըսես:

– Լավ. Ատիո, ատիո:

– Ատ ի՞նչ պաղ ատիո է, քիչ մը խոնարհվելու ես, ապա ձեռքս բռնելով պիտի թոթվես և ըսես, կը ներեք, մոնսինյո Նիկողիմոս, զձեզ թողուլ ստիպված ըլլալուս, ամոթով մնալուս. ձեր ներողամտությունը կը հայցեմ, վոթր-սերվի թեոր, ատիո, ժը վու սալյու, կամ՝ քիչ մը ավելի քաղաքավարությամբ՝ ժե լեմեոր տը վու սալյուեր, կամ քիչ մը ավելի երկար տեսակը՝ վեոյլե ըրսը-վուար մե քոմբլիման քրե, քրե, զամթյուլան ըսելով կրնաք երթալ:

– Շատ աղեկ, ատիո, մոնսինյո Նիկողիմոս:

– Օբլեզիր տը վու ըրվուար, մյուսյու Կիրակոս:

12.

– Մատամը անգամ մը ասիկա թող հագնի՝ տեսանք ինչպես է:

– Մեղա, ինչ ըսել է՝ ինչպես է, հարսնիքի, պարահանդեսի մեջ հագնելու գգեստ է:

– Կուրծքը բաց է ըսիր տե... այսինքն՝ չըլլա թե մսիս, կուրծքը, թևերը գոց ըլլան տե նորեն տեքութե ըլլա նե չըլլար:

– Չ'ըլլար ճանըմ, քանի որ ամենքը կուրծքերնին կը բանան, մենք կրնա՞նք գոցել, զանոնք նախատած կը սեպվինք:

– Չէ, զիրենք նախատիլ չեմ ուզեր, օրենքը ինտոր է, անանկ ընելու է, անոնց հարմարվելու համար եթե պետք ըլլար շրջագգեստի թիկունքն ալ բանալ, կը բանանք, միայն թե զանոնք նախատած չըլլանք:

– Ես, փառաց աստուծո, ատոնք լավ գիտեմ, ինչ ընելիքս ալ գիտեմ, ալաֆրանկա հյուրեր քիչ գալու ըլլան՝ կուրծքս կը գոցեմ, թևերս ալ քիչ կը բանամ, իսկ երբ բոլոր հյուրերը ալաֆրանկա ըլլան՝ ան ատեն՝ ուզեմ, չուզեմ, կուրծքս ալ պիտի բանամ, թևերս ալ: Բան մըն ալ կա որ պետք չէ որ հյուրերուն հակառակվինք:

– Չէ ատ ըսել չեմ ուզեր, սակայն նայե որ եկող հյուրերը շատ ալ տարօրինակ ալաֆրանկա չըլլան:

Թըք թըք:

– Անթրե:

- Հրամանեցեք, մյուսյու ժորժ:
- Կաղաչեմ, նստեցեք, ձեր տեղեն մի ելլաք, ալաֆրանկայի մեջ աները ոտքի չ'ելլար:
- Է, մյուսյու ժորժ, ժամանակը եկավ. Վաղը չէ մյուս օրը հարսանիքը պիտի ըլլա, հրավիրատոմսը գրենք:
- Ես քոբիան պատրաստեր եմ, անգամ մը կարդամ լսեցեք. ետքեն կուղարկենք տպելու:
- Կարդա տեսնանք:
- Մոնսինյո Նիկողիմոսը, մատամ Նիկողիմոսը, մատմագել Աննիկը, մատմագել Ֆիլոն, մատամ Մարթան, մատամ Շուշանը, մատամ Ջյումայուլը, մոնսինյո Թորոսը, մոնսինյո Ամբակումը, եղբայրը, մայրը, քույրերը, հորեղբայրը, մորաքույրը, մորաքրոջ աղջիկը, հորաքրոջ տղան, պատիվ ունին ձեզի հայտնելու թե մատմագել Մարի Նիկողիմոսյանը մոնսինյո ժորժ Բարթողիմեոսյանի հետ պիտի պսակվի հառաջիկա կիրակի իրիկուն, ճաշեն ետքը, ժամը ալաֆրանկա 6-ին: Շատ լավ զվարճություն պիտի ըլլա, նաև տանս: Բոլոր մատմագելները և մատամները տեքուլթե շրջագգեստ հագած պիտի ըլլան, կը խնդրվի պատվել ձեր ներկայությամբ:
- Հրավիրատոմսին մեջ բավական ժողովուրդ կա. բոլորն ալ գալու՞ են:
- Անոնք հրավիրողներն են:
- Ճանրմ, մեկ հարսանիքի համար քանի՞ հոգի հրավեր կը գրե:
- Ալաֆրանկայի մեջ հարսը որքան հարազատներ, հարևաններ ունի, բոլորն ալ իրավունք ունին հրավիրելու:
- Շատ աղեկ, ուրիշ բան մը պե՞տք է:
- Վարձով սեղան, աթոռ, ձի, սափոր, գավաթ, գինի, օղի, բոմ, քոնյակ, վերմուք, շամբանյա, քաքառ, մենթա, ապսենթ, քընա քընա, ասաֆեթիտա առնելու է, սբարմաչեթ մոմ, կազ, վերջապես ասոնք բոլորը այսօր առնելու է, որ պատրաստ ըլլան. Վերջապես երկու ձեռք ալաֆրանկա նվագախումբ, մեկ դաշնակ, մեկ լաթերնա, մեկ արմոնիք, երկու ձեռք ինճե սազ, մեկ ջութակ, լավութա և այլն ապսպրելու է:
- Ատոր գլուխը ալաֆրանկա էր. իջնալով իջնալով ալաթուրքա դարձավ, ես միայն ալաֆրանկա կուգեմ, ալաթուրքայեն չեմ ախորժիր:
- Դուն չես ախորժիր ամա՛ ուրիշները կախորժին. Անոնց ալ պահանջը բարելավելու է:
- Մենք ալ միայն ալաֆրանկա նվագեն ախորժողները կը կանչենք:
- Ըսածնիդ շիտակ է, բայց կարգ մը բարեկամներ ալաֆրանկա երաժշ-

- տութենեն՝ բան չեն հասկնար:
- Անոնց ալ իմացունենք, որ ալաֆրանկա երաժշտությունը սորվին, ետքը գան:
- Չ'ըլլար, լոժիքին դեմ է:
- Ալաֆրանկայի դեմ թող չըլլա տե. Ինչ ընենք, քիչ մըն ալ լոժիքի դեմ թող ըլլա:
- Դուք գիտեք, որովհետև ալաֆրանկայի մեջ փեսացուն ասկե ավելի բան ըսելու իրավունք չունի, ինձի թույլ տվեք որ երթամ, աստուծով հարսանիքի գիշերը կը տեսնվինք, ատիո, մոնսինյո Նիկողիմոս:
- Ատիո, մյուսյու ժորժ:
- Թե լա լա թարիլա լա...
- Մոնսինյո Նիկողիմոս, մուզիքային շուտ չէ՞:
- Ալաֆրանկայի մեջ շուտ կը սկսին, ուշ կը վերջացունեն, իսկ ալաթուրքայի մեջ ուշ կը սկսին, շուտ կը վերջացունեն: - Վայ մատամ, բարտոն, մուզիքայով զբաղեցանք, ձեր որպիսությունը հարցնել մոռցանք: Բոմա՞ն վոս բորթե, մատամ:
- Մերսի պիեն, մոնսինյո Նիկողիմոս:
- Հրամանեցեք, նստեցեք, ոտքի մի կայնիք, մոնսինյո Կիրակոս, դուք ալ սանկ հրամանեցեք, մատամ Կիրակոս, դուք ալ այստեղ նստեցեք, կը ներեք, որ մեկ երկու վայրկյան զձեզ հոս թողելու հարկադրված եմ, ինչ ընենք, ալաֆրանկայի մեջ աներհայրը հոլի պես դառնալու է, որպեսզի ունե անպատշաճ բան չըլլա, ատիո, օրըվուառ... ծո Թորոս, ով որ դուռը զարնե՛ կը բանա՞:
- Վոնտե՞մ:
- Մի վոնտեր, սակայն ալաֆրանկայի համաձայն՝ մինչև անթրե չըսվի՛ ներս չեն մտնար: Ատոր համար եթե մեկը դուռը զարնե, առաջ անթրե ըսե, հետո բաց, թող չըսեն թե մոնսինյո Նիկողիմոսը ալաֆրանկա հարսանիք կընե, բայց ալաֆրանկայեն լուր չունի:
- Չաթ, չաթ, չաթ:
- Անթրե, մերսի, մատամ, մատմագել, հա հիմա բաց դուռը: Հրամանեցեք վեր հրամանեցեք:
- Մերսի, մերսի, մոնսինյո Նիկողիմոս:
- Կեցցեք, կեցցես, բոլորն ալ տեքուլթե են աս իրիկուն. Տեսնանք մատամինս ինտոր պիտի ընդունե զիրենք:
- Չընկըլ չընկըլ...
- Անթրե, էֆենտիմ, անթրե, քաշեցեք թելը:

- Ջրկիրը հո՞ս պիտի գա:
- Աստված պելան տա, հոս պիտի գա, անթրե, խաղք պիտի ըլլանք
- Թրամ բամ թրա բամ բամ բամ...
- Ծընկըլ ճընկըլ ճընկըլ...
- Անթրե, անթրե...
- Պոնսուառ, մոնսինյո Նիկողիմոս:
- Ժը վու սալյու մյուսյու Նիկողիմոս...
- Ժե լոնեոր տը վու սալյու է մյուսյու Նիկողիմոս...
- Վեր հրամմեցեք մատամ:
- Մատամ մի ինծի էնսյուլք է ասիկա, ես տակավին ամուսնացած չեմ. Ես մատմազել եմ:
- Բարտոն, ես ուրկե՞ գիտեմ, ամեն եկողին ամուսնացա՞ծ ես՝ հարցնելու եմ հետո՞ մատամ կամ մատմազել ըսելու եմ:
- Ոչ, սակայն ասիկա զիս վիրավորել էր:
- Կը ներեք, մատմազել, հրամմեցեք, մատմազել... (բանս գործս ձգած ալ ասոնց մատամ կամ մատմազել, ըլլալը որոշելու պիտի ելլամ հա՞. Հեմ ասոնց նայե անգամ մը. Առանց կոշիկնին մաքրելու, ցեխոտ ոտքերով վեր կելլան. արդյոք ա՞ս ալ ալաֆրանկայի օրենքն է, ասոր դեմ արգելք չի կա՞:
- Մոնսինյո Նիկողիմոս, վեր հրամմեցեք, հյուրերը ձեզի տեսնալ կուզեն:
- Կուգամ կոր, եկա:
- Բուլքան թող սկսին. Արշ մուզիքա:
- Մինակ տեքոլթե հագնողները կրնան տանս պարել:
- Մատմազել զիս ձեզի քավալիե կընդունի՞ք:
- Շնորհակալությամբ:
- Մատամ, բուլքա մը պարե՞նք:
- Շատ լավ, մյուսյու:
- Մյուսյու Նիկողիմոս, դուք տանս մը պիտի չընե՞ք:
- Դուք ըրեք տե...
- Արշ, մուզիքա:
- Թրա բա բամ:
- Կեցցե, կեցցե, ինտոր ալ աղվոր կը պարեն. Մյուսյու Նիկողիմոս, կը տեսնա՞ս սա մյուսյուին ըրածները:
- Ինչ կընե:
- Նայե ինտոր տամային մեջքը կը սղմե:
- Խաղին օրենքն է ատիկա, քիչ մըն ալ թող սղմե ատկե ինչ կելլա:

- Բայց ասիկա կատարյալ լրբություն է:
 - Պարելու ատեն մարդուս միտքեն գեշ բան չ'անցնիր, հին գլուխներն են որ գեշ միտք կունենան: Ալաֆրանկան ատանկ բան չ'ընդունիր: Ուրիշի չըսես. քեզի կը ծաղրեն, վրադ կը խնդան:
 - Ես ասանկ բաներ չեմ կրնար մարսել:
 - Չես մարսեր նե մի ուտեր, կը նշանակե ախորժակի պակասություն մը ունիս. ալաֆրանկան քիչ մը սորվիս նե՝ ախորժակդ կը բացվի: Առաջ ես ալ քեզի պես կը մտածեի, սակայն հետո երբ լուսավորվեցա, ալ չեմ զարմանար: Ալաֆրանկան հառաջադիմություն ըսել է:
- 14.
- Է, մյուսյու Ժորժ, աղջիկես՝ Մարիեն գո՞հ ես:
 - Այո, մոնսինյո Նիկողիմոս երկինքեն գետին գոհ եմ, ողջ ըլլա, ինքն ալ ինծի շատ կը սիրե. սակայն ձեզի խնդիրք մը ունիմ, մոնսինյո Նիկողիմոս:
 - Ի՞նչ խնդիրք:
 - Էֆենտիմ, մեկուն պզտիկ տեք մը ըրած եմ տե...
 - Տե՞րտ մի ըրած ես:
 - Այսինքն փոխառություն մը ըրած եմ...
 - Ըսել է պարտք ունիս:
 - Պարտ չէ. Ալաֆրանկայի մեջ տեք կըսեն, աս տեքը անանկ բան մըն է որ... օրինակ, ես մեկեն դրամ կառնեմ, բայց չեմ կրնար տալ, ահա այդ դրամը ինծի տեք կը հաշվվի:
 - Դրամին տերն ալ քեզի դրամ տված կը սեպվի, անանկ չէ՞, սակայն այդ ձեր ըսածին ալաթուրքա պարտք կըսեն:
 - Ահա այդ պարտք ըսվածեն կա տե հիմա մարդը եկեր դրամը կուզե:
 - Տայիր, լմննար:
 - Տայի բայց... քրիթիք վիճակի մեջ կը գտնվիմ, եկա ձեզի խնդրելու որ ատ մարդուն մոտ ինծի պզտիկ չի ձգեք, սա տեքը տաք:
 - Սակայն դուն չափը կանցունես. Աներ ըլլալես ասդին՝ դրամ տալե գատ ուրիշ բան ըրած չունիմք:
 - Աներհայրերուն պարտականությունն է իրենց փեսաներուն պարտքը տալը, ինչ ընենք, միշտ չի պատահիր, քառասուն տարին անգամ մը կը պատահի: Ես ալ կուզե՞մ որ ասանկ ըլլա, բայց եղավ, ինչ ընենք, ժամանակները գեշ են:
 - Քանի՞ դուրուշի խնդիր է:
 - Պզտիկ բան մը՝ հարյուր ոսկու տեք մը:

- Ուրիշ տեք չունի՞ս:
- Չունիմ, մոնսինյո Նիկողիմոս, չունիմ:
- Այդ պարտքը ինտո՞ր ըրիր. դրա՞ն փոխ առիր:
- Այո:
- Առած դրամդ ի՞նչ ըրիր:
- Պզտիկ պարտք մը ունեի, ան տվի:
- Շատ աղեկ, այս պարտքդ ալ ես կուտամ, սակայն մուրհակ մը գրե, թե երկու ամիսեն տալու ես՝ տոկոսն ալ հետը:
- Ըլլալո՞ւ բան է, որ աներ մը իր փեսայեն մուրհակ ուզե, փառք աստուծո, հոս եմ, չեմ փախչիր: Շիտակը շատ կը ցավիմ որ քաղաքակրթության այս կողմերը տակավին սորված չես:
- Դուն ատ դրամը ուրկե՞ պիտի վաստկիս ու տաս:
- Ինձի քու խանութիդ գործերուն հսկիչ պիտի չի կարգե՞ս, ահա անկե կը վաստակիմ, պարտքս կուտամ:
- Դուն տոպյայի սկզբունքով տոմար բռնել գիտե՞ս:
- Այո, գիտեմ, ձախ կողմը՝ տուա:
- Ի՞նչ տուա մի...
- Այսինքն ձախ կողմը տուա, աջը ավուար, աջն ու ձախը գիտնաես ետքը անդին բան չի մնար: Օրինակ գանձանակը պարտք ունի կունենա ապրանքներուն, ապրանքները առնելիք կունենան ծախքեն, ծախքերը առնելիք կունենան մուտքեն. անգամ մը որ գործը սկսինք, աստուծով ասոնք բոլորը կըլլան: Հետո՝ տոպյայի ձևով տոմար բռնողները միշտ մեծ շահեր կունենան...
- Տոպյայի գործը տարբեր է:
- Անանկ է նե վաղվընե գնա խանութ, սկսե գործը, նայե որ խանութն ալ տոպյայի համաձայն աշխատցունես:
- Թըք, թըք, թըք:
- Անթրե...
- Հայրիկ, մյուսյու Ժորժը թող գա տե երթանք քիչ մը զբոսնունք:
- Շատ լավ աղջիկս:
- Հայրիկ ես ձի կուզեմ:
- Չէ, ատիկա չեղավ. Զալելով գացեք:
- Հայրիկ, ես ձի կուզեմ, հեմ ինձի համար հատուկ լավ ձի մը կուզեմ որ ուզած ատենս նստիմ ու պտըտիմ:
- Մոնսինյո Նիկողիմոս, ձի մըն ալ ես կուզեմ, ալաֆրանկայի համաձայն բաց օդի մեջ պտըտիլ չ'ըլլար՝ առանց ձիու:

- Այո, ամեն կողմ լուսավորություն է հիմա: Առանց լուսավորության ձի չ'ըլլար, առանց ձիու ալ լուսավորություն չ'ըլլար, հա՞...
- Օդավոխության ելլալու ատեն՝ ոտքով քալել կըլլա՞. Բոլորը մեր վրա խնդացունե՞լ պիտի տանք:
- Առանց ձիու սրկե հունա չեմ երթար:
- Հասկցանք, հասկցանք, Թորոսը դրկեցեք տե հիմակուհիմա երկու ձի թող վարձե... հետո կը մտածենք:
- Ատիո, հայրիկ:
- Ատիո, մոնսինյո Նիկողիմոս:
- (Ես այս փեսայիս ըրածեն բան չեմ հասկնար, բայց սպասենք տեսնանք ինչ պիտի ըլլա:

15. ...

- Նիկողիմոս աղան դո՞ւք եք:
- Այո, ես եմ, ինչ կուզես, հոս ի՞նչ գործ ունիս:
- Չիերս կուզեմ:
- Ի՞նչ ձի:
- Հեծնալու ձիերը, հեծնալու, արագ վազող ձիերս մեկը մոխրագույն, մյուսը՝ ճերմակ:
- Ի՞նչ կըսես, ինչ է պատահեր, բան չեմ հասկնար, ես ձիապա՞ն եմ ինչ է:
- Խելքդ գլուխդ ժողվե, քեռի, ես ատանկ խոսքերե խաբվող չեմ, քու գիտցած մարդոցմեն չեմ, մարդու ձի՞ կուտամ. Չիերս կուզեմ:
- Դուն ինձի ձի տվա՞ծ ես:
- Երեկ տղաքը երկու ձի չի բերին, փեսադ է ինչ է. Խաբեբային մեկը կերևա, ահա անիկա հեծավ, մեյ մալ կնիկը, հիմա ձիերս չկան, աղա, մենք ձիերը չենք ծախած, վարձով տված ենք:
- Չիերը չի վերադարձուցի՞ն ձեզի:
- Չես գիտեր հա, վայ ծերուկ, վայ, չի բերին, աղա, չի բերին:
- Ալաֆրանկայի համաձայն ինչպես է. ձի մը վարձվի նե՝ նույն իրիկունը կը վերադարձվի՞:
- Խաբեբայություն սկսար աղա, հոս ինչ գործ ունի ալաֆրանկան վարձով ձի եք ուզեր, հիմա թե վարձս տվեք, թե ձիերս: Արդեն ատ Ժորժ է ինչ փորձանք է՝ խարդախ մեկը կերևա:
- Լոժիքը չի մոռնա:
- Ես ձիուս պոչն ալ անոր ցույց չեի տար, սակայն...

- Մի բարկանար և լոժիքի սահմանեն դուրս մի ելլար:
- Լոժիքը ո՞վ է. ձիերուս դրամը ես տված եմ, լոժիք կը լսե՞մ, լոժիքը զավակներուս հաց կուտա՞:
- Դուսն չես հասկնար, ... նստե տե ըսեմ... ծո Թորոս պարոնին սիկարա մը բեր:
- Ես պարոն չեմ, աղա, մեզի քեռի կըսեն:
- Քեռիին սիկարա մը բեր:
- Նարգիլե կը քաշեմ, աղա:
- Քեռիին նարգիլե մը բերե՞ք... քեռի դուսն շատ կը բարկանաս և քաղաքակրթության ոգու հիմնովին հակառակ կը գործես, կը ցավիմ որ...
- Բաց խոսե, քեռի, բաց, մենք կոշտ մարդիկ ենք, ատանկ վրանգոց խոսքերեր բան չենք հասկնար:
- Հրամանեցեք նարգիլե մը պաղ առած եմ տե...
- Կը ցավիմ որ...
- Էոհո, էոհո, էոհո, կըլ կըլ կըլ. էոհո, էոհո, էոհո, ականջս քեզի է, ըսե, էոհե, էոհո... կըլ կըլ կըլ...
- Կը ցավիմ որ...
- Էոհո, էոհո, էոհո, կըլ կըլ կըլ...
- Կը ցա...
- Էոհո, էոհո, էոհո...
- Կը ցավիմ որ...
- Էոհո, էոհո, էոհո, կը ցավիս որ... կըլ կըլ կըլ...
- Որ դիմացիննիդ չեք ճանչնար:
- Կը ճանչնանք աղա, կը ճանչնանք, էոհո, էոհո, մենք հում մարդ չենք ես քենե շատ դրամ առած եմ, սակայն այդ Ժորժը...
- Ժորժը փեսա է, ալաֆրանկան ալ շատ լավ գիտե, գաղիերեն ալ գիտե, լոժիքեն կը հասկնա, տոպյայի սկզբունքը գոց գիտե, տոպյայի սկզբունքին ծանոթ մեկը կելլա տե քու ձիերդ կուտե՞:
- Չ՞ուտեր, բայց կը ծախե, աղբարս...
- Ալաֆրանկայի օրենքները գիտցող մեկը կելլա տե ուրիշին ձին կը ծախե:
- Է, ձին թևը անցուցած շուկան պիտի չի պտըտցունե որ ալաֆրանկայեն անչնա, կամ որպես զարդ դարակին վրա պիտի չի դնե ա... հաճի պապա...
- Բերանդ ժողվե. հաճի պապա՞ն ով է:
- Մի բարկանար, թանկագինս, հաճի պապան գեշ խոսք չէ, չի հավնեցար նե ինձի տուր:

- Ինձի մոնսինյո Նիկողիմոս կըսեն:
- Կը ներես, մուշու, չէի գիտեր, էոհո, էոհո, էոհո, է մուշու Նիկողիմոս, մեր ձիերու խնդիրը ով պիտի լուծե:
- Անգամ մը հարցունեմ մյուսյու Ժորժին... վաղը առտու եկուր:
- Մենք գործի մարդ ենք, վաղը չեմ կրնար գալ, դուք հրամանեցեք մեր ախոռը, հոն կը խոսինք, մեյ մալ լեղի սուրճերենիս կը խմես:
- Ախո՞ն գամ...
- Կուզես նե թուլումպաճիներուն դովուշը եկուր:
- Դովո՞ւշը գամ:
- Հապա ո՞ւր կուզես գալ:
- Ճանըմ ինչո՞ւ կը պոռաս:
- Ինչու պիտի չի պոռամ: Դրամ չունիք նե ձի մի նստիք. եզան սայլ նստեցեք, եզան սայլ:
- Կամաց խոսե, քեռի:
- Ինչպես կամաց խոսիմ, ախոռ չես ուզեր գալ, դովուշ չես գար, անգղիացիներուն պալա՞տը կանչեմ քեզի:
- Ալաֆրանկայի մեջ պոռալը մեծ ամոթ է:
- Ալաֆրանկա ըսածդ արա՞գ կը վազե թե կամաց. ես ալաֆրանկա մալաֆրանկա չեմ գիտեր, դրամս կուզեմ:

16.

- Մյուսյու Ժորժ, անցյալները երկու ձի բերեր տե ձեր տամային հետը զբոսանքի գացեր էիք:
- Այո, գացինք:
- Չիերը ի՞նչ ըրիք:
- Բան մը չըրիք. նույնիսկ չի վազցուցինք որ չի քրտնին:
- Ետքը տիրոջ վերադարձուցի՞ք:
- Վայ, տիրոջը պիտի վերադարձունեինք, մարդ եթե մեկե մը բան մը առնե՝ անպատճառ վերադարձնելո՞ւ է:
- Հապա ի՞նչ պիտի ընե:
- Պիտի չի տա:
- Դուսն խանութին հաշիվներն ալ ասանկ կը բռնես:
- Այո, տոպյայի սկզբունքով:
- Այսինքն առածդ չե՞ս տար:
- Չեմ տար. ալաֆրանկա տոմարի օրենքը ատանկ է, ալաթուրքայի մեջ

տարբեր է, մարդ եթե մեկե մը բան մը առնե, շահով ուրիշին չի՞ ծախեր, շահ ըսվածը հապա ի՞նչպես կըլլա:

– Բայց այդ ձիերը մենք չէինք գներ, վարձեր էինք:

– Աման ատանկ բաներ մի ըսեր:

– Վարձով չէի՞ր բերեր:

– Կը խնդրեմ, կամաց խոսե, մարդ թող չի լսե, ատ խոսքը անգամ մըն ալ բերանդ չառնես:

– Ճանըմ ինչո՞ւ չառնեմ, վարձով չէ՞ր:

– Ամոթ է, ամոթ ատանկ խոսք մըներ ըսեինք, լսողը ինչ կըսե. մոնսինյո Նիկողիմոսի պես ալաֆրանկա և հարուստ մեկը ձի չունենալով՝ վարձով առեր է, ինչ ծանր խոսք է ասիկա, գիտե՞ս, կատարյալ անպատվություն է:

– Յա, ատանկ է հա՞:

– Հարկավ:

– Որ ատանկ է՝ խոսած չըլլանք. արդեն քեզմե զատ ուրիշ մարդ չի լսեց ամոթ է եղեր հա՞, ին գիտնայի:

– Ամոթն ալ խո՞սք է:

– Է քանի՞ով սակարկեցիր ձիերը:

– Սակարկությունը վաղը պիտի ընեմ, դրամին տեղն ալ պոնո մը պիտի տամ:

– Չիերը հիմա ո՞ւր են:

– Մեկը քիչ մը կը հազա, Նալպանտի մը տվի որ կուրծքին փեխիվան յախըսը դնե, հազը անցունե:

– Մյուսը ո՞ւր է, անոր ալ փո՞րը կը ցավի:

– Այո, ձախ կողմը քիչ մը ցավ ունի:

– Գոնե հոս բերեիր քիչ մը մանանեխ խաշեինք, խմցունեինք:

– Ոչ, իր ընկերոջմեն բաժնել չ'ըլլար, հոն շատ լավ կը նային, քիչ օրեն կը լավնա:

– Է ատոնց համար ախոռ մըն ալ կառուցելու է:

– Ախոռ. ատ ինչ կոչտ բառ է, մոնսինյո Նիկողիմոսին ձիերը ախոռի՞ հարմար կը գտնաք:

– Հապա ո՞ւր պետք է դնենք ատ ձիերը. հյուրասրահին մե՞ջ նստեցուցնենք:

– Ճանըմ խոհանոցին քովը մառան մը կա, պարպելու է, հարթարելու է, վերջացավ գնաց:

– Մառանը ձի կը կապվի՞, ծառային մառանեն քիչ մը ուտելիք բեր ըսենք:

նե՝ ձիերը ափսեի վրա դրած պիտի բերե և հյուրերուն հրամցունե...

– Ուրեմն ուրիշ սենյակ մը շինելու է, տեղ մը կը գտնանք:

– Հիմա գնա սա մարդուն դրամը տուր վերջացուր, որ նորեն չի գա պոռա:

17.

– Թըք թըք թըք:

– Անթրե, դո՞ւն ես մատամ:

– Ես եմ, հա, ես եմ. աս ի՞նչ է. կարգ մը անծանոթ մարդիկ տուներնիս կը

մտնան, կելլան:

– Ճանըմ օտար չէ, քարոճածը է, մատամ:

– Ով կուզե թող ըլլա:

– Ալաֆրանկայի մեջ ատանկ բաներուն ուշադրություն չեն դարձուներ:

– Ինձի նայե, Նիկողիմոս աղա, այսքան տարվա էրիկ ենք, մեր տունը մտնող ալ եղեր է, ելլող ալ, սակայն այսօրվա մարդուն ըրածը ոչ մեկը չէր ըրած. քու պատվույդ կը վայլի՞ որ տունդ իտալացի մը գա տե կընկանդ աչք տնկե ընե:

– Սկամպի՞լ կը խաղայիք:

– Սեղանին նստած էինք, անամոթը մեյ մը աչքը գոցեր, մեյ մը ունքերը կը բարձրացուներ, երեսս կը նայիր, կը խնդար:

– Աչքով ընելը իտալերեն ինչ կը նշանակե արդյոք, գիտե՞ս...

– Գիտնալու կամ չի գիտնալու ինչ պետք կա, ատիո ըսելու ժամանակ ալ ձեռքս կամթեց:

– Իտալերեն կամթելը ինչ կը նշանակե:

– Շատ տարօրինակ բաներ կըսես, այսքան ալ միամտությո՞ւն:

– Ատ մարդը ալաֆրանկա է, ալաֆրանկա մարդը անվայել բան չ'ըներ, ինչու մարդուն մեղքը առնեմ:

– Ոտքը կոտրեր տե մեր տունը չի գար, մեղա, սիրտս տակնուվրա ըրավ ան գիս ո՞վ կարծեց:

– Ճանըմ սպասե տեսնանք մարդը գեշ մտքով ձեռքդ կամթեց, չի գիտցած բանիդ համար ինչու կը բարկանաս:

– Ըսենք թե բարի մտքով կամթեց, զավակներուս առաջ կամթելո՞ւ էր, աղջիկները ամենքն ալ տեսան, ելլային ինձմե առաջ գային քեզի ըսեին նե դուն չէի՞ր բարկանար:

– Կը բարկանայի:

– Ասիկա ըսի որ մեյ մալ ըլլա նե չի բարկանաս, հետո՞ եթե մարդը վեր ել-

լա, ըսե որ անգամ մըն ալ չոճուխներուն քովը չի ճանչցած մեկուն հետը կատակ չընէ, տեսնողը ինչ պիտի ըսէ, ամա իտալերենի մեջ վնաս չունի եղեր. ուրիշները ի՞նչ գիտեն:

- Ճաշեն տակավին չե՞ն ելեր:
- Ելան. ահա կուգան կոր:
- Օ, անթրե, սինյոր Քարլո, հանգիստ ճաշեցի՞ք:
- Մանճյա ըրինք, բայց ես բարկացած...
- Ինչո՞ւ բարկացաք սինյոր Քարլո, կերակուրները համով չէի՞ն:
- Մանճյան շատ լավ, սակայն ձեր մատամին չկա բոլիթեձձա...
- Ի՞նչ եղավ:
- Ունա տոնա տեվե...
- Ճանըմ մարդուն տեվեի (ուղտի) մի՞ս կերցուցիք ինչ ըրիք:
- Ունա տոննա տեվե էսերե քոմբլիմեթոգա է բոլիթիքա...
- Բոլիթիքան գե՞շ եղավ:
- Շատ գեշ, վոսթրա մատամ նոն սա ֆարե օնորե նել ըիչեվի ըե ուն բերտոնաճիռ ուն...
- Մատամ ո՞ր ունով (այլուրով) էիք շինել հալվան:
- Այլուրը լավ էր ճանըմ, հաս ունեով շինեցի՞նք:
- Սինյոր քառլո, ուն պոնո:
- Նո պոնո, նո պոնո, վոսթրա մատամ մի ա ինսուլիաթո...
- Սինյոր Քարլո չի հասկնալ...
- Ձեր մատամին հետ քիչ մը կատակ ըրինք, ձեռքը սղմեցի՞նք, մատամ բարկացավ...
- Սինյոր Քարլո, կը ներեք, բարոն, բարտոն, մատամը տակավին ալաֆրանկայի բոլոր օրենքները չի գիտեր, ատանկ բաներ սորված չէ, - մատամ դուն ալ ինչպես հարկն է, ներողություն խնդրե:
- Կը ներեք, սինյոր Քարլո, երեխաներուն ներկայությամբ կատակ ըրի տե ինձի անվայել երևցավ:
- Թե չէ մեր մատամը այդչափ տգետ չէ:
- Մենք սորված չենք երեխաներուն ներկայության ատանկ կատակներ ընելու, ատոր համար ինձի տարօրինակ եկավ:
- Առանձին տեղ մը եթե կատակ ընես՝ ո՞վ բերանը կը բանա:
- Անշուշտ ասանկ կատակներ կըլլան, անասուն չենք ա, այդքան մենք ալ գիտենք:
- Սիրելի սինյոր Քարլո, ոտքդ պագնեն, մի բարկանար:

- Բարտոն, սինյոր Քարլո:
- Վնաս չունի, վնաս չունի - ահա ես երթալ... ատիո:
- Ատիո:
- Տեսա՞ր շարունակ ալաֆրանկային դեմ բաներ ընելով մեր պատվույն կղիպչիս:

18.

- Թըք թըք:
- Անթրե, ինչ կա Ֆիլո:
- Հայրիկ անցյալները տեղ մը հյուր գացած չէի՞նք:
- Գացած էինք:
- Հոն թխադեմ երիտասարդ մը կար:
- Կար:
- Անունն ալ Բոլ:
- Բոլ:
- Ատ Բոլը աղեկ երիտասարդ մը կերևա:
- Կերևա:
- Իշտե ատ Բոլին խանութիդ մեջ գործ մը տաս նե...
- Է...
- Այսինքն գործ մը տրվի նե...
- Է...
- Այսինքն ատ Բոլը գեշ տղա չէ:
- Է...
- Այսինքն գործ մը տրվի նե...
- Ինչ ըսել կուգես:
- Ըսել կուգեմ ատ Բոլը գեշ տղա չէ:
- Մենք ալ գեշ ըսած ունի՞նք:
- Այսինքն խանութիդ մեջ գործ մը տրվի նե երբեմն մեր տունը կուգա, կը տեսնվինք, անոր խոսվածներեն շատ կախորժիմ:
- Միտքդ ինչ է:
- Միտքս սա է թե ատանկ լավ տղա մը ինչու քու շնորհիվդ դրամ չի վատակի, մարդ չի դառնա, քեզի ալ փեսա չըլլա:
- Փեսա՞ մի:
- Փեսա: Ձիս անկե լավի՞ն պիտի տաս:
- Ատ ի՞նչ խոսք է:

– Ինչ խոսք պիտի ըլլա, զիս մայրապետ պիտի ընես ու վանքը պիտի դնես: Ես մյուսյու Բոլը կուզեմ, վերջացավ, այո, մյուսյու Բոլը կուզեմ:

– Քրոջմե՞ղ տրվեցար ատ ճամբան:

– Ինչու անկէ պիտի տրվիմ, փառք աստուծո, ես անասուն չեմ, հիմար ալ չեմ, մյուսյու Բոլը կուզեմ, վերջացավ:

– Կրնա ըլլալ որ ես քեզի ուրիշ մը տամ:

– Կրնա ըլլալ որ ես քու հավանածիդ չի հավնիմ, ալաֆրանկայի մեջ աղջիկ մը իր հավանածը առնելու է: Մյուսյու Բոլը կուզեմ և շատ երկար խոսք ալ չեմ ուզեր:

– Դուն արդէն չափը կանցունես, ես համաձայն չեմ, որ դուն մյուսյու Բոլը առնես:

– Ես համաձայն եմ:

– Ես համաձայն չեմ, Բոլ մոլ չեմ ճանչնար:

– Ես կը ճանչնամ:

– Կորսվե սրկե:

– Կերթամ, ափսոս սակայն որ ալաֆրանկային հետևիլ կուզես և տակավին մտքի ազատության ինչ ըլլալը չես գիտեր, ափսոս, ափսոս...

– Ալաֆրանկայիս չի հավնեցա՞ր, ինչ ունի, ինձի պես ալաֆրանկա մարդ քիչ կը գտնվի:

– Ատանկ ըլլար նե մեկ խոսքով մյուսյու Բոլը քեզի փեսա կընէիր:

– Ալաֆրանկա եղողը առանց սպասելու փեսա՞ պիտի գտնա: Դեռ Մարիին հարսանիքը նոր ըրինք:

– Ես Մարիին հարսանիքին հետ գործ չունիմ, ափսոս որ հայր ես և աղջիկդ այսչափ կը հուզես, չեմ դիմանար, վաղը թոքախտ կըլլամ կը մեռնիմ:

– Հիմա դուն գնա տե մենք մատամին հետ անգամ մը տեսնվինք, որոշում մը տանք:

19.

– Բարի լույս, Նիկողիմոս աղա:

– Աստծու բարին, խեր ըլլա, ինչ կա:

– Չեզի քանի մը խոսք ունիմ ըսելու, ատոր համար եկա, էֆենտի փեսանուդ՝ մյուսյու Ժորժին գալեն ետքը՝ մեր խանութին գործերը առաջվա ընթացքեն շեղվեցան:

– Ալաֆրանկա եղան անանկ չէ՞:

– Ալաֆրանկան չեմ գիտեր, գիտեմ միայն որ օրե օր գանձանակին դրա-

մը պակսեցավ և այսօր նույնիսկ բավական գումարի պետք կա, գանձանակին մեջ փարա չի կա:

– Ճանըմ դրամները ինչ ըրիք:

– Ինչ պիտի ընենք. շրջագրեստի համար է ըսավ, առավ, շոթա է՝ ըսավ, առավ, վերարկուի համար է ըսավ՝ առավ, ժամացույց է ըսավ՝ առավ, շոթա է ըսավ՝ առավ, ինչ գիտնամ, ինչ ուզեց՝ առավ, ասկէ զատ կարգ մը գործերու ձեռնարկեց և վնաս կրեց. քոնսոլիտ խաղաց, վնաս կրեց, վերջապես, Նիկողիմոս աղա, ես քու այսքան տարվա գանձապետդ եմ, սուտ չեմ կրնար խոսիլ, գանձանակին վիճակը գեշ է:

– Ինչ ըսել է. ատ ի՞նչ խոսք է, խելքս ատանկ բաներու չի հասնիր, ես դրամներս կուզեմ, թե չէ քեզի հիմա ոստիկանության կը հանձնեն:

– Ես հանցանք չունիմ:

– Հանցանք մանցանք չեմ գիտեր. ես դրամներս կուզեմ. աս տարիքիս մեջ զիս թշվառությա՞ն պիտի մատնես, դուն զիս սպաննելո՞ւ եկար հոս, մարդ աստուծո, ատանկ խոսքեր ընելու տեղ՝ առ սա կացիւնը իջեցուր զխոս լըմըննա երթա, գանձանակը դրամ չի կա եղեր. ըլլալի՞ք բան է. գանձանակի պահապանը դուն ես, ի՞նչ ըրիր դրամները:

– Ճանըմ աս ու ան կողմ տրվեցավ:

– Ինչու տվիր, ես դրամները քենե կուզեմ:

– Վնաս եղավ, պարտքերու դիմաց տրվեցավ:

– Ինչ ըսել է վնաս, հաշիվները տոսայայի սկզբունքով չե՞ն բռնվիր:

– Կը բռնվին:

– Կը բռնվին նե ինչու վնաս պիտի ըլլա:

– Անոր համար որ քոնսոլիտին շատ դրամ տրվեցավ, երբեմն թանկ առինք, աժան ծախեցինք, երբեմն աժան ծախեցինք, թանկ առինք... երբեմն ավելորդ ծախսեր եղան, կառք առնվեցավ, ձի առնվեցավ, գարի առնվեցավ, մյուսյու Ժորժին կառավարելը ահա այս արդյունքը տվավ:

– Ասոր փրկությո՞ւնը:

– Փրկությունը խանութը գոցելն է:

– Գոցե՞լը, գոցե՞լը, լեզուդ չորնա, ինտո՞ր ալ կըսես: Ես խանութը չեմ գոցեր, ինչ ըսեմ տե գոցեմ:

– Գող չի մտնա տեի գոցեցի՝ կըսես:

– Չիս կծաղրես, ապերախտ, այսքան տարի հացս կերար, իմ շնորհիվ տուն տեղ եղար, հիմա կը ծաղրե՞ս ինձի:

– Հապա ինչ ընեն, չեմ գոցեր կըսես:

- Չեմ գոցեր:
- Եթե դուն չի գոցես՝ ուրիշները կուզան կը գոցեն:
- Ինչ կըսես:
- Գանձանակը բաց ունի, սնանկություն՝ հասկացա՞ր:
- Սնանկություն՞ում, ալաֆրանկայի մեջ սնանկանալ կըլլա՞. մյուսյու ժորժը կըսես թե չ'ըլլար. հաշիվները ալաֆրանկա չե՞ն:

- Հաշիվներն ալ ալաֆրանկա են, պարտքերն ալ, ատ ալաֆրանկան գետնին տակը անցնի, որ գործը հոստեղվանքը հասցուց. ժորժ է, ինչ փորձանք է պատճառը անիկա է, առաջվա պես եթե շարունակեինք, այսչափ ծախսեր չէինք ըներ, թե դրամ կը վաստակեիր, թե ուրիշներուն ալ լարվածություն կընեիր:

- Խավարամոլություն է քու ատ ըսածներդ, մարդս ժամանակի ոգուն հարմարվելու է. տասնևիններորդ դարը քաղաքակրթության, հառաջադիմության, ազատության, հառաջ, հառաջ պոռալու դար է: Եթե հաշիվները լավ բռնենք, վնաս չենք ըներ. իմ հոն եղած ատենս օր մը վնաս չէր ըլլար, հիմա ինչո՞ւ կըլլա. սուտ է, չեմ հավատար. Ես դրամներս կուզեմ:

20.

- Թըք թըք թըք:
- Է, ալ թըք թըք չեմ կրնար լսել, ո՞վ է:
- Թըք թըք:
- Ով է եկողը, ճանըմ:
- Թըք թըք թըք:
- Տես պատասխան կուտա՞. ո՞վ է դուռը զարնողը:
- Թըք թըք թըք:
- Աստված պելատ տա, վերջապես ըսել պիտի տա՝ անթրե:
- Պոնժուռ, մյուսյու Նիկողիմոս:
- Է ինչ է եղեր:
- Ես մյուսյու Բոլն եմ. սա անցած գիշեր... հյուրասիրության ատեն... մատնագել Ֆիլոն բան մը չըսա՞վ, մյուսյու Բոլն եմ, այսինքն ձեր խանութին մեջ գործ մը պիտի տայիք, մյուսյու Բոլն եմ, այսինքն սա հյուրասիրության ատեն... Բոլ, ահա Բոլը ես եմ:
- Հիմա գործ ունիմ:
- Ե՞րբ անցնիմ:
- Ուրիշ ատեն:

- Ատիո:
- Ես դրամներս կուզեմ...

21.

- Մատամ, լսեցի՞ր գլուխնուս եկածը:
- Ի՞նչ է եղեր երկու ժամ գանձապետին հետ գլուխ գլխի կը խոսեիր:
- Գանձանակին վիճակը գեշ է:
- Ուրիշ գանձանակ մը առ:
- Այսինքն մեջը դրամ չի մնացեր:
- Ի՞նչ կըսես:
- Ինչ ըսեմ. սա լուրը առնելուս պես՝ արյունը գլխուս զարկավ, հարկադրված պիտի ըլլանք խանութը գոցել: Ամենուն բերանը պիտի իյնանք, խաղք պիտի ըլլանք, պիտի ըսեն թե մոնսիմյո Նիկողիմոսը խանութը փակել է, պարտքի տակ էինկեր, ասոր անոր դրամով կնկանը ադամանդ է առեր, աղջիկը կարգեր է, թի, կառք է աներ: Ես սա խոսքերուն կրնա՞մ դիմանալ, օր մը կիյնամ կը մեռնիմ:
- Է դուն մեռնիս նե՝ ես կը մնա՞մ: Բայց ի՞նչպես է եղեր որ գործը ատ տեղն է հասեր:
- Փեսանիս՝ մյուսյու ժորժը մեծ ծախսեր է ըրեր, քոնսոլիտ է խաղցեր, վերջապես հինգ ամսվա մեջ գանձանակը դարձուցեր է գլխիվար:
- Նիկողիմոս աղա...
- Զեզմե՞ ալ ատ խոսքը պիտի լսեի, անանկ է յա՛ գործերնիս ավրվեցավ նե նորեն տղա՞ եղանք, առաջ մյուսյու էինք:
- Ճանըմ հիմա աղայի, մյուսյուի ժամանա՞կն է, գոնե սա տունը և Մահմուտ փաշայի խանութներեն մեկ երկուքը իմ վրաս դարձուր:
- Կըլլա՞:
- Ինչո՞ւ պիտի չըլլա. խանութնին գոցողները բոլորն ալ ատանկ կընեն:
- Զիչ մը սպասե տեսնանք, մյուսյու ժորժ ուր որ է կուզա, գործը անգամ մալ իրմե հասկնանք... Ահա եկավ: - Հրամմեցեք, մյուսյու ժորժ:
- Պոնսուար, ինչ է պատահեր, ձեզի քիչ մը տխուր կը տեսնամ կոր:
- Ինչ պիտի ըլլա. գանձապետը եկավ, գանձանակին վիճակը հասկցուց:
- Է ինչ է եղեր. վնաս ենք կրեր, գանձանակին մեջ դրամ չի մնացեր, ատոր համար տխրելո՞ւ է. ինչ կա. ես ալ կարծեցի՝ կյանքի վնաս է եղեր:
- Ողջ ըլլաս, մյուսյու ժորժ, զիս քիչ մը հանգստացուցիր, ըսել է տխրելու ունե առիթ չի կա:

– Երախա՞ եք. տխրելու ինչ պատճառ կա. եկան, խանութը գոցեցին, կընքեցին, գացին:

– Գոցեցի՞ն, կնքեցի՞ն ըսիր. նամա՞կ է ինչ ասիկա որ ատանկ հանգիստ կը գոցես ու կը կնքես:

– Պարտատերերը ընել տվին:

– Թըք թըք:

– Անթրե:

– Ես մյուսյու Բոլն եմ, այսինքն սա անցյալները հյուրասիրության ատեն, այսինքն խանութը գործ մը պիտի տայիք, այսինքն մատմագել Ֆիլոն բան մը չըսա՞վ: Մյուսյու Բոլը ես եմ, այսինքն սա հյուրասիրության ատեն Բոլ. ահա Բոլը ես եմ. խանութը գործ մը. Բոլ...

– Կորսվե սրկե. խանութը գործ մնացեր է տե դուն ալ եկեր գո՞րծ կուզես:

– Բարտոն. ատիոս. վաղը գա՞մ:

– Մի գար:

– Ատիոս:

– Մեր մորուքը կայրի, աս մարդն ալ եկեր գործ կուզե:

– Հայրիկ, հայրիկ, երկու հոգի եկեր՝ հոճա Նիկողիմոսը հո՞ս է, կըսեն. ահա վեր կելլան կոր, ահա եկան:

– Հրամմեցեք, հրամմեցեք:

– Կը ներեք, հոճա Նիկողիմոս, ձեզի մեկ երկու խոսք ունինք ըսելիք:

– Հրամմեցեք:

– Հայտե երթանք:

– Հոս խոսինք:

– Չէ. երթանք նե ավելի լավ կըլլա:

– Կը ներեք, դուրս չեմ կրնար ելլալ:

– Չեք կրնար ելլալ, որովհետև ձերբակալված եք, հոճա Նիկողիմոս:

– Ես ձերբակալված չեմ, ուրիշը չըլլա...

22.

– Մատամ, ինչո՞ր կուլաք, լալու ինչ կա:

– Մյուսյու Ժորժ, ինտո՞ր չիլամ, Նիկողիմոս աղան տարին:

– Տարին տե կերա՞ն. երախայի պես լալով ինչ կըլլա. դուն լալու ըլլաս նե աղջիկներդ ալ կը տեսնան, կը հուզվին: Համբերելու է. ինչ ընենք, միայն մենք չենք, հիմա բոլորին ալ գործը գեշ է, ոչ մեկուն քով դրամ կա:

– Չընկըլ, չընկըլ...

– Դուռն է, ո՞վ է արդյոք:

– Անձանոթ մարդ մե, ձեռքը նամակ մը կա:

– Նիկողիմոս աղային ըլլալու է:

– Ֆիլո, նամակը վեր բեր:

– Արդյոք ինչ գեշ լուրեր պիտի կարդանք:

– Մայրիկ, առ նամակը:

– Մատամ կարդա նայինք:

– Կարդամ. «Մատամ Նիկողիմոս, մեզի անձանոթ տեղ մը սենյակի մը մեջ բանտարկեր են, երեկ գիշեր մազ մնաց տախտակի վրա պառկեի, հոս գտնվող մյուս պարտապանները, ողջ ըլլան, հարգեցին ինձի, միևնույն մը տվին: Երբ գործը անոնց բացատրեցի՝ բոլորն ալ ըսին թե մեղավորը Ժորժն է, քաղաքակրթություն, լոժիք, չեմ ինչ ըսելով՝ ինձի ասանկ բանտերը ձգեց. աստուծո՞ն գտնա պատիժը, մարմինը վերնա աշխարհքես, ես ալ մեղավոր եմ. երիտասարդներուն հարմարվիք ըսինք, պապերունս ճամբայեն ելանք. լեռը մարգարեին քովը չերթանե՝ մարգարեն լեռան քովը կերթա ըսինք, գացինք իշտե: Ինչ օգուտ. ինչ որ եղավ, մեզի եղավ: Ուրիշ անգամ ավելի երկար կը գրեմ, հիմա սա կուզեմ ըսել որ անկողինս, ճերմակեղեններս, թոպ տը քամարաս և բանթուֆլաներս նամակս բերողին տվեք որ ինձի հասցնե. բանտարկվիս չոճուխներուն մի ըսեք, որ չի տարածվի. ուրիշ հարցնողներուն ալ՝ հիվանդ է, դուրս չի կրնար ելլալ ըսեք, մոտը մարդ չընդունի, ըսեք: Մատամ, չես կրնար երևակայել, թե աս դեպքը որքան հուզեց զիս. ալաֆրանկայի ալ քիչ մը վարժված ըլլալով՝ այստեղի մարդոց հետ չեմ կրնար հարմարվիլ. վերջը բարին ըլա ա: **Նիկողիմոս Համբարձումյան**»:

– Կը ներեք, մյուսյու Ժորժ, բարկացած ատեն գրած ըլլալու է որ ձեր մասին կարգ մը անվայել խոսքեր գրեր է: Աղջիկներս դուք ալ ոչ մեկուն մի ըսեք Նիկողիմոս աղային բանտարկվիլը:

– Չենք ըսեր, բայց ինչու են բանտարկեր:

– Պարտք ունի եղեր տե ատոր համար:

– Ատոնք ձեր գիտնալու բաները չեն, դուք հիմա գացեք, անկողինը, ճերմակեղենները պատրաստեցեք, ես ալ նամակ մը գրեմ:

– Շատ աղեկ:

– Գրելիքդ ես ալ տեսնամ: Մյուսյու Ժորժ:

– Լսե. ահա. «Մոնսիոյոր Նիկողիմոս, պատիվ ունեցա ստանալու ձեր երեկվա նամակը: Չեր չի գացած, չի տեսած մեկ տեղը դրեր են զձեզ: Վնաս երեկվա նամակը: Չեր չի գացած, չի տեսած մեկ տեղը դրեր են զձեզ: Վնաս չունի, սիրտդ լայն պահե. աստուծով մեկ երկու օրեն կազատվիս: Առևտու-

րի մեջ երբեմն ասանկ բաներ կըլլան. համբերելու է: Մյուսյու ժորժի մասին գրածներդ լոժիքի դեմ են, տղան ի՞նչ հանցանք ունի. տուներնիս եկավ, մեզ լուսավորեց, սակայն գործերը գեշ ընթացք ունեցան, վնաս կրեցինք. ինչ ընենք. ով վնաս չի կրեր. ճերմակեղեններդ, անկողինդ, բոպ տը քամարադ, բանթուֆլաներդ դրկեցինք, եթե կուգես գիշերազգեստդ ալ դրկենք, որպեսզի հոտ հանգիստ ըլլաս: Բանտարկվիլդ ոչ մեկուն չենք ըսած»:

- Ինչպես է, մատամ:
- Գեշ չէ. մարդը դուրսը կը սպասե կոր, տուր որ երթա:
- Տամ, բայց ծրար մը գտնալու է տե նամակը մեջը դնելու է:
- Ճանըմ ատանկ թող տանի:
- Չ'ըլլար. առանց ծրարի չեմ կրնար գրկել:
- Ուշացա, մուշու, տուր սա նամակը տանիմ:
- Սպասե, ծրար մը գտնամ:
- Պե ճանըմ խեղճ մարդը տախտակի վրա է, տուր տանիմ. երկու ժամ է որ կսպասեմ:
- Աս ատեն ուրկե՞ կրնանք ծրար գտնալ, մատամ, վաղը տանի մե չ'ըլլա՞ր սա գիշեր ալ թող մինտարի վրա պառկի. ինչ ընենք. առանց ծրարի չ'ըլլար:
- Չ'ըլլար, սիրելիս, վաղը եկուր: Հատուկ բարևներ ըրե:
- Շատ աղեկ:
- Միևտերի վրա չի պառկելու համար ելլաքն առանց ծրարի՞ դրկենք նամակը, ալաֆրանկային դեմ է. մեկ գիշեր ալ թող միևտերի վրա պառկիք ոսկորները չեն կոտրվիր:

23.

- Քա անգամ մը երթամ տե հասկանամ, ըսի, գուցե սխալ է, մատամ ճի՞շտ է որ մեծավորդ բատարկեր են:
- Չէ ճանըմ, ատ ի՞նչ սուտ խոսքեր են:
- Չըլլա քի մեծավորդ ուրիշ մը բանտակել տվեր է, որովհետև բանտի խոսք կա մեջտեղը, կրնա սուտ չըլլալ տե սխալ ըլլալը:
- Չէ, քույրիկ, չէ, հիվանդ է, դուրս չելլար:
- Ատանկ է մե ամա, մատամ, երեկ առտու մարդ մը անկողին վերմակ կը տաներ կոր, ա՞տ ինչ էր հապա:
- Քեզմե ծածկել չ'ըլլար. ինչ ընենք, բան մըն էր եղավ, սակայն աման Բաթիկ տուտու, ոտքդ պագնեմ, մեկու մը չըսես:
- Խե՞նթ եմ որ ուրիշի ըսեմ, անհոգ եղիր, հեչ մի մտածեր:

- Երթամ սիկարա մը բերեմ:
- Բարի լույս:
- Աստծու բարին, Թագուկ տուտու, հրամմեցեք,
- Ճանըմ Բաթիկ տուտու, Նիկողիմոս աղան...
- Բանտարկեր են խեղճը, սակայն ոտքդ պագնեմ, մարդու չըսես:
- Տեր ողորմյա, ատանկ բան ուրիշի կըսվի՞:
- Բարի եկար, Թագուկ տուտու... հրամմեցեք, մեկ երկու սիկար առնենք:
- Մերսի, պիտի երթամ, կարևոր գործ ունեի, հանդիպեցա, աստված առողջություն տա հիվանդանող... ճանըմ նեղություն մի կրեք. Ես ճամբան գիտեմ:
- Պարտքերնիս է:
- Բարի լույս, Թագուկ տուտու, կերևա թե դուն ալ ինձի պես լսեցիր տե եկար: Ճի՞շտ է, Թագուկ տուտու:
- Ճիշտ է սակայն, ոտքդ պագնեմ, մեկու մը չըսես, որովհետև խիստ գաղտնի կը պահեն:
- Խե՞նթ եմ որ ասանկ խոսք մը ուրիշի ըսեմ:
- Է ես ալ երթամ:
- Մատամ ո՞ւր է:
- Վար իջավ. Բաթիկ տուտուն կը ճամբե. կերևա թե խոսքի բռնվեցավ:

Ատիո:

- Ատիո:
- Բարի լույս, Ֆիլո տուտու:
- Աստծու բարին, Մարիամ տուտու:
- Ճի՞շտ է աճապա:
- Ճիշտ է, սակայն ոտքդ պագնեմ, մեկու մը չըսես, որովհետև խիստ գաղտնի է:
- Երեխա՞ ես. քա ասանկ բանը ուրիշի կըսվի՞:
- Կը ներեք որ ձեզի մինակ թողուցի:
- Վնաս չունի, մատամ, մենք հյուր չենք:
- Ճանըմ մեր Նիկողիմոս աղան քանի մը օրե ի վեր,- դուք առողջ ըլլաք,- անանկ հիվանդության մը հանդիպեցավ որ տեղեն չի կրնար շարժիլ:
- Խեղճ մարդ, բժիշկ չեկա՞վ:
- Բժիշկ ալ չ'ուզեր, սենյակը նստած՝ մարդ չընդունիր. Երևի հիվանդության բնույթն ատանկ է:
- Անտոնիկ, ինչ է ձայնդ ամեն կողմը բռներ է...

- Երեխա է, անշուշտ պիտի պոռա, քանի՞ տարեկան եղավ Անտոնիկը:
- Այս փետրվարին յոթը մտավ:
- Անտոնիկ, եկուր տղաս, եկուր քովս. Ինչ կընեն նայինք. չարություն կընես հա... աղապապադ շաքար կառնենք քեզի:
- Աղապապային բանտարկեր են...
- Սուս, սասկելիք, ատ ի՞նչ խոսք է, կորսվե սըկե, մեղա, գոնե ատանկ բան մը ըլլա՞ մարդուս սիրտը չի ցավիր. ուրիշ մը լսե նե կը հավատա:
- Տեր ողորմյա. երեխայի խոսքին ով կը հավատա: Երթանք Ֆիլո տուտու:-
- Հայտե երթանք:
- Մնաք բարով, աստված հիվանդնուդ առողջություն տա:
- Ողջ ըլլաք:
- Ինչ կըսես Ֆիլո տուտու:
- Ինչ ըսեն, քուրս լուրը երեխային առ, կըսեն:
- Խեղճ մարդ:
- Ուրկե՞ կուգաք կոր հանըմներ:
- Նիկողիմոս աղային տունը գացինք, անշուշտ լսած պիտի ըլլաք, խեղճը բանտարկեր են:
- Բանտարկեր են մի:
- Այո, սակայն ոտքերնիդ պագնեն, մեկու մը չըսեք, գաղտնի է:
- Ատանկ լուր ուրիշի կըսվի՞:
- Քա փողոցին մեջտեղը կայնե տե ինչ կը խոսիք:
- Ճանըմ Նիկողիմոս աղա բանտարկեր են տե անոր խոսքը կընենք, սակայն ոտքերնիդ պագնեն, մարդու չըսեք, գաղտնի է:
- Երախա՞ են ես, խոսք կա որ կըսվի, խոսք կա որ չըսվի, ասանկ բանը ուրիշի կըսվի՞:

24.

- Բարի լույս Նիկողիմոս աղա:
- Աստծո բարին, էֆենտի:
- Ի՞նչպես եղավ որ հոս ինկար:
- Եղբայր, ալաֆրանկային հարմարվինք ըսինք, դուռը լայնցուցինք, ծախքերը շատցուցինք, լոժիքին հակառակ գործ մը չընենք ըսինք, վերջապես՝ բանտը չիքալե նե պարպատերը թող քալե դեպի բանտը ըսինք, հոս եկանք:

- Լավ, բայց հիմա հոս նստելեն ինչ կելլա:
- Բան մը չելլար, սակայն հոս պիտի նստիս կըսեն:
- Երաշխավոր տալով ելլաք նե չըլլա՞ր:
- Կըլլա:
- Փառք աստուծո, քանիները հանած են, որովհետև ինչքան ալ ըլլա փաստաբան են, օրենքը գիտեն, իսկ օրենքի համաձայն՝ եթե մեկը երաշխավոր տա՝ բանտեն կրնա ազատիլ:
- Անանկ է նե ինձի ալ ազատե:
- Գլուխս վրա, եթե կուգեք զգիս ձեր գործերուն փոխանորդ կարգեցեք, գործերնիդ կարգավորեն:
- Շատ աղեկ, իմ ուզածս ալ ատ է:
- Անանկ է նե առ հաշիվ քսան ոսկի պօտ տաք:
- Ի՞նչ քսան ոսկի:
- Որովհետև ըստ օրինի՝ մեկը ուրիշի մը գործերուն փոխանորդ ըլլալու պահուն քսան ոսկի առնելու է, Քոտ Նապոլեոնի մեջ աս մասին ընդարձակ հողվածներ կան: Քսան ոսկին եթե չառնեն՝ օրենքի դեմ գործած կըլլամ:
- Ատ օրենքին խելքս չի հասավ:
- Չի հասնիր ա. և այս խոսքովդ օրենքը հաստատեցիր, որովհետև օրենքը կըսե օր ամեն մարդու խելքը չի հասնիր օրենքի և այդ պատճառով ալ խորհուրդ կուտա որ բոլորն ալ կարդան ու սորվին օրենքը:
- Աս օրենքը իմ գործերուս մասին ինչ կըսե:
- Ատիկա գիտնալու համար նախ ձեր գործը պիտի ուսումնասիրեն, ձեր գործը ուսումնասիրելու համար զձեզ պիտի ճանչնան, զձեզ ճանչնալու համար առհաշիվ քսան ոսկի պիտի առնեն:
- Արդյոք սա մյուսյու Ժորժին բռնած ճամբուն օրենքը ինչ կըսե:
- Օրենքը կըսե թե առհաշիվ քսան ոսկի առնելու են. և բնավ մտքեդ չանցունես թե ատ գումարը գրպանս պիտի դնեն: Աստված չընե, ատիկա չեն ընդունիր. քարտուղարին, դռնապանին, սրճարանի, մուրհակի, թուղթի, խնդրագիրը գրողին, խնդրագիրը տվողին, Ֆիլանին, Ֆլանին պիտի տանք որ գործը առաջ երթա. անանկ կը կարծեն որ գործդ կարգի կուգա, պարտքդ կուտաս, գուցե առնելիք ալ ունենաս:
- Ի՞նչ կըսես:
- Այո, քանի քանի պարտապանի փաստաբան եղած են, որոնք ետքեն առնելիք ալ ունեցած են, պետք է օրենքը գիտնալ:
- Ինչ կը կարծես՝ քանի՞ դուրուշ առնելիք կրնամ ունենալ:

- Անգամ մը տոմարներդ տեսնելու եմ որ ըսեմ:
- Տոսյայի սկզբունքով եմ. մեկ կողմը տուա մյուս կողմը ավուար, լոժիք և մանթը ալ կա մեջը. քիչ մըն ալ հառաջադիմություն և քաղաքակրթություն կա մեջը: Չէ, տոմարները շատ օրինավոր են:
- Անանկ է նե առհաշիվ...
- Ճանըմ այս առհաշիվը շատ դժվար կուգա կոր ինձի. ես դրամ չունիմ:
- Սատանա, հիմա քովդ հե՞ջ դրամ չի կա:
- Հինգ վեց ոսկի հազիվ ըլլա:
- Ինչ որ է՝ հիմակուհիմա առիկա տուր նայինք...
- Եթե պակաս առնես՝ օրենքը բան չ'ըսեր: Առ սա հինգ ոսկին և օրենքին բան մը մի ըսեր:
- Մերսի. հիմա կերթամ, երաշխավոր մը կը գտնամ, իրիկունը քեզի բանտեն կազատեմ:
- Ողջ ըլլաք, սակայն երաշխավորին մի ըսեք թե բանտարկվեր եմ, որովհետև ոչ ոք գիտե բանտարկվիլս:
- Օրենքը կըսե որ եթե մեկը գործերուն ուրիշ մը փոխանորդ կարգե, փոխանորդ ամեն բանի խառնվելու է. հիմա դուն գործիդ մեջեն դուրս ելածի պես ես. սեպե թե Նիկողիմոսը ես եմ. քանի որ այս այսպես է, կը նշանակե բանտարկյալն ալ ես եմ:
- Ուրեմն ես հիմա բանտը չե՞մ:

25.

- Ճանըմ մյուսյու Ժորժ, Նիկոսիմոս աղան այսօր բանտեն պիտի ելլար, ինչու ուշացավ:
- Հոգ մընեք ուր որ է հիմա կուգա... ահա կուգա:
- Կուգա՞. անիկա՞ է:
- Այո:
- Չընկըլ չընկըլ չընկըլ կըլ կըլ կըլ:
- Դուռը զարնելեն կերևա որ բարկացած է:
- Բարկանալու ինչ կա:
- Թըք թըք թըք:
- Անթրե, հրամմեցեք, մյուսյու Նիկողիմոս:
- Հրամմեցեք:
- Ճանըմ ինչ է պատահեր քեզի որ երկու երեք գիշեր է տուն չես գար, երախները երեսի վրա ձգեր ես, լացով աչքերս ուռեցան – փետտելեն գլուխս

- մազ չի մնաց, փեսանիս՝ մյուսյու Ժորժը ողջ ըլլա, երբեմն կը մխիթարեր տե սիրտերնիս կը բացվիր: Մարդ այսքան ալ մոռնա՞ ընտանիքը:
- Մատամ, ինչու գործս շատ էր մյուսյու Ժորժ, քիչ մը դուրս ելեք, մե մեզի առանձին ձգեցեք:
- Շատ լավ:
- Մատամ, բանտարկվիլս ուէ մեկը լսե՞ց:
- Ճանըմ Նիկողիմոս աղա, երբեմն տղու խոսքեր կընես. ով պիտի լսե. երախա՞ եմ որ ուրիշի ըսեմ:
- Հապա գալու ատեն ով որ դեմս կելլար՝ անցած ըլլա կսեր:
- Հիվանդ է ըսեր էինք տե ատոր համար անցած ըլլա կըսեն:
- Հապա խանութին կնքված ըլլալը ինչպես գիտեն: Հիվանդ մարդուն խանութը ինչու պիտի կնքեն:
- Կերևա թե խանութը կնքված տեսեր են, ես հոս ինչ մեղք ունիմ:
- Չեմ գիտեր թե ով է մեղավոր... ինչ օգուտ որ գործը գործեն անցած է:
- Աման Նիկողիմոս աղա, պարապ խոսքեր մըներ, մյուսյու Ժորժը ամենին մեղք չունի, մեղավորը դուն ես, որ գործդ անոր հանձնեցիր և ալաֆրանկային ետևեն ինկար:
- Ինձի պոռալ մի տար. երկու գործը մեկեն կրնայի՞ ընել, թե խանութի հաշիվներու նայիլ և թե ալաֆրանկայով զբաղվիլ: Երանի թե ալաֆրանկայի գործերը Ժորժին հանձնեի, ես ալ խանութին գործովը զբաղվեի:
- Հիմա ի՞նչ որոշեցիր: Ասկե լսածիս նայելով՝ քառասուն բեռ պարտ ունիս եղեր:
- Ես ալ ատանկ կը լսեմ:
- Է ասոր վե՞րջը:
- Փաստաբան մը տեսավ զիս, մի վախնար, ըսավ, եթե գործերդ ինձի հանձնես, պարտքերդ տալեդ ետքը առնելիք ալ կրնաս ունենալ:
- Լավ է:
- Լավ է, սակայն օրենքը կըսե որ փաստաբան մը մեկու մը գործը ստանձնելու պահուն քսան ոսկի առնելու է: Դուն օրենքին այս հոդվածները չես գիտեր:
- Տվի՞ր:
- Վրաս հինգ ոսկի կար, հանեցի տվի, սակայն օրենքը լուր չունի, եթե լսե՛ տուգանքի խնդիր կա:
- Ըսել է տասնըհինգ ոսկի կուգե որ գործը սկսի:
- Կուգե: Դուն երեսուն ոսկինոց մատանի մը ունեիր, ան ալ բեր նայինք...

– Բերե՞մ մի ես մատանիս չեմ տա՞ր. դուն վրադ եղածն ալ ինձի պիտի տասս և ոչ թե ինձմե ուզես:

– Լավ, բայց դուն կնիկ ես, փաստաբանին, օրենքին ինչ ըլլալը չես գիտեր:

– Դուն շատ գիտես, ատոր համա՞ր գործերդ ավրեցիր. հիմա ալ ելեր մատանի՞ս կուզես:

– Տուր, ես հետո նորը կառնեմ, սա փաստաբանին գործը վերջացնենք: Ոսկերիչ Մարկոսը կը կանչենք, զին մը կորոշենք, կը ծախենք:

– Չեմ տար. դուն ոսկի ժամանցույց մը և ոսկի շղթա մը ունիս, հիսուն ոսկիի առեր էիր, ատոնք տամ, գործդ վերջացուր:

– Լավ, ատոնք բեր սա փաստաբանին դրամը տանք, որպեսզի մարդը գործին նայի: Մարկոս աղան կը կանչենք, անոր կուտանք, որպեսզի տիրոջը ով ըլլալը չըսելով ծախես:

– Ասոված քեզի խելք տա, Նիկողիմոս աղա, չեմ գիտեր ինչ ըսեմ:

26.

– Հրամմեցեք, Մարկոս աղա, կը ներեք որ ձեզի նեղություն տվիմք:

– Ատ ինչ խոսք է Նիկողիմոս աղա, մեր պարտքն է:

– Ողջ ըլլաք:

– Ինչ կա ինչ չի կա. բան մը լսեցի, շիտակը չի հավատացի:

– Ինչ լսեցիր:

– Իբր թե գործերնիդ ավրվեր է, խանութնիդ կնքեր են, անշուշտ սուտ ըլլալու է:

– Հիվանդ էի տե շաբաթ մը դուրս չելա... Բարեկամներես մեկը ոսկի ժամացույց մը և շղթա մը ունի, կուզե ծախել, մեզի տվավ, որ ծանոթի մը ձեռքով ծախենք, ահա ասոնք են:

– Շատ լավ, քանի՞ն՞վ առեր է ասոնք:

– Հիսուն ոսկիի:

– Բանի՞ն՞վ կուզե ծախել:

– Բառասունհինգ ոսկիով կուզե տալ:

– Եղբայր, նախ այս շղթայի ոսկին մաքուր չէ, լավ ալ շինված չէ. օգտագործելը դժվար է. ժամացույցն ալ գործածված է, շաբաթը երեք ժամ ետ կրնա մնա:

Կաշխատիմ ծախել, սակայն ոչ ոք այդ գնով չ'առներ:

– Բանի՞ն՞վ կառնեն:

– Շատ շատ տասը ոսկիով: Սակայն, հոգիս, Նիկողիմոս աղա, չի կարծես թե ինձի օգուտ հանել կուզեմ, բարեկամի ատանկ բան չեմ կրնար ընել:

– Ես ալ հապա ինչո՞ւ քեզի լուր դրկեցի, գիտեմ որ զիս կը հարգես, սակայն հիսուն ոսկիով առնված բանը տասը ոսկիով կը տրվի՞, Մարկոս աղա:

– Նիկողիմոս աղա, դուն իմ բարեկամս ես, ատոր համար տասը ոսկի ըսի թե չէ հինգ ոսկիով ալ չէի առներ: Եթե ինձի չես հավատար, անգամ մալ ուստա Համբարին հարցուր. ըսենք հարցնելն ալ պարսպ է, քառասուն տարին անգամ մը ձեր շնորհիվ ժամացույց մը պիտի ծախեմ, ելլամ տե ատկե ալ շա՞հ ընեմ. ասոված չընե, մենք ատանկ բաներ չենք ըներ. ավստո որ շղթային ոսկին և ժամացույցին անիվները լավ չեն, ես ծախելե առաջ շղթան ոսկեջրելու եմ:

– Ջորի է ասիկա որ ջրես:

– Ժամացույցին անիվները մեկ մեկ հանելով՝ փոշին պիտի առնեմ, մեջը պիտի սրբեմ, կափարիչները պիտի փայլեցնեմ, հետո բոլորը իրենց տեղերը դնելով՝ պիտի լարեմ, ասոնց բոլորը տարբեր մարդիկ կընեն, անշուշտ ատոնց ծախքը պիտի տաս, ասկե ինձի օգուտ մը չի կա: Եթե ասոնք իմ գործս ըլլար՝ հավատա որ քեզմե դրամ չէր առներ:

– Ողջ ըլլաս:

– Աշխարհք է, միշտ մեկ մեկու պետք ունենանք, օր մըն ալ կը տեսնաս՝ կուզամ քեզի և կըսեմ՝ – հոգիս Նիկողիմոս աղա, սա գործը գլուխ բեր:

– Այդպես է. ատ ըսածներդ որքանո՞վ կըլլա:

– Կուզե՞ս որ լավ ըլլա:

– Հարկավ:

– Ամենաքիչը տասը ոսկի կառնեմ, Նիկողիմոս աղա, ան ալ դուն ես ըսելով, սակայն չըլլա թե ուրիշի ըսես, ոսկերիչներու շուկայեն զիս կը վռնտեն:

– Աս գործեն ինչ հասկցանք. տասը ոսկիի կրնամ ծախել կըսես, տասը ոսկի ծախք ցույց կուտաս: Այս հաշվով ժամացույցը ձրի պիտի տանք:

– Եթե ըսածիս պես ընենք, քսանհինգ ոսկիի կերթա:

– Եղբայր, ծախք մեծ ցույց տվիր:

– Բարեկամ, արիեստավորները պարսպ են, գրպաննին փարա չկա, սակայն գործ մը տարիր մի՞ քքի տակեն կը նային: Եթե կուզես՝ ուրիշին տուր, Նիկողիմոս աղա, ետքեն չըսես թե ուստա Մարկոսը զիս խաբեց:

– Ինչ ըսել է ատիկա:

– Որո՞ւնն է այս ժամացույցը:

– Չես ճանչնար:

– Անխելը մեկն է եղեր ատ մարդը որ ասանկ ժամանակ ժամացույց կը ծախսէ:

– Ան ալ դրամի պետք ունի տե ատոր համար կը ծախսէ:

– Եկուր սա ժամացույցը դուն առ, Նիկողիմոս աղա:

– Ես ժամացույցի պետք չունիմ, Մարկոս աղա: Իմ խելքս չի հասնիր: Գուն քանի՞ով կառնես սա ոսկի ժամացույցը: Ժամացույցի ոսկին մեկ անգ-
ղիական է, շղթան ալ երեսուն տիրեմ:

– Խաթերդ համար առնեմ, սա գործը լմնցնեմ, տասներկու ոսկիի տուր, առնեմ, կամ երկու ոսկի վնաս կընեմ, կամ իր արժեքով կը ծախսեմ: -

– Շատ քիչ տվիք:

– Գործը լմնցնելու համար տվի. քե չէ՝ ինչ պիտի ընեմ ժամացույցը. հե-
տո, եղբայր, հիմա ով ժամացույց կառնե. ոչ մեկուն մոտ դրամ կա, ծախելու
հիսուն ժամացույց կա, մեկ հատ առնող չի կա:

– Տասնըհինգ ոսկի տուր տե տամ:

– Հավատա վնաս կընեմ:

– Չես ըներ, չես ըներ:

– Շատ աղեկ, սակայն ոտքդ պագնեմ, ուրիշի չըսես, զիս շուկայեն կը
վռնտեն, որովհետև շատ մեծ գումար տվի:

– Վստահ կընաս ըլլալ, մարդու չեմ ըսեր:

– Առ տասնըհինգ ոսկին Նիկողիմոս աղա, ինձի ալ հրաման տուր երթամ:

– Կընաս երթալ:

– Մնաք բարով:

– Ողջութեամբ:

– Մատամ, ժամացույցը ծախեցինք:

– Քանի՞ով տվիր:

– Տասնըհինգ ոսկիի, սակայն մարդու չըսես, վերջը խեղճը շուկայեն կը
վռնտեն:

– Խե՞նք ես ինչ ես. հիսուն ոսկինոց բանը ինտո՞ր տասնըհինգ ոսկիի
տվիր:

– Ճանըմ շուկան առուտուր չկա, հրապարակի վրա դրամ չկա, արհես-
տավորները պարապ են մարդը հիսուն ժամացույց ունի, չի կընար մեկը ծա-
խել. մեր ժամացույցն ու շղթան իմ խաթերս համար առավ, սակայն մարդու
չըսես, խեղճին մեղք է:

– Աստված քեզի շնորհք տա:

26.

– Չընկըլ, չընկըլ, չընկըլ...

– Ով է:

– – Փաստաբանն է:

– Հրամմեցեք, մյուսյու փաստաբան:

– Դատը սկսելու համար ինձի տրվելիք դրամին մնացած մասը ճարե-
ցի՞ք:

– Այո, ժամացույց մը և շղթա մը ունեի. տասնըհինգ ոսկիի ծախեցի, սա-
կայն այդ գնով առնելը մեկու մը չըսես՝ մարդուն մեղք է:

– Փաստաբանական երդումով արդեն չեմ կընար ըսել, ատոնք մեկ կողմ
թողունք, սա տասնըհինգ ոսկին տվեք որ գործը սկսինք:

– Հրամմեցեք:

– Մերսի: Հիմա ձեր երաշխավորին գործը վերջացնենք:

– Ան ալ սնանկացեր է:

– Չէ, սակայն ձրի երաշխավոր չ'ըլլար. մարդուն քիչ մը դրամ տալու է
հազար ոսկիի պարտամուրհակ մը տվեք իրեն որ այդ գործն ալ լմնցնենք:

– Հազար ոսկի... ի՞նչ կըսես:

– Պարտքերնիդ մեծ է, Նիկողիմոս աղա, և եթե օր մը փախչելու ըլլաք՝
դրամը ան պիտի տա. ասանկ վտանգավոր գործի մը մեջ մտնողի մը հազար
ոսկի շա՞տ է:

– Բայց օրենքի մեջ փախչիլ կա՞:

– Չի կա, սակայն օրենքի մեջ առանց դրամի ասանկ մեծ վտանգի տակ
մտնալ ալ չի կա. եթե այս դրամը տալու համար իրեն մուրհակ չի տաս՝ նորե
քեզի կը բանտարկեն:

– Աս սնանկությունը ինչ փորձանք բան է եղեր, որ կողմը դառնաս՝ դրամ
կուզեն. ասանկ ըլլալը եթե առաջուց գիտնայի՝ չէի սնանկանար:

– Փաստաբանական օրենքով անցած բանի վրա պարապ խոսիլը արգել-
ված է:

– Հազար ոսկի կը տրվի՞, եղբայր:

– Փաստաբանը պարտավոր չէ գիտնալ մարդուս գրպանի վիճակը:

– Գնա ատ մարդուն բարև ըրե, թող մեր տունը հրամմե, մեյ մալ տուրճեր-
նիս խմե, քիչ մը խոսինք, գուցե դրամ չուզե:

– Ձեր խոսքերը փաստաբանական օրենքին դեմ են:

– Մյուսյու Ժորժը եթե դրկենք, չի՞ գար:

– Գալը կամ չի գալը գիտնալը փաստաբանության սահմանին մեջ չէ:

- Հապա ո՞վ դրկենք:
- Օրենք այդ մասին հողված չունի:
- Հիմա ինչ ընենք:
- Կամ պետք է երաշխավոր եղողին հազար ոսկյի մուրհակ տաս, կամ նորեն բանտը նստիս: Ուրիշ ճամբա չի կա:
- Շատ աղեկ, մուրհակը իրիկունը կը գրենք, հիմա գործերնուս նայինք սա ալ կուզեն հասկցնել, որ եթե իրիկունը ձեր խոսքը չի կատարեք՝ վաղը առտու բանտն եք: Հիմա գանք մեր գործին: Պիտի աշխատինք որ ձեր գործը անանկ ընթացքի մը մեջ մտնա, որ պարտքե ավելի առնելիք ունենաք: Ձեր քանի մը պարտատերերը խանութնիդ կնքած ըլլալով՝ ձեզի վնաս պատճառած են, ատոր համար դատի պիտի տանք:
- Հարկավ ատանկ է, տես ինչ լավ գտար:
- Սակայն ատիկա ընելու համար հիմք է պետք, ձեր էսպապը (հիմք) այսինքն ապացույցը ի՞նչ է:
- Իմ էսպապը (զգեստը) ավաֆրանկա է:
- Վնաս չունի, դեմիննուս աչքը կոխելու համար ապացույց մը ունենան, տե քող ավաֆրանկա ըլլա: Գոնե լավ էսպա՞պ է:
- Ունիմ, եղբայր, կուզես նե սնտուկը բերեմ:
- Ամո՞ւր են, կրնա՞նք վստահիլ անոնց:
- Կրնանք վստահիլ, շատ ամուր են, գործը էսպապի մնա թե աստված ողորմած է. դաքդաք էսպապներ (զգեստներ) ունիմ, հեն դումաշ, տեսնաս ինչ լավն են:
- Դումա՞շ ըսիր:
- Այո, դումաշ, անգլիական :
- Եղբայր, դուն սխալ հասկցար էսպապ բառը. էսպապ զգեստ չի նշանակեր:
- Հապա ի՞նչ կը նշանակե:
- Էսպապը արաբերեն սեպեպ (պատճառ) բառի հոգնակին է:
- Էֆ Որուն հոգնակին կուզե ըլլա. ինձի ինչ. դուն ինձմե էսպապ ուզե:
- Ճանրմ ես քեզի զգեստ չեն հարցներ. էսպապ՝ պատճառ, ապացույց ըսել է, ինչ ապացույց պիտի ցույց տանք, պարտքեդ ավելի առնելիք ունենալուդ:
- Ապացույցս սա է որ առաջ շատ առնելիք ունեի և բնավ պարտք չունեի:
- Այս ապացույցը անհիմն է, թույլ, անհարգելի: Մյուսյու ժորժ դրամներդ կերեր է կըսես նե ճշմարիտ է:

- Ճշմարիտ է և շատ ալ ճշմարիտ:
- Արդ՝ ո՞ւր կերեր է, ինտո՞ր կերեր է, երբ կերեր է, ինչո՞ւ կերեր է, որո՞ւն հետ կերեր է:
- Ես այն ժամանակ մարդկության հառաջադիմության գործով՝ ավաֆրանկայով զբաղված էի. ատոր համար լավ չեն գիտեր, սակայն զինքը կը կանչենք կը հարցնենք:
- Մյուսյու ժորժին առած դրամները տոմարներու մեջ անցե՞ր են:
- Ով գիտե:
- Ուրիշներեն առածները գրա՞ծ է:
- Ով գիտե:
- Առածնիդ, տվածնիդ հայտն՞ի է:
- Չեն գիտեր, բայց հայտնի ըլլալու է: Ինչպես որ հրամանքնիդ ըսիք՝ առնելիքը պարտքեն շատ ըլլալու է. և աստուծով ու ձեր շնորհիվ ավելի շատ պիտի ըլլա:
- Ես երթամ անգամ մը օրենսգիրքը աչքե անցունեմ, ձեր սնանկության՝ որ կարգեն ըլլալը հասկանամ:
- Սնանկութիւնն ալ կարգ ունի:
- Հարկավ:
- Չըսես՝ դպրոցական աշակերտի պես է: Հարկավ մերը բարձր կարգեն ըլլալու է:
- Նայինք, ատիկա օրենքը գիտե:
- Բարձր կարգեն եղողներուն անշուշտ նվեր ալ կը տրվի, անանկ չէ՞:
- Վաղը կըսեմ, դուն ատ թուղքը գրե որ վաղը ինձի տաս:
- Շատ աղեկ:

27.

- Մյուսյու ժորժ, պարտքեն ավելի առնելիք ունենալնիս ցույց տվող էսպապ, այսինքն ապացույց ունի՞նք:
- Էսպապ (Հագուստ) ունի՞նք, սակայն չեն գիտեր թե ծախելու ըլլանք նե դրամ կընե՞ն և կրնա՞նք ատով պարտքերնին տալ:
- Դուն ալ չի հասկցար էսպապ բառը. էսպապը սեպեպին հոգնակին է, սակայն դուն ուրկե՞ պիտի գիտնաս, սնանկացած չես որ ասանկ բաներու խելքդ հասնի: Հապա սա առնելիքնիս շատ ըլլալը ինչպես պիտի ապացուցենք, ատոր միջոցը գտիր. եթե գտնաս՝ գործերնիս իր ճամբան կիյնա:
- Տոմարներուն մեջ շատ առնելիքներ կան, սա այն այդ դրամները առեր

ենք, հիմա կրնա՞նք նորեն առնելիք ցույց տալ չեն գիտեր՝ կընդունվի՞:

– Փաստաբանը հոս ըլլար՝ կը հարցունեինք, կիմանայինք, բայց առնելիք չէ՞. ինչո՞ւ պիտի չընդունվի:

– Որովհետև արդեն առնված են:

– Փաստաբանը հոս ըլլար՝ կը հարցունեինք, կիմանայինք, բայց առնելիք չէ՞. ինչո՞ւ պիտի չընդունվի:

– Որովհետև արդեն առնված են:

– Առնված առնելիք ըսել է. շատ ալ լավ կընդունվի: Օրենսգիրք մը ըլլար տե մեջ նայինք, տեսնայինք այդ մասին հողված կա՞:

– Չի կրնար ըլլալ, Մյուսյու Նիկողիմոս, չի կրնար ըլլալ:

– Չի կրնար ըլլալ նե միջոց մը խորհելու է, մյուսյու ժորժ, տոմարները դուն կը բռնեիր, առնելիքն ու տալիքը իրենց տեղերը գրված չե՞ն:

– Գրված են:

– Առնելիքը տալիքեն քի՞չ է:

– Ճանըմ ատիկա մտահոգող բա՞ն է որ նայեի: Առնելիքի տեղը տալիքը տալիքի տեղը գրելով՝ տոմարները կը գոցեի:

– Մտահոգվելու բան չէր նե հապա ինչո՞ւ մեզմե առնելիք ունեցողները մտահոգվեցան տե խանութնիս գոցեցին:

– Ուրիշներուն մտահոգվելուն պատճառով մե՞նք ալ պիտի մտահոգվեինք. շաքեոն սուն կու...:

– Հարկավ շաքեոն սուն կու, սակայն աս խոսքդ անհիմն է, թույլ ապօրինի. աս բաները դուն չես գիտեր:

– Փաստաբանը ի՞նչ կըսե աս գործերուն:

– Ի՞նչ պիտի ըսե, դատը սկսելու համար առաջուց քսան ոսկի առավ, ողջ ըլլա, մեզի երաշխավոր մը գտավ, ողջ ըլլա, այս երաշխավորին հազար ոսկի տալու ստորագրություն մը պիտի տանք:

– Հազար ոսկի՞ մի:

– Այո, հազար ոսկի:

– Ատ դրամը ուրկե՞ պիտի տաս, խե՞նք ես, ինչ ես:

– Խենթ չեմ, փառք աստուծո, լեռնեն եկած ալ չեմ, ատոնք լավ գիտեմ:

– Ի՞նչ գիտես:

– Գիտցածս սա է որ փաստաբանը մեզի անպարտ հանելեն ետքը պարտապահանջ ալ պիտի ընե: Ահա առնելիք դրամն պիտի տամ հազար ոսկին ասանկ գործերուն խելքերնիս կը հասնի:

– Փաստաբանը պարտքերնիս հանելեն ետքը մեզի առնելիք ունեցո՞ղ

պիտի ցույց տա:

– Այո, երանի թե աս փաստաբանը սնանկանալեն առաջ բռնեինք. մեզի մեծ գումարներու տեր կընեիր:

– Է դուն ալ անոր խոսքերուն հավատացի՞ր:

– Ինչո՞ւ պիտի չի հավատամ, շատերուն գործը տեսեր է. չգիտեմ որ վաճառականը քառասուն բեռ պարտք ունի եղեր՝ քառասուն բեռ առնելիքվոր է հաներ:

– Դուն ալ հավատացի՞ր:

– Չի հավատալու ի՞նչ կա. փաստաբան ըսածդ սուտ չի խոսիր. ամեն օր օրենքի հետ գործ ունի:

– Դուն ալ հավատացի՞ր:

– Ինչո՞ւ պիտի չի հավատամ, ամեն բան իր օրենքը ունի, պարտքը առնելիքեն շատ կըլլա տե առնելիքը պարտքեն շատ չ'ըլլա՞ր, շատ ալ լավ կըլլա և ըլլալն ալ լոժիքի, մանթղի համաձայն է:

– Հիմա շիտակը հավատացիր հա՞:

– Հարկավ:

– Իրա՞վ հավատացիր, աստվածդ սիրես, թե կատակ կընես:

– Ձիս կը ծաղրե՞ս. հավատացինք ըսինք, հավատացինք, հավատացինք, հավատացինք:

– Հա, հա, հա, անիկա քեզի խենթի տեղ դրեր է:

– Խենթի՞: Մյուսյու ժորժ, ալաֆրանկայի մեջ փեսա մը իր աներիորդ ատանկ խոսքեր ըսելու իրավունք ունի՞: Բան ու գործ թողած ալաֆրանկային ծառայող մարդու մը հետ ասանկ վարվիլը ո՞ր օրենքին մեջ գրված է: Ի՞նչ էսպապ ունիս ինձի ատանկ խոսքեր ըսելու: Աս ալ պիտի գիտնաս որ էսպապը սեպապ բառին հոգնակին է, ատոր ատանկ ըլլալն ալ հիմա ինե սորվեցար:

– Մարդ աստուծո, ատ փաստաբանը քեզի խաբելով դրամ քաշելու կաշխատի:

– Դրամ քաշելո՞ւ կաշխատի. լավ գիտե՞ս:

– Բռնած ճամբան ատ ցույց կուտա...:

– Ինե դրամ քաշե՞, ինձի ավանակի տեղ դնելով դրամ քաշե հա՞: Հիմա գա նե պիտի վռնտեմ, մյուսյու Նիկողիմոսին ով ըլլալը և ավանակ չըլլալը իրեն պիտի հասկցունեմ:

- Ինչ ըրիք Նիկողիմոս աղա, մուրհակը պատրաստեցի՞ք:
- Մյուսյու փաստաբան, դուն գիս ավանակի տե՞ղ դրած ես:
- Այստեղ ինչ ավանակի հարց կա. քեզի երաշխավոր եղող մարդուն տրվելիք դրամին համար պարտամուրհակ մը պիտի տաս, ան ալ պիտի առնե:
- Մյուսյու փաստաբան, ես քու գիտցածներեղ չեմ, խենթ կերևամ, սակայն մարդս լավ կը ճանչնամ:
- Աս խոսքերդ բան մը չեմ հասկնար, ինչ ըսել կուզես:
- Ինչ ըսել պիտի ուզեմ, վարպետությամբ մը ձեռքես դրամ առնելու կաշխատիս. ես մարդու դրամ՞ կուտամ. ինձի Նիկողիմոս կըսեն:
- Ըսել է մուրհակը տակավին չե՞ս գրեր:
- Չեմ գրած և գրելիք ալ չունիմ, քեզի տված հիսուն ոսկին ալ հիմա ետ կուզեմ:
- Կը ցավիմ որ գլուխնիդ եկած փորձանքը, այսինքն սնանկությունը քիչ մը խելքերնուդ դիպեր է, բայց կը կարծեմ որ քանի մը օրեն կանցնի:
- Խելքս տեղն է, ես դրամներս կուզեմ:
- Երբևէ լսե՞ր եք որ փաստաբանի մը տրված դրամը ետ առնվի, այդ դրամը ես առած եմ ըստ օրինի, ըստ իրավունքի, ըստ պարտականության, ըստ կարգ ու կանոնի:
- Իշտե ես ալ՝ ըստ ձեր այդ ըսածներուն, ըստ այդ դրամը ըստ ետ կուզեմ:
- Չեր այդ ըսածը ապօրինի է:
- Դրամս կուզեմ:
- Ատ ձևով դրամ ուզելը իրավունքի դեմ է, իրավունքի դեմ գործած չըլլալու համար դրամին իմ քովս ըլլալը հարկավոր է:
- Դրամը իմ իրավունքս է, կուզեմ, վերջացավ:
- Իրավունքը իրավ բառի հոգնակին է: Դուն քերականություն գիտե՞ս:
- Ոչ:
- Քերականություն չի գիտցող մարդու մը դատը պաշտպանելեն ավելի դժվար գործ չկա, միտքս չի հասկնալուդ պատճառը քերականություն չի գիտնալն է: Ինչ որ է՝ թողունք ատոնք, իրավունքը իրավ բառի հոգնակին է, ասկե կը հետևի որ քսան ոսկին իմ իրավունքս է, որովհետև քու պահանջդ եղող իրավունքը սնանկացեր է, իմ պահանջս իրավի հոգնակին է. և քանի որ քիչը շատին ենթակա է, ատոր գործությամբ սնանկացողին՝ հոգնակիին ենթարկվիլը ակնհայտ է. և՛ դուն սնանկացած ըլլալով, ես ալ հոգնակի ըլլա-

լով՝ ինձի ենթակա ըլլալեն ազատվելիք չունիս, ըսել է քսան ոսկին իմս է, և քանի որ քսանը թվական անուն է և պարզ բառ, և անոր անցյալ ընդունելությունը, և ուղիղ խնդրի մեջտեղը ու վերջը մեկ նու գիր դնելուն պես հատկացուցիչ կըլլա, այլևս դուն ինչ իրավունք ունիս ինձմե քսան ոսկին ուզելու:

- Զու աս ըսածներդ ո՞ր կը գտնվին:
- Թուրքերենի քերականության մեջ քեզի սուտ պիտի չի խոսի՞մ ա:
- Քերականությունը ինչ գիտե սնանկանալս և քեզի քսան ոսկի տալս:
- Որքան սնանկացյալ կա նե բոլորն ալ ատ մասին գրված հողվածներեն մեկուն ենթակա պիտի ըլլան, այդ հողվածներուն չի հարմարվող սնանկություն չ'ըլլար:
- Կը նշանակե այդ հողվածները սնանկության մեկ մեկ կաղապարներն են ուզողը այդ կաղապարներեն մեկնումեկին համապատասխան սնանկություն մը կապսպրե:
- Տեսա՞ր ինտոր գտար. ահա այդ կաղապարներեն մեկուն համաձայն քսան ոսկին քեզմե առի. դուն խելոք ես, ինչպես է պատահեր որ մեկը միտքդ պղտորեր է, դուն ալ մուրհակը չես գրեր: Եկուր հիմա գրե. չէ նե վաղը նորեն բանտը կը տանին քեզի. հոն տարիներով կը փտտեցնեն:
- Է այդ հազար ոսկին ուրկե՞ պիտի տանք:
- Ատ ալ խո՞սք է. այս հազար ոսկին մյուս պարտքերուդ քովը կը գրվի. առնելիք ունեցողներուն որքան տոկոս որ իյնա, երաշխավորին ալ այդ հաշվով կը տրվի, կամ՝ առնելիք ունեցողներուն ոչ մեկ փարա տալ հարկ չըլլալով կը տրվի, կամ՝ առնելիք ունեցողներուն ոչ մեկ փարա տալ հարկ չըլլալով կը տրվի, որ կողմը դառնաս՝ գրպանեդ բան մը պիտի չելլա, մեջտեղեն պիտի ելլա, աս ասանկ ըլլալով՝ իմաստ ունի՞ որ մուրհակը չի գրես և նորեն բանտը երթաս:
- Ըսել է մյուսյու Ժորժը ինձի դիտմամբ հակառակը ըսավ, որպեսզի բանտը երթամ տե ինքն ալ ամեն իրիկուն տունեցիները հավաքելով գլուխը՝ գրոսանքի երթա: Անամոթ, լիրբ: Դուն մուրհակը գրե, վաղը բեր որ ստորագրեմ:
- Շատ աղեկ:
- Ըսել է մյուսյու Ժորժը գիս ավանակի տեղ է դրեր և խաբել կուզե. գոնե լավ մը խայտառակեմ զինքը և ավանակ չըլլալս ու որ Նիկողիմոսներեն ըլլալս իրեն լավ մը հասկացնեմ որ տրվի: Հա. ատ քերականութենեն հատ մըն ալ ինձի համար առ տե վաղը հետդ բեր:

– Մյուսյու ժորժ՝ մարդս իր չի հասկացած գործին խառնվելով՝ ուրիշին միտքն ալ պղտորելու չէ: Դուն փաստաբանություն գիտե՞ս որ անցյալները փաստաբանիս ինձի տված խորհուրդները ծաղրեցիր և պատճառ դարձար որ գործը ձգձգվի:

– Մոնսիմյո Նիկողիմոս, այդ փաստաբանը քեզի կը խաբե, քեզի մոխիրներու վրա նստեցունել կուզե:

– Ոչ, փաստաբանը զիս չի խաբեր, ինձի մոխիրի վրա նստեցունել չ'ուզեր, սիրտը շատ մաքուր մարդ մըն է, ինձի հայրական խրատներ կուտա և թուրքերեն քերականութենեն ապացույցներ կը բերե, որ քու ըսածներդ սխալ են:

– Թըք թըք թըք:

– Անթրե, ինչ կա մատամ:

– Ինչ պիտի ըլլա, ճանըմ, սենյակիդ մեջ փակված՝ առտվնե իրիկուն կամ փաստաբան կամ մյուսյու ժորժին հետ կը խոսիս, մսագործը կուզա ստակ կուզե, հացագործը կուզա, ջրկիրը կուզա, նպարավաճառը կուզա, ասոնց վե՞րջը. ես ձանձրացա այլևս, Նիկողիմոս աղա, քաշվելու բան չէ ասիկա. մեղա, քանի օր է՝ չենք կրնար քանի մը կառք վարձել տե աղջիկներուն հետ պտըտիլ. կուզեմ ընել, չեմ կրնար. աղջիկներուն մեղք է, օրական մեկ երեկո ժամ պտըտելու են, որպեսզի կազդուրվին, ասոր ճարը տես. չէ նե այլևս չեմ դիմանար, էլի սա մսագործին, նպարավաճառին դրամները տուր տե մեկ երկու կառք վարձե. ինչ փայտի պես տունը նստեր ես, ասանկ էրիկմա՞րդ կըլլա: Ուրիշ էրիկներ ամեն իրիկուն տունը բան կը բերեն. դուն, սենյակդ նստած, ամենևին չես մտածեր մեր մասին:

– Այո, Նիկողիմոս աղա, մատամը իրավունք ունի:

– Մատամ, փաստաբանը թող գա տե տեսնանք նպարավաճառի, մսագործի մասին ինչ կըսես:

– Փաստաբան մատամ չեմ ճանչնար. ատ մարդոց դրամը տալու ես որ առաջվա պես միս, հաց բերեն. խոհարարը երեկ գնաց. ուրիշ մը պետք է գտնալ այվազն ալ չեմ գար կըսես կոր, այվազ մըն ալ բերելու է:

– Մատամ գիտե՞ս որ հիմա մենք առաջվա պես հարուստ չենք:

– Չենք, բայց ատ գործերը ով պիտի ընե, ե՞ս, աստված չընե, մատներս անգամ չեմ թրջեր, արդեն շիդերս թուլցած են, սիրտս արագ կը զարնե, հիշողությունս կորսունցուցած եմ, թույլ եմ, ասոնք չըլլան նե՝ ալ նե՝ ինձի կը վայլե՞ սպասավորի գործ ընել: Աղջիկներն ըսես՝ ատանկ բաներ ամենևին

չեն գիտեր, գիտնան ալ՝ չեն ընե, ձեռքերնուն փափկությունը կը կորսվի, մեղք չե՞ն աղջիկներուն ձեռքերը:

– Այո, այո, մյուսյու Նիկողիմոս, մատամ իրավունք ունի մատմազելի մը կամ մատամի մը ձեռքերուն փափկության համար աշխատիլը բոլորիս պարտքն է:

– Ատանկ է մատամ, բայց եթե խոհարար, այվազ վարձելու դրամ չունինք ինչ պիտի ընենք:

– Կնիկ ըսածդ ատանկ բան չի հասկնար, դրամ չունեիր նե չի կարգվեիր քեզի՝ աման Նիկողիմոս աղա, եկուր ինձի ա՞ն ըսինք, կարմիր մոմո՞վ կանչեցինք, հետո՝ ես քեզի առի նե դրամիդ համար առի, քուկին գաղիական բաթլիճանի պես քիթիդ, կոշկակարի դեզկյահի պես թիկունքիդ չի սիրահարվեցա տե առի. եթե ինձի ասանկ խեղճ պիտի պահեիր, ինչո՞ւ առիր, անամոթ մարդ, բերանս բանալ մի տար: – Ամուսնուդ խանութը գոցեր են, կըսեն, բոլորը երեսիս կուտան, ես ատանկ խոսքեր կընա՞մ լսել, ես փափուկ մեծցած եմ, աղախինով, ծառաներով մեծցած եմ, աս վիճակին չեմ կրնար դիմանալ, հալումաշ կըլլամ:

– Դանըմ քու երեսովդ տան տեի չի սնանկացանք ա:

– Կո՞ւր էիր, ինչու գործիդ տերը չեղար տե ինձի ասանկ թշվառ վիճակի հասցուցիր: Հիմա երեսիդ ապտակ մը զարնեմ նե իրավունք չունի՞մ... չաթ... չաթ...

– Մատամ, ինչ կընես, չափը կանցունես:

– Չափը անցունել մանցունել չեմ գիտեր, ես քեզնե վախցողը չեմ. ահա նորեն՝ չաթ... չաթ... չաթ... ըսելիք մը ունի՞ս:

– Թու երեսիդ, ապերախտ կնիկ, անկիրթ կնիկ, թու, ափսոս, թու...

– Չայնդ կտրե. չէ նե հիմա քեզի կը խեղդեմ հա...

– Այո, մյուսյու Նիկողիմոս, մատամը իրավունք ունի, սիրտը լեցվեցավ:

– Ահա ես հորս տունը կերթամ. ամեն բան եղբայրներուս պատմեմ որ անոնք քու հախեղ գան: Գետնին տակը անցնելիք, դրամ չունեիր նե հարուստ տունե աղջիկ չառնեիր, տրեխի պես երեսի՞դ էի կարոտ: Ահա ես կերթամ:

– Պրավո, մյուսյու Նիկողիմոս, քաղաքավարությամբ վարվեցար, պատասխան չի տվիր, սակայն մատամն ալ քիչ մը իրավունք ունե. սիրտը լեցված էր...

- Թըք թըք թըք:
- Անթրե, օ դո՞ւք եք մյուսյու փաստաբան, հրամանեցեք:
- Ինչ կա ինչ չկա, Նիկողիմոս աղա, երեսնիդ կարմրեր է:
- Կրակի դեմ կայնած էի տե:
- Է...
- Մյուսյու փաստաբան, օրենքը ինչ կըսե ամուսնուն ապտակող կնկան:
- Ինչ էսպապով:
- Կնկա էսպապով:
- Նորեն էսպապ բառը սխալ հասկցար, այսինքն ինչ պատճառով:
- Բարկացավ տե...
- Բարկանալուն պատճառ ի՞նչ էր:
- Բարկանալու պատճառը հուզված ըլլալն էր:
- Հուզված ըլլալուն պատճառ՞ը:
- Խոհարար ուզելը:
- Խոհարար ուզելուն պատճառ՞ը:
- Կերակուր եփելը:
- Կերակուր եփելու պատճառ՞ը:
- Փորերնիս կշտացնելը:
- Փորերինիդ կշտացնելու պատճառ՞ը:
- Ճանըմ անոթութենե մեռնելու չէի՞նք ա:
- Օրենքը նախ պատճառը կը հարցնե: Է, ետքը խոհարարը եկա՞վ:
- Չեկավ:
- Պատճառ՞ը:
- Ես չուզեցի:
- Չուզելուդ պատճառ՞ը:
- Որովհետև խոհարար պահելու ժամանակ չէ. դրամ չունիմ, վերջացավ:
- Ըսել է դրամ չունենալուդ համար է զձեզ ապտակել:
- Այո:
- Օրենքը այս մասին բան մը ըսած չունի, սակայն օրենսգետի մը կը հարցնենք, կը հասկնանք: Սա մուրհակը ստորագրեցի՞ք:
- Առեք... ահա ստորագրեցի:
- Այս մուրհակով հազար ոսկի պարտք կունենաք ձեզի երաշխավոր եղող Մարտիրոս աղային:
- Այո:

- Վաղվան պիտի սկսին գործերնիդ նայիլ, վաղը առտուն կանուխ իմ տունս հիսուներկու ոսկի դրկելնիդ կը հուսամ: Մնաք բարով:

- Նիկողիմոս աղա, ըրածդ կը հավնի՞ս. ինչու համար մատամը ոտքիդ տակը առեր ծեծեր ես, հետո ալ տունեն դուրս ես ըրեր: Մենք քույրերնիս քեզի տվինք որ ծեծե՞ս:
- Ով ծեծեր է մատամը:
- Դունք ծեծեր ես. կրնա՞ս ուրանալ. ինչո՞ւ ծեծեցիր, քույրս ինչ հանցանք ունի, խելոք, հնազանդ կնիկ է, ոչ բերան ունի, ոչ լեզու:
- Չեզի սխալ հասկցուցած եմ, մատամը ծեծող չի եղեր, ճշմարիտ ըսե՞մ մատամը զիս ծեծեց:
- Սուտ է. գոնե անանկ բան մը ըսե որ հավատանք, հեչ կնիկը կրնա՞ էրիկ-մարդը ծեծել, մանավանդ կնիկ մը կրնա՞ ձեռք բարձրացունել իր երկան վրա: Քու ատ ըսածդ ամենեն լիրք կինիկն ալ չի կրնար ընել, ուր մնաց քրոջս պես կնիկ մը, որ ծառաներով, աղախիններով մեծցած է: Նիկողիմոս աղա, քու այդ խոսվածքդ քրոջս վրա մեծ արատ մը ձգած կըլլաս, խոսքդ ետ առ չե նե քեզի հետ ուրիշ կերպ կը վարվիմ, ընտանիքի պատիվ կա:
- Ատ ըսածներդ շատ լավ են, սակայն քույրդ զիս ծեծեց, քանի մը ապտակ զարկավ. մյուսյու Ժորժն ալ հոս էր:
- Չ'ըլլար էֆենտիմ, չ'ըլլար, խոսքդ ետ վերցուր, թե չէ հիմա քեզի ոտքիս տակը կառնեն:
- Ծեծեց, ճանըմ:
- Դեռ կը խոսի՞ս...
- Չի ծեծեց, չի ծեծեց... աստված իմ հարուստ տունե աղջիկ առնելը ինչ մեծ դժբախտություն է եղեր. գործդ լավ գնաց մի՛ շատ լավ մարդ կը սեպվիս, գործդ ավրվեցավ մի՛ ընտանիքով կը ծեծեն քեզի:
- Չայնդ կտրե, դեռ կը խոսի՞ս:
- Չէ, չեմ խոսիր, մատամը զիս չի ծեծեց, ես զինքը ծեծեցի, հանգստացա՞ր:
- Դուն իմ քույրս ինչո՞ւ կը ծեծես, անամոթ մարդ, մազեդ մորուքեդ ալ չես ամչնար. ասանկ բարձր ընտանիքե կնիկ առնես տե ետքեն ալ ելլաս ծեծե՞ս հա... չաք չաք չաք...
- Ճանըմ ան ինձի ծեծեց:
- Ա՞ն մի քեզի ծեծեց զրպարտություն հա... չաք... չաք... չաք... խոսքդ ետ վերցուր, թե չէ... չաք... չաք... չաք...

- Ան ինձի չի ծեծեց, ես զինքը ծեծեցի:
- Չեռքերդ չորնան, ի՞նչ իրավունք ունիս քույրս ծեծելու: Չաթ... չաթ... չաթ...
- Ան զիս ծեծեց...
- Նորե՞ն գրպարտություն. մի գրպարտեր, թե չէ... չաթ... չաթ...:
- Այս ինչ փորձանքի հանդիպեցանք, ան ծեծեց կըսենք՝ կը ծեծեն, ես ծեծեցի կըսեն՝ նորեն կը զարնե:
- Այո, դու իրավունք չունիս քոջս վրա ձեռք բարձրացնելու:
- Չի ծեծեցի, եղբայր:
- Ըսել է քույրս սուտ կը խոսի հա՞... ստախո՞ւ է. ըսե, թե չէ՝ գլխուդ կիջեցնեն:
- Ստախոս չէ, ճշմարիտ կը խոսի:
- Ճշմարիտ կը խոսի նե ծեծ ուտելը ճշմարիտ է. դու ինչու կը ծեծես քույրս, ինչո՞ւ... չաթ... չաթ... չաթ...
- Չընկըլ... չընկըլ...
- Թըք թըք թըք...
- Անթրե, հրամանեցեք, մյուսյու փաստաբան:
- Իշտե ես կերթամ, Նիկողիմոս աղա, քույրս վաղը պիտի գա, զինքը գոնե պիտի թողուս, թե չէ՝ գիտես: Ատիո...

32.

- Նիկողիմոս աղա, սա հիսուներկուսկես ոսկին ինչո՞ւ չուղարկեցիք:
- Գլուխս կը ցավի, սպասե սուրճ մը խմենք տե հետո կը խոսինք:
- Նիկողիմոս աղա, երկու ժամ է որ կը սպասեմ, ըսելիքնիդ ըսեք որ երթամ. հետո՞ այսօր զձեզ քիչ մը հուզված կը տեսնամ, պատճառը ինչ է:
- Ճանըմ կնկանս հետ քիչ մը առինք տվինք, գլուխնիս փորձանք եկավ, աստված պելան տար, ինձի կնիկ չ'ըլլար, անամոթը թե զիս ծեծեց և թե գացեր եղբայրներուն մոտ լացեր է և ըսեր թե ես եմ զինքը ծեծեր: Սակայն...
- Սակայն փաստաբան մը խնդիրնիս չի վերաբերող վեճի մեջ չի կրնար մտնալ, կնիկդ քեզի, դու կնիկդ ծեծեր եք, ատոնք ինձի չեն վերաբերիր...
- Բայց իրավունք չունի՞մ:
- Իրավունք ունենալը չունենալը հասկանալու համար ինձի այդ դատին ալ փոխանորդ կընես, ծախքը կուտաս, ես ալ այն ատեն դատդ կը լսեմ և իրավունքը որ կողմը ըլլալը քեզի կըսեն: Հիմա գանք մեր գործին: Դուք երեկ հիսուներկուսկես ոսկի պիտի դրկեիք, ինչու չի դրկեցիք:

- Ուրկե՞ գտնայի տե դրկեի:
- Ուրկե գտնալդ կամ չի գտնալդ իմ գործս չէ, եթե ատ դրամը չի տաս՝ գործերդ երեսի վրա կը մնան, հետո օրը հիսուն քննիչ կը մտնա կելլա, դու ալ դատարանի սրահներուն մեջ կը փտտիս, կը կորսվիս. ձեր գործերը նայելու համար քոմիսիոն մը ստեղծվեցավ. քոմիսիոնին անդամներեն մեկ քանին զիս շատ կը սիրեն, բայց միայն սիրելով գործը չի լմննար. պետք է անոնց մոտ երթալ, գործը հասկցնել, գործը հասկցնելն ալ ծախք կուզե:
- Կուզե՞ս:
- Ահա ես ատ ծախքին համար է որ կըսեմ թե հիմակուհիմա 50-60 ոսկի տուր՝ նավի դրամ է, թրամվայի դրամ է, Ֆիլան է, Ֆլան է, տամ տե երթամ ատ մարդիկը տեսնամ, սա ծախքերը գրպանե՞ս պիտի ընեմ, Նիկողիմոս աղա:
- Ճանըմ, ինչո՞ւ գրպանեդ ընես, ես կուտամ, սա հետագային առնելիք վոր պիտի չըլլա՞մ, կառնեմ, կուտամ:
- Բայց հիմա դրամ պետք է:
- Հիմա դրամ չի կա. ինչ ընենք:
- Ինչ ընենք ալ խո՞սք է. տունդ պրոյով, հայելիով լեցուն է, ատոնք շուկա տանել ծախելու է. հետո երբ գործը կարգավորվի, նորը կառնենք, գործերնին ավրված մարդիկ բոլորն ալ ասանկ կընեն, ասիկա միջոց մըն է:
- Կըլլա՞ կըսես:
- Հարկավ. ինչո՞ւ պիտի չըլլա: Հիմա կերթամ հինգ վեց բեռնակիր կուղարկեմ, կամաց կամաց ատոնք կիջեցնեն շուկա. հեն հայ բեռնակիր կը կանչեն որ անոնք տանին, քանի մը փարա ալ անոնք վաստակին: Մարդս ինչ վիճակի մեջ ալ գտնվի, իր ազգին օգնելու է:
- Ատանկ է, գործերնիս կարգավորվի նե՝ նորերը կառնենք, հայտե, գնա բեռնակիրները ուղարկե, թող գան, տանին:
- Ահա կերթամ, սակայն առաջուց սա ալ ըսեմ թե քեզի կրնան համոզիլ, որ չի ծախես, կրնան ըսել թե փաստաբանդ կուզե քեզի մոխիրի վրա նստեցունել, չըլլա թե հավատաս:
- Չեմ հավատար, ես ընելիքս չե՞մ գիտեր, ուրիշներուն խոսքը լսելով օգուտս ոտքի տակ կառնե՞մ. ատնց ծախվելը ինձի օգտակար է, հայ բեռնակիրներուն կրել տալով ըրած ազգասիրություննիս ալ՝ ձրի:
- Պրավո, օրենքի համաձայն ըսված խոսքին ըսելիք չի կա, ահա կերթամ ատիո, Նիկողիմոս աղա, խոսքիդ վրա ամուր կեցիր:
- Ես խոսքես ետ չեմ կենար, նայե որ դու չի կենաս:

– Վստահ եղիր: Քանի որ բեռնակիրները պիտի գան, եթե ավելորդ բազմոցներ, բաներ կան, անոնք ալ տուր, մեյ մալ անոնց համար բեռնակիր չի վարձենք:

– Կը նայիմ:

– Ահա ես կերթամ, բեռնակիրները կը դրկեմ:

– Ես ալ անոնց կը սպասեմ:

– Գնաց. սա անկյունի բեռնակիրները հիմա կուգան. պրո է, հայելի է Ֆլան է, կը տանին, մենք ալ կերթանք, կը ծախենք, փաստաբանին դրամները կուտանք. ավելցածն ալ գրպաննիս կը դնենք, լմնցալ գնաց:

33.

– Չընկլ չընկըլ...

– Նիկողիմոս աղային տունը ա՞ս է:

– Հոճա Նիկողիմոսը հո՞ս է:

– Շուկա տարվելու բաներ կան եղեր:

– Հայելի, բազմոց և այլն կա եղեր:

– Հոս է, հոս է, եկեք վար իջեցուցեք:

– Աղա, Պիթ պազար՝ որո՞ն տունը պիտի տարվին ասոնք:

– Տուն պիտի չի տարվին. շուկա պիտի տարվին, ծախվին:

– Եվրոպա՞ կերթաք:

– Փաստաբանը գիտե:

– Շատ աղեկ, Նիկողիմոս աղա:

– Ահա ես աս հայելիները տարի:

– Ահա ես ալ պրոն շալկեցի:

– Ծո Կարապետ, ծո Դուկաս, ի՞նչ կայներ եք. սա քանաբեն վերցուր:

– Մյուս սենյակն ալ պարպե՞նք:

– Հարմարին նայեցեք:

– Չընկըլ չընկըլ...

– Մատամը եկավ:

– Ասոնք ինչո՞ւ վար կիջեցուցեք:

– Նիկողիմոս աղան հրամայեց, տուտու, շուկա պիտի տանինք:

– Լեցեք անգամ մը զինքը տեսնամ:

– Թըք թըք թըք...

– Անթրե...

– Ճանըմ խենթեցա՞ր դուն ի՞նչ եղար, ինչո՞ւ տունը կը պարպես կոր:

– Պիթ պազար պիտի տանինք. մեր գործին համար քոմիսիոն մը ստեղծվեր է, անոր անդամներեն մեկ երկուքը տեսնելու համար դրամի պետք կա... Շուկա պիտի երթանք տե... հայելիները պիտի ծախենք տե... այսինքն դրամի պետք եղավ:

– Ծախելու համա՞ր կուգես ասոնք:

– Գնելու համար չեմ ուղարկեր ա, հարկավ ծախելու համար կուղարկեմ:

Ատ խելքը ո՞վ սորվեցուց քեզի:

– Ես խելք չունի՞մ, ուրի՞շը պիտի սորվեցունե, ես չե՞մ կրնար մտածել:

– Է, աղա, տուտու, դեռ պիտի սպասե՞նք:

– Գործերնիդ գացեք պրե. ես ծախու ապրանք չունիմ:

– Է մեր իրավունքը հապա ո՞վ պիտի տա:

– Մատամ, դուն ինչո՞ւ կը խառնվիս աս գործին: Կրեցեք, աղբարներ:

– Չգեցեք, կըսեմ:

– Կրեցեք, կըսեմ: Ատոնք իմս են, մատամը չի խառնվիր:

– Շատ աղեկ, աղա:

– Քա ձգեցեք կըսեմ ձեզի, ինչ պինդ գլուխ մարդիկ եք եղեր. անիկա խենթ է, անոր ըսածին մի նայիք:

– Կնիկ է, ան թող խոսի, դուք ձեր գործին նայեցեք:

– Եկուր, Սարգիս առ սա պրոն:

– Աստուծոն գտնաս, մարդ, գետնին տակը անցնիս տե ես ալ տեսնամ: Եղբայրներուս ըսեմ՝ անոնք քեզի հետ ընելիքնին թող բաժնեն:

– Բաժնելու բան մը չի կա, ասոնք ես իմ դրամովս առած եմ կուգեմ կը ծախեմ, կուգեմ կը գործածեմ:

– Դուն գիտես, ահա ես կերթամ:

– Նիկողիմոս աղա, ասոնք կրելնուս համար մատամը ինչո՞ւ կը բարկանա:

– Պիտի ծախվի տե դժվարը կուգա:

– Անանկ է նե մի ծախեր:

– Չի ծախեմ ամա, մեր գործին համար քոմիսիոն ստեղծվեր է տե. աս քոմիսիոնին անդամները տեսնելու համար դրամի պետք պիտի ըլլա:

– Կըլլա ա:

– Քեֆիս համար չեմ ծախեր:

– Է ինչ որ կար, վար իջեցուցինք, հիմա տանինք:

– Տարեք, փաստաբանը հոն է, անոր հանձնեցեք, ես ալ ձեր ետևեն կուգամ:

- Ճանրմ, ամիս մըն է ո՞ր ես:
- Իշտե ան տեսնելիք մարդիկս տեսա, գործդ մաքրեցի, վերջացավ:
- Բոլոր հաշիվները նայվեցա՞ն:
- Առնելիք ունեցողներուն հարյուրեն ինը ինկավ, սակայն տունդ, խանութներդ մեջ խաղացին:
- Մե՞ջ խաղացին մի:
- Այո:
- Հապա կըսեիր թե պարտքեն ավելի առնելիք պիտի ունենանք:
- Կըսեի, բայց չեղավ. հաշվե որ երաշխավորին դրամն ալ տրվեցավ, սիրտդ հանգիստ թող ըլլա:
- Հապա երեկ մեկը կըսեր թե հարյուրին վաթսունը ինկեր է:
- Անոնց խոսքին մի նայիր: Քոմիսիոնին անդամները կելլան տե սո՞ւտ Կը խոսին: Աղոթե աստծուն, որ գործդ առանց աղմուկ լուծվեցավ. ամա տունն ու խանութները վրա գացին. ի՞նչ ընենք: Դուն հիմա ժամանակ մը ...-ին կազինոն թուղթ խաղալ սկսե, հոն ուրիշ սնանկացյալներ ալ կուգան, անոնց հետ նստելով ելլելով՝ թե թուղթ խաղալ կը սորվիս և թե վիճակիդ կը վարժվիս:
- Ատանկ է, բայց ինչո՞վ պիտի ապրիմ. մատամը աղջիկները առավ, հորը տունը գնաց. մյուսյու ժորժը փախավ, ես միսմինակ ի՞նչ կրնամ ընել: Ինչո՞ւ ինձի քիչ մը դրամ ետ չի դրիք տոկոսեն, կերևա թե ինձի մնալիք դրամները դուն և քոմիսիոնին անդամները իրարու մեջ բաժնեցիր:
- Ատանկ խոսք չընես, մարդու լեզուն կը կտրեն, հա, փառք աստուծո չապրելու ինչ պատճառ ունիս դուն, միմակ մարդ մըն ես, փաստաբանություն եթե ընես աշխարհքիս դրամը կը վաստկիս:
- Կը վաստկի՞մ կըսես:
- Հարկավ կը վաստկիս. մեկուն կառնես, մյուսին դատեն կը խլես, գործակալին իրավունքն է կըսես կառնես, խնդրագիր ծախք է կըսես կը փրցունես. վերջապես չորս կողմեն կը վաստակիս, կապրես, նստիլ տե մտածելեն ինչ կելլա:
- Արդյոք կրնա՞մ ընել:
- Հարկավ կրնաս, քանի մը բառ կա. նախ անոնք սորվելու է. օրինակ **խաւրանել, սպացույց, պատճառ, օրենքի համաձայն, հատազագույն, ընկրել, որոշել, իրավունք** և այլն, ահա ասոնց պես քանի մը բառ ևս սորվիս նե աղվոր փաստաբան մը կըլլաս, գե՞շ է:

- Գեշ չէ, սակայն կրնա՞մ սորվիլ:
- Քու միտքդ սուր է, մեկ շաբաթեն կը սորվիս, դատերը կը պաշտպանես, կը սկսիս դրամ վաստակիլ:
- Շատ աղեկ, մյուսյու փաստաբան, սակայն ձեզի խնդիրք մը ունիմ:
- Ի՞նչ է նայինք:
- Մանր չունիմ, ինձի մեկ-երկու մեծիտիե կուտա՞մ:
- Դուն եղիր՝ ոչ մեկուն դրամ մի տար, ահա այս ըսածս ալ որպես օրենքի տեսրակիդ մեկ անկյունը գրե:
- Գրեմ, բայց գրպանս փարա չի կա:
- Գնա դատ մը գտիր:
- Բայց ինչու ես այսքան ծախք ընեի, գործերս ավրեի և այս վիճակին հասնեի:
- Բան մըն էր եղավ:
- Ալաֆրանկային չի հետևեի տե առաջվա վիճակիս մնայի նե չէ՞ր ըլլա:
- Բան մըն էր եղավ:
- Ատ մյուսյու ժորժը զիս խաբեց, գետնին տակը անցնի, դրամներուս տակեն մտավ, վրայեն ելավ:
- Եղածին անցած ըլլա կըսեն:
- Հիմա երկու մեծիտիե ալ չես տար:
- Չունիմ:
- Մեծիտիե՞ մալ չունիս:
- Խաբերդ համար մեծիտիե մը կուտամ, բայց ամենը մեկեն մի ծախսեր, որ նորեն առանց դրամի չի մնաս:
- Լեռը մարգարեին քովը չերթա նե՝ մարգարեն լեռան քովը կերթա հե. գանձապանակս լեցուն ոսկի ըլլար տե հիմա մեկ մեծիտիե խնդրեմ հա՞... ախ ատ ժորժը, եթե ձեռքս անցնի...
- Է Նիկողիմոս աղա, կը ներեք, երկար խոսեցինք, այլևս քեզի լսելու ժամանակ չունիմ, գործ ունիմ, պիտի երթամ, երբեմն երբեմն կրնաք գրասենյակս գալ:
- Շատ աղեկ:
- Եղածին վրա մտածելու չէ. գործի սկսելու է: Մնաք բարով:
- Ողջ ըլլաք. լեռը մարգարեին քովը չերթա նե՝ մարգարեն լեռան քովը կերթա հե՞...

- Մաշալահ, Նիկողիմոս աղա, դուք շատ լավ երկու հարյուր կը խաղաք:
- Այո, գլուխս փորձանք գալեն ետքը ինքզինքս երկու հարյուրի տվի, քիչ մը սորվեցա:
- Ի՞նչ փորձանք, հիվանդությո՞ւն:
- Ոչ:
- Ինկաք տե մեկ կողմերնի՞դ ցավցուցիք:
- Ոչ:
- Սնանկացա՞ք և դրամնիդ ատո՞ր գնաց:
- Ոչ, եղբայր, գործերս քիչ մը անհաջող գացին տե ասանկ եղա, չե նե առաջ ասա՞նկ էի: Այս զգեստո՞վ կը պտըտեի. երեք չորս ծառա ունեի. կառքեր, ձիեր:
- Ի՞նչպես եղավ որ ինկար. թանկ ապրանք գնեցիր տե հետո գիները ինկա՞ն:
- Ատանկ բաներ չեղան:
- Հապա՞:
- Մյուսյու Ժորժ կըսեն. ատ անունով մեկը կա, բարով խերով չ'ըլլար. աղջկաս խելքը առավ. սատկեր տե այդ բանը չըներ, լոժիքի համաձայն սանկ է, մանթըքի համաձայն նանկ է, ըսելով բռնի մեզի փեսա եղավ:
- Ե՞տքը:
- Փեսա ըլլալեն ետքը եկուր քեզի ալաֆրանկա ընեմ, ըսավ, և մեր ծախքը մեծցուց. մեկ կողմեն ալ Խավիրար խանի մեջ քոնսուլիտ կը խաղա եղեր ինձմե գաղտնի. մեյ մալ տեսնամ՝ գանձանակս պարպվեցավ...
- Սա Ժորժը ըսածդ քսանըվեց քսանըյոթը տարեկան մեկը չէ:
- Այո:
- Շեկ պեխերով:
- Շեկ:
- Կապույտ աչքերով:
- Ճշմարիտ է:
- Սև հոնքերով:
- Նույնիմքն:
- Թեթևաբարո մեկը:
- Ան է:
- Բաթիճանի պես քիթով:
- Այո:

- Միջահասակ, թուխ:
- Այդպես:
- Նիկողիմոս աղա, անիկա խաբեբային մեկն է, ինտո՞ր եղավ որ խաբվեցար:
- Ալաֆրանկա ըսինք, սնանկացանք:
- Ողջություն ըլլա, ինչ ընենք, հիմա չի սնանկացող մա՞րդ կա: Միք մտածեր, եկուր քեզի հետ բարթի մը բրեֆա խաղանք, պատրաստ ընկեր մըն ալ կա:
- Դուն ուե դատ չունի՞ս:
- Ինչո՞ւ կը հարցունես:
- Դատդ ինձի հանձնե, փաստաբանություն ընեմ, դատդ վաստակիս:
- Շատ աղեկ, մեկե մը տասը հազար դուրուշ առնիք ունիմ, կուզեմ, չի տար. կրնա՞ս ասիկա փրցունել:
- Կը փրցունեմ, սակայն դատական գործին ձեռնարկելեն առաջ ինձի քսան ոսկի տալու ես, որովհետև խնդրագիր է, գործակալ է, դռնապան է, Ֆալան է, Ֆիլան է, ասոնց դրամ տալ պետք ըլլա:
- Նիկողիմոս աղա, դուն ալ կուզես զի՞ս խաբել. ես եթե քսան ոսկի ունեցամ, հոս կը նստի՞մ:
- Փաստաբան մը ատանկ բաներ գիտնալ պարտավոր չէ:
- Անանկ է նե եկուր բրեֆա մը խաղանք:
- Բրեֆերան ինչ ընեմ, ինձի դատ մը գտիր:
- Բարով եկար, աղա:

- Միքայել աղա, ձեզի խնդրանք մը ունիմ:
- Հրամանեցեք, Նիկողիմոս աղա, ըսեք:
- Աման Միքայել աղա, երկու օրվա համար ինձի մեկ ոսկի կրնա՞ս տալ:
- Կը ներեք, Նիկողիմոս աղա, քովս ունենայի կուտայի, ոչ թե մեկ, հիսուն ալ կուտայի, բայց այս ի՞նչ է ձեր վիճակը:
- Ճիտը տակը մնա...
- Ի՞նչ եղավ:
- Բարով խերով չ'ըլլար:
- Կը խնդրեմ, պատմե, վիճակդ ծանր կը տեսնամ:
- Ալ ի՞նչ վիճակ պիտի ըլլա, ոչ տուն մնաց, ոչ խանութ:
- Կրակի՞ տվիք:

- Այո:
- Ապահովագրված չէ՞ր:
- Ապահովագրված էր:
- Գնա ապահովագրողներին դրամդ առ:
- Էֆենտիմ, գործս ավրվեցավ տե առնելիք ունեցողները տունս գրավեցին:
- Ի՞նչպես եղավ որ գործդ ավրվեցավ:
- Փեսանիս՝ մյուսյու ժորժը տակեն մտավ, վրայեն ելավ, ետքեն ալ թողուց փախավ:
- Դուն հիմա ի՞նչ կընես հոս:
- Փաստաբանություն ընենք ըսինք, բայց դատ չեմ գտնար:
- Ատիկա քու ընելիք գործդ է:
- Երբեմն ալ երկու հարյուր կը խաղամ:
- Ատոր վե՞րջը:
- Վերջը երկու հարյուր է իշտե:
- Նիկողիմոս աղա, ասանկ չ'ըլլար, ես քեզի կը սիրեմ, գիտես ա, եկուր քեզի գործ մը գտնանք տե...
- Գոնե անանկ գործ մը ըլլա որ շատ դրամ վաստկիմ. դուն սարաֆներ կը ճանչնաս, ատոնցմե մեկը օգնե տե Եվրոպայի հետ գործ բռնեմ:
- Հիմա ատ խոսքերը ձգե. մեր աներհոր գրասենյակին մեջ կը նստիս, եկող գացողին խոսք կը հասկցունես, ամսական հազար դուրուշ կառնես. կը լըմնա: Ես կերթամ կը խնդրեմ, մեղք ես սիրտդ մաքուր է, հետո՝ հարստութենե ինկած մարդ ես:
- Ողջ ըլլաք:
- Դուն հանցանք մը ունիս՝ քիչ մը միամիտ ես, ամեն մարդու խոսքին կը հավատաս:
- Միամիտ չեմ, ճանըմ, ատանկ պատահեցավ, անցյալները փաստաբանս կըսեր թե քեզի պես խելոք մարդ քիչ կը գտնվի, եթե միամիտ ըլլայի՝ ատանկ խոսք կըսե՞ր: Հանցանքս այն է որ ժամանակի ոգուն հարմարվինք ըսինք՝ ատոր համար ալ շատ դրամ պետք ըլլալուն՝ բոլոր դրամները ծախսեցինք, բայց ժամանակին ալ հարմարեցանք:
- Աչքերդ բաց, սա աներհոր գործին մեջ ալ ժամանակի ոգուն հարմարվե տե դրամները վատնե:
- Ասոված չընե. ասկե ետքը ալաֆրանկա խոսքը ալ բերնես պիտի չառնեմ պապերես ինչ որ տեսած եմ, ան պիտի ընեմ:

- Կեցցես, մատամը և աղջիկները ո՞ր են:
- Գործս ավրվելուն պես մատամս ելավ հորը տունը գնաց. երախաներն ալ հետը տարավ:
- Պզտիկ տուն մը վարձե տե. ընտանիքդ հավաքե նստե, մեղք ես:
- Ողջ ըլլաս, Միքայել աղա, քու այս լավությունդ երբեք պիտի չի մոռնամ, որովհետև ինձի այս ծանր վիճակես ազատեցիր: Հիմա խելքս գլուխս եկավ: Ասկե ետքը ալաֆրանկա մարդ մը տեսնամ նե՝ երեսս այն կողմ պիտի դարձունեմ:
- Այս իրիկուն միասին երթանք տե քեզի մատամիդ հետ ալ հաշտեցնեմ:
- Ասոված ձեզի երկար կյանք տա, չեմ գիտեր թե ձեր ըրած այս լավության տակեն ինտո՞ր պիտի ելլամ:
- Հայտե, երթանք:
- Հայտե:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՐԱՀԱՆԳԵՍ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 196:

Առաջին հատվածը հեղինակը գրել է հայերեն, ամուսինների գրույցը շարունակել է թուրքերեն, վերջին տողերը ևս գրել է հայերեն:

1. Բառախաղ է՝ տամա, դամա-տիկին, տամա-խաղի տեսակ: Դոմինո-պարահանդեսային զգեստ, տոմինո՝ խաղի տեսակ բառերով, բառախաղ:

ԵՐԿՈՒ ՕՐԻՈՐԳ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 200-201:

Առաջին հատվածը հեղինակը գրել է հայերեն, աղջիկների գրույցը շարունակել է թուրքերեն, ֆրանսերեն բառերի առատ օգտագործմամբ, որ հատուկ էր օտարացած հայ ընտանիքներում:

1. Բոն ժուր, բոն ժուր- բարև:

2. Մա շեր -սիրելիս:

3. Այս թունոտ արտահայտություններից չպետք է ենթադրել թե Լուցիկը օտար է: Նա նույնպես հայ է, սակայն պատկանում է հայ կաթոլիկների մոլեռանդ թեմին, որը դարձել էր Անտոն Հասունյանի զոհը և կուրորեն ընդունելով կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը, ատելությամբ էր վերաբերվում իրեն ծնող հայ ժողովրդի լեզվին, կրոնական ծիսակատարություններին: Օտարացման այս ողբերգությունը հիանալիորեն է տրված հայտնի Հովսեփ Վարդանյանի «Ազգայի» հայատառ թուրքերեն վեպում, Գրիգոր Զոհրապի «Արմենիսա» սքանչելի նորավեպում և այլուր:

4. Գալով Անտոն Հասունյանի ազգադավ գործունեությանը, ոչնչացնող կերպով ծաղրել է Հակոբ Պարոնյանն իր «Ազգային ջոջեր»ում, Անտոն Հասունյանին նվիրված երգիծական դիմանկարում (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 106-116):

5. Խոսքը վերաբերվում է Հոռմի պապի անսխալականության մասին կաթոլիկ եկեղեցու դավանած օրենքին:

6. Բրիմիեր քաթոլիկ-առաջին կարգի կաթոլիկ:

7. Ժըվու պրի-խնդրեն:

8. Հիշատակված անունները ներկայացնում են հայ կաթոլիկների բուն կենտրոնը՝ Ս.Ղազար կղզու Մխիթարյան միաբանությունը: Հայ ժո-

ղովրդի պատմական անցյալի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության պատճառով, 1850-1860-ական թվականներին նկատելի կերպով կորցրել էր վստահությունը Հոռմի մոտ, որը մեղադրում էր մխիթարյանցիներին ազգայնամոլության մեջ: Վատիկանը քաջալերում, հովանավորում էր հայ կաթոլիկների այն թեմին, որն առավել մեծ չափով հեռանում էր իր ժողովրդի լեզվից, ավանդույթներից, անձնատուր լինում Հոռմի հրահանգներից: Այդ մոլեռանդ հատվածին էր պատկանում Անտոնյան միաբանությունը:

9. Աթանթե էն բո - սպասեք մի քիչ:

ԱԼԱՖՐԱՆԿԱ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ., թիվ 202-203, 204, 205, 206: Ծարունակվել է նաև «Մեղու»ի հետագա համարներում: Յուրաքանչյուր հատվածին տրվել է նոր խորագիր («Ալաֆրանկայի սուարենները», «Պարահանդես», «Թատրոն» և այլն): Պահվել է հեղինակի այդ սկզբունքը, չնայած բոլորի մեջ էլ հանդես են գալիս հիմնականում նույն երկու հերոսները՝ Մարկոս աղան և Թորոս աղան, ծաղրում ալաֆրանկա կենցաղի տարբեր կողմերը:

1. «Պաղտասար աղբար» կատակերգությունում այդ ամենը Պարոնյանը ծաղրում է Կիպարի ամբարտավան այն հայտարարություններով, թե 19-րդ դարի ոգին արդարացնում է սիրելիան ունենալը, թե «դարուս քաղաքակրթությունը» կարտոնն այն պատճառները, որոնց համար երիտասարդը ստիպված է, «յուր բարեկամին կինը սիրել» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 389):

2. Պարոնյանի զբաղումներից մեկն էլ լինելով հաշվապահությունը և հետևելով հաշվապահական ավանդական ձևին, Պարոնյանը թե հայերեն և թե հայատառ թուրքերեն երկերում ծաղրել է հաշվապահական Դոբի եղանակը: Նույնը տեսնում ենք նաև «Լեռը մարգարեին քովը չերթա նե մարգարեն լեռան քովը կերթա» երգիծական վիպակում:

3. Այս հատվածը Պարոնյանը հետագայում գրեթե նույնությամբ օգտագործել է «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակում (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.1, էջ 53):

4. Ակնարկում է դեղերի լատինական *nuu* վերջավորությունը:

ԱԼԱՅԲԱՆԿԱՅԻ ՍՈՒԱՐԵՆԵՐԸ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 207:

1. Կ.Պոլսի պատրիարք Հակոբ Նալյանի «Չեն Հոգևոր» գիրքը լույս է տեսել 1757թ. Կ.Պոլսում:

2. Խոսքը վերաբերվում է ոչ թե Աստվածաշնչի «Ծննդոց գրքին», այլ Մատթեոսի Ավետարանի սկզբին, որտեղ տրված է հրեաների նախահոր՝ Աբրահամի տոհմի ճյուղագրությունը. «Աբրահամ ծնաւ զԻսահակ, Իսահակ ծնաւ զՅակովբ, Յակովբ ծնաւ զՅուդա և զԷդայրս նորա...» և այլն (Նոր Կտակարան, Կ.Պոլիս, 1913թ. էջ 1):

3. «Մանգումէի Էֆրեար» հայատառ թուրքերեն թերթ: Լույս է տեսել 1866-1896, 1901-1909, 1912-1917 թվականներին Կ.Պոլսում, առաջին շրջանը Կարապետ Փանոսյանի խմբագրությամբ: Ծաղրում է Փանոսյանին, որ սիրել է տեղի անտեղի օգտագործել « և այլ, և այլն» բառերը :

4. Տես նախորդ ծանոթագրությունները:

ՊԱՐԻ ԳԱՍ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 208:

1. «Մէյտան օյունու» թատերականացված կրկեսային բնույթի թուրքական ժողովրդական հրապարակային խաղ է:

2. Մարկոս աղայի պարել սովորելու հատվածը հիշեցնում է Նիկողիմոս աղայի նույն վիճակում գտնվելը «Լեռը մարգարեին քովը չերթա նե մարգարեն լեռան քովը կերթա» երգիծական վիպակում:

ՊԱԼՈ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 209:

1. Խոսողը հույն է. *պրե* արտահայտությունը օգտագործում են հույները՝ *ծո, այ փղա, այ մարդ* իմաստով: Հունարենում շ հնչյունի բացակայության պատճառով էլ *էշեկ* բառը (էշ) հնչում է *էսեկ*:

ԹԱՏՐՈՆ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 210:

1. Տես «Ալաֆրանկայի սուարենները», ծան. 3:

2. Ընդգծված մեծապատիվ, թատերասեր, խումբ, քաջալերել գաղափարներ արտահայտող բառերն օգտագործվում են հայերեն, ինչպես դերասան, հեղինակ, տոմսավաճառ բառերը գործածված են հայերեն: Հայատառ թուրքերեն գրականության մեջ առհասարակ ազգային, մշակութային և կրոնական գաղափարներ արտահայտող բառերն օգտագործվում են հայերեն, ինչպես՝ քահանա, պատրիարք, եկեղեցի, օրացույց, դպրոց, լուսավորություն, քաղաքավարություն և այլ: Ըստ մեզ, հայատառ թուրքերեն գրականության մեջ օգտագործված հայերեն բառերի ընդհանուր թիվը հասնում է շուրջ 500-ի:

3. Իր երկու հերոսների՝ Մարկոս աղայի և Թորոս աղայի այս գրույցը Պարոնյանն ըստ էության սուր քննադատության է ենթարկում հայկական թատրոնի՝ մասնավորապես Հակոբ Վարդուլյանի թատերախմբի խաղառճը, նրա մեղոգրամատիկ խաղացանկը, բեմական անկանոնությունները՝ դերասան-դերասանուհիների սենտիմենտալիզմը: Այս տեսակետից Պարոնյանի «Թատրոն» երկը ճանաչողական մեծ արժեք ունի թատրոնի պատմաբանների համար:

ՀԱՍՈՒՆՅԱՆ ԽՆԳԻՐ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 211:

1. Ամբողջ երկը գրված է *Հասուն* (Անտոն Հասունյան) և *հասուն* ընտիր ալյուր բառերի բառախաղով: Առանց այդ բանը հաշվի առնելու միանգամայն անհասկանալի կարող են լինել բոլոր մտքերը, մինչդեռ իրականում այդ երկու բառերի շուրջ կառուցած տասնյակ բառախաղերով խստորեն քննադատում է Վատիկանի ոտնձգությունները Մերձավոր Արևելքում, մասնավորապես արևմտահայ իրականությունում: Հռոմի գործակալ Անտոն Հասունյանի գործունեության աղետավոր բնույթը, նույն հայ կաթոլիկների ներսում տիրող հակամարտությունները, որոնք հայտնի էին հասունյան-հակահասունյան պայքարի յուրահատուկ դրսևորումով: Պարոնյանն այս երկում Անտոն Հասունյանին ներկայացնում է որպես հայ ժողովրդի ազգային շահերն ու իրավունքը Հռոմին ծախող մի վարձկան: Նա Հասունյանին նույնպիսի խիստ գնահատական է տվել նաև «Ազգային ջոջեր»ում, մոլի այդ հոգևորականին դասելով այն մարդկանց շարքին, որոնք «նախապատիվ կը սեպեն իրենց ազգային իրավունքները ս.Պապին հողաթափերուն մեջ տեսնել, քան թե իրենց ձեռքերուն մեջ» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 106):

2. «Աս կողմինները» արտահայտությամբ Պարոնյանն ակնարկում է Անտոն Հասունյանի հակառակորդներին, որոնք հայտնի էին *հակահասունյան* անունով և պայքարում էին կրոնն ու ազգությունը հաշտեցնել, հավատարիմ մնալով հանդերձ կաթոլիկ եկեղեցու օրենքներին, չժխտել իրենց ազգային իրավունքները, մայրենի լեզուն և, որ ամենից կարևորն է՝ նպաստել հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, քաղաքական ազատության համար, նրա մղած պայքարին:

3. «Հռոմեն ծախված ըլլալով» արտահայտությամբ Պարոնյանը նկատի ունի Անտոն Հասունյանի՝ Հռոմի գործակալը լինելու, հատուկ առաջադրանքով հայ իրականություն ուղարկված լինելու փաստը: Պատահական չէ, որ Հռոմի «Պրոպագանդայի» դպրոցն ավարտած, ճիզվիտական բոլոր նենգություններն ուսումնասիրած Անտոն Հասունյանը երբ տեսավ իր դեմ բարձրացող ալիքի ուժգնությունը, փախավ Հռոմ, կարդինալների օժանդակությամբ նորից ձեռք բերեց հայ կաթոլիկների պատրիարքության իրավունքը, սակայն հայերը կրկին դիմադրեցին և ստիպեցին նրան նորից փախչել Հռոմ (1880), որտեղ էլ անցկացրեց իր տխուր կյանքի մնացած մասը:

4. Անտոն Հասունյանը կաթոլիկ հայերի պատրիարք էր ընտրվել 1867 թ.:

5. Հասունյան-հակահասունյան պայքարի բուռն շրջանում՝ միամիտ հավատացյալների վրա ազդելու միջոցներից մեկն էլ բանադրանքի կիրառումն էր կաթոլիկական դոգմաներից ամենափոքր շեղումների համար: Բանադրանքի էին ենթարկվում ոչ միայն առանձին անձնավորություններ, այլև թերթեր, գրքեր, ինչպես օրինակ «Ազգայի» վեպն էր ենթարկվել և ընկել հերետիկոսություն քարոզող գրքերի ցանկը:

6. «Օղ ուտել»։ Բառախաղ է: Ակնարկը վերաբերում է հայ կաթոլիկների համեմատաբար առաջավոր թևի պարագլուխներից Ամբրոսիոս Քյուբերյանին, որի գործունեությունից դժգոհ է եղել Հռոմի պապը: *Քյուբե* թուրքերեն նշանակում է *օղ*:

7. *Լողոֆեթ ուրեկ* արտահայտությունը մեզ անհասկանալի է:

8. *Բեկերսուրուս*-լատիներեն բառ է, որ նշանակում է «միևնչև որ»: Այս բառերով էր սկսվում Հռոմի պապի 1867թ. կոնդակը, որի նպատակն էր հայ կաթոլիկներին վերջնականապես անջատել մայր ժողովրդից, համարել առանձին համայնք, արգելելով նրանց մասնակցել ազգային որևէ միջոցառման: Այդ կոնդակն է, որ մեծ իրարանցում առաջացրեց ոչ միայն լուսավոր մտավորականության, այլև կաթոլիկ հայերի մոտ: Իրենց եկեղեցիներում լատիներեն այդ թուղթը լսելուց հետո պահանջեցին այն թարգմանել

հայերեն, պատճառաբանելով, թե չեն հասկանում լատիներենը: Այնուհետև հիշյալ կոնդակը կոչվեց Ռեվերսուրուս: Այն նկատելի չափով թուլացրեց հասունյանների դիրքերը, ուժեղացնելով հակահասունյան թևը: Մաղաքիա Օրմանյան պատրիարքը 1872թ. արձագանքել է՝ հայատառ թուրքերենով տպագրելով «Ռեվերսուրուս կամ Թուրքիա և Պապուֆին» գրքույկը:

ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 213:

1. Հոլլըվեի հաբերի ռեկլամը Պարոնյանը հաճախ է ծաղրել «Մեղու» երգիծաթերթում տպագրված նաև հայերեն երկերում:

ՆԻՆԻԹԱՄԻՉ ԼԵՉՈՒ ՄԸ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 212:

1. Պարոնյանը թե «Ազգային ջոջեր»ում և թե այլ երկերում հաճախ է ծաղրել Կարապետ Փանոսյանի թուրքերենի խրթնաբանությունները, արաբերեն անհասկանալի բառերի, ոճերի անտեղի օգտագործումը նրա կողմից, քերականական մեղանշումները: Այսպես, «Ազգային ջոջեր»ում խոսելով Էժեն Սյուի «Թափառական հրեա» վեպի նրա թարգմանության մասին, գրում է. «Այս անմասն վեպին թարգմանությամբը մեկ կողմեն նախապաշարումները կսպաններ, մյուս կողմեն ալ տաճկերեն լեզվին ջարդ կուտար և ամեն օր սիրտը կը դողար, որ չըլլա թե Էժեն Սյու ելնե դատ բանա իր դեմ» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 87):

2. Այս երկում էլ, սկզբից մինչև վերջ Պարոնյանը ցույց է տալիս Կ. Փանոսյանի թուրքերենի խեղճությունը, մտքերի անորոշությունը, շարահյուսական սխալները, քերականական մեղանշումները, բառերի վերջում անտեղի /-եր դնելով բարձր ոճ ստեղծելու նրա մոլությունը:

3. «Կուրիեր դ'Օրիան» («Արևելքի սուրհանդակ») ֆրանսերեն թերթը լույս էր տեսնում Կ. Պոլսում և հաճախ էր անդրադառնում հայ համայնքը հուզող հարցերին: Ըստ երևույթին Խորեն Նար պեյը այնտեղ հողված է տպագրել Երուսաղեմի հայոց վանքի մասին և «Մանգումեի Էֆքեար» թերթն էլ այն արտատպել է անհաջող թարգմանությամբ:

4. Այս ամբողջ հատվածը գրված է արաբական քերականության կանոնների, բառերի վրա կազմված բառախաղերով, որոնք գրեթե անթարգ-

մանելի են և որոնցով Պարոնյանը ծաղրում է Փանոսյանի թուրքերեն խրթի-
նաբանությունները:

5. Խոսքը վերաբերվում է Երուսաղեմի հայոց վանքի պարտքերին, որը
երկար տարիներ զբաղեցրել է Պոլսի ազգային իշխանություններին ու թեր-
թերին:

ԲՈՒԻ ՓՈՐՉԱՆՔԸ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 214:

Երկխոսության այս ձևը Պարոնյանը օգտագործել է «Ատամնաբույժն
արևելյան», «Պաղտասար աղբար» կատակերգություններում և այլ գործե-
րում:

1. Խոսքը վերաբերվում է Բերնարդեն դը Սեն Պիերի «Պոլ և Վերժին»
սենտիմենտալ վեպին, որը ֆրանսերեն բնագրով կամ հայերեն թարգմա-
նությամբ, այդ տասնամյակներին տարածված գիրք էր Կ.Պոլսում:

2. «Լա դամ Քամելիա» («Կամելիազարդ կինը») Ալ.Դյունա Որդու
գիրքն է, որ նույնպես մեծ տարածում ուներ 1870-ական թվականներին: Վե-
րածվելով պիեսի՝ երկար տասնամյակներ խաղացվել է հայ բեմում:

ՉԵՌՆՈՑԱՎԱՃԱՌԻ ԽԱՆՈՒԹԻՆ ՄԵՉ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 215:

1. «Պրե էսեկ» - ծո էջ, թրքախոս հույների օգտագործած ոճերից է: Պա-
րոնյանն իր հայերեն երկերում նույնպես, հույներին խոսեցնելիս պահել է
նրանց լեզվական առանձնահատկությունները:

ԲՐԵՉԱՆԹԵ ԸԼԼԱԼ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոնում», 1874թ. թիվ 79:

«Ալաֆրանկա» շարքից է: Նույն հերոսներով, նույն հարցերը շոշափող:
Թե ինչու՞ է ամիսներ անց «Թատրոնում» տպագրել, դժվարանում ենք ասել:

1. Պարոնյանն այստեղ թուրքերեն բախտիար-երջանիկ, բախտավոր
և ըխտիար (ծեր) բառերով բառախաղ է անում:

ՄԱՆՉՈՒՄԵԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 140:

1. «Փանոսյան դպրոց», «Մանգումեի Էֆբեար» թերթի խմբագիր Կա-
րապետ Փանոսյանն ուներ աղջկանց մասնավոր դպրոց, որին էլ վերաբեր-
վում է խոսքը:

2. «Ապտուլլահ եղբայրներ» խոսքը վերաբերվում է ականավոր լու-
սանկարիչներ Գևորգ և Վիչեն եղբայրներին: Սրանցից Գևորգը մոտիկից
կապված է եղել հայ իրականության հետ, անձնական և նամակագրական
կապ ունեցել Հովհաննես Այվազովսկու, Պետրոս Ադամյանի, Տիգրան Չու-
խաճյանի և այլ արվեստագետների հետ:

3. *Իփսի խսն* վայրում էր գտնվում «Մեղու» թերթի տպարանը և
խմբագրությունը:

4. «Փրկիչ»ը Կ.Պոլսի Ազգային հիվանդանոցն է, որը հիմնադրվել է
1834թ. Հարություն Պեգճյան ամիրայի նյութական միջոցներով և իր գոյութ-
յունը պահպանում է մինչ այժմ, հանդիսանալով Թուրքիայի լավագույն
առաջնակարգ հիվանդանոցներից: *Փրկիչ* փոխաբերական իմաստով նշա-
նակում է նաև գժանոց, քանի որ հիվանդանոցն ունեցել է հոգեբուժական բա-
ժին: Այստեղ Պարոնյանը նկատի է ունեցել երկրորդ իմաստը և «Մամուլ»
թերթի խմբագիր Գ.Այվազյանին ցույց է տալիս գժանոցի ճանապարհը:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»ի մեջ, 1873թ. թիվ 140, 141, 142,
143:

Այս նույն ձևով հայերեն հոդվածներում ևս հաճախ է ծաղրել տարբեր
թերթերի լեզուն, անհետևողականությունը, մտքերի հակասությունները:

1. Բառախաղ է կազմված թուրքերեն *մեքթեպ-դպրոց* և *մյուրեքեպ* (թա-
նաք) բառերով:

2. «Ազգայան վարժարան». Խոսքը վերաբերվում է Կ.Փանոսյանի
հիմնադրած համանուն օրիորդաց դպրոցին:

3. Այս հատվածը կազմված է Փանոսյանի խոսքերից, իսկ փակագծե-
րում բերվածները Պարոնյանի երգիծական միջամտություններն են:

ԱՐՏԱՔՆՈՅԱՅԻՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ

Առաջին անգամ լույս է տեսել «Մեղու»-ի մեջ, 1873թ. թիվ 147, 148:

«Ազգային ջոջեր»-ում Պարոնյանը անդրադառնալով հիշյալ հոդվածներին, գրում է. «Վարժարաններուն վրա գրած հոդվածներեն ավելի ազդեցություն ըրավ այն հոդվածը, որ ճեմիշներուն (գուգարան) նվիրված էր: Հիշյալ հոդվածով, որուն վերնագիրն էր «Մեմշեճե ըսլահաթ», ոչ միայն ազգային, այլև միջազգային ճեմիշներու նկարագրությունը ընելով անոնց բարեկարգությանը վրա կը պնդեր... ազգի մը հառաջադիմությունը, կըսեք ոչ թե անոր լրագիրներեն, այլ-ճեմիշներեն կը ճանչցվի և իբրև փաստ Բարիգու ճեմիշները կը ներկայացներ յուր ընթերցողներուն այնպիսի գեղեցիկ գույներով, որ մերիններուն արժանապատվությունը կը վիրավորեր» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 90-91):

ԹԱՐԱՊԻԱՅԻ ԽՆՁՈՒՅՔՆԻՍ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոնում», 1874թ. թիվ 2 :

1. Կ. Փանոսյանը բացի խմբագրական աշխատանքից, այսինքն «Մանգումեի էֆքեար» հայատառ թուրքերեն թերթը խմբագրելուց ունեցել է նաև կրթական գործունեություն, հիմնադրելով երկու դպրոց: Մեկը արական՝ Փանոսյան վարժարան մյուսը՝ իգական՝ Ազապյան վարժարան, փորձելով այդ դպրոցների կրթական ծրագրերը հարմարեցնել ֆրանսիական դպրոցների ծրագրին: Մի բան, որ խստորեն քննադատել է Հ. Պարոնյանը բազմաթիվ առիթներով, ցույց տալով, որ Թուրքիայի նման հետամնաց մի երկրում ֆրանսիական կենցաղի կապկային ընդօրինակումը, աղջիկներին կար ու ձև և այլ օգտակար առարկաներ սովորեցնելու փոխարեն նրանց երգ, դաշնամուր, ֆիզիկա, քիմիա, աստղաբաշխություն ավանդելն ամենևին էլ չի բխում Պոլսի հայ համայնքի շահերից: Պարոնյանը դեմ էր մասնավորապես Ազապյան վարժարանի աղջիկներին տարբեր համերգների, խնջույքների մասնակից դարձնելու՝ Փանոսյանի սովորությանը: Այս հոդվածում նա ծաղրում է Փանոսյանի կազմակերպած նման խնջույքներից մեկը, որի նկարագրությանը «Մանգումեի էֆքեար» թերթը լայն սյունակներ է հատկացրել անտեղի կերպով:

ԲՈՒԺՈՒՄ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոնում», 1874թ. թիվ 3 :

1. Հ. Պարոնյանը հրատարակելով «Թատրոն»ը, նրա հենց առաջին համարից հասարակական կյանքի մի շարք կողմեր ծաղրել է մեկ դրամատիկ երկի կադապարով գրված մեկ վարագույրանոց (արար) պիեսներով, կարծեք հավատարիմ մնալու համար իր թերթի անվանը, այսինքն՝ կյանքը դիտել որպես մի թատերաբեմ: Այդ ձևով նա գրել է հայերեն և հայատառ թուրքերեն բազմաթիվ գործեր: Չպետք է կարծել, թե երգիծաբանի նպատակն է եղել գրել պիեսներ բեմում ներկայացնելու համար, թեև նրանցից մի քանիսը այնքան սրամիտ են, բեմական, որ կարող էին դյուրությամբ ցուցադրվել երեկույթ-ցերեկույթներում, դպրոցական հանդեսների ժամանակ:

ԱՄԱՍՔՆՈՅԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոնում», 1874թ. թիվ 6 :

ՄԻՐՈ ԳՈՂ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոնում», 1874թ. թիվ 4,5 :

Այս հատվածում Հ. Պարոնյանը ծաղրում է Հ. Վարդովյանի թատրոնի կանոնադրությունը, որի հոդվածներից մեկի համաձայն ներկայացման ընթացքում դերասանի կողմից՝ տեքստից դուրս արտասանված ամեն մի նախադասություն տուգանվում էր: «Ազգային ջոջեր»-ում Վարդովյանին նվիրված դիմանկարում երգիծաբանը գրել է. «Որոշյալ ժամեն քառորդ մը ետքը եկող դերասանը կը տուժե... քառորդ մը առաջ եկողն ալ կը տուժե. Դեր կատարած միջոցին հազացող դերասանին ալ ամսականեն քիչ մը բան կը կտրվի» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 254-255):

ԳԱՆՉԱՆԱԿԻ ՀԱՇԻՎ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոնում», 1874թ. թիվ 74 :

ԱՂՋԻԿՆԵՐՈՒՆ ԽԱՔՎԻԼԸ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոնում», 1874թ. թիվ 75 :

«Արիֆին խարդախությունը» Տիգրան Չուխաճյանի «Արիֆին հիլլեսի» օպերետն է:

ՎԱԹՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոն»ում, 1875թ. թիվ 110 :

1. Այս նյութի սկզբի տողերն էլ են գրված հայերեն:

Բառախաղ է *Տոն-դոն* իսպանական ազնվական տիտղոս և տոն՝ թուրքերեն *վարդիք* բառերով:

ՈՒՆԱ ՎՈՂԹԱ ՈՒՆԱ ՅԱ ԹՈՒ ՅԱ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոն»ում 1875թ. թիվ 112-113:

Գրական այս ձևը՝ այսինքն հասարակական երևույթները՝ աճուրդը, հայտարարողի խոսքերով ծաղրելու ձևը Պարոնյանն օգտագործել է «Թատրոն»ի նախորդ համարներից մեկում «Վաթսուն փարայի» խորագիրը կրող երկում, որը տպագրել է նաև թուրքերեն «Թիյաթրո» երգիծաբերքում:

1. Թուրքական կառավարությունը 1875թ. մարտի 1-ից բոլոր հրատարակությունների վրա սահմանեց յուրահատուկ տուրք: Այդ տուրքը մեծ դժգոհություն առաջացրեց խմբագիրների և հրատարակիչների մոտ: Պարոնյանն այն առաջին անգամ քննադատեց «Վերջին դրոշմ» հոդվածով («Թատրոն», 1875թ., թիվ 107), ապա քանիցս անդրադարձավ թե առանձին հոդվածներով և թե տարբեր նյութերի մեջ: Թե այդ տուրքը որքան ծանր է եղել խմբագիրների համար, երևում է «Դրոշմի տուրք» հոդվածից (1875թ. թիվ 117), որտեղ կարդում ենք. «Երբ կը տեսնեմ բեռնակիր մը, որ կարողութունեն վեր բեռ մը տանելու կաշխատի և արյուն քրտինք կը թափե, կըսեմ. - Ահավասիկ խմբագիր մը, որ դրոշմի տուրք կը վճարե Դրոշմի վրա լրագիր փակցնելու սովորությունն սկսելեն ի վեր»: Թվում է, թե հակառակը պիտի լինի՝ «լրագրի վրա դրոշմ փակցունելեն ի վեր», սակայն չենք կարծում, թե այն գրչի սխալ է: Նախադասության միտքը շրջելով մի նոր գաղափար արտահայտելու ձևը Պարոնյանի նախասիրած միջոցներից մեկն է: Այստեղ էլ երգիծաբանը դրոշմանիշը ընդունելով որպես խարխլված պետական բյուջեի խորհրդանիշ, ուզում է ասել, թե կառավարությունը այդ բացն ուզում է ծածկել նրա վրա թերթեր փակցնելով:

2. Նույն միտքը իտալերեն:

3. Նունյը հունարեն:

4. Նույնը ֆրանսերեն:

5. Էտոսա-հունարեն՝ տվի, տաքե՝ ֆրանսերեն:

6. «Իզուր ուրեմն» «Փունջ»ի հաճախ օգտագործված նախադասութ-

յուններից է, որ Պարոնյանը ծաղրել է նաև «Փունջ»ի բախտը նայելիս (Տես՝ «Բախտ կը նայինք» երկը):

7. «Մեկ դուրուշի մեկ բանադրանք» - իտալերեն է: Հայերենը՝ փարայով է, 40 փարան մեկ դուրուշ է, այսինքն մեկ պիաստը:

8. Նույնը հունարեն:

9. Նույնը ֆրանսերեն:

10. Նույն միտքը կրկնված է երեք լեզուներով:

11. Քեթալիփա-և այլն-հունարեն-էջեթերա, նույնը՝ իտալերեն:

12. Նույն միտքը Ֆրանսերեն, հունարեն:

13. Չնայած հոդվածի վերջում գրված է՝ *շարունակելի*, Պարոնյանն այստեղ ընդհատել է:

ԲԱՆԱԴՐԱՆՔԻ ՄՐՅՈՒՄ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոն»ում, 1875թ. թիվ 119-120 :

1.«Մեճմուաի Հավատիս»ը հայ կաթոլիկների օրգանն էր: 1852-53թթ. լույս է տեսել որպես ամսագիր, հետագայում, երկար տարիներ որպես շաբաթաթերթ: Խմբագրել է Հովսեփ Վարդանյանը, որը երբեմն տպագրել է ազատամիտ հոդվածներ և իր վրա հրավիրել կաթոլիկների մոլեռանդ թևի թշնամանքը, նրանց մատնությունների շնորհիվ արժանացել բանադրանքի: Ինչպես երևում է Պարոնյանի «Վայ խեղճ մարդ» հոդվածից, «Մեճմուաի Հավատիս»-ի դեմ կիրառված բանադրանքը եղել է Հ.Քազանճյանի մատնության արդյունք:

2. Անտոնյանները հայ կաթոլիկների առավել մոլեռանդ թևին էին պատկանում:

3. Վերոհիշյալ երկխոսությունը կառուցված է «Մեճմուաի Հավատիս»ի տառերի վանկավորումով:

4. Ակնարկը վերաբերվում է թղթավաճառ Գևորգ Չարդարյանին, որից գնում էին իրենց թուղթը հայ թերթերից մի քանիսը: Ըստ երևույթին հրեա Ավրամաշին նույնպես եղել է թղթավաճառ:

5. Ակնարկը վերաբերվում է Պապի կոնդակի (Ռեվերսուրուս) լատիներեն լեզվին, որն անհասկանալի էր հայերին (տես՝ «Հասունյան խնդիր», ծան. 8):

6. Խոսքը Հռոմի պապական գործակալ Անտոն Հասունյանի սաղրանքների մասին է:

ԱՆՏՈՆՅԱՆՆԵՐԸ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոն»ում, 1875թ. թիվ 121-122 :

ԽԵՂՆ ՄԱՐԴ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոն»ում, 1875թ. թիվ 124 :

ԹՐԱՄՎԱՅԻ ՎԻՃԱԿԱՍԱԳԸ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոն»ում, 1875թ. թիվ 119 :

ՏԵՄՆՈՂԻՆ ԵՐԱՆԻ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոն»ում, 1875թ. թիվ 127 :

ԲԱՆՏ ԿԸ ՆԱՅԻՆՔ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոն»ում, 1875թ. թիվ 124, 125, 126, 130, 131, 132, 136, 144 :

1. Երգիծական հոդվածների այս շարքում ծաղրվող մարդկանցից մի քանիսին Պարոնյանը տեղ է տվել նաև «Ազգային ջոջեր»ում: «Օրագիր» թերթի խմբագիր Օգսեն Խոճասարյանի գինեմոլությունը Պարոնյանը ծաղրել է բազմաթիվ առիթներով, նաև «Ազգային ջոջեր»ում, որտեղ գրում է նրա պահանջումներուն համեմատ բարեկարգություններ ընելով ժողովրդյան հարգանքն ու համարումը իրեն գրավելու» մասին (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 58-59): «Երբ մկրտող քահանան կը հարցներ թե «երեխան զինչ խնդրե և երբ կնքամայրը «հավատք, հույժ, սեր» կը պատասխաներ, մեկեն ի մեկ Օգսեն նետվեցավ և ըսավ թե երեխան օղի ալ կը խնդրե» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 247):

2. Ակնարկը վերաբերվում է «Մասիս»ի հրատարակության տարեթվին և ոչ թե Կ.Ութունյանի:

3. Քոմիսիոն խան. Հայ վաճառականների հավաքատեղին, որտեղ կատարվում էին առևտրական գործարքներ:

4. Պարոնյանը «Մանգունեի Էֆքեար» թերթի խմբագիր Կ.Փանոսյանի բախտը սկսում է հետևյալ բառերով.«Ճանըն՝ տեհչիթամիզ, քուզում

էսեֆենկիզ, գալպին տողրու պիրատամսըն», որ բառացի նշանակում է «Հոգիս զարմանալի, գառնուկս ցավալի, սիրտդ մաքուր մարդ մըն ես»: Արտաքուստ անիմաստ է թվում զարմանալի, ցավալի բառերի այստեղ օգտագործումը: Իրականում այստեղ ծաղրում է Փանոսյանի այն սովորությունը, որ *տեհչիթամիզ* և *էսեֆենկիզ* բառերը տեղի անտեղի գործածել է հայ ժողովրդի վիճակը նկարագրելիս: Երգիծաբանը այդ նույն բառերով է սկսում նաև «Ազգային ջոջեր»ում Փանոսյանին մվիրված դիմանկարը, գրելով «Կարապետ Փանոսյան, «խմբագիր տնօրեն «Մանգունեի Էֆքեար» *էսեֆենկիզ* լրագրող, տեր և տնօրեն Ազգայան *տեհչիթամիզ* վարժարանի», դրանով Փանոսյանի թերթը որակելով զարմանալի, նրա վարժարանն էլ՝ ցավալի, ողբալի:

Պարոնյանը ծաղրում է Փանոսյանի դպրոցների դասավանդման մեթոդը, որն առանց հաշվի առնելու հայ իրականության առանձնահատկությունները, կառուցված էր ֆրանսիական դպրոցների ծրագրերով: Պարոնյանը պահանջում է իզական սեռին տալ օգտակար դաստիարակություն, առաջին հերթին՝ կար ուձև: Փանոսյանի կրթական մեթոդը նույնպիսի խստությամբ քննադատել է «Ազգային ջոջեր»ում: (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 93-94):

5. Ակնարկը վերաբերվում է «Մեճնուայի Հավատիս» թերթին: Այժմյան ընթերցողի համար գրեթե անհասկանալի այս երկը Պարոնյանը գրել է Հասունյան-հակահասունյան պայքարում հոգևորական գործիչ Գրիգոր Էնֆիաճյանի երկերեսանի գծերը ծաղրելու համար: Նա Էնֆիաճյանին նույնքան խստորեն քննադատել է «Ազգային ջոջեր»ում: (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 178-186):

Հետագայում, երբ Հ. Պարոնյանը դադարեցրեց հայատառ թուրքերեն նյութերի տպագրությունը, «Բախտ կը նայինք» շարքն էլ վերածեց հայերենի, գրեց «Երիտասարդի մը բախտը», «Բժիշկի մը բախտը» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.9, Եր., էջ 139):

6. Ակնարկում է «Ունա վոթա ունա Ֆաթունա» հոդվածաշարին, որտեղ հասարակական երևույթները ծաղրելու մի այլ ձև էր ընտրել երգիծաբանը. Աճուրդ հայտարարող թելլալի պես ներկայացնելով մարդկանց կամ կազմակերպությունները:

7. Երգիծական հոդվածների այս շարքում ծաղրվող մարդկանցից մի քանիսին Պարոնյանը տեղ է տվել նաև «Ազգային ջոջեր»ում: Այստեղ տրված շատ բնութագրումներ համընկնում են «Ջոջերի» և

«Գուշակություններ»ում տրված բնութագրումներին:

8. Պոլսի տրամվայներն այդ տարիներին աշխատում էին ձիերով:

9. Թուրքերեն արտահայտություն է, նշանակում է խաբեբա, ծուղակներ լարող:

10. Խոսքը Սուքիաս Քազանճյանի մասին է, որը եղել է Կ. Պոլսի կաթոլիկ հայերի հոգևոր պետը և ունեցել է փոթորկոտ կյանք: Պարոնյանը սրան էլ «Ազգային ջոջեր»ում տեղ է տվել, բնութագրելով որպես խորամանկ, կեղծավոր, «սատանայեն երկու օր առաջ ծնած մի մարդ» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 138-148):

11. Պարոնյանը «Ազգային ջոջեր»ում դերասանապետ Հակոբ Վարդովյանի փառասիրությունը, շռայլ ծախսերի սիրահար լինելը տվել է հետևյալ տողերով «Ոտքով չքալեր, միշտ կառքով կերթա կուգա, թե որ տունը երթաս՝ քիչ մը անդիի սենյակը երթանք, ըսես, սկե կառք մը ապապրեցեք-կըսես» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 255):

12. Պարոնյանը նույն միտքը «Ազգային ջոջեր»ում ձևակերպել է այսպես. «Դեմքեն չարություն մը չ'երևար, բարություն ալ չի գուշակվիր, վերջապես մարդ է պարագաներուն համեմատ» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 255):

13. «Մասիս»ի խմբագիր Կ.Ութունյանի կեղծավորությունը, քծնանքը ավելի անողոր բնութագրումներով են ծաղրված «Ազգային ջոջեր»ում, «Որչափ ալ անհեթեթ ըլլա պատրիարքի մը որոշումը՝ գայն հարգելու սովորություն ունի և տարակույս չունինք, որ եթե Կալիգոլայի օրով խմբագրության պաշտոնին մեջ գտնված ըլլար՝ գովաբանելով Կալիգոնիոսպատոս անվանել կուգեր և անշուշտ խմբագրական հողվածով մը ձին ալ պիտի շնորհավորեր ըսելով. «Հռովմայեցիներու համար նոր դարագլուխ մը բացվեցավ... քաջահոյս ենք որ նորընտիր, հայրենասեր և արդարակորով ձին յուր խոհական և փորձյալ քաղաքագիտությամբ ամեն ճիգ պիտի թափե երկրին և ժամանակին պահանջումներուն համեմատ կարգադրություններ ընելով ժողովրդյան հարգն ու համարումն իրեն գրավելու» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 58-59):

14. Ազգը միանգամից լուսավորելու՝ փանոսյանական ջանքերը Պարոնյանը նույնքան խստորեն ծաղրել է «Ազգային ջոջեր»ում (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 85-95):

15. Ընդգծված բառերը վերցված են Ալաճայանի «Փունջ»ից, որ Պարոնյանը գրել է հայերեն:

16. «Օրագիր» թերթի խմբագիր Օգսեն Խոճասարյանի զինեմությունը Պարոնյանը ծաղրել է բազմաթիվ առիթներով, նաև «Ազգային ջոջեր»ում, որտեղ գրում է նրա պահանջումներուն համեմատ բարեկարգություններ ընելով ժողովրդյան հարգանքն ու համարումը իրեն գրավելու» մասին (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 58-59): «Երբ մկրտող քահանան կը հարցներ թե «երեխան զինչ խնդրե և երբ կնքամայրը «հավատք, հույս, սեր» կը պատասխաներ, մեկեն ի մեկ Օգսեն նետվեցավ և ըսավ թե երեխան օղի ալ կը խնդրե» (տես՝ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ.2, էջ 247):

ԹԱՏՐՈՆԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Առաջին ցանակը լույս է տեսել «Թատրոն»ում, 1875թ. հունվար ամսից մինչև հուլիսի վերջերը. թիվ 126, 127, 142:

Երկրորդը՝ թիվ 127-ում, -հինգերորդը՝ 142-ում: Երրորդ և չորրորդ ցանակները մենք չենք տեսել: Ըստ երևույթին դրանք տպագրվել են «Թիյաթրո» թուրքերեն թերթում կամ էլ գրել է հայերեն, որոնցից մի նմուշ տես՝ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.9, Եր. 1988, էջ 343)

ԼԵՌԸ ՄԱՐԳԱՐԵՆՔՈՎԸ ՉԵՐԹԱՐ ՆԵ ՄԱՐԳԱՐԵՆ ԼԵՌԱՆ ՔՈՎԸ ԿԵՐԹԱ

Առաջին անգամ լույս է տեսել «Թատրոն»ում, 1875թ. . հունվար ամսից մինչև հուլիսի վերջերը. թիվ 88, 89, 92, 95, 96, 98-100, 105-108, 110, 112-115, 117, 118, 120, 123, 128-130, 133-150):

1. Բարամանան ըստ երևույթին Նիկողիմոս աղայի տան կատուն է կամ շնիկը:

2. «Ժը սյուի մարի տը լա բենը, բի տը լա բենը... (Ես թագուհու ամուսինն եմ, վայ թագուհուն)»:

3. «Ան ավան քաթըր» - չորս քայլ առաջ:

4. Բառախաղ է ֆրանսերեն *քաթըր* (չորս) և թուրքերեն *դաթր* (ջորի) բառերից կազմված:

5. «Շեն տը տամ ա կոշ ա տրուաթ» - կանանցից կազմել շոթա, ձախ և աջ. Ասվում է խմբային պարի ժամանակ:

6. Բառախաղ է ֆրանսերեն *օ լամուր* (օհ, սեր) և թուրքերեն *օիլամուր*

(լորենի, ծառ է) բառերից կազմված: Այստեղ խոսքը վերաբերվում է Օխլամուրի գրոսայգուն:

7. «Լամուր է լը քիվո տը լյումանիթե...» (Սերը մարդկության հիմքն է, աշխարհի լծակը, արգավանդ՝ քան հողը, ավելի փայլուն, քան արևը, ավելի շարժուն, քան ալիքը):

8. «Սեզ էսքլավ սոն բլյու նոմարեո...»-(Սիրո գերիներն ավելի բազմաթիվ են, քան աստղերը, որովհետև ամբողջ աշխարհը ենթակա է նրա քմահաճույքին):

9. «Լամբիդ տը լամուդ...» - (Սիրո հմայքն անսահման է, անընդգրկելի, իշխանություն չճանաչող):

10. «Լամուդ էթ էոն անֆան քերիպլը...» - (Սարն անտանելի մի երեխա է, որն ուզում է ամեն ինչ ունենալ, ամեն ինչ հասկանալ, նա փորձում է ամեն ինչ և ոչ ոք չի համարձակվում մերժել նրան):

11. «Ժը լեմ տը թու մոն քեոր» -(Ես քեզ սիրում եմ իմ ողջ հոգով):

12. Բառախաղ է ֆրանսերեն *քեոր* (սիրտ) և թուրքերեն *քեոր* (կույր) բառերից կազմված:

13. «Թու սեմբլըման է թու պոնման...» - (Պարզապես ուզում եմ լավությամբ, կարճ ասած՝ կինը ամենակատարյալ և ամենաբարձր ստեղծագործությունն է, ավելի քան կատարյալ):

14. Բառախաղ է ֆրանսերեն *պեորի* (հագեցված) և Պետրի անուններով կազմված:

15. «Բեթրի լա բլյու կրանտ...» (Հագեցված է մեծ առաքինությամբ և մեծ ախտերով, չի սիրում ծայրահեղություններ, հրեշտակ է, կամ սատանա, տիրուհի կամ գերի, սուրբ կամ անհավատ, նա միշտ սոցիալական սանդուխի գազաթն է. և երկու բառով կարելի է որոշել նրա անհուն սերը կամ անսահման ատելությունը):

16. «Պոն ժուր, քոման վու» - (Բարև, ինչպես եք):

17. «Սերսի պիեն» - (Շատ լավ):

18. «Վու գեթ բեթ» (Դուք անասուն եք):

19. «Փուր լամուր տը տիեո» - (Ի սեր աստծո):

20. Բառախաղ է ֆրանսերեն *մանթո*-պատճառ և *մանթը*՝ կերակրի տեսակի բառերից կազմված:

21. «Լա քոնսիանս է լա վուա...» - (Խիղճը բարոյականության մեր լավագույն դասագիրքն է):

22. «Լա լիպերթե տը քոնսիանս» - (Խղճի ազատություն):

23. Բեժի ծխախոտ - Թուրքիայում այդ տարիներին ծխախոտի մենաշնորհը գտնվում էր եվրոպական ԲԵԺԻ ընկերության ձեռքում: Ակնարկը վերաբերում է դրան:


24. «Ժը վու ըմերսի, ժը վու...» - (Շնորհակալ եմ, ես ձեզ թույլ եմ տալիս):

25. «Ժը վու սյուի գեթերնելըման թոպլիժե տը սը քեոր...» -(Ես Ձեզ հավիտյան պարտական եմ այն բանի համար, որ...):

26. «Լամուր սենթոտյուի...» - (Սերն ավելի դյուրությամբ է մտնում սրտի մեջ, քան քամին՝ բաց տան մեջ, սերն ավելի ուժեղ է, քան պատերազմը, նա մի չար դև է, որ վախկոտ է դարձնում նրան, ում տիրում է):

27. «Պլամե բեոն ժեոն...» - (Դատապարտել մի երիտասարդի սիրահարված լինելու համար նշանակում է հանդիմանել մեկին հիվանդության համար: Սիրահարները փոքրիկ երեխաների նման են, բավական է նրանց մի փոքր...):

28. «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում տպագրված այս թարգմանությունն արտատպվել է սփյուռքահայ մամուլում ամբողջությամբ, Բեյրութում լույս տեսել նաև առանձին գրքով: Ականավոր ռեժիսոր Վարուժան Խտշյանն այն վերածեց պիեսի, բեմադրեց Բեյրութում, Հալեպում, Լենինականում, միաժամանակ կատարելով գլխավոր հերոսի դերը:



ԲԱՌԱՐԱՆ

Ա

Աթանթե -սպասիր(ֆր.)
Ալաթուրքա - թուրքական ձևով, ըստ թուրքականի
Ալաֆրանկա – ֆրանսիական ձևով, ըստ ֆրանսիականի
Ամուր – սեր (ֆր.)
Այվազ – ծառա, ջրկիր
Անթրե – մտեք (ֆր.)
Անկաժե , անգաժե – խոստանալ, հանձն առնել
Ապաթերլիկ - հողաթափ
Ապալապճի – բրդից գործված մուճակ
Ապսենթ – խմիչքի տեսակ
Ասաֆեթիտա – խմիչքի տեսակ
Ատիո-ցտեսություն
Աքսիոն – ակցիա, բաժնետոմս (ֆր.)

Բ

Բաթինա – խաղի տեսակ
Բաթլիճան – սմբուկ
Բանթալոն – տաբատ, շալվար (ֆր.)
Բանթուֆլա – տնային կոշիկ, հողաթափ (ֆր.)
Բարթի – պարտիա (թղթախաղի, նարդիի)
Բարտոն – ներողություն (ֆր.)
Բիանքո – վիճակախաղ
Բոլիթիքա – քաղաքականություն, վարվելակերպ (ֆր.)
Բոլիթիճճա -պոլիտիկա բառի իտալերեն ձևը
Բոնչ – պունջ, խմիչքի տեսակ
Բրեզանթե -ներկայացնել, ծանոթացնել
Բրեֆերանս – խաղի տեսակ
Բրի ֆիքս – վերջնական գին, անսակարկելի
Բուտրա – դիմափոշի, պուրրա

Դ

Դրիեստոցի-Տրիեստ քաղաքից

Գ

Գազինո – կազինո, գինետուն
Գոնսոլիտ – (տես՝ քոնսոլիտ)

Զ

Զուռնա – փող, գուռնա

Է

Էմպեսիլ-ապուշ(ֆր.)
Էյլենմիշ ըլլալ – զվարճանալ
Էնթերեսե – շահագրգռված, հետաքրքրված
Էնթերի – տղամարդու լայն հագուստ
Էնայութ -վիրավորանք
Էնֆիե -քթախոտ
Էսեֆենկիզ – ցավալի, ողբալի
Էտեպսիզ – անկիրթ, անամոթ
Էքստրա օրտիներ – բացառիկ, անսովոր

Թ

Թավլու – նարդի
Թյոթյունճի – ծխախոտավաճառ
Թրախոնա – օժիտ
Թուալեթ – արդուզարդ
Թուլունպաճի – հրշեջ

Ժ

Ժառտեն – պարտեզ, զբոսայգի
Ժըվուբրի-խնդրեն(ֆր.)

Ի

Իկիտ – իգիթ, քաջ
Իտեա – գաղափար, իդեա
Ինճե սազ – երաժշտական լարային գործիք
Իքի յուզ – թղթախաղի տեսակ (200)

Լ

Լաթերնա – երաժշտական գործիք
 Լանսիե – պարի տեսակ
 Լապճիճ – հնաձև կոշիկ
 Լաստիկ – կրկնակոշիկ
 Լավութա – երաժշտության տեսակ
 Լիքիտասիոն – լիկվիդացիա, լուծարք
 Լոժիք – տրամաբանություն – տրամաբանություն (ֆր.)
 Լոխում – քաղցրավենիքի տեսակ
 Լոճա – օթյակ, լոժա

Խ

Խարտալ – մանանեխ
 Խըչըխ – կեղծոռիկ
 Խոշը գալ – դուր գալ

Կ

Կազ – գազ, վառելիք
 Կազել – երգի, արևելյան բանաստեղծության տեսակ
 Կոմպլիման – հաճոյախոսություն
 Կուստո – ճաշակ

Ղ

Ղովուշ – գորանոց, հանրակացարան

Ճ

Ճեմիշ – զուգարան
 Ճիկարա – սիգարետ, գլանակ
 Ճովինո – թեթևսովիկ, անբան

Մ

Մագուրքա – պարի տեսակ, մագուրկա
 Մայասուլ – թուրք
 Մանթո – պատճառ
 Մանի – երգի տեսակ

Մանճյա ընել – նախաճաշել
 Մա շեոսիր -սիրելիս(ֆր.)
 Մասխարա լինել – ծիծաղելի լինել, դիմակ դնել
 Մատամ – տիկին, մադամ (ֆր.)
 Մատմազել – օրհորդ (ֆր.)
 Մարի – ամուսին (ֆր.)
 Մեհլեն – վերքի վրա դրվող քսուկ
 Մեճիտիե – թուրքական դրամ, շքանշանի տեսակ
 Մենթա – խմիչքի տեսակ
 Մերսի – շնորհակալություն (ֆր.)
 Մինտեր – փսիաք
 Մյուսյու – պարոն (ֆր.)
 Մուզիքա – երաժշտություն (ֆր.)
 Մուշու – Մյուսյու, պարոն բառի անվավաղված ձևը

Յ

Յաղմա - թալան, կողոպուտ

Ն

Նաթուրա – բնավորություն, սովորություն (ֆր.)
 Նասր – ոտքի կոշտուկ
 Նավս – զարկերակ
 Նարկիլե – նարգիլե, կլկլակ
 Նենե – տատիկ

Պ

Պալ, պալո – պարահանդես
 Պելա-փորձանք
 Պիք պազար -սև շուկա
 Պոզիսիոն – կողմնորոշում (ֆր.)
 Պոնժուռ -բարև, բարի օր (ֆր.)
 Պոնսուառ – բարի գիշեր, բարի երեկո (ֆր.)
 Պոնո – մուրհակ
 Պրե - ծո, այդ տղա
 Պրոշ – կրծքազարդ, բրոշկա (ֆր.)

Պրո – պահարանի տեսակ

Ս

Սաբարինա – մի տեսակ դեղ

Սաքո - վերարկուի տեսակ

Սբարմաչետ – մոմի տեսակ

Սետիր – բազմոց

Սիկարա – սիգարետ, գլանակ

Սինյոր – պարոն

Սիվիլիզասիոն – քաղաքակրթություն, ցիվիլիզացիա

Սկամայիլ – թղթախաղի տեսակ

Սոն Էքսելանս - ձերդ գերազանցություն

Սոխախ – փողոց

Սոսիեթե – ընկերություն (ֆր.)

Սուարե – երեկույթ (ֆր.)

Սուարե տանսանթ – պարի երեկույթ

Վ

Վակոն -վագոն

Վիզավի - դեմ դիմաց (ֆր.)

Վերմուք – խմիչքի տեսակ

Տ

Տամա -տիկին, դամա

Տամա -խաղի տեսակ

Տանս - պար (ֆր.)

Տեթ – պարտք (ֆր.)

Տեքուլթե – հոլանի, դեկոլտե

Տիրեմ – չափի միավոր

Տոմինո – պարահանդեսի զգեստ, դոմինո

Տոմինո – խաղի տեսակ

Տուա – ելք

Տուա – աղոթք

Տուտու -մորաբույր, հորաբույր

Բ

Բանտեվյու – ժամադրություն (ֆր.)

Բոպ տը շամպրը – սենյակում հագնելու զգեստ

ՈՒ

Ուղուրսուզ – անբախտ

Փ

Փեհիվան յագըսը – սպեղանի

Փյուաբյուլ – ծոպ

Ք

Քալոշ – կրկնակոշիկ, կալոշ

Քանափե – բազմոց (ֆր.)

Քավալիե – կավալեր (ֆր.)

Քատրիլ – պարի տեսակ

Քարթ տը վիզիթ – այցետոմս (ֆր.)

Քաքաո – կակաո

Քնա քնա – դեղ, որն օգտագործվում է նաև խմիչքի մեջ

Քեհրիպար – սաք

Քյուլլահ – գլխարկի տեսակ, պատրաստված թաղիքից

Քոբիա – կոպիա, պատճեն

Քոմիթեճի – կոմիտեի անդամ

Քոմիսիոն – կոմիսիոն, միջնորդ չեք

Քոնսիանս – խղճնտանք, վստահություն (ֆր.)

Քոնսուլիտ – արժեքուղթ

Քոնսուլթասիոն – կոնսուլտացիա (ֆր.)

Քորթե – սիրեկան

Քրիթիք – քննադատություն (ֆր.)

Օ

Օբինիոն – կարծիք (ֆր.)

Օրըվուառ - ցտեսություն(ֆր.)

ՀԱՎՈՐ ՊԱՐՈՆՅԱՆ

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐԲԵՐԵՆ
ՆՈՐԱՀԱՅՏ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

АКОБ ПАРОНЯН

НЕДАВНО ОБНАРУЖЕННЫЕ
МИНИАТЮРЫ НА
АРМЯНОПИСЬМЕННО ТУРЕЦКОМ
ЯЗЫКЕ

Չափսը՝ 70x100/16: Ծավալը 15,3125 տպ. մամուլ:
Թուղթը՝ օֆս. 80 գր.: Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 100 օր.:
Տպագրված է «ՄՈԱԿ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ում:



ՀԱՍՄԻԿ ԱՏԵՓՈՒՆՅԱԼ

Ծնվել է 1950թ. Երևանում, մտավորականի ընտանիքում: 1972թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետը, թուրքերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ:

1972-1997թթ. աշխատել է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում: 2005թ. մինչ օրս աշխատում է նույն ինստիտուտում, որպես առաջատար գիտաշխատող:

Միաժամանակ, 1992-93թթ. աշխատել է ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչությունում, ապա՝ 1995-98թթ. դիվանագիտական առաքելությամբ մեկնել Ժնև, աշխատել ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպություններին առընթեր ՀՀ Մշտական ներկայացուցչությունում և Շվեյցարիայում ՀՀ Գլխավոր հյուպատոսությունում:

1987թ. պաշտպանել է պատմական գիտությունների բեկնածուական թեզ՝ «Հայատառ թուրքերեն գրականության դերը Օսմանյան կայսրության սոցիալ-մշակութային կյանքում» թեմայով:

«Հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտություն (1727-1968)» գիրքը հրատարակվել է 1985թ. Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի հրատարակչության կողմից:

«Հայատառ թուրքերեն պարբերական մամուլը» մատենագիտական քառալեզու աշխատանքը նույն հրատարակչության կողմից լույս է ընծայվել 1987 թվականին:

«Հայատառ թուրքերեն գրականությունը» աղբյուրագիտական հետազոտությունը լույս է ընծայվել Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից 2001 թվականին:

2005թ. Ստամբուլի «Թուրքուազ» հրատարակչությունը լույս է ընծայել «Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն» քառալեզու աշխատությունները մի գրքով: Այն պարունակում է ավելի քան 2000 անուն գրքեր, հրատարակված 1727-1968թթ., աշխարհի 50 քաղաքների շուրջ 200 տպարաններում: Հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտությունը ներառում է շուրջ 120 անուն պարբերականներ, սկսած 1840 թվականից:

2005թ. պաշտպանել է պատմական գիտությունների դոկտորական ատենախոսություն՝ «Հայատառ թուրքերեն գրականությունը 15-20-րդ դարերում» (Աղբյուրագիտական հետազոտություն) թեմայով:

2008թ. լույս է տեսել «Ցուցակ հայերեն ձեռագրերի հայատառ թուրքերեն նյութերի և հայատառ թուրքերեն ձեռագրերի» մատենագիտական աշխատությունը: Այն ներկայացնում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայատառ թուրքերեն ձեռագրական հարստությունը:

«Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» ուսումնասիրությունը հայերեն լեզվով լույս է տեսել 2011թ. և արժանացել ՀՀ Նախագահի մրցանակին: Գրքի Բ տպագրությունը կատարվել է 2012թ.: Նույն թվականին գիրքը լույս է տեսել ռուսերեն և Միմսկում արժանացել «Գրքերի արվեստ» ԱՊՀ երկրների մրցույթի «Գրան Պրի» մրցանակին: Թուրքերեն լեզվով ուսումնասիրությունը հրատարակվել է 2014թ.:

2012թ. լույս է տեսել «Հայատառ թուրքերեն գրականությունը» (ֆրանսերեն), 152 էջ


2016թ. լույս է տեսել «Լուզինյան թագավորական տան հայ ժառանգները», 218 էջ

2018թ. լույս է տեսել «Գեվորգ Բամպուկճյան», 168 էջ

2022թ. լույս է տեսել «Բարս Թուղլաճի. կյանքի էջեր», 132 էջ

2023թ. լույս է տեսել «Հայատառ թուրքերեն գրականությունը», 206 էջ,

2023թ. լույս է տեսել «Հայատառ թուրքերեն գրականությունը» (անգլերեն), 198 էջ



Գառնիկ Խաչատուրի Ստեփանյան (Տեր-Ստեփանյան, 1909-1989), ծն.Մամախաթուն, Էրզինջանի մարզ, Թուրքիա: 1915 թվականին Մեծ եղեռնին տարագրվել է Ղեյր-Չոր, հասել Մալաթիա: Առաջին համաշխարհայինից հետո ընկել է Սեբաստիա, որտեղ ստացել է Նախնական կրթությունը: 1923 թվականին հայ որբերի հետ տեղափոխվել է Յուլիստան, ապաստան գտել Էդիպոսի, Խալքիսի և Օրոպոսի որբանոցներում: 1925 թվականին ընկել է Եգիպտոս և հինգ տարի որպես գրաշար աշխատել «Արև» օրաթերթի և «Ոսկետառ»-ի տպարաններում: 1930 թվականին ներգաղթել է Խորհրդային Չայաստան և գտել իր կորցրած ծնողներին: Երևանի Պետհրատի առաջին տպարանում շարունակել է իր գրաշարական աշխատանքը: 1938 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է

«Սովետական Չայաստան» թերթի, «Սովետական Չայաստան» ամսագրի, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագրի» խմբագրություններում, գրականության ինստիտուտում, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (1954-1963 թթ.՝ տնօրեն), 1963 թվականից՝ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում: Գիտական աշխատանքները նվիրված են արևմտահայ գրականության և թատրոնի, հասարակական մտքի զարգացման պատմությանը: Գրել է 20-ից ավելի մենագրություն և «Մղձավանջային օրեր», «Որբ աշխարհի» ինքնակենսագրական վեպերը (1945):

Երկեր

- Պետրոս Աղամյան, Ե., Հայպետհրատ, 1941, 148 էջ:
- Մղձավանջային օրեր, Ե., Հայպետհրատ, 1945, 214 էջ:
- Արփիար Արփիարյան, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1955, 289 էջ:
- Արուսյակ Փափազյան (կյանքը և բեմական գործունեությունը), Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1955, 113 էջ:
- Մկրտիչ Ջանան, Ե., Հայկական թատերական ընկերություն, 1960, 146 էջ:
- Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատոր 3հ. Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1962, 1969, 1975 թթ.:
- Հայ նոր գրականության պատմություն, հատոր 2 (գրքի «Ներածություն» բաժինը գրել է Գառնիկ Ստեփանյանը), * Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1962, 516 էջ:
- Հակոբ Պարոնյան (կյանքը և հրապարակախոսությունը), Ե., Հայպետհրատ, 1964, 276 էջ:
- Կենսագրական բառարան (հայ մշակույթի գործիչներ), երեք հատորով, հատոր Ա, Ա-Թ, Ե., «Հայաստան», 1973-1990 թթ.:
- Աճառյանի հետ (հուշեր), Ե., «Հայաստան», 1976, 188 էջ:
- Վահրամ Փափազյանի հետ (հուշեր), Ե., «Սովետական գրող», 1979, 102 էջ:
- Բ, Ժ-Մ, Ե., «Սովետական գրող», 1981, 327 էջ:
- Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության, հատոր 1, Ֆրանսահայ թատրոն, ՀԽՍՀ ԳԱ, 1982, 323 էջ:
- Թուրքական աղբյուրները՝ թուրք թատրոնի զարգացման գործում հայերի դերի մասին, Ե., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների ինֆորմացիայի կենտրոն, 1983, 51 էջ:
- Հողվածներ և հուշեր, Ե., «Սովետական գրող», 1985, 292 էջ:
- Երզնկա /հնագույն դարերից մինչև մեր օրերը/, Երևան, 2005, 680 էջ:
- Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության, հատոր 2. Ամերիկահայ թատրոն, Երևան, 2008:

Թարգմանություններ (թուրքերենից)

- Վարդանյան Հովսեփ, Ազապի (վեպ), Երևան, «Սովետական գրող», 1953, 1979, 207 էջ: «Շատախոսը» 1979: